



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է Մանդեպարծեակիկ հասմայերներ  
ոչ առևտրային իրավասուրյուն 3.0՝ արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դուք կարող ես.

արտոնահել ն սուրանել կարգը ցանկացած մնարչայնով կամ կրիչով  
մնարչայնով կամ սրտագրորնկ սուրն կարգը սուրնկնկն հասար կորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material







1999



ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՄՈՒԲԱ ԵՎԵՂԵՅԻՈՅ

ԵՐ

ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ



845

ՄԱՐԿ ԵՎ ՄԱՐԿ ԻԶՄԻՐԵԱՆ

Սրբաբան Մայր Աթոռոյ

Ա. Էջմիածնի



Կ. ՊՈԼԻՍ

ՏԳՈՒՐ ՏՈՐԿՆԵԱՆ

—

1 8 8 1





9 725-60

29 726

60- 6-9

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ


ՀՐԵՍՏԱՆՆԵՐԸ ԸՌԸ-ՔԵԼՈՎԸՆ

ՍՈՒՐԻ ԵՎԵՂԵՅԻՑ

Յ. Տ. ԳԵՈՐԳՍԵ

Մայրագոյն Պատրիարք Կարոպիկոսի

ամենայն Հայր



ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԳԼԵՍԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ




ԵՎ ԳՍՏՐՈՒՆԵՐԸ

Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԵՍԻ Բ. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

« Եւ տեղին այն — Ս. Էջմիա-  
ծնի — լիցի Տաճար Աստուծոյ՝ Եւ  
Տուն աղօթից խնդրուածոց ամենայն  
հասարակելոց . Եւ արտ. Քանա-  
նայապետութեան — Հայոց — : »

ԱՂԱԹԱՆԳԵՂՈՍ



# Ա Ջ Դ

Մեք, որ ի սկզբանէ անտի ընա-  
րութեան Տ. Մկրտիչ կաթուղիկոսի  
կիլիկիոյ, ուշադիր կգանուէինք նորա  
փառասիրական ազգամիտաւ ձգտմանց  
ու սրահանջմանց, և յանախ ազգային  
եկեղեցական վարչութեան ուշադրու-  
թիւնը կհրաւիրէինք՝ առ ի զառաջն  
առնուլ ապագայ միասուց և շարեաց,  
վերջին ժամանակներս ցաւօք նկատե-  
լով նորա անուղղաց գտնուիթ և որ  
քան զոր շարագանջելն ու յամարելն,  
հետամուտ եղանք Հայաստանեայց ե-  
կեղեցւոյ Հայրապետականի իշխանու-  
թեան ժողովին և նպատակութեան վրայ  
հին ու նոր վաւերական տեղեկութիւն  
լիուլի հաղորդել փունջի ազնիւ լ'ն-  
թերցողաց : Եւ որովհետեւ առնեան  
գտնուած հրատարակութիւնք՝ ըստ ու-  
րում ցան և ցիր և անկապ ու անյա-  
րիր, շիրցան բաւական գոհացունել  
մեր հետամտութիւնն, դիմեցինք իզ-  
միրջեան Գերապատիւ Տ. Մատթէոս  
Ս. Եպիսկոպոսի, և խնդրեցինք աշ-

խառատութիւնը յայտն մտաբն : Յանձու ա  
շնորհակալ եմք . անձնութրաբար ըն-  
դունեց մեր խնդիրն և անդր քան զա-  
կընկալութիւն մեր աշխատատարելով  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապե-  
տութեան ամբողջ պատմութիւնն , հին  
և նոր , որոյ նմանք չգտնուիր ցարգ  
Ազգիս մէջ , հաճեցաւ աւանդել մեզ ,  
զոր գրեթէ տարի մը շարունակ լրա-  
գրոյս մէջ մասն առ մասն հրատարա-  
կելէն յետոյ՝ առանձինն տպագրել տա-  
լով կմտառ ցանկեմք արդ Ազգիս , յու-  
սալով որ Գերապատիւ Տ. Մատթէոս  
Ս . Եպիսկոպոսի այս կարեւորագոյն  
աշխատատարութիւնն ակնկալեալ օգու-  
տըն ու արդիւնքը կունենայ և ո՛չ ոք  
կյանդգնի այսուհետեւ ըստ հանձոյս  
իտսիլ Հայրապետական խնդրոց վրայ  
և յաջողիլ պատրել պարզամիտներն ի  
Քրիստոս մտութեան Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյ և Ազգին : Տ. Մատթէոս Արքա-  
զան՝ այսու՛ անմուսանալի յիշատակ մը  
կթողու Ազգիս , և մեք ուրախ եմք ա-  
պաքէն՝ մեր միջնորդ գտնուելուն վրայ :

Հ Ս Ա Ա Ճ Ա Ճ Ե Ա Ն

## Ջ Ե Կ Ո Ւ Տ Ո Ւ Մ Ի Ն

---

Ամենայն խնդիր՝ որ պատմութեան  
կը վերաբերի՝ պատմութեան վերլուծ-  
մամբ կը պարզուի և կը լուծուի :

Այս տեսութեամբ, ահա՛, առջն  
գործոյս մէջ՝ ջանացի Ազիթամարայ և  
Սոսյ կաթուղիկոսական դարաւոր խն-  
դիրներն վերլուծելի գիւրութիւն կար-  
գադրութեան նոյն խնդրոց վասն մի-  
ութեան Ազգիս և առաքելական Ս.  
Եկեղեցւոյս Հայաստանեայց :

Պարտք կը համարիմ խորին շնորհա-  
կալութիւնս յայտնել առ Սեծ. Համ-  
բարձում էֆէնտի Ալաճաճեան Տէր և  
Խմբագիր Փունջ Ազգային պատուա-  
կան լրագրոյն՝ որոյն աշխատասիրու-

Թիւնս իւր թերթին մէջ ընդունեց, և  
յստարակամ յանձնեալ առաւ առանձինն  
ևւս հրատարակել:

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ  
ՄԷՔԷՆՆԻ ՄՅԵ ԱՔԻՄՅ Ս. ԷԸԳՆՆԷ

21 Անդանմբեր 1881

Ի Նոր - Թաղ

Երևանի քաղաք

Կ. Պողոսյ



## Յ Ա Ն Կ

### ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հաստատութիւն — Անկախութիւն — Իշխանութիւն եւ իրաւասութիւն — Պաշտօն եւ պարտաւորութիւն — Հայրապետական կոնդակ առ Տ. Ներսէս Բ. Պատրիարք Կ. Պօլսոյ — Ս. Էջմիածին Մայր աթոռ — Պանդխտութիւն Հայրապետական աթոռոյ յայլ եւ այլ տեղիս — Դարձ Հայրապետական աթոռոյ ի Ս. Էջմիածին : Արեւ 5-266 :

---

## ԱՂԹԱՄԱՐ

Սկիզբն կաթուղիկոսութեան Աղթամարայ — Նշովք եւ արձակուիլն — Տ. Նիկողայոս , Տ. Թովմա եւ Տ. Խաչատուր կաթուղիկոսունք Աղթամարայ — Կանոնադրութիւն վանուց Աղ.

Թամարայ — Կոնդակ Տ. Տ. Ներսէս  
 Ե. Հայրապետի ամենայն Հայոց —  
 Պայմանագիր թեմական Երեսօփոխա-  
 նաց Ազգամարայ — Օժուճն Տ. Պետ-  
 րոս ( ԴԷ-ԸԷԷ-Ը ) կաթուղիկոսի և սպա-  
 նուճն և ինքնընտիր կաթուղիկոսու-  
 թիւն Տ. Խաչատուր Եպիսկոպոսի :  
 Երես 287 - 424 :

ՍԻՍ

Սկզբն կաթուղիկոսութեան Սոսյ —  
 Տ. Տ. Փիլիպպոս Հայրապետ ամենայն  
 Հայոց և Տ. Ներսէս կաթուղիկոս Ար-  
 սոյ յԵրուսաղէմ — Տ. Աւետիք Պատ-  
 ռիարք Կ. Պոլսոյ և Տ. Մատթէոս կա-  
 թուղիկոս Սոսյ — Սկզբնուսորութիւն  
 Աջապահեան ցեղին — Տ. Արքաւան  
 պատպական Եպիսկոպոս Բերիոյ — Ա-  
 րարք Տ. Միքայէլ Ա. և Բ. կաթու-  
 ղիկոսաց Սոսյ — Խրիստեան Ի Աթո —  
 Վաթնան Տ. Արակոս Բ. կաթուղի-

կոսի Սոյ և ինքնընտիր կաթուղիկոս-  
սութիւն Տ. Նիկողայոս Եպիսկոպոսի :  
Երես 425 - 501 :

Նոր ընտրութիւն Հայրապետի  
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ

Վախճան Տ. Տ. Մատթէոս ամեն-  
նայն Հայոց կաթուղիկոսի առաջնոյ —  
Կրկին նամակք Սինոդի սուրբ Էջ-  
միածնի — կաթուղիկոսական Յանձ-  
նատուղով և իւր անդեկագիրը — Պատ-  
րիարքական պաշտօնագիր առ Սինո-  
դըն — Եկեղեցական Վիճակային ժո-  
ղով և իւր զնիւք նկատմամբ Տ. Խա-  
չատուր և Տ. Նիկողայոս ինքնընտիր  
կաթուղիկոսաց Աղթամարայ և Սոյ —  
Հայրապետական բացարձակ ընտրելի  
Թուրքիոյ Հայոց Տ. Գէորգ Արքեպիս-  
կոպոս Պրուսայի — Պատգամաւորք  
Թուրքիոյ Հայոց — Վկայագիր և կոն-  
դակ և հրահանգ պատգամաւորաց —

Պատրիարքական պաշտօնագիր առ Ար-  
 նոզն — Համազգական պատգամաւո-  
 րաց Ժողով ի Ս. Էջմիածին — Ընտ-  
 բութիւն Տ. Տ. Գէորգ Աբքեպիակո-  
 պոսի Պրուսայու ի Հայրապետութիւն  
 ամենայն Հայոց — Փալուստ նորընտիր  
 Հայրապետին ի Կաստանդնուպօլիս —  
 Ազերձ Հայ խմբագրապետաց — Ե-  
 կեղեցական Մասնաժողով և յարարե-  
 րական կանոնագիր — Արկին գրու-  
 թիւնք Աղեկսանդր կայսեր Ռուսաց  
 առ նորընտիր Հայրապետն — Պաշտօ-  
 նագիր առ Տ. Պօղոս Բ. Պատրիարք  
 և պատրիարքական պաշտօնագիր առ  
 Հայրապետն Հայոց փան ՎԵՆԵՆԷ-  
 ՅԷ — Ազերձորութիւն Հայրապետին  
 Հայոց ի Ս. Էջմիածին — Ազերձ Բա-  
 րուսակ պէյի Ֆէրուխեան — Չեռնա-  
 գրութիւն և օժուձն նորընտիր Հայրա-  
 պետին : Երես 501 - 674 :

## Շարունակութիւն կարուղիկոսական խնդրոց Աղբամարայ եւ Սոոյ

Պատրիարքական կոնդակ նկատմամբ  
ինքնընտիր կաթուղիկոս Տ. Նիկողայոս  
Նպիակոպոսի — Գալուստ Տ. Նիկո-  
ղայոս Նպիակոպոսի ի Կ. Պօլիս և ըս-  
ղոքագիր նորա առ Ազգային ժողո-  
վըն — ժողով եօթն զինակաւոր Ն-  
պիակոպոսաց և տեղեկագիր նոցա —  
Տեղեկագիր և ծրագիր կանոնաց պատ-  
րիարքական Թառն ժողովոյ նկատ-  
մամբ կաթուղիկոսութեանց Աղթամա-  
րայ և Սոոյ — Հայրապետական կոն-  
դակ առ Տ. Պօղոս Բ. Պատրիարք —  
Դարձ Տ. Նիկողայոս Նպիակոպոսի ի  
Սիս — Գալուստ Տ. Սարգիս Արքե-  
պիակոպոսի Զաւաղեան ի Կ. Պօլիս —  
Նամակ Սամֆէթ Փաշայի առ Հայրա-  
պետն Հայոց — Հրատարումն Տ. Պօ-  
ղոս Բ. Պատրիարքի — Ընտրութիւն  
ի պատրիարքական տեղապահութիւն  
Տ. Արիստակէս Նպիակոպոսի — Դարձ

Տ. Սարգիս Արքեպիսկոպոսի Ջալալեան ի սուրբ Էջմիածին — Կոնդակ պատրիարքական Տեղապահի առ վեհակայինս Կլիկիոյ՝ նկատմամբ Տ. Նիկողայոս Եպիսկոպոսի — Հրատարումն պատրիարքական տեղապահի և ընտրութիւն Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոսի Խրիմեան ի պատրիարքութիւն Կ. Պոլսոյ — Հայրապետական Կոնդակ առ նորընտիր Պատրիարքն — Երկրորդ գալուստ Տ. Նիկողայոս Եպիսկոպոսի ի Կ. Պոլիս — Վերջնական որոշումն վասն սկզբան ընտրական օրինաց կաթողիկոսացն Աղթամարոյ և Սոյ — Յարարերական Յանձնախումբ : Երես 675 - 857 :

---

Կարուղիկոսական ընտրութիւն Սոյ

Ընթացք Քաղաքական ժողովոյ և Տ. Աիմոն Եպիսկոպոսի Աէֆէրեան ի կաթողիկոսական ընտրութեան Սոյ — Մրագիր Յարարերական Յանձնախումբ

րին — Ընտրութիւն Մարաշցի Տ. Մը-  
 կըրտիչ Եպիսկոպոսի ի կաթուղիկո-  
 սութիւն Սոսյ, փաւերացումն և օ-  
 ծումն — Հայրապետական հեռագիր  
 առ Տ. Մկրտիչ Պատրիարքն — Հայ-  
 րապետական կոնդակ առ Տ. Մկրտիչ  
 Արքազան Մարաշցի եւ պատասխանի  
 նորին առ Հայրապետն — Եպիսկո-  
 պոսական ուխտ և ուխտագիր Տ. Ներ-  
 սէս Եպիսկոպոսի Վարժապետան —  
 Պաշտօնագիր Քաղաքական ժողովոյ ի  
 պատասխանի Հայրապետական հեռա-  
 գրոյն — Հայրապետական կոնդակ ի  
 պատասխանի նոյն պաշտօնագրոյն Քա-  
 ղաքական ժողովոյ — Յանձնաժողով  
 կաթուղիկոսական կոնդակի ինդրոյն,  
 տեղեկագիր նորա եւ իսսամնագիր Տ.  
 Մկրտիչ Արքազանի — Պաշտօնագիր  
 Ազգային ժողովոյ ի պատասխանի Հայ-  
 րապետական կոնդակին : Արեւ 858  
 - 1006 :

## Ը

Կարուղիկոսական փաւերացումն  
Աղթամարայ

Պաշտօնանկութիւն Տ. Պետրոս (դէ-ւ-  
դէ-ւ) կաթուղիկոսի Աղթամարայ եւ  
ինքնընտիր կաթուղիկոսութիւն Տ. Խա-  
չատուր Եպիսկոպոսի — Սպանուի Տ.  
Պետրոս պաշտօնանկ կաթուղիկոսի —  
Քննութիւն սնրագործութեան սպան-  
ման Տ. Պետրոս կաթուղիկոսի — Տե-  
ղեկագիր քննիչ Եպիսկոպոսաց և պաշ-  
տօնագիրք Բ. Դռան — Կասկած  
մասնակցութեան ի նայն սնիր Տ. Խա-  
չատուր Եպիսկոպոսի և քանի ինչ միա-  
րանից Աղթամարայ — Ա. զնա Եկե-  
ղեցական Վիճակային ժողովոյ — Գա-  
լուստ Տ. Խաչատուր Եպիսկոպոսի ի  
Կ. Պոլիս և բողոքագիրք նորա առ  
Ազգային ժողովն եւ առ Վարչու-  
թիւնն — Բ. և Գ. զնաագիրք Եկեղե-  
ցական Վիճակային ժողովոյ — Հայ-  
րապետական կոնդակ առ Տ. Ներսէս  
Բ. Պատրիարք վան Աղթամարայ և

Ասոյ կաթուղիկոսութեանց — Պայմա-  
նագիր ստորագրեալ ի Տ. Խաչատուր  
Արքազանէ — Տեղեկագիր եւ հար-  
ցու թ Տ. Ներսէս Բ. Պատրիարքի առ  
Ազգային ժողովն — Որոշումն Ազ-  
գային ժողովոյ — Թ-էրէր առ Բ. Գու-  
ռըն եւ պատասխանի Բ. Գուռն —  
Վերջնական որոշումն Ազգային ժո-  
ղովոյ եւ փաւերացու թ Տ. Խաչատուր  
Արքազանի ի կաթուղիկոսութիւն Ազ-  
թամարոյ — Դարձ Տ. Խաչատուր  
Արքազանի յԱզթամար : Երեւ 1006 -  
1068 :

Կարուղիկոսական պաշտօնա-  
վարութիւն Տ. Մկրտիչ Արքազանի

Ազգրնական ընթացք Տ. Մկրտիչ  
Արքազանի եւ քարոզ տարեմատեան —  
Ազմուկ Ստեցոսց ի Տաճարի վանաց  
Ասոյ — Տեարակ Տ. Մկրտիչ Արքա-  
զանի յանուն կէլիկէ-նըն է-ր-ըն թ -է-  
Ֆ-վէի — Վերջարան տեարակին —

Չու Տ. Մկրտիչ Արքազանի ի Ան ի  
 Քերթւան և շորս առաջարկք — Հրա-  
 հանք Արլիկիոյ փեմակաց — Պայմա-  
 նաւոր հրաժարական Տ. Մկրտիչ Արք-  
 քազանի — Տեղեկագիր Վարչութեան  
 վասն առաջարկութեանց և ընթացից  
 Տ. Մկրտիչ Արքազանի — Արտումն  
 Ազգային Ժողովոյ — Արտումն ըն-  
 դունելութեան հրաժարականի Տ. Մը-  
 կրտիչ Արքազանի ի Խառն Ժողովոյ —  
 Հարցումն Տ. Ներսէս Բ. Պատրիարքի՝  
 նկատմամբ առաջարկութեանց Տ. Մը-  
 կրտիչ Արքազանի և ընդունելութեան  
 հրաժարականի նորին — Վճռական  
 արտումն Ազգային Ժողովոյ նկատմամբ  
 առաջարկութեանց Տ. Մկրտիչ Արքա-  
 զանի — Պաշտօնագիր Խառն Ժողովոյ  
 առ Տ. Մկրտիչ Արքազան և պատաս-  
 խանագիր նորին — Վերջնական պաշ-  
 տօնագիր Խառն Ժողովոյ առ Տ. Մկր-  
 տիչ Արքազան — Փալուստ Տ. Մկր-  
 տիչ Արքազանի ի Ա. Պոլիս և տեղե-  
 կագիր թեմական Ժողովելոյ Ասոյ —

Նիստ Վարչական խորհրդոյ յ'50 Նս-  
 յեմբերի — Տեղեկագիր Կրօնային ա-  
 տենին առ Տ. Ներսէս Բ. Պատրիար-  
 քըն և կրկին պաշտօնագիր Պատրի-  
 արքի առ Տ. Մկրտիչ Արքազան և պա-  
 տասխանագիր նորին — Քննադատու-  
 թիւն պատասխանագրոյն — Շրջաբե-  
 րական գիր Տ. Մկրտիչ Արքազանի առ  
 փնակայինս Կիլիկիոյ — Քննադատու-  
 թիւն Շրջաբերական գրոյն — Խա-  
 բէական արարք և ջանք Տ. Մկրտիչ  
 Արքազանի առ ի ստանալ զՊէշ-Բն —  
 Յաջողի և ստանալ զՊէշ-Բն — Փո-  
 փոխեալ և յապաւեալ առանձնաշնոր-  
 հութիւնք ի Պէշ-Բն — Տեսակցու-  
 թիւն Տ. Ներսէս Բ. Պատրիարքի ընդ  
 Տ. Մկրտիչ Արքազանի և Հեռեանք —  
 Կազմութիւն խառն յանձնախմբի ի  
 Վարչական խորհրդոյ առ ի ծրագրել  
 զկանոնագիր Սոյ փանուց : Երևո  
 1068 - 1281 :

Եզրակացութիւն , երևո 1281 :

# ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿՔ

	Տող	Միասի	Ուղիղ
1	8	1870	1871
14	8	<i>բազմեցան</i>	<i>բազմեցաւ</i>
52	4	-չ-տ-տ-ի-ն-ը	-չ-տ-տ-ի-ն-ը
62	15	էքէ-գոքո-	էքէ-գոքո-
72/ ժանտոթ.	1	բ-տրէի-ի-ն-	բ-տրէի-ի-ն-
»	1-2	բ-տրէի-ի-ն-	բ-տրէի-ի-ն-
88	19	<i>ւ.ու.ն.ք</i>	<i>ու.ելորդ</i>
92	10	<i>կաղաղօք</i>	<i>կաղաղօք</i>
95/ ժանտոթ.	6	91. ր. 91. 52 (86)	91. ր. 91. 92. (86)

98	17	Մաղթեթաց Ջամբու	Մաղթեթաց Ջամբու	ԺԳ
147	9	Մեխայէլ Ասորի երես 471 *	Մեխայէլ Ասորի երես 471 և Հեթում սիւն երես 79 <sup>+</sup> )	Երես
155	3-4	Երկու սկզբան	Երկու սկզբան	Երես
155 ի ծանօթ.	3	Երկու սկզբան	Երկու սկզբան	Երես
201	7	Եկեղեցական նուր ժողով	Եկեղեցական նուր ժողով	Երես
204	7	Եկեղեցական նուր ժողով	Եկեղեցական նուր ժողով	Երես
211 ի ծանօթ.	13	Կայնաթի ձառարուի	Կայնաթի ձառարուի	Երես
»	»	Կայնաթի ձառարուի	Կայնաթի ձառարուի	Երես
228	8	Մաղթամար Երես	Մաղթամար Երես	Երես

254	10	անոթ	անոթ
255	1	Մոր	Մոր
251	11	Հիւսիսէն Մարտի եւ Հարաւէն Արագած	Հարաւէն Մարտի եւ Հիւսիսէն Արագած
»	14	Երեւոյ մօտ թ	Երեւոյ մօտ թ
279 <sup>հ</sup>	5-6	Խաչեակ	Խաչեակ
294	2	1410	1409
295	2	1410	1409
298	9	1462	1461
»	10	Շահանշահ	Չահանշահ
299	9	1463	1462
305	18	1755	1761

			1761	ժե
506	1	1762		
520	ժանոթ. 3-4	ու. առ		
582	12	բառ այստ	բառ այնտ	
586	ժանոթ. 10	ԳԼ. 12. (38)	ԳԼ. 12. (28)	
595	» 2-5	խորհրդերու համար:	խորհրդերու համար:	
	»	»	(Տես Առեփ. ՕրրէԼ. համար Բ. ԳԼ. ԾԲ. (32):	
	»	»	հեղու 966 թուականին:	
401	14	առնչութիւններ է	առնչութիւններ է	
461	ժանոթ. 1	1185	1185	
»	» 2	1755	1754	

484  
 858  
 605  
 665  
 775  
 891  
 895  
 1115  
 1124  
 1158  
 1161  
 1232  
 1249

4 17 էՆ

10 այՆ

15 ԻԱԱԻԱՄԲ

4 Եւ Մարա

1-2 արժիլ

6 Նէոտ Լ. Գ.

15 Նիսառ Լ.

15-16 Եկեղեցական

15 Նախառանկերու

14 Աւելցեցրցրց

16 Երջն-կն

16 Ներկ-թիք

14-15 Հերանեւայէտ

17 թՆ

այՆ

ԻՐԱԻԱՄԲ

Եւ Մարա

արժիլ

Նէոտ Լ. Գ.

Նիսառ Լ. Գ.

Եկեղեցական

Նախառանկերու

Աւելցեցրցրց

Երջն-կն

Ներկ-թիք

Հերանեւայէտ

## Ն Ա Խ Ա Յ Ա Ն

Ազգային երեսփոխանական ժողովոյ 1870 թգոստ. 28ի նիստէն սկսաւ յուզուիլ Սոսյ խնդիրն թէ՛ նոյն ժողովոյն մէջ, և թէ՛ հրապարակին վրայ, և ուր ուրեմն կարծուեցաւ թէ մարաշցի գեր. Տ. Մկրտչ Եպիսկոպոսին 1870 հոկտ. 27ին Սոսյ կաթողիկոս ընտրուելովն (տես բացումն 1870 ամին ԼԴ. նիստ Ազգ. ժողովոյ երես 549 էջ Ա.) և նոյ. 12ին Ազգային ժողովէն վաւերանալովն (տես բացումն 1870 ամին ԼԴ. նիստ Ազգ. ժողովոյ) և նոյ. 28 կիւրակէ օր կաթողիկոս օժուելովր (տես համարատուութիւն Բաղ. ժողովոյ 1871-1872 ամի

երեսս Ան Էջ Բ.) խնդիրը լուծուած և վերջացած է. յսակայն ճշմարիտ է ըսել թէ աւելի եւս կ'նճռոտեցաւ խնդիրը, եւ ինը տարիներ Ազգ. վարչութեան և Մկրտիչ Սրբազանի միջեւ բանակցութեան նիւթ ըլլալէ վերջ այսօր վերստին հրապարակ ելած է:

Ստոյ խնդիրն առանց իւր ծագման պատմութիւնը սերտելու թզուր է զայն լուծել ճգնիլը, թզուր է և վերջնական եզրակացութեան մը յանգելու համար եղած ջանքը. ասոր համար էր որ 1870 օգոստ. 28էն մինչեւ 1872 թուականին վերջերը Ազգ. Ժողովին մէջ և հրապարակին վրայ բազում տարածայնութիւն և շրփոթ յարոյց, և ոչ նուազ առիթ մատակարարեց կրից յուզման:

և ալ անկէ ետքը յուրջ տրամա-  
բանութիւնը չէր որ խնդիրը իւր  
քննադատութեան բովէն անցընել  
կուզէր, այլ կիրքը, որ յուզած  
էր մտքերը, և տիրած՝ գաղափա-  
րաց վրայ: Այսօր եւս խնդիրն  
տակաւ առ տակաւ այն վիճակին  
կսկսի հասնիլ, և թերեւս այն  
Ժամանակէն աւելի փաստակար ըլ-  
լայ Ազգին:

Արդ՝ ըստ որում խնդիրն ունի  
իւր պատմութիւնն, ըստ որում  
քիչերը տեղեակ են անոր, և ըստ  
որում քար գայթակղութեան ե-  
ղած սոյն խնդիրը իւր այս վի-  
ճակը պիտի շարունակէ ի փաս-  
տկեղեցւոյ՝ եթէ դեռ եւս յա-  
պաղէ պատմութիւնը իւր վճիռը  
տալ: Հետեւապէս ձեռնարկած  
եմք խնդիրն պատմական տեսու-

Թեամբ ներկայել հասարակաց ի մի անդամ և ընդ միշտ լուծու մըն խնդրոյն . և որպէս զի Ստոյ խնդրոյն ի նշ ըլլալը գիւրրմբունելի ըլլայ, հարկ համարեցինք նախ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ և կամ որ նոյնն է ամենայն Հայոց Հայրապետութիւնըն . Բ. Աղթամարայ և Գ. Ստոյ վանահայր փճակաւորաց կաթողիկոսութիւնն իրենց պատմութեամբը քննութեան առնուլ, և անոնց ամեն մէկին առանձինն ունեցած իրաւասութեան սահմանը, պաշտօնն ու պարտաւորութիւնը ցուցնել, որ միայն կրնայ լուծել խնդիրը և վերջացընել :

21 յունվար 1881

Կ. Պոլիս

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՐԵՒԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Եւ Ազգամար ու Սիւ

Հայրապետութիւն Հայրապետանայց

Առաքելական Ս. Եկեղեցւոյ

Ամենայն Հայոց Հայրապետութիւնը կսկսի Թաղէսս և Բարթուղիմէոս Առաքելոց յաջորդ Հայաստանեայց երկրորդ լուսաւորիչ Գրիգորիոսէն, որ համայն ազգին կոչմամբը հաստատեցաւ յայն պաշտօն Հայրապետութեան և հոգեւոր Տէրութեան ազգին և գլուխ կառավարութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, ինչպէս կը գրէ ժամանակակից

պատմիչն Ազաթանգէղոս ի ՃԺԱ.  
(111) գլուխն պատմութեան իւ-  
րում: Իսկ թագաւորն Տրդատիոս  
հանգերձ միաբանութեամբ կնաւ  
իւրով Աշխէն տիկնաւ, և քերթ  
Խոսրովիդ խաով, հրաման ետ ի  
ժողով կոչել միաբանութեամբ ա-  
մենայն զօրաց իւրոց: Եւ վաղ-  
վաղակի հասանէին ի ժամադիրն  
ի կողմանց ըստ հրամանին՝ Այ-  
րարատ գաւառ ի վաղարշտպատ  
քաղաքն: Քանզի և թագաւորն  
չու արարեալ անդր հասանէր:  
Եւ կուտեցան զօրքն ամենայն և  
մեծամեծք և կուտակալք, դա-  
ւառակալք, պատուաւորք, պատ-  
ուականք, զօրավարք, պետք և  
իշխանք, նախարարք և ազատք,  
դատաւորք և զօրագլուխք, հաս-  
եալ կային առաջի թագաւորին:

« Խորհուրդ ՚ի մէջ աննոյր թա-  
ղաւորն ընդ ամենեւոյն, փութալ  
հասանել ըստեաց գործոցն թա-  
ռանդաւոր լինել: Եկայք, ասէ,  
ճեպեացուք ՚՛ զայս ՚՛ զանաջնորդ  
կենաց մերոց առեալ մեզ Սա-  
տուծոյ գործից որ հովիտ կացու-  
ցանել: զի լուծաւորեացէ զմեզ  
մկրտութեամբ, և նորոգեացէ օ-  
րէնաւսոյց խորհրդովն Արարչին:  
Իսկ Գրիգորն ոչ ունէր յանձին  
զայս առնուլ զմեծ պատիւ Քա-  
հանայապետութեանն, ասէ, ոչ  
կարեմ հանդարտիլ վասն անչա-  
փակալ բարձրութեանն ՚՛ զօրել,  
զի անպատում է այն պատիւ Քր-  
իստոստատուր փառացն անաջ-  
նորդութեան միջնորդել ընդ Աստ-  
ուած և ընդ մարդիկ, այլ զար-  
ժանին խնդրեալ գտցեն: »

« Իսկ անդէն տեսիլ սքանչելի  
յԱստուծոյ երևեալ թագաւորին ,  
տեսանէր զհրեշտակ Աստուծոյ՝  
զի խօսէր ընդ նմա , թէ պարա  
է ձեզ գրիգոր վիճակեցուցա-  
նել առանց յապաղելոյ ի Վահա-  
նայութիւն , զի լուսաւորեցէ  
զձեզ մկրտութեամբ : Նոյնպէս  
և երևեալ Գրիգորի հրեշտակի  
Աստուծոյ , զի մի՛ իշխեացէ ինչ  
պնդել յամառիլ վասն այնր , զի  
ի Քրիստոսէ է այդ քեզ հրամայ-  
եալ : Իսկ նա հաւանեալ վաղ-  
վաղակի բարբառեալ ասէր , թէ  
կամք Աստուծոյ կատարեացին : »

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ,  
այսպէս յատուկ հրաւիրմամբ Աս-  
տուծոյ և կամօք անգղին կը կոչ-  
ուի Հայաստանեայց Հովուապե-  
տութեան պաշտօնին , և կըսա-

րիոյ Սուրբ Ղևոնդիոս Արքեպիս-  
կոպոսէն ի ներկայութեան բա-  
զում Եպիսկոպոսաց, ձեռնադրու-  
թեամբ նուիրագործուելով՝ (Տես  
պատմ. Ազատանդեղեայ գլուխ  
ՃԺԲ (112) ՃԺԳ (113) և ՃԺԴ  
(114) կը յաջորդէ Թադէոս և  
Բարդուղիմէոս Ս. Առաքելոյ Հա-  
յաստան աշխարհի առաջին լու-  
սաւորիչներուն . և մկրտելով Տըր-  
դատ Թագաւորը, պալատական-  
ները, նախարարները և ժողո-  
վուրդը կերպապէս կ'ընեն Հա-  
յաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ  
կազմութիւնը իւր-ի ճշն-ը՛ւ անոր  
չՅիւսիս Գրիգոր, եւ հիմն դնելով՝  
Թադէի և Բարդուղիմեայ քարո-  
զութիւնքը, որք արդէն իրենց  
սերմը պահած էին Հայաստանի  
մէջ :

Կապալաչառութեան կործանման  
ժամը կը հնչէ, և Քրիստոնէու-  
թիւնը, որ երեքհարիւր տարիի  
չափ կը հալածուէր, կը պարզէ  
իւր յաղթական խաչանիշ գրոշը,  
և իւր հովանեաց տակ կառնու  
զաշխարհն Հայոց, . . . . .  
. . . . . և Քրիս-  
տոնէութիւնը կը լայ տիրող կը-  
րօնք Հայոց աշխարհին . . . . .  
. . . . . մէջ. և Աստուած-  
ընտիր Հայրապետն Գրիգորիոս  
ի սիրտ և ի հոգի անպատուժ  
բերկրութեամբ լցեալ Հայաստան-  
եայց Նոր-գեւու Քահայեղեքսեան  
վարչութեանը գլուխն անցած՝ կը  
կառավարէ ազատ եկեղեցին Հա-  
յոց ինքուրոյն ազատ և անկախ  
իշխանութեամբ իւր ձեռնասուն  
պաշտօնէից-Եպիսկոպոսաց-գոր-

ծակցու թեամբ և երիցանց օգ-  
 նականու թեամբ, Քրիստոսի 302  
 թուականէն յինչեւ 332 թուա-  
 կանը, այսպիսիքս զայն ժամանակ  
 թուեն խնդրոյն, այն է ա-  
 մենայն Հայոց Հայրապետին թ-  
 րաւատութեան խնդրոյն քննու-  
 թեանը շնորհարկով հատուակս  
 հարկ կհամարիս Եկեղեցւոյ Հայ-  
 րապետական կամ Պատրիարքա-  
 կան իշխանութեան ծաղման վրայ  
 կարճ թ կարճոյ պետութիւն մ'ը-  
 նել, որպէս զի թուեն խնդիրը  
 այնպէս բացատրուի որ պարզ  
 մեկին և գիւրըմբունելի ըլլայ  
 և ահաւասիկ  
 Եկեղեցւոյ կառավարութեան  
 համար թ Քրիստոսէ և յանապե-  
 յոց սահմանեալ պաշտօնէն թեան  
 դասակարգութիւնն է Եկեղեցւոյ

---ՏԻՆԸ, ԵՒԵՐ՝ ԲԻՆՆ Լ ՍԵՐԻ---Ի---  
ԲԻՆԸ, Եպիսկոպոսութիւնը առաւ-  
քելոց յաջորդութիւնն ըլլալով՝  
իւրաքանչիւր Էպիսկոպոս առան-  
ձինն իւր թեմը կը կառավարէր  
օգնականութեամբ քահանայից և  
սարկուսացաց. և Եպիսկոպոսներ  
միահաղոյն դարձակցութեամբ մի-  
մեանց կը կառավարէին ընդհա-  
նուր Եկեղեցին մի և նոյն հաւա-  
սար իրութեամբ և տրամուտութեամբ:  
Այլ սակայն երբ հետզհետէ Ե-  
կեղեցին ընդարձակեցաւ, ողջոյն  
ազգեր ընդունեցին Քրիստոնէա-  
կան կրօնը, և նոյն ազգաց կա-  
ռավարութեան վերաբերեալ աշ-  
խարհաց մէջ տիրող կրօնքն ըլ-  
լալու էական ոյժն ու զօրութիւնն  
առաւ՝ մէկ կողմանէ արքայանիստ  
և զլիսաւոր քաղաքաց ի պատիւ,

և միւս կողմանէ մանաւանդ ընդարձակեալ Եկեղեցւոյ կառավարութիւնը զիրացնելու համար մէկ քանի մայր քաղաքաց Եպիսկոպոսներու իշխանութեան առաւելութիւն կամ ընդարձակութիւն մը և նոյն քաղաքին հետ անմիջական յարաբերութեան մէջ գտնուող Եպիսկոպոսաց վրայ իրաւասութիւն մը ունենալու պէտքը շորրորդ դարուն սկիզբէն երևան եկած էր արդէն : Այս պէտքը դամ քան զգամ զօրանալով Անտիոքայ, Աղէքսանդրիոյ, Հռովմայ (որք հռովմէական կայսրութեան մայրաքաղաքներն էին), Երուսաղէմի (ի պատիւ և ի մեծարանս Իրիստոսի) և Կոստանդնուպօլսոյ (զոր մեծն Կոստանդիանոս շինելով Երկրորդ մայրաքա-

դաք ըրաւ ) Եպիսկոպոսները Հայ-  
րապետ կամ որ նոյնն է Պատրի-  
արք անուամբ պատուեցան , և  
իրի նախաժող Եպիսկոպոս կամ  
լաւ եւս է ըսել Եպիսկոպոսապետ  
իւրաքանչիւրն իրեն տեսչութեանը  
պատկանեալ Եկեղեցւոյն կառա-  
վարութեան գլուխը բաղմեցան ,  
որոյ վրայ կը տարածէր իւր իշ-  
խանութիւնը , և որոյ թեմերուն  
Եպիսկոպոսներն իւր իրաւասու-  
թեան ներքեւ էին , որոց գործա-  
կցութեամբ կը վարէր իւր Հայ-  
րապետական իշխանութիւնը և  
կը հովուէր իւր հօտը :

Պէտք է գիտնալ որ այս գլու-  
խաւոր Եպիսկոպոսը իրենց Տես-  
չութեան պատկանեալ Եկեղեցւոյն  
Յ-ճ-Է - Ը-Դ-Է - Ը-Դ-Է - կը կոչուէին  
ի վսեմականն յայն պաշտօն Հայ-

բապեաութեան կամ Պատրիար-  
քութեան, և այս կերպ ընտրու-  
թենէն կ'առնուին իրենց իշխա-  
նութեան հեղինակութիւնն, և  
իրենց թեմական Եպիսկոպոսաց  
վրայ իրաւասութիւն ունենալու  
իրաւունքը, ինչպէս թեմական  
Եպիսկոպոսներն իրենց վիճակաց  
Եկեղեցւոյն ձայնովը կընտրը-  
ուէին և հաւանութեամբ իրենց  
Եպիսկոպոսապետին կհաստատ-  
ուէին:

Այս կերպով ի Գրիաթոսէ և  
յառաքելոց անտի Նորա հաս-  
տատուած Եկեղեցւոյ պաշտօնէ-  
ութեան գասակարգութիւնը վե-  
րին պաշտօնէութեան յաւելուած  
մ' ունեցաւ Հոյ-Ռեթ-Է-Է-Է կամ  
Պ-Է-Է-Է-Է-Է-Է, որ գլուխն ան-  
ցաւ Եկեղեցւոյ պաշտօնէութեան:

Տոխացեալ իրաւասութեամբ և  
իշխանութեամբ :

Այս է, ահա՛, Եկեղեցւոյ Հայ-  
րապետական կամ Պատրիարքա-  
կան իշխանութեան ծագման ըս-  
կիցքը, կազմաւորութիւնը և հաս-  
տատութիւնը, զոր քրիստոնէա-  
կան Եկեղեցւոյ վաւերական ան-  
խառն պատմութիւնը կը հաս-  
տատէ և մեզ կը հասցնէ :

Բաւական կը համարիմ առ այս  
ի վկայութիւն կոչել նիկիոյ ա-  
ռաջին սուրբ ժողովոյն վեց և  
եօթներորդ կանոնները, որովք  
սուրբ ժողովը Եկեղեցւոյ պէտ-  
քին առաջ կերպարանք առած և  
զօրութիւն ստացած Հայրապե-  
տական կամ Պատրիարքական իշ-  
խանութեան այս կազմութիւնը  
վաւերեց :

Կանոն վեցերորդ — Ազգի-  
 սանդրիոյ Եպիսկոպոսն ընկեր  
 է ինչպէս թէ ի վերայ Եպիսկոպոսի  
 Լիբիոյ և Պենտապոլիայ վասն զի  
 և Հռոմիւսեացւոց Եպիսկոպոսն  
 այս որ լինի ինչպէս (այսինքն այ-  
 րեւմտեան Եկեղեցւոյ թեմերուն  
 վրայ միայն իրաւասութիւնն ուն-  
 նենար) Ոչ ոք չի կրնայ և  
 յԱնտիոք և յայլ գոյսերու  
 Եկեղեցւոց զորք թէ զի ինչպէս  
 (Կանոնիս այս մասը մեր Հայ Ս.  
 Եկեղեցւոյն Հայրապետութեան  
 անկախութեան իրաւանց հաս-  
 տատութեան համար պէտք պի-  
 տի ըլլայ ուստի և հարկ է միտք  
 պահել) և իւրաքանչիւր տեղոյ  
 Եպիսկոպոս կարգեցի ինչպէս  
 թէ Եպիսկոպոսապետի (իւրոյ)

անուայս մայրաքաղաքի 2

Կանոն եօթներորդ: — Ենկիս-  
կնաբանն Երուսաղէմի շրտ ազան-  
ջին ստիտրութեան Էրեմիէ Կարանի  
Տե՛ծ արեւցիլ: Կարանի մ լոկոյ լ

Ճեւտաբլբիբ ընթերցողը՝ քանի  
որ շաննէք Տիեզերական սուրբ  
Ժողովի մը: — Ենկիսյ ժողովոյն —  
կանոնական սահմանադրութեան  
մէջ: Հայաստանեայց Հայրապետ  
տութեան պաշտօնակէս անուան  
Նու՛մը՝ իրաւամբ անշուշտ և ան-  
համբեր կապակէ լսել Անոր հաս-  
տատութեան վաւերական պատ-  
մութիւնը: իրաւունք, բայց սա-  
կաւիկ մի համբերութիւն, ահա  
պիտի սկսիմ գրել և գայն:

Հայաստանեայց առաքելական  
եկեղեցւոյ Երեմիէ-Միշէ խըն-  
դիր եղած է ապաքէն անցեալ  
դարերու եկեղեցական պատմու:

Թեան մէջ, և թէպէտ շատոնց  
իւր լուծումն առած է, բայց ըստ  
որում Յունական մանաւանդ Հը-  
նոսմէական եկեղեցիք տակաւին  
դադրած չեն խնդիր ընելէ, և  
ըստ որում պարզ սրտի կը տես-  
նենք՝ որ վերջին ժամանակներս  
Եկեղեցական պատմութեան գի-  
տութիւնը ոչ միայն աւանդուելէ  
դադրած է ի մեզ, այլ և անոր  
վերժանութիւնն իսկ գրեթէ ան-  
կարելիոր համարուած, կարծէ  
ուրեմն որ մեր Հայաստանեայց  
և կաթողիկէ ուղղափառ եկե-  
ղեցւոյ համար արդէն աւարտ-  
եալ սոյն խնդիրն՝ իւր պարա-  
գաներովն և պատմութեան տը-  
ուած վճռագրովք հասարակաց  
ուշագրութեանն յանձնենք:

Պատմական ստորոգ ճշմարտու-

Թիւն մ'է թէ՛ Սուրբ Գրիգոր լուսաւորիչ Կեանքիոյ Ս. Ղեւոնդիոս Աբրեւիսկոպոսէն ընդունեց ձեռնադրութիւնք, ինչպէս ըսինք ի վեր անդք. բայց սիայն ձեռնադրութիւնը և ոչ թէ Կ-ը-ն և Ը-ը-ն-ը-ն զի եկեղեցին — Հայ ազգը — ընտրեց և Աստուած կրտսեց զնա ի պատշտոն Հովուապետութեան Հայաստանեայց. իսկ իւր յաջորդը — սուրբ Արիստակէս Հայրապետը — որ իւր որդին էր, աղաչանօք Տրդատ թագաւորին, անշուշտ և հաւանութեամբ հօտին իւրոյ, ինք ձեռնադրեց, և կայսցոյ Եպիսկոպոսապետ ամենայն Հայոց, ահա պատմութեան վկայութիւնք, « Ապա աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ զսուրբն Գրիգոր

րիսա, զի . . . ձեռնադրեցէ  
տացէ նմա Եպիսկոպոս զսուրբ  
որդին իւր . . . զՌբատակէս: Զոր  
Ինքնորդ Տէր-Վարդապետ Ինքն-  
էր . . . և յերա նորա կալար զուեղի  
Հայրենեացն, անդէն նստաւ յա-  
թոս կաթողիկոսութեան Հայոց  
մեծաց: (Ազատ. գլ. ճի՛ր (12է):  
Ռրուն յաջորդեցին հետ զհետէ  
Ա. Վրթանէս, Ս. Յուսիկ և Փան-  
ներսէհ Հայրապետները: Թէ այս  
Հայրապետներն սուրբ Գրիգոր  
լուսաւորչին պէս կերտարիա յէն  
ընդունեցին ձեռնադրութիւնը,  
պատմութիւնը որոշ չէ այս մա-  
սին: (Բաղդաւուէ սա հետեւեալ  
անդգային պատմչաց) զլուսներն  
իրարու հետ: Մովսէս Խորենացի  
Գիրք Բ. գլ. ՂԱ. (91), Գիրք Գ.  
Գլ. ԺԱ. (11) և ԺԶ. (16), Յովհանն.

նէս կաթուղիկոս 7Է Թ (9), Ժ  
(10), ԺԱ (11) և ԺԳ (13): Ստե-  
փաննոս Ասողիկ գիրք բ. գլ. Ա (1),  
Բիւզանդ գարութիւն գ. գլ. 12.  
և յն: Բայց Ս. Ներսէս Ա. (Մեծն),  
որ Փառնեբսեհի յաջորդն էր,  
ինչպէս միաբան կը վկայեն պատ-  
միչք, կեսարիայէն ընդունեց ձեռ-  
նագրութիւնը, և եղաւ Հայրա-  
պետ Եկեղեցւոյն Հայաստանեայց  
փրկչական 366 թուականին, և  
իւր սրբակեաց կենօքն և ազգ-  
օգուտու եկեղեցաշէն գործերովն  
առաւել քան դառաւել փայլե-  
ցաց և պանծացուց Հայոց Հայ-  
րապետութիւնը: Երկու տարիէն  
վերջը՝ 366 թուականին Արշակ Բ.  
թագաւորն Հայոց և նախարարք  
Մեծն Ներսէսը Պարսից հաշա-  
կեցին և որոշեցին որ այլ ևս կե-

սարխայէն ձեռնադրութիւն առ-  
նույր դադրից և Հայոց Հայրա-  
պետք իրենց Կաթակոպոսներէն  
ընդունին զայն և զան զանս և զան  
ի նշարատճառներ անդի տը-  
ռնին արդեօք այս հանդիսական  
որոշման . մինչդեռ թէ պէտե մեր  
Հայապատանեայց Հայրապետք ան-  
կախ վարչութեամբ կը կառավար-  
րէին զԵկեղեցին Հայոց, սակայն  
ձեռնադրութեան նուիրագործա-  
թիւնը Կեսարիայէն առնույր Ս.  
Ղեւոնդիոս հաստատարայման  
առաջարկած էր, ինչպէս կըն-  
թեռնունք Տրդատ թագնորին  
Ս. Գրիգոր լուսաւորչի ձեռնադ-  
րութեան առթիւ առ ինքն  
(Ղեւոնդիոս) զրկած հրովարտած  
կին ի պատասխանի զրած ծա-  
մակին մէջ թէ Ղեւոնդիոս հաստատար

Կայցե՛ք վկայութիւն ի մէջ երկուց  
 կողմանցս զի պարզեւ արաչխու  
 թիւն նորոգեալ Քահանայապե-  
 տու թեանդ ձերոյ՞ նահանգից՝  
 առ ի մէջ՝ կայցե՛ք անշարժ յե-  
 կեղեցեօնս Կեսարու ք (վզ անթ-  
 պի ԾԺԶ (ԱԿ 6) անշարժ անշարժ  
 ըստ Արդարեւ խնդիք ձեր արժանի  
 մտադրութեան և նախքինու  
 թեան և լսենք որքեմն նախ մեր  
 պատմարան Եւփհաննէս կաթու-  
 դիկոսին առ աշխարհաւորական  
 և նախարարական որոշումս ի մէջ  
 բերած պատճառներն և լուսա-  
 ւանք մեր քինութեանը ձեռնարկ  
 կենք ձեռնարկս ցարժից Ս  
 ըստ Եւփհաննէս կաթուղիկոս Եւզ  
 ծին ներսէսի ի կեսարխա ձեռն  
 նազրուիք անտր սրայ ի պա-  
 հու ձեռնարկոյ թեան և ի զամ

Աստուածային շնորհաց սքանչե-  
լիքը, և սուրբ Հայրապետիս յօ-  
գուտ ազգին և Եկեղեցւոյ ըրած  
գործքերը եւ բարեկարգական  
տնօրէնութիւնները նկարագրելէն  
յետոյ կըսէ « Զայսպիսի բարե-  
կարգութեան ձեւ և զշուք տես-  
եալ ապա թագաւորին և նախա-  
րարացն Հայոց, այլ և զխատամ-  
բեր վարս նորա ճգնողականս՝ ընդ-  
մտի եզին ըստ այլոց ևս ոմանց  
և զնա եւս նախակարգել ի պա-  
տիւ Պատրիարքութեան: Քանզի  
փոքր ինչ յառաջ քան զայս՝ Կոս-  
տանդիոս օրդի մեծին Կոստանդ-  
ղիանոսի յեփեսոսէ ի Կոստանդ-  
նուպօլիս զնչխարս ոսկերաց Յով-  
հաննու աւետարանչին փոխեալ,  
և յայնմանէ համարձակութիւն  
առեալ Պատրիարք ի Կոստանդ-

Նուպոլիս կացուցանէ : Ապա ըստ  
սմին այսմ պատճառի համարձա-  
կութիւն և Երուսաղէմացեացն  
առեալ զիւրեանցն եւս ամուս-  
հաստատէին ի պատիւ Պատրի-  
արքութեան՝ իրաւունս համար-  
եալ ըստ որում և նմա գոյ տես-  
եալ եղեւ Բանին Հօր ծնունդ և  
ընդ մարդկան շրջիլ, . . . . .  
Ըստ սմին սակի ապա եւ թա-  
գաւորն Արշակ եւ նախարա-  
րութիւնք Հայոց համարձակու-  
թիւն առեալ կացուցին ի Պատ-  
րիարքութիւն Տանս Թորգոմայ  
զՄեծն Ներսէս, փաստս իրաւա-  
խոհս ըստ արժանին ի մէջ առ-  
եալ զսուրբ առաքեալսն՝ զԲար-  
թուղիմէոս եւ զԹագէոս, որք  
Ազգանազեանս ազին փիճակեցան  
ի Տեառնէ քարոզք և աւետարա-

նիչք, և նշխարեալ, ոսկերք նոցա  
 կան ի միջի մերում, զորոց և  
 զաթոռն իսկ ընկալաւ կենդանի  
 մարտիրոսն Գրիգորիոս : (Յովհ-  
 կաթ . 91 . ԺԲ . 12) :

Յովհաննէս կաթ ուղիկոսի պատ-  
 մութեան այս խօսքերէն կը տես-  
 նանք որ Ազգը զՄեծն Ներսէս  
 Պատրիարքն ամենայն Հայոց կացու-  
 ցանելու համար ձակութիւն տեսած  
 ըլլալուն պատճառ զտեղք է :

1. Սրբոյն Ներսէսի բրած բաշ-  
 րեկարգական մեծ գործերը .

2. Անոր սուրբ և ճգնաղական  
 առաքինի կեանքը ,

3. Կաստանդնուպոլսոյ և Երու-  
 սակէմի Յունական պատրիարքու-  
 թեանց հաստատութիւնը :

Եւ իւր այս որոշման օրինակս  
 բութեանը փաստ գտեր է :

Ա. Թանգէսս և Բարթոմէոզիս  
Ս. Առաքելոց Հայաստանի անե-  
տարանիչներն — Եսկիին լու-  
սաւորիչներն — ըլլան և անոնց  
նշխարեալ սկերտիս թի Հայս  
դանու իլը ըլլեն Նախ և Եմմա իլը

2. Ս. Գրիգոր լուսաւորչին սոյն  
այս Ս. Առաքելոց ակժոռն յաճ  
լորդած ըլլալը և յանձնաւոր  
եա Ս. յանպատճառներն և փնա-  
տերը այնպէս մը կներկայացնեն  
կատարուած գործը որ որպէս  
թէ անգը հոգեւոր Եսկանձոգ  
փառուած և կողտանդիսւլայոյս  
և Երուսաղէմի պատրիարքական  
ակժոռոց նորոգ հաստատուելէն  
քաջալերեալ մղուեր է իւր Հով-  
ուապետը Ս. Գրիգոր անուանելու  
և կամ Հայաստանեացց Եկեղեց-  
ւոյ առանձինն պատրիարքական

աթոռ սահմանելու որոշման :

Պատմութեան երեւոյթին նա-  
յելով՝ այսպէս տեանողներն կամ  
մտածողներն իրենց հաւաստիքն  
ունենան թերեւս, բայց ինձ չը  
թուիր թէ ազգը միայն կրօնա-  
կան տեսակէտով ըրած է այս  
տնօրէնութիւնը, այլ քաղաքա-  
կան պատճառ ալ ունեցած է .  
ուստի կը ներուի ինձ անշուշտ  
սոյն պատմական խնդրոյն վրայ  
սա հետևեալ խորհրդածութիւնն  
ընել :

Արշակ երկրորդ եւ նա-  
խարարք եւ ազգն համայն գի-  
տէին անտարակոյս, մանա-  
ւանդ թէ՛ պէտք էին գիտնալ  
որ՝ սրբոյն ներսէսի գործունէ-  
ութիւնն և սրբակեաց առաքինի  
կեանքը՝ Անոր անձնական ար-

Ժանեաց հանգամանքներն էին ,  
և ո՛չ ոք չէր կրնար երաշխաւո-  
րել որ Նորոյն այս հանգամանք-  
ները՝ զանի Պատրիարք կացու-  
ցանելով Անոր յաջորդացը կրնայ  
անցնիլ , զի ընտրելոյն անձին յա-  
տուկ հանգամանքներն էին , և  
ոչ պատրիարքութեան , որպէս  
զի ի Հայաստան Պատրիարքական  
աթոռ սահմանելու համարձա-  
կութեան պատճառ ըլլային :

Գիտէին որ սուրբ Գրիգոր լու-  
սաւորիչ Ս. առաքելոցն թաղէի  
և Բարթոլոմէոսեայ յաջորդն և ա-  
նոնց աթոռակալն էր , և իրեն  
վիճակեալ Հօսին — Հայաստան-  
եայց Եկեղեցւոյն - վարչութեանը  
անկախ գլուխն ու ներկայացու-  
ցիչն էր , և իբր այն՝ հրաւիրեալ  
էր նիկիոյ սուրբ Ժողովոյն , որ

իւր տեղը Արիստակէսը՝ իւր որ-  
դին զրկեց, և և՛ միայն յեւ-դ-դ-  
նիւնը յիւրիցին ընդունելու պայման  
կարծէր հոյն գաւառի Եկեղեցւոյն  
հետոյ Գրգիւսը . . . . . սոց խառն

Գիտէին (նաև թ) պատմութենէ  
թէ Հայաստանեայց սուրբ էկե-  
ղեցւոյ Քահանայապետութիւնն  
և Քահանայապետական  
( սուրբ Էջմիածնի մայր աթոռ )  
յանտուածուսն հաստատեալ էին  
ինչպէս կրնի թեո՞ւն ըբ սրբոյն Գր-  
գիւսի տեւելան վէջ . ախի Խաչն  
լուսաւոր թ նմա՛ է ինքն մեծ Քա-  
հանայապետութիւնն թ վէջ ժո-  
ղովրդոցն . որինակ Քրիստոսի  
պատկերին մարմնանալոյն Քա-  
հանայութեանն օծութեան Աստ-  
ուածորդոյն . Եւ տեղին այն (Ս-  
Էջմիածնի տաճարին տեղը) լիցի՛

տախար Աւստիւծոյ (և) տղան տախար  
 զօթից իննի բնւանքոց ամենանցն հան-  
 ւասացեցոց և իւր սրնոյն տախար իննի  
 կամ իննի զարեոյն (նոյն) (\*) և տախար  
 Եւ ասէ զիս . . . . : Արդ զգոյշ  
 լեր անանգիգ (Հօտիգ) և տախար  
 հանատացաւ ի Տեառնէ Յիսուսէ  
 Իրիսանսէ (և ոչ թէ Ս. Սեղբեաւ  
 ըստէն) ինչպէս կրտսնւանք Հը-  
 առմիւնչու նչք, զի Ս. Սեղբեաւ  
 ըսն ինքն իսկ գիտէր որ շունեւ  
 ցածէն բան մը չէր կրնար եղալ  
 ուրիշին, և զի գիտէր թէ ինչ  
 ընտանի Հօտին բաժանանարը չէր  
 որ այնորինակ անասանէնուն  
 թիւն մը ընելու իրաւունք ունէր

---

(\*) Ազատանգեղեաց կրտսնուհու  
 Գօլթա և զան տախար իննի և մէջ կը  
 գնէ և և անոն իսկ անոյն տախար թեանս  
 Տեառնի կրտս 275 և 280 զմեւսին

նար : Վատիկանի պապատանհան-  
ներն և անոնց սարուկները միայն  
կրնան աանկ սուտ շինել), շի-  
նեսյիք տաճար անուանն Աստու-  
ծոյ՝ որ ցուցաւ ի տեղւոջն, որ  
սիւնն հրեզէն օւնէր զոսկի խա-  
րխին » (Ագաթ. ԳԴ. ՃԲ (102) :  
« Եւ գնկարեալ տեղի տանն Աս-  
տուծոյ շինեաց՝ (սուրբն Գրիգոր)  
. . . , և կանգնեաց անդ զսե-  
ղանն Գրիառոսի » (Ագ. ԳԴ. ՃԻ (120) :

Ագաթ անդեղեաց պատմութեան  
այս հատուածներուն վրայ ըն-  
թերցողաց խորին ուշադրութիւնը  
կը հրաւիրեմ :

Հայոց Աստուածակարգ Հայ-  
րապետութիւնը քանի որ այս  
ամենայն աղատութիւն օւնէր,  
և իրապէս պատրիարքական ամեն

արածնութիւն կը վայելէր, ինչ  
հարկ ստիպեց ուրեմն զԱզգը որ  
զսուրբն Ներսէս Պատրիարք կա-  
ցուցանէ. այժ, կար Վ-Պ մը, որ  
զհարկն կը ծնանէր, և որ ամե-  
նայն հաւանականութեամբ, լա-  
ւա է ըսել ստուգիւ՝ մեր Հայ-  
րապետական հողերու իշխանու-  
թեան անկախութեանը պիտի ըս-  
պառնար ապագային Նախագղոյշ  
անօրէնութեամբ և իմաստուն  
հեռատեսութեամբ խղեց, լու-  
ծեց Սղոյն այդ կապը, և անոր  
վտանգէն ազատեց Հայոց հայ-  
րապետութեան անկախութիւնը.  
Վաղվաղեմ, ընթերցողին համբե-  
րութիւնը հատնելու կը մօտենայ,  
և ըսեմ թէ այդ Վ-Պը ինչ է. Հա-  
յոց Հայրապետաց Կեանքի Կեանք  
Կեանքի Կեանքի Կեանքի Կեանք

է, զոր գրած էր սուրբն Ղեւոնդիոս, ինչպէս իւր թղթոյն խօսքերովը ցուցինք և որ թերեւս ազգէն ընդունած էր. Բեշ-կըսեմ, զի պատմական հաւաստիք մը չունիմ ի ձեռին որ յառաջ բերեմ, և զի չկայ ալ որ բերեմ: Սակայն ի՞նչ փնտա ասկից և ի՞նչ քաղաքական հետեւութիւն. հարցումքն իրաւացի, բայց և կարծեմ պատասխանն իրաւ և հետեւական: Պատմական հաւաստեօք ապացուցեալ է թէ՛ այն ատեն մեր քաղաքական իշխանութիւնը Հրապարակական կայսրութեան ազգեցութեանը ներքեւ էր, այնչափ որ թագաւորաց դահակալութիւնն իսկ անոր հրամանին կը կարօտէր երբեմն (տես Յով. Կաթղ. Գլ. ԺԲ. (12), և

երբ Կոստանդնուպօլիս երկրորդ  
մայրաքաղաք եղաւ Հռովմէական  
կայսրութեան՝ փրկչական 330  
թուականին, սոյն քաղաքին Ե-  
պիսկոպոսն ալ կարեւորութիւն  
մ'առաւ, և սկսաւ անոր իրա-  
ւասութիւնը Փարբ Ասիոյ դաւա-  
ռաց եկեղեցիներուն վրայ, յորա-  
էր և Կեսարիոյ եկեղեցին, տա-  
րածուիլ, երբ մանաւանդ Կոս-  
տանդիոս կայսրէն Պատրիարք  
պատուանունն ընդունեց :

Կայսերական պերճութեամբ  
ճոխացեալ մայրաքաղաքին՝ Կոս-  
տանդնուպօլսոյ Եպիսկոպոսին ի-  
րաւասութեան այսպէս տարած-  
ուիլն և տակաւ տա տակաւ զօ-  
րանալն ուշադրութեան առնը-  
լով՝ Արշակ երկրորդ եւ նա-  
խարարք, եւ հաւանականաբար

կանխատեսելով որ օր մը անոր  
կրամ այս պատուանունը կամ իշ-  
խանութեան առաւելուլը եկե-  
ղեցոյ հասանութիւնն իսկ պիտի  
ընդունի, ինչպէս որ եղաւ ալ  
Կաստանդնուպօլսոյ Տիեզերական  
Ս. Ժողովոյն մէջ, որ Ս. Ներսիսի  
պատրիարքարանալէն 366 թը-  
ւականէն առան եւ հինգ տարի  
եւաքը՝ այսինքն 381 թուականին  
դամարուեցաւ, որոյ երրորդ  
կանանը կրտէ Կաստանդնուպօլ-  
սոյ Եպիսկոպոսն ունիցի շ-տէ-  
---+---Տէ-ն յետ Եպիսկոպոսին Հը-  
ւովմոյ, քանզի Կաստանդնու-  
պօլսն անոր Հասմ է և առաի ե  
Կաստանդնուպօլսոյ Եպիսկոպո-  
սին՝ Կաստանդնուէն Պատրիարք  
կոչուիլը մեծ իրաւամբ պատճառ  
բանելով առիթը շխարհացուցին և

և մեր քաղաքական իշխանութեան  
պէս հօգեւորականին անկախու-  
թիւնն ալ կեօարիոյ Եկեղեցւոյն  
Արքեպիսկոպոսին հետ կաս-  
տանդնու պօլսոյ Եպիսկոպոսապե-  
տին իրաւասութեան շնթարկե-  
լու համար, զի ալ այնուհետեւ  
մեր Հայրապետական իշխանու-  
թիւնն ալ քաղաքականին պէս  
Բիւզանդիոյ կայսերական դահ-  
լիճէն կախումն պիտի ունենար,  
որ ոչ նուազ մնասակար պիտի  
ըլլար մեր քաղաքական կացու-  
թեան, փութացին և Մեծն Ներ-  
սէսը ամենայն Հայոց Պատրիարք  
կացուցանելով խղեցին ձեռնա-  
դրութիւնք կեօարիոյ Եկեղեցիէն  
առնելու ԴՅՂԷ ԿՂԷ, որուն յա-  
ջորդող Հայրապետք մինչև այժ-  
մեան ծայրագոյն Պատրիարքն ա-

մենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Գ.  
որ և է մէկու մը իրաւասութենէ  
անկախ իրենց եպիսկոպոսներէն  
ընդունած են Հայրապետական  
ձեռնադրութիւնն ու օծումը, և  
կը վարեն իրենց պաշտօնը: Այս  
պէս պիտի շարունակէ քանի որ  
կայ Հայոց ազգը, և Հայաստան-  
եայց ամենասուրբ Եկեղեցին.  
մինչդեռ կեսարիոյ Արքեպիսկո-  
պոսը իւր Եկեղեցիով նոյն ատե-  
նէն ի վեր Կոստանդնուպօլսոյ  
յունական Պատրիարքութեան ի-  
րաւասութեանը տակ կը գըտ-  
նուի: Կեղեւեցի պատմութիւնը,  
և անոր ծաւրերուն մէջ՝ այս  
խնդրոյն համար սա վկայութիւնը  
գտայ ինձ ի նպատակ «Չկնի սորա  
(մեծին Ներսիսի) ապա կայու-  
ցին յաթու նորա զՇահակ . . .

ոչ եւս ըստ սովորութեանն առաջնոյ առաքեալ զնա ի կեսարիա , այլ լքեալ ի բաց զօրէնն առաջին ըստ օրինի Պատրիարքաց կալան կարգ , ժողով Եպիսկոպոսաց ձեռնադրելով . . . զի Է՛ - Ե՛ԼԵ՛Ց - Է՛ՆԵ՛Ց Ը՛ԻԳ Ի՛Ե - Է՛Բ - Է՛ԿՅԷ՛Ն՝ Ե՛ Ի՛ԶԻ՛Կ - Է՛Լ - Է՛ԲԷ՛ՑԷ՛ Է՛ Գ - Գ - Է՛Ե - Է՛ Պ - ԳՐԷ՛Է - Է՛Ի - Է՛ԲԷ՛Ն՝ օ , ( Յովհ. կաթող. գլ. ԺԳ. (13) :

Այս է , ահա , այս խնդրոյն նկատմամբ իմ քննական տեսութիւնն և խորհրդածութիւնը և պատմութեան տուած կնիքը , որ բաւական կը համարիմ ի լուծումն խնդրոյն :

Արշակ Բ. թաղաւորին և նախարարաց և Եկեղեցւոյ ուխտին զմեծն և զսուրբ Ներսէս Պ - ԳՐԷ՛Է՛ՑԻ՛ կացուցանելու պատճառ -

որ թո՛ղ ըլլայ զուտ չե՛նչ-չե՛նչ, կամ  
 +չ-+չ-չե՛նչ և կամ կրօնականէ և  
 քաղաքականէ խառն, եթէ ներքինի  
 է պահ մ'ըսել, չե՛նչ-+չ-+չե՛նչ, որ  
 ամենաստոյգն է և ճշմարիտը .  
 սա և եթ զխանալ պէտք է սա-  
 կայն թէ՛ անգին այս արարքք ,  
 ըստ որում Եկեղեցւոյ պատկանե-  
 եալ խնդիր , շե՛նչ-չե՛նչ էր Եկեղեց-  
 ւոյ առաջ և Տիեզերական ժողովէ  
 մը լ-+լ-+լե՛նչ զնչ+չեթէ ո՛չ ուղղա-  
 կի գէթ անուղղակի ընդունե՛ց :

Կրօնական տեսակէտով՝ խըն-  
 դիր մ' է և այս , զոր պէտք է  
 լուծել և հաւասանել պատշաճ  
 փաստիւք :

Անշուշտ չէք մտցած տակա-  
 լին, սիրելի՛ ընթերցողներս , որ  
 երբ քիչ մ' առաջ նիկիոյ սուրբ  
 ժողովոյն վեցերորդ կանոնը ի

վկայու թիւն կոչեցի, որ մէկ քանի  
 գլխաւոր քաղաքացի Եպիսկոպոս-  
 ներու իշխանութեան ի թեմօրայս  
 իւրեանց աարած ուխը կը վաւե-  
 րէր, անոր վերջին պարբերու-  
 թեանը վայ հրաւիրեցի ձեր ու-  
 շաղքութիւնը, և խնդրեցի որ  
 ի մօտի ունենաք զայն: Սիրելի է  
 ինձ հաւատար թէ կը յիշէք ան-  
 շուշտ որ այն վեցերորդ կանոն-  
 նին այդ պարբերութիւնը կըսէր  
 « Եւ յայ քուսս իւր-սնչե-ր Եկեղեցի  
 ուղեք ան յիւր իւր աստեղ-  
 կըն գիք և անոր քացաւորութեան  
 թէ ինչպէս հինն եղաւ մեր ազ-  
 գային որոշման, և օրինաւորեց  
 զայն: »

Նիկիոյ սուրբ Ժողովոյն պատ-  
 ուական հարք իրենց սահմանած  
 վեցերորդ կանոնին այս յաւել-

ուածով կը վճռեն որ Աղէքսանդ-  
 րի, Անտիոքայ, Հռովմայ և Ե-  
 րուսաղէմի պէս՝ ուրիշ դաւառ-  
 ներու ամեն մէկ Եկեղեցի ալ իւր  
 իրաւունքը ունենայ, ի՞նչ իրա-  
 ւունք է այս. ըսեմ՝ մի՛ մտածեր.  
 Ի՞նչ իրաւունք,  
 Ի՞նչ իրաւունքը, զոր  
 սուրբ Ժողովը նոյն քաղաքաց Ե-  
 կեղեցիներուն՝ յանուն ներկայա-  
 ցուցչաց նոցա, Տասնաւորապէս  
 տալէն յետոյ, որոշեց նաև վրճ-  
 ուարար՝ որ ամեն մէկ դաւառ-  
 ներու Եկեղեցիք ալ, որ իրենց  
 Եպիսկոպոսներով և այլ ստոր-  
 նակարդ պաշտօնէիւք և Ժողո-  
 վրրդովք ամբողջութիւն մը կը  
 կազմեն, ունենան շէ՛ և նոյն իր-  
 ան՝ Ի՞նչ իրաւունք և ո՞չ իր-  
 ան իրաւունք :

Եթէ ըստ այսմ Քրիստոնէա-  
կան սիրոյ և ազատութեան վրայ  
հիմնեալ վճռոյ առաքելաշնորհ  
Հարց Նիկիոյ՝ անձնիւր դաւառի  
Եկեղեցի պիտի ունենար իւր ի-  
րաւունքը, անվրէպ հետեւու-  
թեամբ պէտք էր ունենալ նոյնը  
և Հայոց Նահանգը, Հայաստան  
աշխարհը, Հայաստանեայց անդ-  
րանիկ Եկեղեցին, . . . . .

. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .

իւր սրբափայլ ուխտը եկեղեցւոյ  
պաշտօնէութեան և անոր պատ-  
ուական գլուխը առաքելական  
յաջորդութեամբ. հետեւապէս  
ազգը մեծ իրաւունք տեսաւ իւր  
Նախալուսաւ օրչացն թագէի և

Բարժուղխմեաց՝ սուրբ առաքելոց  
հախուսեանն գաւազանք կրող, և  
անոնց յաջորդ՝ առաքելագործ  
Գրիգորիան խնւար՝ հոգւոց լու-  
սասու հայրապետին աթուակալ  
Հովուսապետը — Կ — Դ — Ե — Զ — Է — Ը — Թ — հրա-  
տարակել, և Հայրապետական  
ձեռնագրութիւնը կեանքիոյ Ե-  
կեղեցիէն առնուլը գագրեցնել:

Այս, շատ ճշմարիտ էր աղ-  
գին այս անսուժիւնը և շնորհ  
Անտարակոյս կեանքիոյ Արքեպիս-  
կոսոսը լսած էր Հայաստանի մէջ  
կատարուած այս անօրէնութիւ-  
նը, բայց չէր բողոքած, որուն  
հակառակը հաստատող պատմա-  
կան վկայութիւն չունինք ի մեզ  
եթէ ըլլար բողոք կամ գիտողու-  
թիւն մը իւր պատասխանովն  
անշուշտ պիտի կարդայինք այսօր

մեր պատմագրաց մէջ, որք գի-  
տէին լսել, գիտէին և պատշա-  
ճապէս պատասխանել:

Ինչպէս ըսինք Մեծին Ներսի-  
սի Պատրիարք հրատարակուելէն՝  
Գրիատոսի 366 թուականէն ԱՅ  
տարի ետքը գումարեցաւ Կ.Պօլսոյ  
Տիեզերական սուրբ ժողովը, ուր  
հրահրեցաւ և Հայաստանեայց  
Հայրապետը՝ Ս. Ներսէս. հսն էր  
և Կեսարիոյ նոյն ատենի Արքե-  
պիսկոպոսը՝ Հեղատիոս, որ և  
թէ իրաւունք ունենար կրնար  
Հայոց Եկեղեցւոյ Հայրապետին  
անկախութեան համար՝ ազգին ը-  
րած անօրինութիւնը խնդիր ը-  
նել, զի գեռ շատ նոր էր, և  
հազիւ ուրեմն տասն և հինգ տա-  
րիներ անցեր էին, և առաջի առ-  
նել ժողովին թէ՛ Հայք իրենց Ե.

պիսկոպոսապետը անկախ Պատե-  
ռէ հռչակեցին, և կեսարիոյ Ե-  
կեղեցիէն ձեռնադրութիւն ըն-  
դունելու ընդէն զայն խղեցին,  
զոր նախորդս՝ սուրբ Ղեւոնդիոս  
դրած էր և ինչ կեսարիոյ Եկե-  
ղեցին այս պատեհ առթիւ մէջ  
ալ Հայոց արարքք բողոքոյ նիւթ  
չբռաւ, ինչպէս և ոչ ամբողջ Հարք  
ժողովոյն դիտողութիւն մը չբրին։  
Արդ՝ ըստ սրտ մեծին ներ-  
սեւի ազդին կողմանէ պաշտո-  
նապէս Պատրիարք անուանու մը  
մինչ ցգո՛ւ մարումն Տիեզերական՝  
ժողովոյն կասաանդնու պոլսոյ ԱՅ  
տարի անցած էր, և այսչափ  
միջոցի մէջ շէր կարելի եղածը թա-  
գուն մնալ, այլ հաւանականա-  
բար ժողովոյ հայրերէն շատերը,  
մանաւանդ կեսարիոյ և այլ սահ-

մանակից հարք անտարակոյս ի-  
մացած էին, և այս ասանկ ըլ-  
լալով հանգերձ սուրբն Ներսէս  
հրաւիրեալ էր ի Ս. Ժողովն յայն,  
ըստ որում կեսարիոյ արքեպիս-  
կոպոսը Հեղատիտ հոն ներկայ  
գանուած և եղածին տեղեակ  
ըլլալով խնդիր չյուզեց, և ըստ  
որում Ժողովն ո՛չ մասնակի և ո՛չ  
ամբողջովին Հայոց Եկեղեցոյն  
այս արարքին գիտողութիւն մը  
չընելէն զատ իրեն գործակից ու-  
նեցաւ զմեծն Ներսէս իբրև Հա-  
յաստանեայց սուրբ Եկեղեցւոյ  
ներկայացուցիչը, ուստի և իրա-  
ւացի կըլլայ ըսել թէ կաստան-  
դնուպօլսոյ Տիեզերական սուրբ  
Ժողովը լուելեայն ընդունեց Հա-  
յոց Եկեղեցւոյն մէջ կատարուած  
այս եղելութիւնը, և անոր օրն-

— արլլալը ճանաչելով զ—ել—կ—ն—  
Բե—ն Կի+ը տուաւ :

Քան զասոնք աւելի կշռող  
փաստ մ'ալ . լսէ եւ զայն :

Քրիստոսի ԿՅՂ Թուին Եփեսոսի  
տիեզերական Ս. Ժողովը գումար-  
ուեցաւ, որ ասոն թէ և Սուրմակ,  
Բրքիչոյ ապօրինաւ որու թեան փ-  
ժածները կային, սակայն ազգին  
օրինաւ որ հօտապետը՝ անմահ յի-  
շատակաց արժանի Ս. Սահակ  
Պարթեւն էր. ժողովին հրաւիր-  
ուեցաւ Ս. Սահակ, ինչպէս և  
այլ ուղղափառ Հայրապետք .  
չկրցաւ երթալ սակայն, զի ազ-  
գային ամենացաւալի խնդրոց հա-  
մարՊարսկական արքունեաց դրո-  
ները կը գեղերէր. ուստի թըղ-  
թակցու թեամբ և իւր թարգմա-

նիչ աշակերտներուն ձեռք Ս.  
Ժողովոյն կանոնական սահմանա-  
դրութիւնքն ընդունելով շատա-  
ցաւ : (տես Մովսէս Խորենացի  
գիրք Գ. գլ. ԿԱ (61) :

Եփեսոսի Ժողովոյն մէջ ընդ  
այլ խնդիրս քննութեան առնը-  
ուեցաւ նաև Կիպրոսի Արքեպիս-  
կոպոսին՝ Անտիոքայ Հայրապե-  
տին հետ ունեցած խնդիրը : Կիպ-  
րոսի Հաեգինոս Արքեպիսկոպոսը  
երկաւ Կիպրացի Եպիսկոպոսնե-  
րով բողոք մատուցել Եփեսոսի Ս.  
Ժողովոյն ընդդէմ բանական ա-  
բարոց Անտիոքայ Յովհաննէս ա-  
նուն նոյն ատենի Հայրապետին,  
որ Դիոնէսիոս իշխանին գրել ար-  
ուած էր առ Կիպրոսի Թէոդորոս  
գատաւորն թէ՛ մինչև Եփեսոսի  
Ժողովը որչաւ մ' ընէ Կիպրոսի

Եկեղեցւոյն համար՝ Եպիսկոպոսի  
ձեռնադրութեան թողտուութիւն  
չընէ, բայց կիսորացիք ունին շղջ-  
նելով այս հրամանին՝ սոյն այս  
Հռեղինոսը իրենց Արքեպիսկո-  
պոս ընտրեցին, որ իւր Եպիսկո-  
պոսներէն ձեռնադրութիւն ըն-  
դունելով՝ անցաւ իւր աթոռը  
այլ ըստ սրում խնդիրը՝ վերջա-  
ցած չէր գիտեց ժողովոյն և ա-  
նոր վճիռը խնդրեց:

Ժողովը քննելով և ստուգելով որ  
կիսորոսի Արքեպիսկոպոսներն յան-  
խիշատակ ժամանակէ (յսուպե-  
լոյն անախ Բառնարայ) իրենց Եպիս-  
կոպոսներէն կրնդ ունէին ձեռնա-  
դրութիւնը, և անկախորէն կը հաս-  
տատուէին իրենց իշխանութեան  
աթոռը, որոշեց որ նոյն սովո-  
րութիւնը հաստատ պահուի յայ-

տարարելով թէ՛ « Պէտք չէ բառ-  
նալ մէկէն Յիսուսի Գրիստոսի  
մեր ամենուս Փրկչին արեամբը  
զնուած — շարժելու, ուստի և  
բառ առաջնոյն Անտիոքայ Եկե-  
ղեցիէն անկախ հրատարակեցաւ  
Կիպրոսի Եկեղեցին Բառնարաս  
առարելոյն համար, որ ի Կիպ-  
րոս առաջին անգամ Աստուծոյ  
աւետարանը քարոզեց, և կազ-  
մեց անդ զԵկեղեցին Գրիստոսի »  
Անտիոքայ Հայրապետը իւր  
չունենցած մէկ իրաւունքը կը պա-  
հանջէր Կիպրոսի Եկեղեցիէն, որ  
ի հնուց անկախ էր և կամ Ան-  
տիոքի Եկեղեցիէն կախեալ ըլլա-  
լու թուականը չէր կրնար ցուց-  
ուիլ որոշ և պատմական հա-  
ւաստիք մը չունենալուն համար :

Այս խնդիրն իւր այս միջանկիւն

մէջ Անաստասայ Հայրապետին պըն-  
գելովը մինչեւ Տիեզերական ժո-  
ղովի — Եփեսոսի Ս. Ժողովին —  
ատեանը կելլէ — ընդ հակառակին  
Հայոց Հայրապետին Կեսարիոյ Ե-  
կեղեցիէն ձեռնադրու թիւն առ-  
նուր դադրելու խնդիրը, երբ  
մանաւանդ մեծն Ներսիսէն մին-  
չեւ Ս. Սահակ Պարթեւէն շարունակ-  
ապետը անկախութեն իրենց Ե-  
պիսկոպոսնեքէն ձեռնադրու թիւն  
ընդունած ըլլալու խնդիրն աչ ա-  
ւելցած էր, և որոց թուականը  
նոր, որոշ և պատմու թեանք  
յայտնի էր, այնչափ որ մեծն  
Ներսիսէն (366 թուականէն) 65  
և Ս. Սահակ Պարթեւէն (390 թը-  
ւականէն) Ա տարիներ անցած  
էին տականին, ընապիսոպու-  
թեան ենթակայ չըլլար ժողովոյն

մէջ, և Կեաարիոյ նոյն աստեղի  
Արքեպիսկոպոսը Փիրմնո, որ մին  
էր ի հարց ժողովոյն, և որ Կիպ-  
րոսի խնդիրը լած, և անոր  
քննութեան և վճռոյն մասնա-  
կցած էր, գիտնալով հանդերձ  
մանաւանդ որ Կոստանդնուպոլ-  
սոյ կայսրութեան վերաբերեալ  
բաժնին մէջ Կեաարիոյ Եկեղեց-  
ւոյն թեմը գտնուող Հայերը Կոս-  
տանդնուպոլսոյ Ազդիկոս Պատ-  
րիարքին և Թէոդոս կայսեր թող-  
տուութեամբը Ս. Սահակ Պար-  
թեւ իւր Հովուապետութեան  
խնամոցը ներքեւ առած էր, եր-  
բէք բողոք կամ խնդիր չըլլաւ  
Հայոց Հայրապետին անկախու-  
թեանը դէմ, և ինչո՞ւ, ո՞չ ա-  
նոր համար որ ինչպէս կրտսն ու  
կրտսն Հռովմ և իւր արքանեակ-

ներք թէ՛ Ս. Սեղբեսարոսէն պա-  
տիւ և անկախութիւն ընդունած  
է Ս. Գրիգոր լուսաւորիչ, զի այս  
դատապարտելի սուտ է, և չունի  
իւր պատմական հաւատարիմ վը-  
կայութիւնը, այլ անոր համար  
որ թաղէսս և Բարթուղիսէոս  
Ս. առաքելոց յաջորդութիւնն էր  
Հայոց Հայրապետութիւնը, և  
անոր համար որ սրբոյն Գրիգոր-  
իտսի անկախութիւնը ընկալեալ  
էր արդէն, և նշանակուած՝ Ե-  
պիսկոպոսարանաց դատադանա-  
դրոց մէջ, ուր չորրորդ Հայոց Ե-  
պիսկոպոսարանները յիշելէն ևտ-  
քը կրտէ «Գիտելի է՛ զի -- (Հայ-  
րապետութիւնն Հայոց) ԻՆՔՆԼ-  
ԳԼՍԽԻՍ Է ՚Ղ --Է-Լ Ի՛Ն-Ն-ԳԲ--ԲԻ՛-Ն  
ԸՆԳ --ԳԻԼ-Կ-Ն --Բ--Գ-Ը, ՚ՂԳ--Գ--Է-Լ  
Ը-Ն --ԳԲ՝Ն ԳԲԻԳ-ԳԻ (լուսաւորիչն) Հ-  
ԳԲԳ-ՆԵՆՅ Ծ :

Այս կերպով, ահա՛, Հայաս-  
տանեայց առաքելական Ս. Եկե-  
ղեցւոյ ազգովին որոշուած ան-  
կախութիւնը, Եփեսոսի Տիե-  
ղերական Ս. Ժողովոյն մէջ կիւյ-  
րոսի խնդրոյն հետ՝ իւր որոշու-  
ե վաւերական ըլլալու պաշտօ-  
նական վճիռը լուրջեայն ընդու-  
նեց : Աւասիկ Լամբրոնացւոյն վը-  
կայութիւնն ալ. « Ունիս ասել  
թէ՛ վասն զի ի մէնջ ոչ ունիք  
զառաջարկութիւնն ձեռնադրու-  
թեան, ծաղու արժանի այս կար-  
ծիք : Զի թէ ի զսկզբնուսան ո՛չ  
ի ձէնջ՝ ի գէպ էր զայս կարծել :  
Իսկ ապա թէ՛ Սուրբն Գրիգոր  
ի կեսարիա առ զՀնորհն, եւ  
սուրբն Ներսէս (Մեծն), եւ այնու  
եկեալ լուսաւորեցին զՀայս, ան-  
կարօտ մնացին վերասին առ ձեզ

ի ձեռնադրութիւն գառնալոյ :  
Ձի նիկիոյ ժողովոյն սահմանն  
ցուցանէ որ երեք Եպիսկոպոսքն  
կարող են զիւրեանց նախաթուան  
( Հայրապետը ) ձեռնադրել : Եւ  
Գաբաթիկոնն ( Թիփաթիկոն — ցու-  
ցակ ), յորում կարգ Եպիսկոպո-  
սացն սահմանի , գրեալ է որ՝ Հայոց  
կաթողիկոսն զգառնադրութիւնն  
Գրեթեթի , Գրեթեթի կաթողիկոսն  
Գրեթեթի ( Գրեթեթի ), և յիւրեանցն  
Եպիսկոպոսաց առնուան Արքեպիս-  
կոպոսքն զձեռնադրութիւնն : Եւ  
զայս ի ձեր գրացն ունիմք հաս-  
տատել և ոչ ի Հայոց : Ահա ա-  
սիկ ցուցաւ թէ ոչ և այն անի-  
նացի Հայոց կաթողիկոսն յիւրեանց  
կաթողիկոսն յեռնադրել : ( Նամակ Լամբ .  
առ Յունադղի Ոսկան ճգնաւոր ,  
որ նորա պատարագի մեկնու-

Թեան վերջը առանձին թղթա-  
համարով ապուած է յերեսագէմ-  
անս անդ երես 24) :

Հայոց ի Քրիստոս Յիսուս նա-  
խահաւատ ազգին և Հայաստան-  
եայց առաքելահինն սուրբ Եկե-  
ղեցւոյն Հ-ը-դե-հ-ն կամ որ  
նոյնն է Ք-դ-դ-դ-ն իշխանու-  
թեան ծագման պատմութիւնը  
Թէ՛ Վ-ն-ն-ն և Թէ՛ Ք-դ-դ-դ-ն առ-  
տութեամբ որչափ կարելի էր մա-  
նրը քննեցինք : Եւ այդ պատ-  
մութեան վկայութիւնն և նի-  
կիոյ , կասանդնուպոլսոյ և է-  
փեսոսի Տիեզերական սուրբ Ժո-  
ղովոց հաւանութեան վճիռք ի  
ձեռին անփրէպ հետեւութեամբ  
կը հանինք սա եզրակացու-  
թեանց Թէ՛

Ա. Հայոց նախկին լուսաւորիչ սրբոց առաքելոցն Թադէի և Բարթուղիմեայ արժանաժառանգ աթոռակալ, Տանա Թորգոմայ երկրորդ Լուսաւորիչ սուրբն Գրիգորիոս իւր առաքելաձան երկանց Տնունդ՝ Հայաստանեայց վերակազմեալ Եկեղեցւոյն Հոգեւոր Տէրն և ԻՆՔՆԱԳԼՈՒԽ Հայրապետն ըլլալու պատիւն ընդունած, և ըստ այնմ՝ անկախօրէն կառավարած է զԵկեղեցին Քրիստոսի, և միեւնոյն պատուով ու արտօնութեամբ իւր յաջորդներ ինչպէս մինչեւ ցարդ վարած են իրենց բարձր պաշտօնը նոյնպէս պիտի վարեն և առ յապայն :

Բ. Արշակ երկրորդ և նախարարք եւ ուխտ Եկեղեցւոյ պաշտօնէութեան զսուրբն Ներ-

սէս մեծ Հայաստանեայց սուրբ  
Եկեղեցւոյ Պատրիարք կացուցանե-  
լով և հռչակելով՝ մեր Հայրապե-  
տաց Կեսարիոյ Եկեղեցիէն ձեռ-  
նադրութիւն ընդունելու գոյնը  
արդար պատճառներով և իրա-  
ւացի փաստերով լուծած ու խը-  
զած են :

Գ. Ազգին այս տնօրէնութիւնը՝  
Նիկիոյ Ս. Ժողովոյն վեցերորդ  
կանոնի վերջին պարբերութեան  
սկզմամբ, և Կոստանդնուպոլսոյ  
ու Եփեսոսի Ս. Ժողովոց յանուն  
Կաթուղիկէ ուղղափառ Եկեղեց-  
ւոյ տուած հաստատութեան վճռովս  
օրինակ և վերահան ըլլալու կնիքն  
հաստատապէս ընդունած է, և

Դ. Ամենայն Հայոց Հայրա-  
պետք՝ յանուն Կաթուղիկէ Եկե-  
ղեցւոյ տրուած այս ԱՐԴՅՐ էր-

-- Բ Իրրեւ ԿԻԻ ՊԻԻԻԻԻԻ արեւ  
 ւերեան Հայաստանեայց սուրբ  
 Եկեղեցւոյն ձեռնադրութեանն  
 ու օծութեանը Իրենց եպիսկո-  
 պոսներէն ընդունելով պատրի-  
 արքական բարձր հեղինակու-  
 թեամբ և իրաւասութեամբ կը  
 համարեն իրենց հօտը և կը կա-  
 ստարեն՝ գործակցութեամբ Ե-  
 պիսկոպոսաց և օգնականու-  
 թեամբ վարդապետաց ու քա-  
 հանայից :

Դեռ բուն խնդրոյն շանցած  
 կ'ուզեմ թիչ մ'ալ Եկեղեցւոյ  
 բարձրաստիճան պաշտօնէից արը-  
 ուած սա հետեւեալ պաշտօնա-  
 կան անուանց վրայ խօսիլ և  
 ի մէջ բերել Հայոց Հայրապետա-  
 կան այժմեան կնքոյ, կոնդակաց  
 վերնագրի և ստորագրութեան

ձեռքն և Եկեղեցւոյ պաշտամանց  
վերաբերեալ գրոց մէջ ամենայն  
Հայոց հայրապետին յիշատակու-  
թեան համար նշանակեալ կեր-  
պը պատշաճ յոյժմանքն մնչմնչաքն

Այս պաշտօնական անուններն  
են, զիստեղծարարացի զեւրոպայեան

Եպիսկոպոս, Քահանայապետ,  
Արքեպիսկոպոս, Եպիսկոպոսա-  
պետ, Աթոռ ղիկոս, Պատրիարք  
կամ Հայրապետ քաղաքի, քան զայն

Եղի-կ-դ-- . — Այս անունը յու-  
նական Եթի-թիթո- բառին տառա-  
դարձութեամբ հայացած ձեռն  
է, որոյ Հայերէն թարգմանու-  
թիւնն է Տե--ը:

Եպիսկոպոս անունն առաքեալ-  
ներէն Եկեղեցւոյ կառաւարու-  
թեան համար սահմանուած պաշ-  
տօնէն թեան առաջին դասակար-

դին յատկացած է, [Թէեւ եր-  
 բեմն նոյն դասակարգին վերա-  
 բերողք եւէ՞ անուամբ ալ յիշուած  
 են (Տիմոթէոս Ա. գլ. Գ. (3) հմբ 2,  
 Տիմոս գլ. Ա. (1) հմբ 7, Տիմո.  
 [Թէոս Ա. գլ. Դ. (4) հմբ 14) Մեր  
 սուրբ Գրիգոր Լուսաւորիչ սոյն  
 այս Նշէ-ի-չ-— անունով յիշուած  
 է, ինչպէս, «Եւ եղեալ ժողով բա-  
 ղում եպիսկոպոսաց ի քաղաքին  
 Կեսարացւոց՝ զի ձեռնադրեացեն  
 զսուրբն Գրիգորիոս, և աւան-  
 դել ի նա զպատիւ . . . և զբարձ-  
 րութիւն Նշէ-ի-չ-—- [Կ-ն . . .  
 Իսկ ընդ որ անցանէին կուտէին  
 ժողովուրդք ի վերայ ժողովրդոց  
 տեսանել զսուրբ Եպիսկոպոսն  
 Գրէ-ի-չ-— . . . Աղաթանգեղոս  
 գլ. ՃԺԳ (113). Սոյն անունով  
 յիշուած է և Հասովմայ Հայրա-

պեան՝ սուրբ Սեղբեատրոս և Սըր-  
բիլ լուացմամբ կենսատու աւա-  
ղանին ի ձեռն Սեղբեատրոսի Եղի-  
կ-Դ-ի (Մովսէս Խորենացի գիրք  
Բ. գլ. 29 (83) : Կոստանդնու-  
պօլսոյ Ատափկոս Հայրապեան ալ  
առ Ս. Սահակ պարթեւ գրկած  
Թղթոյն վերնադրոյն մէջ Եպիս-  
կոպոս կանուանէ գինքը Աղղի-  
կոս ինքնադլուխ Եղի-Կ-Դ-ի Կոս-  
տանդնուպօլսի Եղբօր սիրելւոյ և  
աթոռակցի՝ (Ուշ-Դ-ի-ի) Սա-  
հակայ Եպիսկոպոսի Հայոց ի Տէր  
Ինգալ՝ (Մովսէս Խորենացի գլ.  
Ծէ (57) :

Ս. Սահակ Պարթեւ Հայրա-  
պեան եւս սոյն Եպիսկոպոս ա-  
նունը կը դորձած է առ Թէոդոս  
կայսր, առ նոյն Աղղիկոս Հայ-  
րապետ և առ Անադոլիա դորա-

վար գրած թղթերուն վերնա-  
 գրոց մէջ ըսելով « Սահակ Հա-  
 յոց Եղե՛կ-դո՛ւ ի Տէր խնդալ » (Մով-  
 սէս Խորենացի գիրք գ. 4Լ Մ է  
 (57): Նմանապէս Եպիսկոպոս ա-  
 նունը կը գործածէ մեր Ս. Յով-  
 սէփ Հայրապետը առ Թէոդոս  
 կայսր ուղղած թղթոյն սկիզբը,  
 ուր կըսէ « Յովսէփ Եղե՛կ-դո՛ւ բա-  
 դում Եպիսկոպոսակցօք իմովք »  
 (Եղիշէ յեզանակ Գ.):

Ք-հ-ն-յ-դ-դ — Երբայց յոց + հ-ն-  
 շահանայ կամ քաւոդ- քառէն  
 Ք-հ-ն-յ քաւը և անկից ալ սոյն  
մէջ գումարուած Հայոց Եկեղե-  
ցական ընդհանուր Ժողովներու  
հրահրուած էին անանկ ալ մեր  
Հայրապետաց յարեւմուտս գրա-  
նուած ապեն գումարուած Եկե-  
ղեցական ընդհանուր Ժողովոց  
նեղից գանուելու հրաւեր ըն-  
դունած են : Տ. Տ. Ներսէս Դ.  
Հայաստանեաց շնորհալի և սուրբ  
Հայրապետը, անյազմ ամտուա-  
ծարանը Յաւնաց կիս Մանուէլ  
կայսեր և Տ. Միքայէլ կաթան-  
գնու պատգ Պատրիարքին ինն պա-  
հանջմանց հերքման արժանի պա-  
պաստանը որոշմամբ անհնայն Ե-  
կեղեցւոյն Հայոց, տալու համար

Եկեղեցական ընդհանուր ժողով  
գումարել հարկ դատեց ըստ օրի-  
նի, յոր հրաւիրեց ընդ արեւելա-  
կան Եպիսկոպոսունս Հայոց նաև  
իրեն ժամանակակից Աղուանից  
կաթողիկոսն՝ Տ. Ստեփաննոս  
(տես Ընդհանրական երես 156-  
157 և 165 տպագ. յերուսաղ),  
որ Աղուանից աշխարհէն եկաւ  
մինչ ի Հռոմկլայ, ուր գումարե-  
ցաւ ժողովը. բայց աւանդ որ Եկե-  
ղեցւոյ հոգեւտաւիդ քնարերգուն,  
հոգելից բանաստեղծը, հաւատոյ  
աննկուն ախոյեանը Շնորհալին  
Ներսէս Գ. չկրցաւ նախագահել  
իւր հրաւիրած ժողովոյն, վասն  
զի երանելի Հայրապետը նոյն  
տարին 1173 օգոստ. ամսոյ Տին  
հինգշաբթի օր աւանդեց առ Տէր  
իւր սրբամենայ հոգին, և յաւե-

լաւ առ հարս իւր (տես Ընդ-  
հանրական երես 165 տպագ. յե-  
րուսղ. և Միխայէլ ասորի երես  
471\*), այլ իրեն փոխան իւր ազ-  
գակիցն և յաջորդը Տղայ մակ-  
անուանեալ Տ. Տ. Գրիգոր Դ. Պահ-  
լաւունի Հայրապետը, որ Յու-  
նաց տարապայման պահանջմանց՝  
ըստ որոշման ժողովոյն պատշաճ  
և անդիմադրելի պատասխանը  
տուաւ ժողովական թղթով մը :

Ուշագրութեան արժանի է որ  
սոյն որոշմնաթուղթը մեր նոյն  
Հայրապետն Աղուանից Տ. Սաե-  
փաննոս կաթուղիկոսին, ինն Հայ  
Աբբեպիսկոպոսաց և քսաներկու

---

(\*) Սուրբ Ներսէս Շնորհալուոյն փախ-  
նանման Թուականի շիտթութիւնն այս  
երկու պատմութիւններն միացնելով  
կարելի է ուղղել :

Եզրինկոսոսաց Տեա սայէս ձեռ  
 անդրած է : ԵՅԳ թից օրիտս սպոր  
 մեմե երանին Ասատկոյ կ-ր-անկ-  
 շարտ Բժշակակարէրու Կրտ  
 -ժառ Կեկոտի Կրտուիւն Գ : Վարդապ  
 արտս Կարտարու թեան Կերքե  
 ձեանդրած է և Ազուանից կա  
 թեզրիտին այսպէս :  
 Աստիփաննոս Կուտար կ-ր-  
 անկ- Բ-ն Աշ-նէր : (Տես Ընդ  
 Տանրահան կրես 198 տարագր  
 յերդասպիւ) : Եւ Վարդապ  
 Վ. Աննայի Չարտի Հայրապետին  
 իրանուի թեան Կերքե Գանուայ  
 Ազուանից կաթեզրիտին  
 Կրտ խորտիւն Կեանայս է կ  
 դեր , որ պարտ է և Կանանկու և  
 որ անշունտ իրանու կր կուտայ  
 մեզ գիտել թէ՛ Մայ փանահայր  
 փնտկաւ օրին , որ թէ՛ կաթի և

Թէ՛ ոչ՝ Հայոց Հայրապետին ան-  
միջական իրաւաստ թեան արակ  
է՛, աստորազ թու թիւնն Եւրոպեաց  
է՛ Գեղարքայ Եւ ոչ թէ՛ Սարգսն Եւրո-  
կայ վանած այր վիճակաւ օրին ըն-  
տարազ թու թեան արկս Եւրոպեաց  
Կառնայ Եւ Կառն Եւրոպեաց Եւրո-  
կայան անդնու պնդոյ Հայոց Պատ-  
րիարքը Տ. Եւրսէս Բ. վարած  
պետեան Կառնայ Եւրոպեաց Եւրո-  
պեան խօսքը անսա՛ ինդրեմ թ  
Նորին Սրբազնու թեան (Տ. Մկրտ-  
ապէ Սրբազանէն) Եւ Եւրոպեաց  
Թողուլ զգործածու թիւնն Եւրո-  
պեան աստորազ թու թեան Եւրո-  
պեանակամ է՛ Ազգային կեդրո-  
նական վարչութեան կրօնական  
ատենին ան ինչն վնասը ցած  
1880 Դեկտեմբեր 10 թուական  
անդեկազ թին վերեւ Եւրոպեաց

Այսպէս ընդ վերին իրաւա-  
տութեամբ Հայաստանեայց Հայ-  
րապետին շարունակեց Աղուանից  
կաթուղիկոսաց յաջորդութիւնը  
մինչեւ Տ. Սարգիս Բ. որ Հասան  
Չարալի 1240 թուականին կա-  
ռուցած ու աւարտած Գանձա-  
սարայ վանուց մէջ 1794 թուոյն  
օծուեցաւ կաթուղիկոս և 1815ին  
Երեւանի և Կոնստանդնուպոլսի  
միջև սկսաւ Արեւելից և Կովկասի  
միջև, որ աստե՛ն ամենայն Հայոց  
Հայրապետն էր Տ. Տ. Եփրեմ եր-  
ջանկայիչատակ Հովուապետը, և  
վախճանեցաւ Տ. Սարգիս Բ. 1828,  
յորմէ հետէ Աղուանք Հայաստան-  
եայց Հայրապետութեան անմի-  
ջական հոգեւոր իշխանութեան  
ենթարկուելով Հայոց հետեւում  
է հոս և է հիւսիս : (Տես համառոտ

Եկեղ . պատմ . Տ . Ստեփաննոս ա .  
ւազ Գահաճայի Մանգինեանց ե .  
րեա 139 - 140 . տպագր . ի Ս . Էջ .  
միածին ) :

Յընթացս դարուց պատմական  
անժխտելի հաւաստեօք տեսանք  
Հայոց Հայրապետն իւր հոգեւոր  
իշխանութեամբն ու վերին իրա .  
ւասութեամբը ինչպէս Հայոց  
Նոյնպէս և Աղուանից և Վրաց  
Եկեղեցեաց մէջ . Ժամ իսկ է ա .  
նոր Հայաստանեայց սուրբ Եկե .  
ղեցւոյն վրայ ունեցած հոգեւոր  
յատուկ իշխանութեան և իրա .  
ւասութեանն նկատմամբ ևս վերջ .  
նական եզրակացութեան մը յան .  
դիլ :

Արդ՝ ըստ որում ամենայն Հա .  
յոց Հայրապետը մեր Եկեղեցա .  
կան կանոնաց ու ծիսից համա .

ձայն քնարութեամբ ու խափ Եկե-  
 ղեց ասին և համայն ազգին և ձեռ-  
 նադրութեամբ ու օժման համարա-  
 դարձութեամբ Ե՛ր- - - Ե՛ր- - - Ե՛ր- - -  
 Եւ Հայաստանեայց նախարարոց  
 առևտարանից աւրբ թագէտ և  
 Բարձր զինեալ առաքելոց և  
 սրբոց հօրն մերոց Գրիգորի առա-  
 քելաց որձ հախաւայեալին և լու-  
 զարարչին Հ- - - Ե- - - Ե- - - և  
 քատ որում ասին առաքելական  
 յաջողութեան իրաւանց զօրու-  
 թեամբ է Գ. Ա. Կ. մարմնոց Եկե-  
 ղեց և ոյ Հայաստանեայց Ե- - -  
 Գ- - - Ե- - - և Կ- - - ամենայն  
 Հայոց և մարմնաբանաց և մարմն  
 Աւստի և անվրէպ և անքրն  
 նազ առեցի հեռուութեամբ Հա-  
 յաստանեայց քնդ հանուր Եկե-  
 ղեց ասին և անոր իւրաքանչիւր



բապեաթին Հայոց, որ պարտական է ԿԵՆՑԻ ՉԼԻՓ պաշտպանել և պահել զայն անվթար և գործադրել անվրէպ իրրել սուրբ և նրա իրական --- առաքելական Եկեղեցւոյն Հայոց :

Հայաստանեայց Հայրապետին հողեր որ իշխանութեան և իրաւասութեան ընդարձակութեանը նկատմամբ պատմական անդիմադրելի հաւատփքներն յառաջ բերելէ ետքը՝ կանցնինք, արդ, անոր շարժել և շարժուելն զբայ գրել, ինչպէս մեր նախաբանին կարգը կը պահանջէ, բայց որովհետեւ ամենայն Հայոց Հայրապետն իւր բարձր կոչման սեփական յատուկ էր --- նմեք ունի, ուստի անոր պաշտօնն ու պարտաւորութիւնքը ի գիր առնելէ

առաջ պիտի թուեմ անոր այս  
խրատներն, որք են :

Ա. Հայաստանեայց սուրբ Ե-  
կեղեցւոյ մարմնոյն առաքելայա-  
ջորդ միակ ընդհանրական իւր-  
և-իւր շէշքն (ամենայն Հա-  
յոց Հայրապետն) եւեթ ըլլալը :

Բ. Եպիսկոպոս ձեռնադրել :

Գ. Ս. Միւռոն օրհնել և բաշ-  
խել :

Դ. Ազգային Եկեղեցական ընդ-  
հանուր ժողով գումարել :

Ե. Թեմական վիճակաց առաջ-  
նորդներն ըստ կանոնաց Եկեղեց-  
ւոյ (ընտրութեամբ և առաջար-  
կութեամբ թեմայնոց) կարգել և  
արձակել :

Զ. Ժամանակ առ Ժամանակ  
կամ ի պահանջել հարկին ընդ-

հանրական թուղթ կամ կոնդակ  
դրելել առ ամենայն Եկեղեցիս Հա-  
յոց ուր ուրեք որ գտնուին :

Է. Հայոց Ազգին հովանաւո-  
րութիւն ընող կայսերաց , թա-  
գաւորաց և իշխանաց գահակա-  
լութիւնը անձամբ կամ հայրա-  
պետական յատուկ կոնդակաւ շը-  
նորհաւորել , և ի հարկին Եկե-  
ղեցւոյ և ազգին բարձրագոյն պի-  
տոյից համար խնդիր մատուցանել  
անոնց , և կամ Եկեղեցւոյ բռնաբար-  
եալ մէկ իրաւունքը պաշտպանել  
անոնց առջև բանիս կամ դրով ա-  
սի միանգամայն պարտիք ալ է , և

Ը. Հայաստանեայց Եկեղեցւոյ  
կանոնաց համաձայն ի սուրբ Պա-  
տարագի և այլ քարոզից մէջ իւր  
անուան յիշատակութիւնը կատա-  
րել տալ :

Ասոնք այնպիսի իրաւունքներ  
են որ նոյն իսկ Հայրապետական  
խշխանութենէն անմեկին և ան-  
բաժան են, և իբր այն հարկ չմը-  
նար երբէք զասոնք հաստատելու  
փաստեր որոնել, զի և Հայոց  
Հայրապետութեան հետ ծագումն  
առած և անոր հետ հաստատ-  
եալ են :

Ամենայն Հայոց Հայրապետին  
դուրսէ Հայաստանեայց առաքե-  
լական սուրբ Եկեղեցւոյ և անոր  
բոլոր պաշտօնէից վրայ շնորհա-  
կան արարելուն և զիքն հոգւոյն  
որմէ կը ծագին իւր սա գլխաւոր  
դրոշմովն :

Ա. Հայաստանեայց ամենա-  
սուրբ Եկեղեցւոյ Բրիտաննէական  
առաքելաբարոզ հաւատոյ ուղ-  
ղափառ դաւանութիւնն ու վար-

դասակարգութիւններն, և բարոյա-  
կան Աստուածազիր օրէնքներն  
ու պատուէրները, եկեղեցական  
առանգութիւններն և տրարողա-  
կան ու այլ ծէսերը առանց յա-  
ւերման և յապաւման անսխալ  
պահել և պաշտօտանել, և զա-  
նոնք անայլայլակ պահել տալ բո-  
լոր առաջնորդաց և վանահարց  
և անոնց միջոցաւ ստորնակարգ  
պաշտօնէից և ժողովրդեան:

Բ. Նոյնպէս էին և նոր կառ-  
կարանաց ամբողջութիւնն և ա-  
նւարեւական ու եկեղեցական կա-  
նոններն ամենայն հաւատարմու-  
թեամբ պահպանել և կրօնական  
խնդիրներն ըստ այնց լուծել, և  
անոնց այսօրինակ պահպանու-  
թեանն ու կիրառութեան պար-  
տաւորել բոլոր թեմական միտա-

կաց առաջնորդներն ու վանա-  
հարքը :

Գ. Հայաստանեայց Եկեղեցւոյ  
և անոր Հայրապետութեան իրա-  
ւունքներն , անկախութիւնն և ա-  
զատութիւնը պահել անկորուստ ,  
պաշտպանել արիութեամբ և յար-  
գել տալ օրինաւորութեամբ :

Դ. Հսկել բոլոր բարձրաստի-  
ճան Եկեղեցականաց վրայ, որ ի-  
րենց ուխտին հաւատարիմ մնա-  
լով իրենց կոչման պարտաւորու-  
թիւնքը յօգուտ Եկեղեցւոյ և ազ-  
գին ի գործ դնեն :

Ե. Իրենց կոչման անհաւատա-  
րիմ և պարտուց կատարման զան-  
ցառու պաշտօնեայքն ըստ կա-  
նոնաց Եկեղեցւոյ ի կարգ և յուղ-  
ղութիւն կոչել , և ի վերջին հար-  
կի յետ կանոնական բնութեան

պատժել ըստ սահմանեալ օրինաց  
Եկեղեցւոյ :

Զ. Եկեղեցւոյ որդւոց մէջ կրօ-  
նասիրութեան , բարեպաշտու-  
թեան և առաքինագործութեան  
զարգացմանը սրտի մտօք վաս-  
տակիլ , և պարտաւորել թեմա-  
կան հոգևոր տեսուչներն ու վա-  
նական միաբանութիւններն որ ի-  
րենց հովուութեան յանձնեալ հօ-  
տին համար նոյն սրտեռանդն  
աշխատութիւնն ունենան :

Է. Ազգային մանկտւոյն մա-  
նաւանդ Եկեղեցական կարգի  
պատրաստուող անձանց բարւօք  
կրթութեանն ու դաստիարակու-  
թեանը մեծ խնամ և հոգ տա-  
նիլ , և պարտաւորել առաջնորդ-  
ներն ու վանահարրը որ նոյն հո-  
գատարութիւնն ունենան իրենց

վիճակայնոց կրթութեան մասին :

Ը. Վանական միաբանութեանց վրայ հսկել՝ որ վանքերն իրենց բուն նպատակին ծառայեցնեն :

Թ. Հարկը երեւան ելած ատեն անձամբ այցելել իւր հօտին և ժողովրդեան հոգեւոր պէտքը լցուցանել և մխիթարել զնոսա, և կամ իրեն փոխան յատուկ նը-  
ուիրակ առաքել, և անոր միջոցաւ կատարել իւր հովուապետութեան վսեմ պարտաւորութիւնը :

Ամենայն Հայոց Հայրապետն իւր այս պարտաւորութիւններն որք միանգամայն իրաւունքներն են, ի Ռուսաստան, ի Պարսկաստան և ի Հնդկիս թեմակալ առաջնորդաց և վանահարց, իսկ ի Տաճկաստան կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք արքեպիս-

կոպուսին ձեռօք ի դորժ կըդնէ :  
Հայոց Հայրապետք մինչեւ  
1828 թուականն թէեւ կը զըր-  
կէին իրենց նուիրակներն յայլ և  
այլ դաւառս Հայաստանի, որ ՚ի  
Տաճկաստան, բայց նոյն թուա-  
կանին Տաճկաց ընդդէմ Ռուսաց  
Տղած պատերազմին պատճառաւ  
նուիրակաց երթեւեկութիւնք և  
Հայրապետաց անուան յիշատա-  
կութիւնք դադրած էր. իսկ երբ  
Զմիւռնիոյ առաջնորդ Տ. Մատ-  
թէոս արքեպիսկոպոսն (յետոյ  
1858 թուին Հայրապետ Հայոց)  
1844ին կոստանդնուպօլսոյ Պատ-  
րիարք կըլլայ՝ իւր առաջին ան-  
գամ մատուցած պատարագին  
կը յիշատակէ ամենայն Հայոց  
Հայրապետին անուներ, որոյ փո-  
խարէն օրհնութեան կոնդակ

կրնդունի Տ. Տ. Ներսէս Ե. ար-  
ժանայիշատակ Հայրապետէն :

Այս կոնգակն առիթ բռնե-  
լով Տ. Մատթէոս Պատրիարք  
ընդհանուր ժողով կը գումարէ  
ի Մայր Եկեղեցւոյ, յորում նը-  
ուիրակաց երթեւեկութեան դա-  
դարումը և կոտտանդնուպօլսոյ  
պատրիարքաց Հայրապետական  
փոխանորդ ըլլալը պաշտօնապէս  
կը հաստատուի, և Հայոց Հայ-  
րապետին անուան յիշատակու-  
թեան վերսկսումը մեծ հաճու-  
թեամբ կը լսէ և կրնդունի ժո-  
ղովը :

Ահա ժամանակակից պատմչին  
վկայութիւնը :

« Յառաջիկայ կիրակէին մա-  
տոյց անդ (Եկեղեցին Բերայի)  
պատարեազ և յիշատակեաց զՏէր

Ներսէս ընդհանրական կաթողիկոսն ամենայն Հայոց և զԺայրագոյն Պատրիարքն Արարատեան Մայր աթոռոյն, որոյ յիշատակութիւնն շէր տակաւին սկսեալ յեկեղեցիս Հայոց, զի յաւուրցանաթի պատերազմաց, որ եղեն ի 1828 ամին ընդդէմ Ռուսաց, բարձեալ էր յիշատակութիւն կաթողիկոսին Էջմիածնի յեկեղեցեաց Հայոց՝ հրամանաւ Բ. Դրան և երթեւեկութիւն նուիրակաց դադարեալ ։

« Հասեալ այս ամենայն յաւանջս Սրբազան կաթողիկոսին Ներսիսի, գովեաց յոյժ զխոհականութիւն Մատթէոս Պատրիարքին, և առաքեաց կոնդակ օրհնութեան ի Քիչնովայ, որ ընթերցաւ ի Մայր էկեղեցւոյ Պատ-

ըրիարքարանին փառաւոր հանդի-  
սիւ : Գրեալ էր ի կոնդակին , ե-  
թէ հանդերձեալ է ելանել ի Պե-  
տարապիոյ ի յունիսի Ծ , և եր-  
թալ ի Պետրբուրգ ըստ հրաւի-  
րելոյ կայսերն Ռուսաց , և անտի  
երթալ յԷջմիածին , և օծանիլ  
անդ Կաթողիկոս » :

« ( 1844 ) Զայս կոնդակ օրհ-  
նութեան առիթ կալեալ ի ձե-  
ռին Մատթէոս Պատրիարք , ա-  
րար ժողով մեծ ի Մայր Եկեղեց-  
ւոջն հողեւորականաց և աշխար-  
հականաց , և ստորագրութեամբ  
ամենեցուն և բարեհաճութեամբ  
սկսաւ դարձեալ յիշատակութիւն  
Կաթողիկոսին Էջմիածնի ի Պա-  
տարագին յԵկեղեցիս Հայոց Սո-  
մանեան տէրութեան , բայց եր-  
թելեկութիւն նուիրակաց վրճ-

ուեցաւ դադարել բոլորովին, այն-  
պէս զի՝ Պատրիարքն Կոստան-  
դնուպօլսի լինիցի փոխանորդ Կա-  
թողիկոսին, զեկամուտս սրբոյ  
աթոռոյն նա հաւաքեացէ, և հա-  
սուացէ. միւռոնն սուրբ առ նա  
առաքեացի, և նա բաշխեացէ իւ-  
րաքանչիւր վիճակի ըստ պիտո-  
յից ժամանակին : »

« Զայս ամենայն դրեաց Մատ-  
թէոս Պատրիարք առ ներսէս  
Կաթողիկոս, որ ոչ սակաւ ցա-  
ւեցաւ վասն նուիրակութեանն  
դադարման . . . . .  
. . . . .  
. . . . .

բայց իրաւունս ետ ժողովոյն  
կարդադրութեանն : » (Պատմու-  
թիւն Աւետիս վարժապետի Պէր-  
պէրեան, գլ. ՄԴ. (54) :

Ըստ այսմ 1844 թուականէն  
ի վեր Կոստանդնուպօլսոյ Պատ-  
րիարքներն Ամենայն Հայոց Հայ-  
րապետին և ծայրագոյն Պատրի-  
արքին ԺԺԻԿԴ Ծանօցուեցան  
պաշտօնագէտ, և սոյն Հայրա-  
պետական փոխանորդու թեան գօ-  
րու թեամբ պաշտօնագէտ յանուն  
Հայրապետին Հայաստանեայց ինչ-  
պէս բոլոր Առաջնորդաց և վա-  
նական միաբանու թեանց անանկ  
այ Աղթամարայ և Սոյ վանա-  
հայր վիճակաւ որաց, առաջնորդաց  
և վանական միաբանու թեանց  
գրաց և՛ իրենց ձեռնհասու թե-  
անն վերեզած և կրօնական բարձ-  
րագոյն ինչոց լուծման համար  
առ Հայրապետն ամենայն Հայոց  
դիմելու կանոնական պայմանաւ,  
իրենց հոգեւոր Կոչումնու թիւնը

տարածուեցաւ, որ մինչեւ ցարգ  
կը շարունակուի :

Կոստանդնուպօլսոյ Հայոց ներ-  
կայ Պատրիարք Ա. Բքեպիսկոպոսը  
Տ. Ներսէս Բ. Վարժապետեան  
իւր պատրիարքական ընտրու-  
թիւնն ծանուցանելու համար  
1874 յունիս 4 թուականաւ առ-  
այժմեան Տ. Տ. Գէորգ Գ. Հայրա-  
պետն մեր ուղղած որդիական  
ակնածութեամբ յի գրոյն ի պա-  
տասխանի սա հետեւեալ Հայրա-  
պետական կոնդակն ընդունեց,  
որ կը բացատրէ մանրամասն այս  
ամենը և որ ըստ վաղեմի սովո-  
րութեան Եկեղեցական մեծ հան-  
գիսիս կարդացուեցաւ Մայրա-  
քաղաքիս և գաւառաց Եկեղեց-  
եաց մէջ :

Գ. Գէորգ Ժառայ Տրիստոսի և

անհասանելի կամօքն Աստուծոյ  
Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս  
ամենայն Հայոց ծայրագոյն պատ-  
րիարք համադգային նախամե-  
ծար աթոռոյ առաքելական Մայր  
Եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջ-  
ՄԻԱՄՆԻ, գերապատիւ ներսիսի  
Արքեպիսկոպոսի նորընտիր Պատ-  
րիարքի Հայոց Կոստանդնուպոլ-  
սոյ հարազատ որդւոյ մայր ա-  
թոռոյս և յաւէտ սիրեցելոյ մե-  
րում խնդալ ի Տէր :

« Ի քսաներորդ հինգերորդ ա-  
ւուր ամսեանն Յունիսի հասեալ  
առ մեզ այսր գրութեան սիրել-  
ւոյդ մերոյ ի քէն նոյն ամսոյ՝ և  
ընթերցեալ ախորժ հաճութեամբ  
սրտի և հոգւոյ՝ տեղեակս եղաք  
կոչման ձերոյ ի պաշտօն Պատրի-  
արքութեան Կ. Պօլսոյ ըստ հա-

մաձայն և միաշունչ ընտրութեան  
Երեսփոխանական Ընդհանուր Ժո-  
ղովոյ, և ծանեաք զբարենպա-  
տակ զգացմունս և զազգաշահ  
իղձս սրտի ձերոյ: Գոհանամք  
զՏեառնէ, և մխիթարիմք յոյժ,  
զի զոր յառաջագոյն ի ժամա-  
նակս պարապոյ պատրիարքական  
Աթոռոյ Մայրաքաղաքիդ՝ գող-  
ցես ուխտիւք ինդրէաք յԱստու-  
ծոյ՝ շնորհել զայր արժանաւոր  
յաթոռակալութիւն՝ յօգուտ Ե-  
կեղեցւոյ մերոյ սրբոյ և ի բար-  
ւոք կառավարութիւն և ի խա-  
ղաղաւէտն անդորրութիւն սի-  
րելեաց մերոց հոգեւոր որդւոց  
տառապելոց եւ տաղնապելոց  
. . . . . յանբարե-  
կարգութեան վիճակի, և որպէս  
կանխագէտ իմն զգացմամբ դէտ-

ակն կայաք անկողմնասէր և  
անաչառ ընտրութեան՝ և ահա  
արժանապէս ի ձեզ կատարեցան  
այն ամենայն սիրասենչ անձուկք  
մեր և մրմունջ մաղթանաց՝ ի-  
մաստուն և խոհեմ խորհրդով  
Ազգասէր և Մեծապատիւ Ան-  
դամոց Երեսփոխանական Ընդ-  
հանուր Ժողովոյ Կոստանդնու-  
պօլսոյ, որ արդարև կարի սփո-  
փանս ընծայեաց բազմավիշտ  
սրտի մերում, անշուշտ և հրրճ-  
ուանս բերկրութեան և ցնծու-  
թեան իցէ ազգեաց և ի սիրտս  
համայն Հայկազուն ժողովրդոց  
Տաճկաստանի » :

« Ապաքէն խիթայիք դուք ի  
ժանրութենէ լծոյն, զոր ընկա-  
լայք ի վերջոյ երկխղիւ և տա-

րակուսանօք, այո՛ և մեք եր-  
 բեմն ինքնին առեալ զփորձ և  
 զշափ ծանրութեան լծոյն, զի-  
 տեմք քաջ թէ քանի՛ տաժանելի  
 և զժուարակիր է, այլ քաջա-  
 լերացարուք, այլ զօրացարուք  
 ի Տէր և հաւատարի լ'րուք, զի  
 զիտէ Տէր հասանել ի թիկունս  
 հաւատարիմ և անձնուէր պաշ-  
 տօնէից իւրոց ի դէպ ժամանակի  
 օգնականութեան, զի որ կոշ-  
 եացն զՁեզ ձայնիւ ժողովրդեան  
 իւրոց, ըստ հանապազօրդեան  
 մաղթանաց մեր և բազմաց՝ լիցի  
 անշուշտ Ձեզ զօրավիգն ի թե-  
 թեւացուցանել զծանրութիւն և  
 զձանձրալի տաղակութիւն պաշ-  
 տամանդ ընդ քաղցր լծովն և  
 փոքրոգի բեռամբ իւրով, և զան-  
 հնարին կարծեցեալս ի մարդ.

կանէ հնարաւորս դորձել, եւ  
արդիւնաւորել շնորհօք և մար-  
դասիրտ թեամբ իւրով ։

« Ար քաջաբերեացն զԶեղ յերկ-  
նից բառնալ զայդ խաչ հողեկիր,  
անտարակոյս պարգևեացէ եւ  
զգօրութիւն առ ի գորանալ հող-  
ւով և գօրացուցանել զմարմին  
խանարհութեան Զերոյ ի ներքոյ  
խաչիդ և շարչարանացդ յանձն ա-  
ռելոց ի վառս պարժանաց Աղ-  
գիս և Սրբոյ Եկեղեցւոյ Հայաս-  
տանեաց, զի տեսանելով յա-  
պայս դրաղքը արդասիս սիրոյ՝  
միաբանութեան և անդորրաւ էան  
խաղաղութեան և ամենից ցան-  
կալին յառաջագիմութեան աղ-  
գիս՝ իմաստուն Զերով կառավա-  
րութեամբ, յայնժամ վստահու-  
թեամբ պարժեալիք ի Տէր և գօ-

հուժեամբ սրտի աստօջիք, եթէ  
« Զօրութիւն Տեառն և ի տկա-  
րութեան կատարի » : Նա զի սէրն  
անկեղծ համակրութիւն և վստա-  
հութիւն եկեղեցւոյն, որ հրա-  
ւիրեաց զՁեզ ի դոյն, շատ լիցի  
ողբւորել զՁեզ, զի փոխադարձ  
իմն սիրով և անձնուիրութեամբ  
առ եկեղեցին ոչ երբէք զլատօյիք  
զջան Ձեր և զփոյթ վաստակոց  
յանստղիւս կատարումն պար-  
տուց մեծի պաշտամանդ, որով  
արդիւնաւորեալ պսակեսցի հո-  
գեռանդն բաղձանք սրտից մե-  
րոց և համայն որդւոց եկեղեց-  
ւոյ, քանզի սիրելի է յուսալ զայ-  
տասիկ և առաւել քան դստին ի  
զգօնամիտ խոհեմութենէ Ձերմէ  
եւ ի փորձառու եւ ի հեռաատես  
զգուշաւորութեանց Ձերոց, զի

և Չեր տեսեալ զարդիւնս առա-  
քինականն և ազգօգուտ գործոց  
Չերոց՝ մխիթարեալիք սրտիւ և  
հոգւով զՍեպտեմբեր ամսն ի արեւիկայ շնորհ  
աւարդարեւ ի ծովու կենցա-  
ղոյս գորացեալ իակ են այժմիկ  
մարկայոյզ փոխորիկք և այլք զա-  
լիս մղեն ի վերայ Եկեղեցւոյ մե-  
րոյ վասն կանխադոյն անպատ-  
րաստութեան մերայնոց, և նաւն  
ազգութեան մերոյ ծփայ և առ-  
տանի յամենայն տեղիս ի փրփը-  
րադէզ կոհակա ալեաց . այլ որ  
ընտրեացն զձեզ ղեկավար նա-  
ւուդ այդմիկ յալեկոծութեան  
անդ սրահու, քաջալերացարուք  
և մի վհատիք, զի ունիք Չեզ Ա-  
ռաջնորդ ո՛չ զսին ամպոյն ըստ  
Մովսեսին, այլ զիտան փրկչական  
հանդէպ աչաց Չերոյ իբրև զաստ-

դրն բեւեռական, որ հորդեացէ  
Չեզ գյաջող շաւիղս առ ի անվը-  
տանգ ժամանել ի նաւահանգիս-  
տըն փրկութեան զերժ յամենայն  
արկածից հողւոյ և մարմնոյ  
ի մեծ վայելչութիւն փառաց Ե-  
կեղեցւոյ մերոյ Սրբոյ և Հայրա-  
պետական Աթոռոյս Կաթողիկէ  
Սուրբ Էջմիածնի օր  
Բանգի այսուհետեւ աջ մեր  
էք Իւր արդր և բազուկ ի միջի  
հողեւոր հօտիս մերոյ, միան-  
գամայն և Փնեմնմով Մե՛կ յԱ-  
թոռակալութեան պատրիարքա-  
կան իշխանութեանց ի դէպս Ազ-  
գային խորհրդոց և գործոց,  
ոչ առի Առտո՛ւնն ընդ և  
է ԳՅ ԱՆՀՐԱԺԵՆՏ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-  
ԹԻԻՆ ՀՍԿԵԼՈՅ Ի ՎԵՐԱՅ ՀՈԳԵ-  
ԻՈՐ ԻՐԱՒԱՆՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԵՐՈՅ  
Լ ԼՒԻՆՅ-ԻՆՏԻԼ Լ ԸՊՐՈՂ ԿՆԻՒՆ

չէ— ԱՆՍՏԵՐԻԻՐ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՕՐԻՆԱՅ ԵՒ ԿԱՆՈՆՈՅ ՍՐԲՈՅ ՀԱՐՅ  
որով առաւել եւս ք—չէ—չէ Եկե-  
ղէշի Դէ և Ժ———րէ—չէ ՀԱՅՐԱՊԵ-  
ՏԱԿԱՆ ԻՇԻՍՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԶ-  
ԳԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԻՍ և  
անդրդուելի մնացել զկատարած  
աշխարհի միաբանութեամբ ող-  
ւոյ և սիրոյ անձնիւր անդամաց՝ Ե-  
կեղեցականաց ասեմ և աշխարհա-  
կանաց , ոչր տեսչութիւն աւանդ-  
եալ դպրով մերս անարժանու-  
թեան ըստ Աստուածային տնօ-  
րէնութեանց և մեզք առ ամե-  
նայն հաւատարիմ պաշտօնեայս  
Եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր աս-  
տիճանի , և համաձայնութեամբ  
և մտխաղարձ պարտուք և իրա-  
ւամբք դորանցի եւս քան զեւս  
Ազգ մեր և Եկեղեցի , և լիցի ի  
միութեան , ի շինութեան և յընդ-

հանուր խաղաղութեան, և ի յա-  
ռաջագէժ զարգացմունս ի դի-  
տութիւնս և ի մակացութիւնս  
մտաւորական և բարոյական լու-  
սաւորութեանց մանկանց Եկե-  
ղեցւոյս ըստ անհրաժեշտ պիտո-  
յից և պահանջմանց ներկայ Ժա-  
մանակիս»:

«Արդ՝ գոհ և բերկրեալ սրտիւ  
չնորհաւորելով զնորընկալ բարձր  
պաշտօնդ Պատրիարքութեան Կ.  
Պօլսոյ՝ յաւելումք ի խրախուսել  
զսիրեցեալդ մեր ըստ հոգւոյ, զի  
մշտավառ պահելով զեռանդնդ  
ազգասիրութեան՝ — Ի-Գ-Յ- Կ-Ն-Գ-Ի-  
— Ը-Ի-Ի հոգւոն ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԻՐԱԽԱՆՅ ԵՒ ՅԳՏԻ Ս. ԵԿԵՂԵՑ-  
ԻՈՅՍ ԶԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ընդգէժ  
օտարամոլ հնարից և դարանա-  
կալութեանց յաջագիտտաց եւ

Թշնամեաց՝ հոնորոզ յոտորիցն շն-  
հեկիս ի սէր ե ի հարազտութիւն Ազ-  
լոցս կմբռնիկե ՍԲՅՈՅ ԿՋԱԻԱԾՆԻ,  
ոյր գոյութիւն կախի անշուշտ ի  
գորտփայլի որդիական սիրոյ եւ  
յեռանդուն ոգւոյ բովանդակ Ազ-  
գիա Հայոց՝ և մանաւանց ի հե-  
ռարնակ որդւոց իւրոց սիրելեաց  
Գուն գործեաջիք ի փառս Աս-  
տուծոյ ըստ կարելոյն լցուցա-  
նել գյարնահոլով կարօտութիւնս  
Ազգիա, որք շեն անժանօթք ի  
ձէնջ, ուղղեաջիք զանհաճոյ գը-  
նացս Եկեղեցականաց ի լինել  
նոցա օրինակ բարեաց և առա-  
քինասէր վարուց ժողովրդոց իւր-  
եանց, Հոգասջիք զբարեկարգու-  
թեանց սրբոց Եկեղեցեաց և ան-  
թերի կատարմանց Եկեղեցական  
արարողութեանց և երգեցողաւ-

Թեանց՝ բառնալով խնայող զեղծ-  
մունս՝ և զնորամուտ սովորու-  
թիւնս պատուատեարս յօգարաց  
յեկեղեցի մեր՝ եթէ իցեն սպրբ-  
զեալք, փոյթ տարժիք մեծաւ անձ-  
նութրու թեամբ և ջանիւք՝ որպէս  
և սովորու թիւն է Չեր, տքնել  
ի մասին ազգային դատախարա-  
կու թեան՝ բարեկարգելով և ար-  
դիւնաւորս յարդարելով զաննա-  
խանձելի փեճակ դպրոցաց մերոց  
և ուսումնարանաց, պատուիրե-  
լով Առաջնորդաց ամենից փեճա-  
կաց յամենայն քաղաքս և ի դիւ-  
զորայս բազմապատկել զթիւ վար-  
ժարանաց և ուսանողաց, թէև  
ամենայն ուրեք՝ դժբաղդարար  
կարօտիմք հմուտ և ճարտար ու-  
սուցչաց, բայց և այնպէս պար-  
տին ընտրու թիւնս աննել վասն

դասատուաց, զի իցենն ողջամխար՝  
ուսեայք և բարոյագէտք, որք  
ուանդեացենն խնամով Երկսեռ  
մանկատոյն զլեզու մեր և զկրօն  
հանդերձ կարեւոր և կենցաղ-  
օգուտ գիտելեօք, խրախուսել և  
սխարտաւորել զճնողս և զման-  
կունս՝ առ ի զգոյշ լինել ի կեղծ  
ու պատիք սուսմնատուութեանց  
օտարաց, որ մնասակարք են մեզ,  
և մի ամենայն ոգւոյ հաւատալ՝  
Հովիւք Եկեղեցւոյ մերոյ նպա-  
տակ ինքեանց կայցենն նախ քան  
զամենայն հողալ զհողս զաս-  
տիարակութեան և կրթութեան  
մանկանց և օրիորդաց, որով և  
Եթ հնարեացուք երջանիկս գոր-  
ծել զասպագայն ազգութեան մե-  
րոյ և Եկեղեցւոյ ։

« Հուսկ ուրեմն օրհնելով զԶեզ

ի բոլոր սրտէ՛ աղաչեմք զերեսս  
Թարձրելոյն, շնորհել յերկնից զա-  
ռատաձիր շնորհս սրբոյ հոգւոյն՝  
եւ լինել հանապազ ընդ Ձեզ  
պաշտպանողական նախախնամու-  
թիւն չօր ամենակալի և մար-  
դանէր պահպանութիւն Արդւոյն  
Միածնի՛ առ ի գօրացուցանել  
զՁեզ և կազգուրել յամենայն  
բարեմիտ ձեռնարկս և յազգ-  
օգուտ գօրծս և յաւելուլ ի Ձեզ  
զհամբերութիւն, զերկայնամու-  
թիւն, զառողջութիւն, զկարո-  
ղութիւն և զհասառատամտութիւն  
ի փառս և ի պատիւ ամենասուրբ  
Երրորդութեան, յուսով կըրկ-  
նակի վարձուց հատուցման աստ  
և ի հանդերձեայն՝ ըստ անսուտ  
խոստման Փրկչին մերոյ Յիսուսի  
Քրիստոսի իւրոց սիրելեաց եւ

հաւատարիմ պաշտօնէից » :

« Ողջ լերուք յաւէտ զօրացեալ  
աէրամբ » :

ԿԱԹՈՂՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

« Գրեցաւ Հայրապետական Կոնդակս  
յամի Տեառն 1874 և ի 16ն Յուլիսի ,  
և ըստ Տումարիս ԱՅԻԳ ի Մայր Ա-  
թոս Արարատեան ի Ա. Էջմիածին ի  
Վաղարշապատ » Թիւ 295 :

Հայրապետն ամենայն Հայոց՝  
Տ. Տ. Գէորգ Դ. իւր այս պատ-  
ուական Կոնդակս Կոստան-  
դնուպօլսոյ Պատրիարք Արքեպիս-  
կոպոսն ի Տանկանտան իրեն  
՝ ի իւր կարգելոյ կամ հաստա-  
տելոյ մի առ մի կը թուէ անոր  
պարտաւորութիւնն որք են  
Վ. Արթուր մտօք հակել Հա-  
յաստանեայց սուրբ եկեղեցւոյ

հողեւոր էր--նէ և Ազգին էրէն  
վրայ, և արիութեամբ պաշտ-  
պանել շնորհ :

2. Նախանձախնդիր և յատա-  
գով հանդիսանալ առաքելական  
և նախնի սրբոց հարց տէնմեր--ն  
և հանձնել--ն անատերիւր պահպա-  
նութեան և դորժադրութեան :

3. Ամենայն Հայոց հողեւոր և  
ազգային հիւսիսներէն կա-  
թողիկէ Ս. Էջմէնէ Մ-ը Ամբ--ն  
հարազատ և հաւատարիմ մնալ  
և ի նոյն յորդորել և պարտա-  
ւորել թէ՛ եկեղեցական և թէ՛  
աշխարհական ամեն կարգի եւ  
աստիճանի վերաբերեալ ազգա-  
յինքը :

4. Աւզղել պակասաւոր եկե-  
ղեցականաց անհաճոյ գնացքն ու  
ընթացքը :

5. Հոգ տանելի սուրբ Եկեղեցեաց  
եաց բարեկարգութեան և եկեղեցեաց  
ղեցակաւն արարողութեանց և երգեցմանց ըստ կանոնաց և ծիսից  
Հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ  
նոյնութեամբ կատարմանը, և

6. Մտադիր վաստակիչ Ազգային  
դաստիարակութեան ծառայմանը, և անձնուէր շանիւք  
փոյթ տանել երկսեռ վարժարանաց  
և ուսանողաց թիւը բազմապատկելուն, և անոնց կանոնաւոր  
ընթացից, և մեծ ինքամբ ունենալ մեր լեզուին և Ս. կրօնին  
ուսումներն սղլամիտ ուսուցչաց  
ձեռօք երկսեռ մանկաւոյն ուղղութեամբ  
աւանդուելուն հանդերձ կարեւոր և կենցաղօգուտ  
գիտելեօք օգտակար արհամարհ չուն  
Հայոց Հայրնապետն իւր փառ

խանութի ն պս գլխաւոր պարտաւորութիւնք յիշեցնելէ և առնոց զորձ աղբութիւնք հրամայելէ և տրք . . . Վերջէ զանի եւ իր---նէ կուտայ անոր որ յն---ն իւր այս ամենուն անվթար պահպանութեան և անթերի կատարման հրաւիրէ և պարտաւորէ Եկեղեցւոյ բոլոր հովիւներն ու ժողովուրդը՝ որ ի Տաճկաստան :

Կաստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Աբբեպիակոպոսը Հայրապետական Էկեղեցւոյն այս Եկեղեցւոյն իր---նէ ու իր---նէ և որ բովանդակ Տաճկաստանի Հայկական դատաւայտնաջնորդներուն . . . վանահարցինչպէս նաեւ Աղթամարայ և Արսոյ վանահայր վիճակաւորաց վերայ հոգի---դե հըն---դէ իշխողներն,

և անսոյ իւրաքանչիւրն եկեղեցա-  
կան կանոնաց հակառակ ընթաց-  
քի մէջ տեսած ատեն ի կարգ  
և յուղղութիւն կոչելու էր---ն  
ունի, կրօնական բարձրագոյն  
կարեւորութիւն ունեցող կամ ի-  
րեն ձեռնհասութենէն վեր եղած  
խնդրոց լուծման համար կոս-  
տանդնուպօլսոյ վիճակային ժո-  
ղովով առ Հայրապետն ամենայն  
Հայոց գիտելու անեղծանելի պայ-  
մանաւ, ինչպէս ըսինք արդէն,  
զոր նուիրագործած է Թուրքիոյ  
Հայոց Սահմանադրութիւնը (տես  
Ազգ. Սահմանադրութիւն յօդ-  
ուած 29, և օրէնք Ազգային վար-  
չական կազմակերպութեան յօդ-  
ուած 46):

Աւելի որոշ և պայծառ բա-

ցատրած ըլլալու համար ամենայն  
Հայոց Հայրապետին պաշտօնա-  
վարութեան ներս ու եղանակը,  
հարկ անհրաժեշտ կը դաստիմ  
ընդհանուր Եկեղեցւոյ կառավա-  
րութեան առաքելասահման եղա-  
նակին վրայ հակիրճ տեսութիւն  
մ'ընել աստ :

Առաքեալք որ Հոգւոյն օրրոյ  
չնորհած օժութիւնն ընդունած  
էին՝ հետեւապէս իրենց վիճակած  
աշխարհին Եկեղեցիները միայնակ  
և միահեծան իշխանութեամբ կա-  
ռավարելու, և անոնց մէջ ծագած  
կրօնական խնդիրները լուծելու  
կարող, բայց որովհետեւ պատ-  
ուէր ընդունած էին Տիրոջմէն ի  
կարեւոր դէպս և ի վերջին հարկի  
Եկեղեցւոյն որոշմանը գիմել (տես  
Ս. Մատթէոս աւետարանիչ գլ.

ժԸ. (18) համար 15, 16 և 17)\*, ուստի և երբ տեսան և տեղեկացան որ Հրէայ եւ Հեթանոս նորրնձայ հաւատացելոց մէջ Մովսիսական օրինաց պահպանութեան և ոչ պահպանութեան խընդիր մը ծագեցաւ, որ ըստ ինքեան կարևորութիւն ունեցող խընդիր մ'էր, իսկոյն Եկեղեցւոյն — Եկեղեցական ժողովին — դիմեցին, և անոր որոշումն ու վճիռը

---

(\*) Քրիստոսոսի Տեառն մերոյ սուրբ աւետարանի այս համարներէն Եկեղեցւոյ կառավարութեան մասին «ԷԷԷԲ»-ն՝ մը յառաջ կուգայ՝ այն է կրօնական բարձր և կարևոր խնդրոց համար Եկեղեցւոյն «Է-ԷԷ-Ն» ԴԻՄԷԼ ասի իրրեւ Տեառնաւանդ անխափասելի օրէնք դարուց ի դարս պահուած է Քրիստոսեական ուղղափառ Ս. Եկեղեցւոյ մէջ, և գործադրուած:

կանոնական թղթով մը ծանուցին  
առ որս անկ էր :

Առաքելական հրամանաւ դու,  
Տարեալ սոյն այս Եկեղեցական  
Ժողովոյն պատմութիւնը պարու-  
նակող Գործք առաքելոց սուրբ  
գրքին թեղ գլխոյն 1-23 հա-  
մարները կարդալը սոյն խնդրոյն  
համար հարկ ըլլալը յայանելով  
հանդերձ՝ արժանս կը համարիմ  
վերև յիշատակեալ առաքելական  
թուղթն ամբողջ օրինակել աստ,  
որ նոյն գրքին նոյն գլխոյն 23  
համարէն կակսի և 29 համարով  
կը վերջանայ, և որ կը ցուցնէ  
բացորոշ թէ՛ Ժողովոյն մէջ ա-  
ռաքելոց (Եպիսկոպոսաց) և Ե-  
րիցանց հետ ԵՔ-ԷԴ (Ժողովրդէն  
ընտիր մաս մը) եւս ներկայ գրա-  
նուած են :

Ահա առիկ նոյն թուղթը  
« Առաքեալք եւ երեցունք եւ  
եղբարք , յԱնտիոք , ի Սիւրիա եւ  
ի Կիլիկիա , եղբարցդ որ ի հե-  
թանոտաց էք , պղծյալք :  
« Բանոյի լուար՝ թէ տմանք իր-  
բեւ ի մենջ խառնեցուցինս գնեց  
բանիւք՝ խախտել զանձինս ձեր .  
ասեն թիփասել եւ պահել զօրէն-  
որն (Մովսէսի խտրական օրէնք-  
ներք) , որոց ոչ հրամայեցաք » :  
« Հաճոյ թուեցաւ մեզ միա-  
բան ժողովելոցս՝ արս բնորեալս  
յղել առ ձեզ , բնոյ ակրելիս մեր  
բնոյ Բաանարայ եւ բնոյ Պաղօսի .  
արք՝ որք մասնեցինս զանձինս  
խրեանց վասն անուան Տեառն  
մերոյ Յիսուսի Բրիտանի : Արդ  
առաքեցաք զՅուդա (Յակոբեան)  
եւ զՇիղա , եւ նոցա ի բանից զնոյն

պատմել : Չի հաճոյ թուեցաւ  
հոգւոյն սրբոյ և մեզ մի ինչ ա-  
ւելի բեռն դնել ձեզ . բայց մի-  
այն ի կարեւորացս յայտոցիկ . ի  
բաց կալ ի զոհելոյ կռոց , և յա-  
րենէ , և հեղձուցելոյ , և ի պոռ-  
նըկութենէ , յորոց պահեալ զան-  
ձինս՝ բարւոք գործեցէք . ողջ  
լերուք : (Տես Գործք առաք .  
զլ . ԺԵ . (15) համար 23-29 .)

Առաքեալք եկեղեցւոյ սոյնօ-  
րինակ կարեւոր խնդիրներն եւ  
առ յապայն իրենց յաջորդ տե-  
սուչքն եկեղեցւոյ , որպէս զի  
միայնակ տնօրինելու ձեռներից  
ութիւն շունենան և եկեղեցական  
ժողովով գործեն՝ ընդ այլ կա-  
նոնս սա կանոնն ևս հաստատե-  
ցին , որ է՝

ԺԹԳ . (19) . կանոն : —

Կարգ եղին սուրբ Առաքեալքն և  
 եղին հաստատութեամբ, եթէ  
 չէ ինչ-ն-մէ-ն Քահանայապետի  
 կամ երկցու և ո՛ր իցէ անամ-  
 նարդ (ի) Եկեղեցւոյ ---նչ ի-  
 ռոյ գ-լու-ն-նոյն ասնել զիրս ինչ  
 յեկեղեցւոյ, բայց կամաւք և  
 միաբանութեամբ ամենեցունց  
 (ժողովով) արասցեն զոր ինչ  
 կամսին (յոզուա և ի շինու-  
 թիւն Եկեղեցւոյն) զի մի լիցի  
 սրտմութիւն և հերձուածք ի  
 մէջ իւրոց, զի ի միաբանութենէ  
 ամենեցուն և բարոյութիւն հա-  
 ստատիմ լիցի, և հաստան հաս-  
 տատուն, որպէս և փրկիչն անէ  
 թէ ուր երկու և երեք ժողովեա-  
 ցին վասն իմ, անդ եմ ես ի  
 մէջ նոցա : » (Տես ի կանոնս Ա-  
 ռաքեալոց ձեռագիրք և տպեալ

ի Միլն Աւարայրի Բ. տարի 1867  
թիւ 7. (4)

Առաքելաբ կանոնեցին նաև որ  
տարւոյ շրջանին մէջ երկիցս գու-  
մարուի եկեղեցական Ժողովն, եւ  
Եկեղեցւոյն պէտքերը տնօրինէ .  
ահա նոյն կանոնը :

« ԼԵ. (35). — ԿԹ. (69) Կա-  
նոն . — Երկիցս ի տարւոյ Ժո-  
ղով լիցի եպիսկոպոսաց , եւ քրն-  
նեացեն առ միմեանս զհրամանս  
բարեպաշտութեան եւ զպատահ-  
եալն եկեղեցական ընդգիմարա-  
նութիւնս լուծցեն , միանգամ ի  
չորրորդ շաբաթու Պէնտէկոստէ-  
ցըն եւ երկրորդն յԱշնան : (Տես  
ի կանոնս Առաքելոց Տեռագիր ,  
և տպեալ ի Միլն Աւարայրի Բ.  
տարի 1867 թիւ 6. )

Առաքելոց գումարած այս եւ

Կեղեցական ժողովն և դրամ  
սոյն երկու կանոններն Եկեղեց-  
ւոյ կառավարութեան վարչական  
ձեւին ու եղանակին անյեղլի քա-  
կը դրուէնքներն և անխախտելի հի-  
մունքն են :

Ըստ այսմ ոկգրան՝ վիճակաւ որ  
Եպիսկոսոսք իրենց երիցանց և  
սարկաւաղաց օղնականութեամբ  
իրենց վիճակեալ Եկեղեցիներն ան-  
հատարար, և կաթուղիկէ Եկեղե-  
ցին հաւարարար կառավարեցին,  
մինչեւ չորրորդ դարուն սկիզբը,  
որ ժամանակ Եկեղեցւոյ ընդար-  
ձակուելուն պատճառաւ մէկ քա-  
նի գլխաւ որ քաղաքաց Եպիսկո-  
սոսներն իրենց նահանգի ընդ-  
հանուր Եկեղեցւոյ կառավարու-  
թեան գլուխ հաստատուեցան :  
(Տե՛ս ի վեր անդր երեւ. 44 — 17):

Ասկից ետքը դարձեալ մեկնային  
առարեխասահման կանոնօր իւր  
բարանչիւր ինքնուրոյն Եկեղեց-  
ւոյ թեմական վիճակաւօր Եպիս-  
կոպոսանք ընդ իրաւասութեամբ  
իրենց Հայրապետին կը կառա-  
վարէին իրենց թեմերը, և կա-  
րեւօր և թեմական Եկեղեցեաց  
կամ Եկեղեցականաց բարեկար-  
գութեան վերաբերեալ խնդրոց  
լուծումը ժողովով կը վճռէին :  
Այս ժողովները ամենադժուար  
խնդրոց համար իրենց Հայրապե-  
տին կը դիմէին, որ եթէ իւր  
խորհրդական Եպիսկոպոսներով  
հարկ տեսնէր իւր իրաւասու-  
թեան ներքեւ դանուած Եկե-  
ղեցւոյն — Ազգային Եկեղեցա-  
կան ընդհանուր ժողովոյն — կը  
դիմէր որ կը լուծուէր խնդիրը :

իսկ երեւան ելած խնդիրը եթէ  
հաւատոյ ուղղափառ դաւանու-  
թեան և մարութ բարոյականին  
դէմ մոլորութիւն մ'էր, և  
կաթուղիէ Եկեղեցւոյ բարեկար-  
գութեան կը վերաբերէր՝ կը դի-  
մէր Տիեզերական Ժողովին եւ  
խնդիրը անոր վճռոյն կենթար-  
կէր :

Այս կերպով ըստ սկզբան ա-  
ռաքելական ի վեր անդր յիշա-  
տակեալ կանոնաց, Եկեղեցւոյ կա-  
ռավարութիւնը երեք կարգի Ժո-  
ղովներ ունեցաւ որք են,

Ա. Թեմիւն կամ շէնիւն Ժողով-  
որ կը կազմուի թեմի կամ  
փիճակի մը Եկեղեցականներէն  
և կը գումարուի նոյն թեմի  
հոգեւոր Տեսչին կամ Արքեպիս-  
կոպոսին նախադասութեանը ներ-

քեր, որոյ գործն է վիճակին կը-  
րօնական գործերը անօրինել, և  
որ ի հարկին նահանգային Եկե-  
ղեցական ժողովոյն կը դիմէ :  
Բ. Աշխարհի կամ նահանգային  
Սինդիկատը ընդհանուր ժողով որ կը  
Եկեղեցական ընդհանուր ժողով,  
կազմուի Աղղային կամ նա-  
հանգային ինքնուրոյն անկախ  
կառավարուող Եկեղեցւոյ մը Եկե-  
ղեցական պաշտօնականներէն և կը  
գումարուի ընդ նախագահու-  
թեամբ նոյն ինքնուրոյն Եկեղեց-  
ւոյ Հայրապետին կամ Մայրա-  
գոյն Պատրիարքին, որոյ գործն  
է նահանգին Եկեղեցւոյն կրօնա-  
կան ինդիքները լուծել, և բա-  
րեկարգական անօրինութիւններն  
ընել, և որ ի հարկին կը դիմէ  
Տիեզերական ժողովին :

Գ. ՏԵՎԷՐ-ԿՆԻ ԺՆՉՆՆԻ որ կը  
կազմուի առանձին Եկեղեցեաց  
Հայրապետներէն, Եպիսկոպոս-  
ներէն և այլ պաշտօնեաներէն,  
և կը գումարուի ընդ նախագա-  
հութեամբ անձնիւր մասնաւոր  
Եկեղեցեաց համաստիճան Հայ-  
րապետաց, որ Եկեղեցւոյ վերին  
անբողոքելի ատեանն է, և որոյ  
գործն է կաթուղիկէ Եկեղե-  
ցւոյ հաւատոյ ուղղափառ դա-  
ւանութեան և բարոյական օրի-  
նաց դէմ ելած մոլորութիւնն  
հերքել, ընդ նմին և մոլորեցու-  
ցիչը դատապարտել և Եկեղե-  
ցւոյ հաղորդակցութենէն դադ-  
րեցնել: (\*)

(\*) Պէտք է դիտնայ, որ թեմական  
կամ փրնակային ժողովոյ մը որոշում-  
ներն նոյն թեմին մէջ գործադրելի են:

Այս ժողովներն իրենց որոշմանց և վճռոց անտնօրինելի պայմանաւ առաջնորդ պէտք է ունենան Աստուածաշունչ սուրբ գիրքն, առաքելոց և նախնեաց հարց կանոններն ու սահմանադրութիւնքը :

Այս երեք կարգի ժողովոց մէջ, հրաւիրմամբ նախագահին կամ ժողովոյն, սուրբ գրոց և Եկեղե-

---

իակ երբ Ազգային կամ Նահանգային եկեղեցական ընդհանուր ժողովէն ընդունուին՝ նոյն նահանգին եկեղեցեաց համար ևս գործադրելի կրլլան :

Նոյնպէս Ազգային կամ Նահանգային եկեղեցական ընդհանուր ժողովոյ մը որոշումներն նոյն նահանգին մէջ գործադրելի են . իսկ երբ Տնօրէնական ժողովէ մը ընդունուին՝ կամք ուղիկէ եկեղեցեոյ համար ալ գործադրելի կրլլան :

ցական կանոնաց հմուտ բարե-  
պաշտ աշխարհականներ եւս կրք-  
նան զանուիլ և խորհուրդ տալ,  
բայց որոշումներն ու վճիռները  
Հայրապետաց և Եպիսկոպոսաց  
ձեռնադրով միայն փութերական  
և գործադրելի կրկան :

Այս է, ահա, Եկեղեցւոյ կա-  
ռավարութեան վարչական առա-  
քելասահման ձեւն ու եղանակը,  
և կամ որ նոյնն է ըսել՝ Եկե-  
ղեցւոյ կառավարութեան վար-  
չական պարզ և որոշ սահմանա-  
դրութիւնը :

Եկեղեցւոյ կառավարութեան  
վարչական այս եղանակին կամ  
սահմանադրութեան համաձայն՝  
Հայաստանի այլ և այլ գաւառաց  
և վանորէից թեմակալ առաջ-

նորդք և վանահարք (\*) Հայոց  
ընդ իրաւասութեամբ մեր Հա-  
յաստանեաց Հայրապետին, օգ-  
նական սեննալոյ իրենց իրաւա-  
սութեան ներքե դանուած վար-  
դապետներն և քահանաներն և  
սարկաւաղներն վարած են և կը  
վարեն և պէտք է վարեն իրենց  
հոգեւոր տեսչութիւնը : Նմանա-  
պէս և Հայրապետք Հայաստան-  
եաց սուրբ Եկեղեցւոյս մերոյ ի

(\*) Պէտք է դիտեալ որ Տանկատ-  
տանի Հայկական դատադատք ստալ-  
նորդներն ու վանահարք կրօնական  
բարձր խնդրոց լուծման համար՝ իրրե  
փոխանորդի ամենայն Հայոց Հայրա-  
պետին՝ Հայոց Կոստանդնուպոլսոյ Պատ-  
րիարք Արքեպիսկոպոսին կը դիմեն  
ուղղակի, և ի հարկին անոր միջոցաւ՝  
Հայրապետին :

դորժ դրած են իրենց հովուապետական բարձր պաշտօնն և ընդհանրական իշխանութիւնը (\*):

Հայրապետը Հայոց իրենց հա-

---

(\*) Հայնաստանեայց սուրբ Եկեղեցւոյ վարչութեան մէջ թեմական և ազգային Եկեղեցական ընդհանուր ժողովներ յաճախ գումարուած են անցեալ դարերու մէջ, բայց մէկ քանի հարիւր տարիներէ ի վեր Եկեղեցական ընդհանուր ժողով չէ գումարուած գրեթէ, որոյ պէտքը զգալի եղած է արդէն, և զոր քանիցս իւր կանգալներովն յայտնած է այժմեան Տ. Տ. Գէորգ Դ. Հայրապետն Հայոց: Իսկ թեմական կամ փեմակային ժողովներն Տաճկաստանի մէջ միայն երբեմն երբեմն ի Առատանդնուարոյն գումարուած են, այն ալ ընդհանրապէս ընտրելեաց ցանկեր պատրաստելու համար:

Նապատարեայ դործ առնու թեանց  
համար խորհրդական և դործա-  
կից Եպիսկոպոսներ ունեցած են  
ինչպէս կը գրէ Բիւզանդ պատ-  
մագիր « Էին ի ներքնի Հայրա-  
պետին ( մեծին Ներսիսի ) . . . .  
երկոտասան Եպիսկոպոսք - Է- - -  
կնց+ իւր Գ-ըծ-կնց+ և Ի-ըհրդ-կնց+ » .  
( Բիւզանդ դպրութիւն 2 ( 6 ) գլ.  
Ե. 5 : Ինչպէս կը գրէ և Մատ-  
թէոս Առհայեցի « Երկոտասան  
Եպիսկոպոսք և շորս վարդա-  
պետք ի տան Հայրապետին ( կա-  
թուղիկոսարանին ) անպակաս ի-  
նէր . . . . որ գայր հասանէր  
մինչեւ ի Տէր Պետրոսն » ( Մատ-  
թէոս Առհայեցի գլ. 2<sup>թ</sup> ( 89 ) :

Այս պատմական վկայութիւնք  
կը ցուցունեն թէ Հայոց Հայրա-  
պետներն շարունակարար իրենց

խորհրդակցանք և գործակից Ե-  
սիականացուհիներ ունեցած են<sup>(\*)</sup>, մա-  
նուսանդ ըստ վկայելոյ Ռուհա-  
յեցուոյն, որ մինչև Տ. Տ. Պետ-  
րոս (գեարդարձ) հասած կը նը-  
շանակէ, և անկէ վերջը խանդա-  
րած՝ գարձեալ նոյն ինքն Ռու-

---

(\*) Հայոց Հայրապետաց գործակից  
երկրաստան Եսիականացուհիք ընդհա-  
նուր Եկեղեցուոյն կամ ազգին ընտրու-  
թեամբ պաշտօն կը վարէին թէ որիչ  
կերպ ընտրութեամբ մը կը կոչուէին  
նոյն պաշտօնին, զտախ անտրոշ կը թո-  
ղու պատմութիւնը. բայց ըստ որում  
մեր Հայրապետաց պաշտօնը ընդհա-  
նուր ըլլալով բոլոր Հայաստանեայց Ս.  
Եկեղեցուոյ վրայ կը տարածի, ուստի  
հարկ էր և է որ նոյն պաշտօնաւոր Ե-  
սիականացուհիներն Եկեղեցուոյն  
կայնովն և կամ որ նոյնն է՝ ազգովին  
ձառարուի: յ. ք. ք. ք. ք. ք. ք. ք. ք. ք. ք.

հայեցւոյն վկայութեամբ « եւ առ  
նպառ ( Պատարաբա ) խափանեալ  
լուծաւ » (տես ի նոյն գլուխ) : Մեր  
Հայրապետները այն իրենց խոր-  
հրդական Եպիսկոպոսներէն դատ  
դարձեալ Եկեղեցական դասէն  
Հայրապետական աթոռին կամ  
իրենց յատուկ պաշտօնեայնէր  
ունէին , որք են

1. Սենեկապետ կամ սենե-  
կապան

(տես Յովհան . կաթող . գլ . Ի  
(20) : Ստեփաննոս Ասողիկ , գիրք  
Բ . գլ . Բ . (2) :

2. Դրան Եպիսկոպոս

(տես Յովհ . կաթող . գլ . 42 . (66) :

Մատթ . Ուռհ . գլ . ձժԵ (143) :

3. Փակակալ

(տես Յովհ . կաթող . գլ . ժԵ (17) :

Ստեփաննոս, Օրբէլեան հասար Բ.  
ԳԼ ԿԱ (64)։

Վանաց Երէց (անս Ռեխա Եպիսկ. հասուած  
Բ. ԳԼ Կ. (1) և Բ. (2)։

Ստեփ. Ասողիկ, գիրք Բ. ԳԼ Բ. (2)։

Ծ. Հիւրասեւ (անս Արիստասէս Լատիւերասցի  
ԳԼ Ժ. (10), և

Ե. Աւագ տարկուաց կամ տար-  
կաւագ տարեւ (անս Բիւզանդ. դպրութիւն Գ.  
ԳԼ ԺԵ (15)։

Մովսէս Խորենացի  
գիրք Գ. ԳԼ ԿԷ (67)։

Հայրապետանոցին կամ Հայրա-  
պետաց յասուկ սոյն պաշտօնէից  
նկատմամբ համառօտակի այս-  
չափ անգեկութիւնն բարեկան  
համարելով կը ձեռնարկեմք գը-  
րել թէ՛ ո՛ր եղած է Հայոց բուն

Հայրապետական (աթուռն) կամ  
Հայրապետանիստ Մայր Եկեղեցի  
ն և թէ յընթացս դարուց ին-  
չո՞ւ համար մեր հայրապետք այլ  
և այլ քաղաքներ, (գիւղաքաղաք-  
ներ և վանքեր ելն իրենց բնա-  
կութեան պաշտօնական տեղի  
յատկացուցած են :

Եւ արդ՝ Հայաստանեայց Հայ-  
րապետութեան աթուռը կամ Հայ-  
րապետանիստ կաթուղիկէ Մայր  
Եկեղեցին սուրբ Էջմիածինն է,  
զոր ըստ հրամայելոյ Քրիստոսի  
Տեառն մերոյ ի տեպեան սրբոյն  
Գրիգորի Լուսաւորչին, կանոյց  
նա ինքն սուրբն Գրիգորիստ Հա-  
յաստանեայց կաթուղիկէ Մայր  
Եկեղեցին զսուրբ Էջմիածինն, և  
անդ հաստատեց Հայրապետա-  
կան աթուռը :

Այսպէս կը վկայէ ժամանակակից և եղելութիւններն կատարուած պահուն ի դիր առնուող պատմիչն Այ օթ անդէ դու :

Յանկարծակի և զեալ ձայն սաստկութեան . . . . . Եւ բացաւ խորանաչէն յարկն հաստատութեան երկնից , և իջեալ այլ մի ի կերպարանս լուսոյ , կոչեաց զանուն իմ և ասէ , Գրիգորի՛ս . և իմ նայեցեալ տեսի զկերպարանս նորա , զարհուրեալ դողացեալ յերկիր կործանեցայ : Եւ ասէ զիս . նայեաց դու ի վեր , և տես զսքանչելիս զոր ցուցանեմ քեզ :

« Եւ իմ նայեցեալ տեսի . . . »  
Մի աստուոր տեսի մարդոյ բարձր և ասէ զ . . . . . և ի ձեռինն իւրում ուն մի մեծ ոսկի . . . . . :

ինքն սլացեալ խոյացեալ դայր  
բար նմանութեան արագութեւ  
արժուոյ, և եկն էջ եհաս մին  
չեւ ի մօտ յատակս երկրիս ի շի-  
նամէջ քաղաքին (Վաղարշապա-  
տայ), . . . . .»

« Եւ տեսանեմ ի մէջ քաղա-  
քին մօտ յապարանս արքունի . . .  
խարխիս ոսկի, մեծութեամբ իբ-  
րեւ զմեծ մի բլուր, և ի վերայ  
նորա սիւն մի հրեղէն . . . . և  
ի վերայ նորա թակաղաղ մի ամ-  
պեայ, և խաչն լուսոյ ի վերայ  
նորա : « . . . . .»

« Եւ ես նայեցեալ զարմաց-  
եալ կայի : Եւ այրն որ յառաջ  
նումն կարդաց դանուն իմ և  
ցուցանէր ինձ, ասէ ջիս, թէ,  
այր դու, զի՞ կաս զարմացեալ,  
և ոչ ի միտ անուս զմեծամեծս

Աստուծոյ : Եւ եւս ասեմ, որ  
 պէս, Տէր : Եւ ասէ՛ցիս անոիշ  
 ցուցաւ քեզ այն՝ զի ի միտ ասե-  
 ցես : Եւ քեզ . միտսս ցեղ քեզ  
 յա Այրս ասաւ որ . Եւ որ Եւր .  
 ունի . . . զուսն ոսկի ի ձեռքն  
 իւրում . . . այս անպշու թիւնն  
 Աստուծոյ է . . . . .  
 . . . Եւ անդին այն լիցի Տեճակ  
 Աստուծոյ , և Տեճն աղօթից  
 խնդրուածոց ՝ ամենայն հաւա-  
 սացելոց , և ԱՔՈՒ քահանայու-  
 թեանն : Կամ քահանայապետու-  
 թեանն : (Տես երես 31 - 32) : . . . . .  
 Շինեալիք զՏեճակ անուանն Աս-  
 տուծոյ որ ցուցաւ ի Կէշ-Ք՛, որ  
 սիւնն ունէր շ-կէ Է-Է-Էն , . . . . .  
 ( Ազաթանգէղոս զԸ ձԲ. (102) :  
 Այս արանչելի անոիւքէն յե-  
 տոյ սուրբն Գրիգոր՝ սուրբ է՛շ-

միածնի տեսլեամբ նշանակեալ  
տեղը որմով պատեց և անդ Տէ-  
րունական խաչին նշանը եւ եթ  
կանգնեց առաջին անգամ, ինչ-  
պէս կը գրէ Ազատանդէղոս «Ն-  
կայք (ասէ սուրբն Գրիգորիոս)  
զնկատեալ տեղին տէրունական  
տանն և մեղ հրամայեալն (յԱս-  
տուծոյ) ի մէջ առեալ փակեա-  
ցուք » :

« Թագաւորան և ամենայն  
ժողովրդովքն հանդերձ երթեալ  
հասանէր ի տեղին ցուցեալ հը-  
րեզէն սեանն ոսկիակալ խարրս-  
խին, և անդէն բարձր բաղաբոր-  
մով փակեալ զտեղին ի պատիւ,  
և գրամբք և դռնափակօք ամրա-  
ցուցեալ, և կանգնեալ և անդ  
զնշան փրկչական խաչին, զի առ  
հասարակ հասեալ որ յայն տեղի,

արարչին Աստուծոյ երկրպագեալ  
ժուներ կրկնեացեն : ( Ազատանգ .  
գլ . ճՁ (106) :

Սուրբ Գրեգոր Լուսաորիչ Հա-  
յաստան աշխարհին հոգեւոր Տէր  
և Հայրապետ ձեռնադրուելէն  
ետքը կանգնեց անգ Հայաստան-  
եայց Մայր Եկեղեցին՝ Սուրբ Էջ-  
միածնի տաճարը՝ հաստատելով  
ինմա սրբութեան սեղանը, ահա  
նայն պատմչին վկայութիւնը :

Սուրբ Եւզնկարեալ տեղի տանն  
Աստուծոյ շինեաց՝ դպարցեալն նը-  
մա ի տեալեանն զյառաջագոյն  
գրոշմեալն իւր . և կանգնեաց  
անգ զսեղանն Քրիստոսի : » ( Ա-  
զատանգ . գլ . ճԻ (120) :

Ազատանգեղեայ այս պատմա-  
կան վկայութիւնը ամենահզօր և  
անպարտաբաւան ի անպայտոյցն է :

անշուշտ, այն ճշմարտութեան  
թէ Հայաստանեայց Հայրապե-  
տութեան Աթոռնէ և կաթողիկէ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ Աստուածահը-  
րաման հաստատութեամբ սուրբ  
ԷԶՄԻԱՄՆԻ տաճարն է, զի է  
գործ Աստուածային և միայն  
Աստուածային անքննելի խորհրդոց  
և սքանչելեաց :

Արդ քանի որ Աստուածահը-  
րաման որոշմամբ Հայաստանեայց  
Հայրապետական աթոռոյ տեղին  
սուրբ Էջմիածնի Մայր Եկեղեցին  
է, ինչու ուրեմն մեր Հայրա-  
պետներն արեւելքէն մինչև ար-  
եւմուտք այլ և այլ տեղեր փո-  
խադրուեցան : Այս ալ խնդիր  
մ'է որ ունի իւր պատճառներն,  
և զոր պէտք է լուծել, որով և  
մեր քննութեան ենթարկած Աղ-

Թամարայ և Սոոյ վանահայր վի-  
ճակաւորութեանց ծագման խըն-  
դիրը իւր լուծումը պիտի առնու :

Մեր Հայրապետական ակթոռոյ  
տեղափոխութեան պատճառները  
զուտ քաղաքական են , . . .

. . . . .

. . . . . ասի ապացուց-  
եալ ճշմարտութիւն մ' է , որոյ  
վկայն է Հայ ազգին և Եկեղեցւոյն  
բազմադարեան կենաց պատմու-  
թիւնը :

Հայաստանեայց Հայրապետ  
մինչև փրկչական ԿՅԶ թուականը  
նստան ի բուն ակթոռն Հայրա-  
պետական ի Վաղարշապատ ի  
Ս. Էջմիածին :

Այս թուականին էր որ Ե-  
կեղեցւոյ եւ ազգին պահպա-

Նութեան օխոյեանք արդէն նա-  
հատակեալ Վարդանանց ոգե-  
ւորիչ խումբը՝ սուրբ Ղեւոնդ-  
եանք, յորս էր և Տ. Տ. Յովսէփ  
Ա. սուրբ Հայրապետն մեր, վտա-  
րեցան ի Պարսկաստան, ուր մար-  
տիրոսացան. այս թուականէն  
սկսաւ Հայոց Հայրապետաց տե-  
ղափոխութիւնը, լաւ եւս է ը-  
սել թափառական կեանքը. ե-  
րանելի Հայրապետք յեց ի ցուպ  
հովուական քաղաքէ ի քաղաք,  
վանուց ի վանս և յայլ տեղիս  
սկսան շրջիլ թափառիկ մինչեւ  
ՎէճՎ թուականը որ ատեն վե-  
րըստին եկան իրենց բուն աթո-  
ռը՝ ի Վաղարշապատ ի սուրբ  
Էջմիածին :

Այսպէս աստանդական կենօք  
հարազատ Հայրապետք Հայոց

նստան զանազան տեղեր և կա-  
ռավարեցին զԵկեղեցին և հով-  
ուեցին զազգը, որք են,

1. Դուին

2. Վասպուրական (ի Զորոյ  
վանք և յԱղթամար)

3. Արգինա

4. Անի

5. Սերաստիա

6. Մամնգաւ

7. Կարմիր վանք (ի Սեռա լե-  
րին)

8. Մովք գղեակ

9. Հռոմկլայ

10. Սիւ

Հայրապետական աթոռոյն 'ի  
Դուին փոխադրութիւնը այսպէս  
կը պատմէ Յովհաննէս Կաթողի-  
կոս պատմիչն Հայոց, որ Հայրա-

պետութեան առաջին աստիճանը  
այն տեղ անցուց :

«Աստ ազգս սպառսպուռ ի վերջ  
հասեալ գաղարէր թագաւորու-  
թիւնն գրոհի Արշակունեաց ի Հա-  
յաստանեացս, ընդ նմին և Հայ-  
րապետութիւնն յազգէ երիցս ե-  
րանեալ Լուսաւորչին մերոյ Գը-  
րիգորի. և այր իւրաքանչիւր  
զկամս իւր կատարեալ վրդովիւր  
խաղաղութիւնն . . . . .  
ի Գլխին . . . ի տեղի բազնին շինէ  
( Վարդան ) (\*) Եկեղեցի մեծ ան .

---

(\*) Ս. Վարդան և իւր ընկերք Ս.  
Ղեւոնդեանց ի Պարսկաստան ի մեծաւ-  
ղքս բանափց մատնուելէն առաջ ար-  
գէն նահատակուած էին . ուրտփ և  
Հայրապետական ակթոսոյն ի Գուին փո-  
խադրութեան չէր կրնար մատնակցած  
Ընալ սուրբն Վարդան . կերեւի որ

ուանակոչութեամբ սրբոյն Գրի-  
գորի անդ (ի Դվին) փոխելով  
զաթոռ Հայրապետութեանն և  
հաստատեալ կացուցանէ ի նմա  
զմեծ Հայրապետն Գիւտ(\*), վա-

---

Յնացեալ նախարարք ըրած ըլլան  
զայն ըստ պահանջման զառն ժամա-  
նակին, ինչպէս ինքն Յովհ. կաթղ. ևս  
կակնարկէ ըսելով թէ՛ ՝ « Ոչ պարտ  
վարկան նախարարքն Հայոց առանց  
հովուի զհօան Գրիստոսի թողուլ : »

(\*) Թէպէտ և Յովհաննէս կաթու-  
ղիկոս, Թովմա Արծրունի և այլ ազ-  
գային պատմիչք Ս. Յովսէփին ան-  
միջական յաջորդ զԳիւտ կը նշանակեն,  
սակայն Ղազար Փարպեցի : որ ժամա-  
նակակից է և զԳիւտ Հայրապետ տե-  
սած, որոյ վկայութիւնը անտարակու-  
սելի է, Ս. Յովսէփայ յաջորդաց համար  
սա վկայութիւնը կուտայ թէ՛ ՝ « Յետ  
. . . Ս. կաթուղիկոսին Յովսէփայ՝

որն զի Յովսէփ ի մեռաղս բան-  
տից ըմբռնեալ էր ընդ սրբոց  
Ղեւոնդեանցն , որ թէպէտ դեռ  
եւս կայր կենդանի , սակայն ոչ  
պարտ վարկան նախարարքն Հա-  
յոց առանց հովուի զհօտն Քրիս-  
տոսի թողուլ . . . , կամ թէ  
ի հրամանէ սրբոյն իսկ Յովսե-  
փայ այն իրագործիւր ք : (Յովհ.  
Կաթղ. գլ. ԺԵ . (15) : Տես և  
Վարդան պատմիչ երես 53 ) :

Հայրապետական բնակավայրը

---

յաջորդեաց զկաթողիկոսութիւնն Հայոց  
Տէր Մէլիտէ , . . . . և զհետ նորա  
Տէր Մովսէս (Ա) . . . : Աւ ապա . . .  
յաջորդեաց զկաթողիկոսութիւնն աշ-  
խարհիս Հայոց՝ Տէր Գրեւոր : (Տես  
Ղազար Փարպեցի գլ. ԿԲ . (62) : Հայ-  
րապետական աթոռոյ փոխադրութեան  
մասին բան չգրէր :

եղաւ Դուին (\*) 452 թուականէն  
մինչեւ 924 թուականը Տ. Տ.  
Յովհաննէս Զ. պատմարանն Հայ-  
րապետն մեր , որ հալածուելով  
ի հազարացւոց դնաց ի Վասպու-  
րական և վախճանեալ զկեանս  
իւր թաղեցաւ անդ , ուր և ա-  
ւարտեց իւր պատմութիւնը :

---

(\*) Տ. Տ. Դաւիթ Ա. — 789 — 741 —  
փոխանակ ի Դուին նստելու յԱրամոնս  
հաստատեց իւր բնակութիւնը , ինչ-  
պէս կը գրէ Վարդան պատմիչ և Յով-  
հան ( իմաստասէր ) զկնի մետասան  
ամաց կատարի , և յաջորդէ զաթոռն  
Դաւիթ ( Ա ) կոտայեցի յԱրամոնից  
գեղջէ . . . ուր շինեաց Եկեղեցի ,  
անդ առնելով զաւուրս կենաց իւրոց  
զամս երեքստասան , նեղեալ թ . . .  
որ ի Դուին : Ե Վարդան պատմիչ ե-  
րես 741 Տես եւ Աիրակոս պատմիչ  
գանձակեցի երես 59 :

Տ. Տ. Յովհաննէոս Զ. Հայրապետին յաջորդները՝ Տ. Տ. Ստեփաննոս Բ. Թագէոս Ա. Եղիշէ Ա. և Անանիա նստեցան երբեմն ի Զորոյ վանս վասպուրականի և երբեմն յԱղթամար. ասոնցմէ առաջին երեքը վախճանեցան և թաղեցան յԱղթամար, իսկ Տ. Տ. Անանիա իւր վերջին օրերը ի Շիրակ անցունելով վախճանեցաւ և թաղեցաւ յԱրգինա գիւղաքաղաք (տես Ստեփաննոս ասողիկ գիրք Գ. գլ. Թ (9) :

Տ. Տ. Անանիա Հայրապետին յաջորդը Տ. Վահան — 966-967-նստաւ յԱրգինա, որ Ախուրեան գետեզերքը գիւղաքաղաք մ'էր, ինչպէս կը գրէ Մատթէոս Ուռհայեցի « ի յայտմամի նստաւ յաթոռ Հայրապետութեան տանն

Հայոց Տէր Վահան ի մեծն Ար-  
գինիա Ծ (Մատթէոս Ուռհայեցի  
ԳԼ. Ի (20) :

Սոյն Հայրապետին յաջորդե-  
ցին անգ Տ. Տ. Ստեփաննոս Գ.  
և Խաչիկ Ա. որուն համար կրսէ  
Ասողիկ թէ « Այնի Վահանայ և  
Ստեփաննոսի եկաց կաթուղիկոս  
Հայոց Տէր Խաչիկ (Ա) . . . . :  
Եւ նորոգեաց զաուն կաթողիկո-  
սարանին ի Շիրակ գաւառի , ի  
գիւղաքաղաքին Արգինայ յեզերս  
Ախուրեան գետոյ ի հանգստա-  
րանի Տեառն Անանիայի Հայոց  
վերադիտողի : Եւ ի նմին գետոյ  
չինեաց զսուրբ կաթուղիկէ եկե-  
ղեցին վիմարդեան կոփածոյիւք Ծ  
(Ստեփ. Ասողիկ գիրք Գ. ԳԼ. Թ  
(9) : Տես և ի ԳԼ. ԼԱ (34) :

Սոյն այս Հայրապետիս յաջորդ

Տ. Տ. Սարգիս — 992 — 1021 —

նստաւ յԱնի, ուր եկեղեցի ալ  
շինեց, ինչպէս կըսէ Վարդան,  
« Եւ զնա (Խաչիկ Ա.) փոխէ (յա-  
ջորդէ) Տէր Սարգիս . . . : Սա-  
շինեաց զվկայարան սրբոց Հը-  
ռփսփսմեանցն, առքնթեր կա-  
թուղիկէին Անուոյ, և անդ փոխ-  
եաց զնշխարա (մասն մի ի նշխա-  
րացն) նոցա բերեալ մեծաւ հան-  
դիսիւ . . . : » (Վարդան պատ-  
միչ երես 90) :

Սոյն Հայրապետն օծեց իւր  
յաջորդը Տ. Տ. Պետրոս գետա-  
դարձ 919 թուականին Անուոյ  
մէջ . ինչպէս կը վկայէ Վար-  
դան « Զայս իմացեալ Յովհան-  
նէսի երկեաւ, եւ առաքէ առ  
նա (Վասիլ կայսր Յունաց) զՊե-  
տոս Պատրիարքն պատարագօք

(ընծայիւք), զոր Տէր Սարգիս  
ի կենդանութեան իւրում օծեալ  
էր իւրով ձեռօք ի յԱնի, մեծ  
հանգիսիւ : » (Վարդան պատ-  
միչ երես 93) :

Տ. Տ. Պետրոս (գերատգարձ)  
Հայրապետք ժամանակ մը յԱնի,  
ապա ի վասպուրական ի Զորոյ  
վանքն շորս տարի (տես Մատթ.  
Ուռհ. գլ. ԽԹ (49) և Վար-  
դան պատմիչ երես 98) վերստին  
յԱնի նստելէն և շորս տարի ալ  
ի Կ. Պոլիս կենալէն (տես Մատ-  
թէոս Ուռհ. գլ. ՀԴ. (74) վերջը  
հուսկ ուրեմն նստաւ ի Սերաս-  
տիա ի վանս սուրբ Նշանայ, ուր  
և վախճանեցաւ. ահա Գանձա-  
կեցւոյն վկայութիւնք « Եւ հրա-  
մայեաց Կայսրն (Քունաց) Հայրա-  
պետին (Պետրոսի) դնել զաթոս

իւր ի Սերաստիա և անդ հովուել զհօտ իւր և եկաց անդ մինչեւ ցմահ իւր , և եղաւ անդէն ի Սերաստիա » , (Կիրակոս պատմիչ Գանձակեցի երես 54. Տես և Վարդան պատմիչ երես 98 . Տես նաև Մատթ. Ուռհ. 91. ՀԴ (74) և ՉԱ. (81) . Սմա. յաջորդեց և նստաւ ու վախճանեցաւ անդ ի Սերաստիա Տ. Տ. Խաչիկ Բ (\*). Զայս Հայրապետ՝ Տ. Տ. Պետրոս ի կենդանութեան իւրում՝ երբ

---

(\*) Սոյն Տ. Տ. Խաչիկ Բ. Հայրապետն Հայոց երեք տարի ի Սերաստիա նրստելէն յետոյ գերեցաւ ի Հռոմոց ի Ա. Պոլիս , բայց Գագիկ Անեցւոյն և Սենեքերիմայ Ատոմ և Ապուսահէ որդւոց ջանիւք քիչ ժամանակէն ազատելով ի գերութենէ որոշմամբ ազգին նստաւ ի Քաւրչուր ուր և երեք տարիէն յետոյ վախճանեցաւ : (Մատթէոս Ուռհայեցի 91 . ԹԵ (85) և ՉԹ. (89) :

ըստ հրաւիրանաց Մոնոմախ կայսեր Յունաց ի կոստանդնուպօլիս կերթար, իրեն յաջորդ ձեռնագրեց յԱնի, բայց իւր մահուանէն վերջը ամենայն Հայոց Հայրապետ ճանչցուեցաւ Տ. Տ. Խաչիկ Բ. (Տե՛ս Մատթ. Ուռհ. գլ. ՀԴ (74). Վարդան պատմիչ եր. 99):

Տ. Տ. Գրիգոր Բ. Պահլաւունի (վկայասէր) — 1065 — 1105 — օծաւ ի Մամիգաւ(\*) և քիչ մ'ատեն նստաւ անդ. առ այս վարդան այսպէս կըսէ . . . . .  
 . . . . .  
 . . . . .  
 . . . . .  
 . . . . . Եւ գնաց-  
 գալ առ կայսր՝ . . . . ձեռնա-

---

(\*) Կեսարիոյ կողմերը բերդաքաղաք մը, և այժմ տեղը անձանօթ:

դրել Հայոց Պատրիարք զՎահ-  
րամ որդի Գրիգորի Մագիստ-  
րոսի և տուկի, (դուքս, իշ-  
խան) որ կոչեցաւ ի ձեռնադրիլն  
Գրիգորիս, և ամ մի կալեալ զա-  
թոռն ի Մամնդաւ՝ թողու ի Գէ-  
որգ վարդապետն (\*) իւր լոսե-  
ցի : Եւ ինքն անցեալ զնայ ի  
կոստանդնուպոլիս . . . . եւ  
կամեցաւ զնալ յերուսաղէմ (\*\*)  
և նաւին առեալ զնա անտի ի

---

(\*) Սոյն Գէորգ լոսեցին՝ Տ. Տ. Գը-  
րիգոր Բ. իրեն անդ ձեռնադրեց կա-  
թուղիկոս և ապա մեկնեցաւ . իսկ վե-  
րագարծին մերժեց ամթռէն զԳէորգ,  
որ Տարսան զնաց և հօն վախճանեցաւ :  
(Տես Մատթէոս Առհայեցի գԸ ՂԹ  
(99) և ձՆ (103) :

(\*\*) Մատթէոս առհայեցի Երուսա-  
ղէմ գացած կը նշանակէ սոյն Հայ-  
րապետիս համար (Տես ի պատմու-  
թեան անդ նորա գԸ ձՄԷ (157) :

Մոր, որ և մեծարեցաւ յոյժ ի Սուլթանէն . և շինեաց վանս Հայոց, և ձեռնադրեալ զեղբորորդի իւր Գրիգորէս Եպիսկոպոս (Եղիսպատոսի), և ինքն գայ կատարի ի Կարմիր վանքն ի սահմանս Եփրատ գետոյ ( ի սահմանս Մարաշոյ ), » (Վարդան պատմիչ եր. 102-103) տես և Մատթէոս Ուռհ. գլ. 2 (90) :

Տ. Տ. Գրիգոր Բ. որ յարեւմուտս էր, թոյլատրեց և հրաման տուաւ արեւելեան Հայոց որք խնդիր ըրած էին, որպէսզի Անուոյ առաջնորդ Տ. Բարսեղ Եպիսկոպոսը, զոր ինք ձեռնադրած էր, (տես Մատ. Ուռհ. գլ. ձե (107) կաթողիկոս ձեռնադրեն արեւելից կողմին . ըստ այսմ Հայրապետական հրամանի

ձեռնադրեցին զՏ. Բարսեղ որ  
նստեցաւ յԱնի իբրև փոխանորդ  
Հայրապետին Հայոց (Տես Մատ-  
թէոս Ուռհ. գլ. ՃԻ (120) :

Սոյն Տ. Բարսեղ (\* ) յետ վախ-

(Սոյն Տ. Տ. Բարսեղ Ա. Հայրապետը -1105-1115- բնակեցաւ Շուղրանապատը կամ միանձանց, վանքը և անդ վախճանեցաւ ու թաղեցաւ , ինչպէս կըսէ Ս. Ներսէս Շնորհալի իւր ոտանաւոր շափով գրած Հայոց համառօտ պատմութեան մէջ :

« Այլ ի յաթոսն իւր (Տ. Տ. Գրիգոր Բ.)  
Հաստատեալ ,

զԲասիլիոսն անուանադրեալ :

« Արեանառուն հարադատեալ ,

օժմամբ հոգւոյն նախ ձեռնադրեալ :

• • • • •

« Ի յանապատ իմն բնակեալ ,

ի մէջ լերանց Շուղր անուանեալ :

• • • • •

• • • • •

ճանի և թաղման, Տ. Տ. Գրի-  
գորի Բ. ի, որ ի կարմիս վանս  
Սեաւ լերին, եղաւ Հայրտալետ  
ամենայն Հայոց 1105 թուականին:

---

Այլ յետ սակաւ ամաց անցեալ .

մինչդեռ սակաւ տարաբերեալ :

Եւ միւս հօրէն հոգւոց զրկեալ :

Բասիլիոսն կոչեցեալ :

« Զի ըստ մեղաց մեր յանախեալ :

Երմին օրհասն պատահեալ :

. . . . .

« Զոր և ուխտին նախասացեալ :

զոր ի վերոյ յիշատակեալ :

« Քահանայիւք օրհնարանեալ ,

ի Շուգր անուեն հանգուցեալ : »

(Տես Միսուս որդի, երես 399 - 400 և  
406 - 407 . տպեալ ի Բեդրպուրք) :

Այս Շուգր անապատը կամ միանձանց  
վանքը Տորոսի լերանց մէջ Քեսուն  
քաղաքին մօտ հաստատուած կամ յին-  
ուած էր :

(Տես վարդան պատմիչ երես  
113 — 114) Սմա յաջորդեց Տ.  
Տ. Գրիգոր երրորդ Պահլա-  
ւունի — 1113 — 1166 — , որ  
դառաջինն նստաւ ի Տովք ԳՔԴ-  
եակ և ապա ի Հռոմկլայ , ուր  
և վճարեաց զկեանս իւր . ահա  
Գանձակեցւոյն վկայութիւնը Յա-  
ջորդէ (Ա. Բարսեղի) Տէր Գրիգորիս  
(Գ. Պահլաւունի) . . . Սա փոխ-  
եաց զաթոռ Հայրապետական ի  
բերդն , որ կոչի Հռոմկլայ , քան-  
զի . . . այնուհետեւ ոչ եղև  
յարուելա աթոռ Հայրապետա-  
կան , այլ ընդ իշխանութեամբ  
Յունաց , երբեմն ի Սերաստիա և  
երբեմն ի Ծովք վայրն կոչեցեալ .  
իսկ սա փոխեաց ի կլայն Հռով-  
մէական : Եւ պատճառ փոխելոյն

այս էր . զի նեղացաւ ի Սկիւ-  
թականաց և այսր անդր ա-  
ծելով , և ապա ետես զբերդն  
ամուր . բարձեալ զարբութիւնս  
իւր և զսպասս Եկեղեցւոյ՝ տա-  
րաւ եղ անդ ի պահեատի առ  
բարեմիտ կին մի իշխանի ազգաւ  
Ֆրանկ : Եւ եղեւ ընդ աւուրսն  
ընդ այնոսիկ վախճանել իշխանին՝  
հանգուցեալ Հայրապետին հանդիսա-  
ւոր կերպիւ հողեհանգստեանն պաշտօն  
կատարուած էր արդէն յամենայն ե-  
կեղեցիս: Հայոց որ ի մայրաքաղաքիս ե-  
ր ի գուտա Օսմանեան Հայրապետի:

Ժողովն որ յանուն Հայ հասարակութեան Կոստանդնուպօլսոյ մէկ աշխարհական պատգամաւոր ընտրէ :

Սինօդը այս հրահանգները տալէն յետոյ կը զեկուցանէ նաեւ որ թէ Կոստանդնուպօլսոյ եկեղեցական և աշխարհական երկու պատգամաւորներն և թէ փեճաղաւոր առաջնորդներն կամ անոնց եկեղեցական փոխանորդները պէտք է որ 1866 Սեպտեմբեր 15դ. օրը ներկայ գտնուին ի Ս. Էջմիածին, որպէս զի իւրաքանչիւր պատգամաւոր յանուն իւր փեճակին մասնակցի ամենայն Հայոց Հայրապետի նորոգ ընտրութեան, որ վերջնական կերպիւ պիտի կատարուի ի 17 Սեպտեմբերի 1866 :

Սինոդին այն երկու գրքերն կը  
հասնին ի Պատրիարքարան ի 19  
նոյեմբերի 1865, զորս Ազգային  
կեդրոնական վարչութեան խառն  
ժողովը նկատողութեան կառ-  
նու, և այն ինչ խառն յանձնա-  
ժողովոյ մը ձեռքը նոր ընտրու-  
թեան հրահանգ պատրաստելու  
կը ձեռնարկէ, Ազգային երես-  
փոխաններէն Վեմ Ստեփան  
Փաշա Աղանեան (այն ատեն տա-  
կաւին Պէյ) կը փութայ Ազգա-  
յին Ընդհանուր ժողովոյ 1865  
Դեկտեմբեր 17 ի նիստին առ նա-  
խադասն ժողովոյն Տ. Պաղտե Բ.  
Պատրիարք Արքեպիսկոպոսե կես-  
տանդնուպոլոսյ առ հարցումե  
ուզկել որ է, ինչպէս զարկ  
դրուի թմայնակ ընտանն զորս  
անուր ձկնատուս, զ ձկնատ

ՊԵՏԱԿԱՆ ԵՆԻՆՆԵՐԻ ԺՆՈՒՄ  
1865 ՄԵԿԵՄԵՐԻ 17

« Հարցումն »

« Ստեփան Պէյի Ասլանեան »

« Առ Նախագահն Ընդհ. Ժողովոյ »:

« Էջմիածնայ Սրբազան Մատ-  
թէոս Կաթողիկոսը վախճանած  
է, քայց Ընդհանուր Ժողովը  
գեռեւ եւս պաշտօնական կերպի-  
պս ցաւալի լուրը իմացած չէ և  
եւ որովհետեւ յաջորդին ընա-  
րութեան համար կարծեմ մի-  
անեայ պայմանաժամ հաստատու-  
ուած է, և ընտրութիւնն ալ ընդ-  
հանուր Ժողովով պիտի ըլլայ՝ կը  
հարցունեմ, ո՞ր Էջմիածնէ հեռու  
ընդհանուր Ժողովն ընդհանուր քանի-  
որ սահմանադրութեան ՅԱՂ յօդ-  
ուածին Բ. հասուածին համա-

ձայն սոյն կարեւոր խնդիրն Ռնդ-  
հանուր ժողովին է:-----Բէ՛ն կը  
պատկանի ։

Առ որ կը պատասխանէ նախա-  
դահն Ռնդ հանուր ժողովոյ թէ՛  
« Ասկէ առաջ էջմիածնայ Սի-  
նոգին կողմէն երկու նամակներ  
հասան մեր ձեռքը Ռուսիոյ դես-  
պանատան միջոցաւ, որոցմէ մէ-  
կը կրօնական ժողովին ուղղուած  
ըլլալուն անոր յանձնեցի, և միւսը  
Քաղաքական ժողովին ուղղուած  
ըլլալուն անոր յանձնեցի, և խա-  
ռըն յանձնաժողով մը կազմուե-  
ցաւ, որ կաթուղիկոսի ընտրու-  
թեան խնդրոյն վրայ պէ՛տք ե-  
ղած հրահանգը պատրաստէ, որ-  
պէս զի խառն ժողովով Ազգա-  
յին երեսփոխանութեան ներկա-  
յանայ ։

Այս հարցի ու պատասխանի էն  
յետոյ բաւական թեր ու դէմ  
խօսից փոխանակու թեւմբ փե-  
ճարանու թիւն տեղի կունենայ,  
ե ի վերջոյ Տ. Պողոս Բ. Պատրի-  
արք վերապին կը յայտարարէ թէ  
Սինօղէն եկած նաճահներն Բնդ-  
հանուք ժողովին եկած չէին,  
այլ կրօնական եւ Բաղաքական  
ժողովներուն, եւ ալ անոնց յանձ-  
նեցի, քան որ կը պատասխա-  
նէ Վսեմ. Ստեփան Փաշա Աս-  
լանեան թէ

« Էջիածնայ Սինօղը մեր սահ-  
մանադրու թեան ընթացքին ան  
տեղեակ դանուելով այսպիսի սը-  
խալ մը ըրած է, սակայն միթէ  
Սրբազան Նախագահը Ռուսոյ  
սահմանադրու թեա նախանալ է  
թէ ոչ Տանկաստանի, Ռուսի-

Սրբազան Նախագահին պարտա-  
ւորութիւնն էր Սինոդին սխալը  
անմիջապէս ուղղել, և եկամ  
թղթերը ընդհ. ժողովին ներկա-  
յայնել՝ քանի որ մենք մեր Սահ-  
մանագրութեան համեմատ պի-  
տի վարութիւնք այս խնդրոյն մէջ  
էջմիաժնայ Սինոդը կը կարծէ  
թերեւս որ մենք հին գրութեան  
մէջ ենք, և ասանկ գործեր քա-  
նի մը անձանց ձեռքով կը կա-  
տարութիւն եթէ գրէին Սրբազա-  
նին որ զԱմիրաները ժողովէ, և  
անոնց հետ խորհրդակցելով գոր-  
ծը անօրինէ, Սրբազանն այնպէս  
պիտի վարուէր. սակայն հիմա  
Ամիրա չկայ, Ընդհանուր ժողովն  
է Ազգին բարձրագոյն ասեանք,  
ուսկեց կը բոլիսի Ազգին կամքը ք  
Ազգային ընդհանուր ժողովը

տեճանելով որ մեծամասնութիւն  
չունի, և խնդիրը օրակարգէն  
դուրս հարցումէ, իւր ատենա-  
պետին (Վսեմ. Բարունակ Պէյ Ֆե-  
րուխեան) առաջարկութեամբ կո-  
րուչէ սոյն խնդրոյն համար յատ-  
կապէս նիստ ընել յաջորդ ուր-  
բաթ օր Գեղտեմբեր 26. (Տես  
ատենագրութիւն Ազգ. ընդհ. ժողովոյ  
1865 գեղտեմբեր 17 ի նիս-  
տին, անտխայ)

Այսօրն ընդհանուր ժողով

1865 գեղտեմբեր 24

Ազգային ժողովն իւր այս նիս-  
տին մէջ ամենայն Հայոց Հայրա-  
պետութեան խնդիրը մասնառ-  
բապէս ուշադրութեան կառնու,  
և յետ ընդ երկար փնտրանու-  
թեան՝ Վսեմ. Ստեփան Փաշա  
Ասլանեանի սա հետեւեալ առա-

Զարկը ժողովոյ որոշման կը ներձ  
կայանայ : Ահա նոյն անաշարկը ի  
... Այս խնդիրն երեք կարեւոր  
կէտ կը պարունակէ, որք են :

Ա. Կաթուղիկոսական վիճակի  
քննութիւն անշարք զարեւմտ

Բ. Կաթուղիկոսութեան ընտ  
րութեան օրէնք և Ս մայրական Ս

Գ. Տաճկաստանի Հայոց այս  
ընտրութեան մասնակցելու եղա  
նակը : Գլխավոր ջրղնա նիկանա ?

Ուստի կառաջարկեմ այս երեք  
կէտերը քննելու և ծրագիր մը  
պատրաստելու համար Յանձնա  
ժողով մը կազմուի եկեղեցական  
և աշխարհական անձերէ՝ բաղ  
կացեալ ճիշդ և անձնայ զիման

Ազգային ժողովն այս անա  
շարկութիւնը կընդունի իւր քը  
ուէովն : Նոյնպէս Ազխամարայ

և Սոսյ աթոռոց Մայր Աթոռին  
հետո՝ ունենայիք յարարերու  
թեանց վիճակը կանոնաւորելու  
խնդիրն ալ սոյն Յանձնաժողով  
փին կը յանձնուի ինչպէս յայտնուի և

Յետ այս օրոշման Յանձնա-  
ժողովոյ պաշտօնին նկատմամբ  
Մամուրեան Մատթէոս էֆէնտի  
ուշադրութեան արժանի դիտո-  
ղութիւն մը կրնէ, զոր հարկ կը  
համարիմ ամբողջ օրինակել արտ,  
որէն ալ նմի դաժառակ ժամ և

Սե կաթաղիկոսութեան վիճակի  
քննութիւն քնարութեան օրէնք  
և մասնակցութեան կերպ , ա-  
ստիք անարոշ խօսքեր են, և կազ-  
մուելիք յանձնաժողովին քուն  
պաշտօնը լիովին չեն ցըցնէր Ար-  
դէն վիճարանութեան ընթաց-  
քը երեւան հանեց որ Աթոռ

վտանգի մէջ է, հետեւապէս  
Յանձնաժողովին գործը պիտի  
ըլլայ ոչ միայն քննութեան ար-  
դիւնքը ներկայացունել, ընտրու-  
թեան օրէնք պատրաստել, այլ  
Մ-յի Ա.Բ.-ի ամեն տեսակ էր-  
-----ի-ններէ, ԱՆԿԱՊԻԹԻՆԸ և  
ԻՇԽԱՆՈՒԹԻՆԸ - Դ-Գ-Է-Ը- հա-  
մար միջոց մտածել. խնդրոյն  
Կ-Գ-Կ-Է այս է: Եւ ասոր հա-  
մար կառավարկեմ որ Ընդհա-  
նուր ժողովը Յանձնաժողովին  
իւրազօր արտօնութիւն տայ օրի-  
նաւոր ծրագիր մը պատրաստել  
այս կարեւոր կէտին վրայ, ինչ-  
պէս որ Հայաստանեայց Եկեղեց-  
ւոյ ԻՄԱՒՈՒՆԻՆԵՐԸ կը պահան-  
ջեն, որպէս զի Յանձնաժողովը  
չամիպուի իր պաշտօնին սահմա-

նը իմանալու համար Ընդհանուր  
Ժողովին գիտել և բացատրո-  
թիւն խնդրել :

Մատթէոս Էֆէնտի Մամուր-  
եանի սոյն դիտողութեան և ա-  
ռաջարկին վրայ կը յայտարարէ  
Ազգային Ժողովը թէ՛

« Ընդհանուր Ժողովը այս խընդ-  
րոյն հիմը ընդունած է, Յանձ-  
նած ժողովը նախ պիտի նկարագրէ  
կաթուղիկոսութեան վիճակը, և  
ապա իր ծրագիրը պիտի պատ-  
րաստէ. քննութիւնը կենթադրէ  
նաեւ ԴԱՐՄԱՆ » :

Ազգային Ժողովը յետ այսորիկ  
դիւանին առաջարկութեամբ սոյն  
կաթուղիկոսական Յանձնած ժո-  
լին անգամ կը կարգէ հետեւեալ  
չորս եկեղեցական և չորս աշխար-  
հական անձինքը, որք են

1. Տ. Արիստակէս Եպիսկոպոս ,  
քարոզիչ նոր - Թաղի յուսկիւտար  
(1869 պատրիարքին . Տեղագրահ)

2. Տ. Անդրէաս Եպիսկոպոս (\*)

(\*) Տ. Անդրէաս Եպիսկոպոս , որ  
հոգեւոյց Տ. Տ. Մատթէոս Հայաստան-  
եայց Հայրապետին ներստաւուն աշա-  
կերան է , և անոր փոխանակէն յետոյ  
Ս. Էջմիածինէն ի Կ. Պոլիս եկած ,  
այն Կաթողիկոսական Յանձնաժողո-  
փոյն ամեն նիստերուն թէև ներկայ  
գտնուած և անոր աշխատութեանց  
գործակցած է , այլ սակայն անդեկա-  
ղիբը չէ ստորագրած , թերևս ի Ռու-  
սաստան վերագառնալու գիտաւորու-  
թիւն ունեցած ըլլալուն համար , ինչ-  
պէս որ ալ քիչ ժամանակէն յետոյ գա-  
ցած է ի Ս. Էջմիածին , և Տաճկական  
հպատակութիւնն իսկ փոխած : Այժմ  
Արցախու թեմին Առաջնորդութեան  
միանգամայն և Ս. Էջմիածնի Մայր  
Աթոռոյ Գէորգեան բարեկարգ նեմա-  
րանի Տեղաթեան պաշտօնը կը վարէ :

3. Տ. Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան, Քարոզիչ Խառնիզի (այժմեան Պատրիարք Արքեպիսկոպոսն Հայոց Կոստանդնուպոլսոյ )

4. Տ. Յովհաննէս Վարդապետ Սեթեան, Քարոզիչ Գուղիունճուքի (Եպիսկոպոս կը ձեռնադրուի ի Ս. Էջմիածին 1867)

5. Վսեմ. Ստեփան Պէյ Աւլանեան

6. Վսեմ. Սարգիս Էֆէնտի Աղաբէկեան

7. Մեծ. Գրիգոր Էֆէնտի Մարկոսեան

8. Մեծ. Կարապետ Էֆէնտի Իսթիւճեան

Սոյն Կաթուղիկոսական Յանձնաժողովն իրեն յանձնուած պաշտօնն աւարտելով կատորադրէ

իւր տեղեկագիրը ի 29 Ապրիլի  
1866 և կը ներկայացնէ զայն Ազ-  
գային ժողովոյ 1866 մայիս 27ի  
նիստին :

Ազգային ընդհանուր ժողով

1866 թւի 27

Ազգային ժողովը նկատողու-  
թեան կառնու կաթուղիկոսական  
Յանձնաժողովոյ տեղեկագիրը ,  
և նախ անոր ամբողջութիւնը ընդ-  
հանուր հաւանութեամբ և ապա  
առաջին և երկրորդ մասերը ,  
որք են Ա. կաթուղիկոսական փի-  
հակի քննութիւն և Բ. ընտրու-  
թեան օրէնք , զատ զատ քուէ-  
արկութեամբ կընդունի , իսկ եր-  
րորդ մասը որ է Տաճկաստանի  
Հայոց մասնակցութեան եղանակը ,  
յօդուած առ յօդուած քը-  
ուէարկելով և երեք մասերը մէ-

կէն ուրոյն քուէարկութեամբ եւս  
վերջնապէս կընդունի : Նոյնպէս  
և չորրորդ մասը , որ Աղթամա-  
րայ և Սսոյ կաթուղիկոսաց ընտ-  
րութեան և նոցա ընդ Մայր Ա-  
թոռոյ ունենալիք յարարերու-  
թեանց հրահանգը կը պարունա-  
կէ , նկատողութեան առնելով մէկ  
քուէարկութեամբ զայն ևս կըն-  
դունի , և թէ՛ ամենայն Հայոց  
Հայրապետի ընտրութեան և թէ՛  
Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկո-  
սական ընտրութեանց նախապատ-  
րաստութիւններն ըստ տեղեկա-  
գրին կատարելու պաշտօնը մի-  
ևնոյն Յանձնաժողովին կը յանձնէ  
անոր անդամաց վրայ իւր ատե-  
նապետը , - Վսեմ. Բարունակ Պէյն-  
եւս աւելցնելով :

Եւ յետ այսր ամենայնի Յանձ-

նաժողովոյն համար շնորհակա-  
լութիւն կը քուէարկէ : (Տես  
ատենագրութիւն Ազգ. ընդհ.  
ժողովոյ 1866 մայիս 27ի նիս-  
տին , անտիպ) :

Ազգային ժողովոյ գիւանը այս  
նիստի որոշումներն յատուկ պաշ-  
տօնական ծանուցմամբ նոյն նիս-  
տին օրը ամբողջ ազգին կը յայ-  
տարարէ , ահա՛ նոյն պաշտօնա-  
կան ծանուցումը :

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

« Ընդհանուր ժողովը կաթու-  
ղիկոսական Յանձնաժողովոյն տե-  
ղեկագիրը քննելով ստուգապէս  
վերահասու եղաւ թէ ամենայն  
Հայոց կաթուղիկոսական Մայր Ա-  
թոռին Հայրապետական էր-----  
Ինչ ու էրը-Ինչը ժամանակէ մը

ի վեր իւր վաղեմի և փափաքելի  
վիճակը կորուսած է, և թէ ա-  
սոր պատճառը Պալատէնիա ա-  
նունով կարգադրութիւնն է, որ  
1836 ին Ռուսաստանի մէջ հաս-  
տատուեր է առանց խորհրդա-  
կցութեան և հաւանութեան միւս  
երկիրներ բնակող Հայոց ազգին 18

« Ընդհանուր Ժողովն ի գիմաց  
համօրէն Հայ Ժողովրդեան թուր-  
քիոյ կը փափաքի և կը խնդրէ  
որ ամենայն Հայոց կաթուղիկո-  
սութիւնը մեր Եկեղեցւոյ նախնի  
կարգաց և աւանդութեանց հա-  
մաձայն իւր օրինաւոր դրութեան  
և բարեկարգութեան սահմանին  
մէջ վերահաստատուի, և վստահ  
է որ աշխարհիս ամեն կողմերը  
դանուող ազգայինք ալ (որ ի-  
րենց հովանաւորող աէրութեանց

չնորհիւ կրօնական ազատութիւն  
ու ներողամտութիւն կը վայել-  
լեն) իւր այս օրինաւոր բաղձա-  
նաց մասնակից և հաղորդ կը  
դաճուին . հետեւեալքար անտա-  
րակոյս է որ Ռուսաց կայսերա-  
կան կառավարութիւնն ալ, որ  
Ս. Էջմիածնայ Երկրին տիրող վե-  
հապետն է, իւր մարդասէր խը-  
նամքն ու պաշտպանութիւնը չի  
զլանար մեր ազգային Եկեղեցւոյն  
« Ընդհանուր Ժողովը միանգա-  
մայն Յանձնաժողովոյն պատրաս-  
տած կաթուղիկոսական ընտրու-  
թեան ծրագրին կ-դ-ի-լ հ-ւ-ն-ւ-ւ-  
ն-ի-ւ-ւ-դ-լ, կորոչէ որ անոր դոր-  
ժագրութեանը անյապաղ ձեռք  
զարնուի, և անոր միջոցներուն  
վրայ խորհելու և հարկ և դաժը  
խտհեմութեամբ պատրաստելու և

Ընդհանուր ժողովոյն ներկայա-  
ցընելու գործը կը յանձնէ խա-  
ռըն Յանձնաժողովոյ մը (առաջին  
յանձնաժողովոյն), որ Ս. Պատրի-  
արք Հօր նախագահութեամբ այս  
ամենակարևոր գործին զբաղի : »

27 Մայիս 1866

Ի Պատրիարքարան Հայոց

Կոստանդնուպօլիս

Կաթուղիկոսական Յանձնաժո-  
ղովոյ սոյն առաջին տեղեկագրի-  
րը, (\*) ինչպէս տեսանք, չորս  
մաս կը պարունակէ :

---

(\*) Այս տեղեկագրին ուրոյն տեսա-  
րով հրատարակուած է, որ եւ ի վեր-  
ջոյ առաջին տեղեկագրի ըստւո՞՛յ է  
փան գի Ազգային ժողովը Հայքնույն-  
տական ընտրութեան Տանկատարնի Հայ-  
ոց մարմնակցութեան օրինաց գոյ՞՛մ ա-  
դրութիւնն եւս պաշտօնապէս յանձնած

Ա. Մասը 1836 մարտ 11 թրուականնաւ վաւերացեալ Գլխաւոր անուն կարգադրութեան ամենայն Հայոց Հայրապետութեան իրաւասութիւնն, և հոգեւոր անկախութեան վերաբերեալ այն յօդուածոց արդար քննութիւնը կը պարունակէ, որք կապտած և կաշկանդած են ամենայն Հայոց Հայրապետական իրաւասութիւնն և հոգեւոր անկախ իշխանութիւնը :

Բ. Մասը կը պարունակէ դարձեալ նոյն կարգադրութեան ան

---

է նոյն կաթուղիկտական յանձնած սղոսփոյն, որ բնարական նախապատրաստութիւններն և Հայրապետական վերջնական բնարութեան արդիւնքը զատ զառերկրորդ և երրորդ անդեկազմութիւններկայացուցած է Ազգային ժողովոյն :

մենայն Հայոց Հայրապետի ընտ-  
րութեան եղանակն որոշող այն  
յողուածոց քննութիւնը, որք Հա-  
յաստանեայց եկեղեցւոյ իրա-  
ւանց, օրինաց և հնաւանդ սո-  
վորութեանց գլխովին հակա-  
ռակ են :

Յանձնաժողովը սոյն մասին մէջ  
Տ. Տ. Յովհաննէս Ը. Ներսէս Ե. և  
Մատթէոս Ա. Հայրապետաց ընտ-  
րութիւնը համառօտակի պատ-  
մելէն յետոյ կը յայտարարէ թէ՛

« Կաթուղիկոսական Յանձնա-  
ժողովս սոյն կէտին (ամենայն  
Հայոց Հայրապետի ընտրութեան)  
վրայ Ազգային մատենագրու-  
թեանց հետազօտութիւն ընելով,  
բոլոր պատմական անցից ընդ հա-  
նուր տեսութեամբ սա՛ եզրակա-  
ցութեան հասաւ որ , »

« Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ,

« Ազգային եկեղեցական նուխ-  
բապետութեան թւ-ի, Ազգին հ-

թե-ր Տեր՝ — Հ-ի-ւ-ւ մէկ բառով

Ազգին ԸՆԻՉԱՆՐԱԿԱՆ ՀԱՅՐԱ-

ՊԵՏԸ ԱԶԳՈՎԻՆ կրնարուի, այ-

սինքն հ-ի-յն — զ-ի-ն և Գ-յն — շ-ի-ն : »

( Տես տեղեկագիր Կաթղ. Յանձ-

նաժողով, երես 34 ) :

Յանձնաժողովը սոյն այս եզրա-

կացութիւնը հիմ բռնելով Ս. Գը-

րիգոր Լուսաւորչի ընտրութենէն

սկսեալ դարուց ի դարս կատար-

ուած Հայրապետական ընտրու-

թեան այլ և այլ եղանակներուն

նկատմամբ հանդերձ քննական

դիտողութեամբ պատմական

ընդհանուր տեսութիւն մը կրնէ,

և կաւարտէ իւր տեղեկագրոյն

այս երկրորդ մասը :

Գ. Մայր Տաճկաստանի Հայոց  
Հայաստանեայց Հայրապետի քնա-  
րութեան մասնակցութեան կեր-  
պը դժող օրինաց յօդուածները  
կը պարունակէ : Այս յօդուած-  
ներն ամբողջապէս կօրինակեմ  
աստ :

« Ա. Ս. Էջմիածնի կաթողիկոսը  
— Էջմիածնի Հայոց Էջմիածնի Հայր-  
ապետի Տէրն ըլլալով, իր քնա-  
րութիւնը ազգովին կըլլայ » :

Բ. Ս. Էջմիածին, Հայաստան-  
եայց Մայր եկեղեցին, Աստուած-  
որդւոյն հրաշալի ճարտարապե-  
տութեամբը Ս. Լուսաւորչին ձե-  
ռօք շինուած, ԱՆՈՐ ՀԱՅՐԱՊԵ-  
ՏԱԿԱՆ ԱԹՈՒՆ և ՀԱՄՕՐԷՆ ՀԱՅ-  
ԿԱԶԱՆՅ ՀՈԳԵՒՈՐ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԳՐՈՆՆ ԸԼԼԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ ամե-  
նայն Հայոց ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱ-  
ՀԸ ՄԻՇՏ ՀՈՆ ԿԸ ՄՆԱՅ, և հե-

տեւարար կաթողիկոսին վերջնա-  
կան ընտրութիւնն ալ հոն կը կա-  
տարուի :

Գ. Ամենայն Հայոց կաթողի-  
կոսի ընտրութեան Տաճկաստանի  
Հայոց մասնակցութեանը համար,  
նախ և առաջ Կ. Պոլսոյ Եկեղե-  
ցականք՝ վիճակային ժողով գու-  
մարելով՝ կաթողիկոսական ընտ-  
րելեաց հանգամանքը կորոչեն,  
այսինքն՝ Աղղին մէջ գանուած  
բարձրաստիճան եկեղեցականնե-  
րէն միայն զանոնք՝ որ կաթողի-  
կոսական աստիճանին արժանա-  
նայու արգելք մը չունին, կը զա-  
տեն և անոնց ցուցակը ժողո-  
վոյ անգամոց ստորագրութեամբ  
կը վաւերացնեն :

Դ. Սոյն ցուցակը՝ Տաճկաստա-  
նի Հայոց ընդհանրութիւնն օրի-

Նաւորապէս ներկայացնող Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ կը ներկայացուի, որ անոր մէջէն և հոն անը հոն գաղտնի քուէարկութեամբ երեք ընտրելի կորոչէ : Նիժէ ասոնցմէ մէկը քուէից բացարձակ առաւելութիւն չստանայ, երկրորդ անգամ քուէարկութիւն կըլլայ երեք առաւելագոյն քուէ ստացողաց վրայ, և սոյն երեք ընտրելիք իրենց ստացած քուէից շատութեան կարգաւ ցուցակի մը մէջ կարձանադրին :

Ե. Տածկաստանի Հայոց առաջնորդութիւնները՝ Սոսյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց սահմաններուն մէջ գտնուող վիճակներուն հետ 63 լլալով, Ընդհանուր Ժողովոյ կողմէն ընտրը-

ուած երեք ընտրելեաց ամէն  
մէկը 130 քուէի արժէք կունե-  
նան, այնու իրաւամբ որ բոլոր  
Տաճկաստանի Հայոց թէ՛ եկեղե-  
ցական և թէ՛ աշխարհական ընտ-  
րոցաց ամենուն ներկայացուցիչ  
Ազգային կեդրոնական ընդհա-  
նուր ժողովով ընտրուած են :

Զ. Տաճկաստանի Հայոց Երես-  
փոխանական Ընդհ. ժողովը երկու  
պատգամաւոր կընտրէ, մին ե-  
կեղեցական և միւսն աշխարհա-  
կան, որք Ս. Էջմիածին կերթան,  
և Տաճկաստանի երեք ընտրել-  
եաց անունները և անոնց ամեն  
մէկուն 130 քուէի արժէք ունե-  
նալը յայտնող Ընդհանուր ժողո-  
վոյ պաշտօնական գիրը Սինոզին  
և ընտրող ժողովին ներկայացը-

ներէ՛ ետե , Ս. Էջմիածնի Տաճարին մէջ՝ երկրորդ անգամ կատարուելիք քուէարկութեան ժամանակ՝ յուրաքանչիւր պատգամաւոր՝ իրեն յանձնուած 65 ձայնի արժէքով՝ քուէնին կուտան միայն այն բարձրաստիճան եկեղեցականին՝ որ Տաճկաստանի ընդհանուր Ժողովին մէջ քուէից բացարձակ առաւելութիւն ստացած է :

Է. Ս. Էջմիածնի Տաճարին մէջ ներկայացեալ համազգային պատգամաւորներուն ըրած քուէարկութեան արդիւնքը յայտնուելէն ետե , ամենէն աւելի քուէ ստացող Եպիսկոպոսն ՕՐԻՆԱԻՌՐԱՊԷՍ ՀՈԴԵՒՈՐ ՏԷՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԱՓՈՒԵԼՈՅ ԸՆԴ

ԱՄԵՆԱՅՆ ՏԻԵՁԵՐՍՍ : ( Տեա տե-  
ղեկագիր կաթողիկոս . յանձնա-  
ժող . երես 38 - 39 )

Դ. Մասը՝ որ Աղթամարայ ե Սը-  
սոյ կաթողիկոսութեանց կը վե-  
րաբերի , բաց ի յառաջարանէն  
հարկ կը համարիմ ընթերցողաց  
ուշագրութեանը ներկայացնել ,  
որ է՝

« Մեր գործին եկեղեցւոյ նախնայե-  
րանիւն իրենց իւր հանգիստ որ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԱՅՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՊԱՇՏՈՆԵ-  
ԻՅ ՔԼՈՒԹ ԶՈՎՈՒԱԳԵՏՐ ՄԷԿ ԱԼ-  
ԼԱՅ : որ գործին շարք իմանիւն-  
քնան տեղաւոր իւր հետ ե թարգման շար-  
քաւորանիւն նախնայն գործած իւր ի-  
րեն : Այս իրաւամբ , մեր եկեղեց-  
ւոյ մէջ այսօր երեք իմանիւն-  
քնան զիտեղ իմանիւն ՉԱՐՏՈՒՂՈՒ-  
ԹԻՒՆ ՄԷ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵԿԵ-  
ՂԵՅԻՈՅ ՕՐԻՆԱՅ ՆԿԱՏՄԱՄԵ , ե  
հաւաստի է որ եթէ այսօր հա-

յաստանեաց Եկեղեցւոյ մէջ մէկ  
կաթողիկոս կեցած ասեն ուրիշ  
մ'ալ ուրիշ անդ հաստատելու  
խնդիր երեւան ելնէր, ամեն Ազ-  
գասէր և Եկեղեցւոյ բարեկար-  
գութեան նախանձախնդիր Ազ-  
գայինք գէմ կը կենային անոր  
հաստատութեանը » :

« Բայց այլ է մէկ բանի մը  
չկեցած ժամանակ նոր ի նորոյ  
երեւան ելնելուն արդեւք ըսալ  
և ընդգէմ մարանչիլ, և այլ է  
արդէն հաստատուած և դարա-  
ւոր անուողութեամբ մշանջննառ-  
րելու ոյժ և ամբուժիւն ստացած  
բան մը կործանելու կամք ընել :

« Առաջինը պարտք է ամենուն,  
և կը յաջողի շատ անգամ, եթէ  
բոս օրինի ջանք ըսայ, և ժա-  
մանակ չկորուսանելով աշխատ-

ուի . բայց երկրորդը շատ ան-  
 դամ ծանր է ձեռնարկել , և զա-  
 նազան պարագաներ . խոհեմու-  
 թեան պարտք կը դնեն ամենէն  
 եռանդուն ազգասիրին մեզմել  
 իւր ընթացքը և ժամկէն յանձնել  
 Դէն քննարկելու և Գրքերու Կ-  
 ԷՐ . Աղթամարայ և Սոսյ կա-  
 թու զիկանու թիւնները , բառնայու  
 ( հոգը ) մամկնացը զուսայնացը .

« Այսու խորհրդածութեամբ  
 Յանձնաժողովս արժան կը հա-  
 մարի հրատարակաւ յայտնել որ  
 Սոսյ և Աղթամարայ կաթողիկո-  
 սական Աթոռոց համար իր կար-  
 ծիրն է՝ « չմիայն անոնց բարձ-  
 մանը վերաբերեալ խնդիր և յա-  
 բուցանել , այլ նաև զանոնք եր-  
 կուքն ալ Ազգային գերագոյն իշ-  
 խանութեան պատկառելի Ընդ-

հանութիւնսն ի սոցալոյսն ինամսոցն են-  
թարկել, և առաջարկել որ Ազ-  
գը մինչեւ ցայսօր սոյն ամսոց  
նկատմամբ բռնած Բ-ւն Բ-ւն ըն-  
թացքը փոխէ, և զանոնք իր խը-  
նամատարութեան ենթակայ ը-  
նելով հոգ տանի բարեկարգել,  
և եկեղեցական նուիրաստու-  
թեան կարգաց նկատմամբ ներ-  
դաշնակաւ որ դրութեան մը մէջ  
մտցնել» 2

« Այս նպատակաւ Յանձնած ո-  
ղովս կ'առաջարկէ որ Քնդհա-  
նուր ժողովը վճիռ տայ և անօ-  
րէնութիւն ընէ որ ————— Առ-  
—- Բ-ւն Բ-ւն Բ-ւն Բ-ւն Բ-ւն Բ-ւն  
Բ-ւն Բ-ւն Բ-ւն Բ-ւն Բ-ւն Բ-ւն  
այս հանջողութիւնն անընդունելի  
է, և թէ այս ամսոցն, և թէ  
Ազթամարայ ամսոցն համար

կաթողիկոս ընտրելու իրաւունքն  
Ազգային Ընդհանուր Ժողովին  
իրեն սեպհական ըլլալով նա՛  
կ'ընտրէ կաթողիկոսները, եր-  
կուքին ալ Միաբանութեանց կող-  
մէն ներկայացուած օրինաւոր  
ցուցակի մէջէն դասելով, ինչպէս  
օր Մ. Երուսաղէմի Պատրիարքի  
ընտրութեան համար ըրած է և  
կրնէ ։

« Եթէ Ընդհանուր Ժողովն այս  
վճիւր տալու կամք ընէ, Յանձ-  
նաժողովիս կը մնայ սա՛ հետե-  
ւեալ յօդուածներն առաջարկել,  
իրբեւ ընտրական օրէնք Սոսյ և  
Ազխամարայ կաթողիկոսաց ընտ-  
րութեան ։

« Ա. Երբ Սոսյ կամ Ազխամա-  
րայ կաթողիկոսը վախճանի, Մի-  
աբանութիւնն իր Տնօրէն Ժողո-

վոյ հրաւիրմամբ Ընդհանուր Ժողով կազմելով Տեղապահ մը կընտրէ կաթողիկոսութեան ակտոռոյն, և զանի կառաջարկէ կեդրոնական Վարչութեան խառն Ժողովոյ հաստատութեանը :

Բ. Միաբանութեան Ընդհանուր Ժողովը Տեղապահի նախագահութեամբ ատեան կազմելով, (գաղանի քուէարկութեամբ) ցուցակ մը կը պատրաստէ կաթողիկոսութեան ակտոռ բարձրանալու արժանաւոր Եկեղեցականաց, որուն մէջ դրուելու անձինք պէտք է 40 տարին լրացուցած և գէթ 5 տարիէ ի վեր եկեղեցական աստիճան ընդունած ըլլան, Ակտոռոյն ու Միաբանութեան ամեն պարագայից տեղեկութիւն ու հմտութիւն ու-

նենան, և որ եւ իցէ դատի ներ-  
քեւ չգանուին Տէրութեան կամ  
Ազգին կողմէն ։

Գ. Սոյն ընտրելեաց ցուցակը,  
որ դռնէ երեք անուն պիտի պա-  
րունակէ, Միաբանութեան ընդ-  
հանուր ժողովոյ մեծագոյն մա-  
սին ստորագրութեամբ և Տնօրէն  
ժողովոյ անդամոց և կաթողիկո-  
սական տեղապահին կնքովը վա-  
ւերանալով կը զրկուի կեդրոնա-  
կան վարչութեան խառն ժողո-  
վոյ, որ իր ունեցած դիտողու-  
թիւններովս հանդերձ դայն կը  
ներկայացունէ Ազգային Ընդհա-  
նուր ժողովոյ ։

Դ. Ընդհանուր ժողովը կընա-  
րէ զկաթողիկոս նոյն ընտրելեաց  
ցուցակին մէջէն դադտնի քը-  
ուէարկութեամբ և բացարձակ

առաւելութեամբ քու էից ։

Ե. Կոստանդնուպօլսոյ Պատ-  
րիարքը Ընդհանուր ժողովոյ  
ընտրութեան գործադրութիւնը  
կրնէ նորընտիր Կաթողիկոսին օժ-  
ման համար պէտք եղածը տը-  
նօրինելով, և Բարձրագոյն Իրա-  
նէն մասնաւոր թագրիրով հաս-  
տատութեան ֆէրման առնելով ։

Զ. Նորընտիր Կաթողիկոսն իր  
ընտրութեան լուրը կը հաղորդէ  
ամենայն Հայոց Կաթողիկոսին  
դուրսէն ։ Եւ շրջարե-  
րական կանգակով ալ իր թեմե-  
րուն մէջ գտնուող ժողովրդեան  
կը ծանուցանէ իր գահակալու-  
թիւնը ։

« Սոյն ընտրական օրէնքը Ստոյ  
և Աղթամարայ Կաթողիկոսաց  
ընտրութիւնը կապահովէ, և ա-

սով Ազգը ազատ կը մնայ ապագային մէջ անարժան անձանց կաթողիկոսական յաթոռ բաղմելը տեսնելէ, եւ ընտրութիւնները կը դադրին համազգի անարժան եկեղեցականաց փառասիրութեան ասպարէզ ըլլալէ : »

« Բայց ասով ամենայն ինչ չը կատարուիր : Յանձնաժողովս կը փափաքի որ Ազգը վերոյիշեալ յաթոռոց ներքին բարեկարգութեան վրայ ալ կանոններ հաստատելու հոգ տանի, և Սոսոյ ու Աղթամարայ վանքերը դպրոցներ հիմնելով՝ երկուքին ալ արժանաւոր Միաբաններ հասցունելու ջանք ընէ : »

« Յանձնաժողովս աներկմիտ է որ սոյն երկու վանքերը ազգա-

յին ուրիշ վանօրէից կարգին՝ ի-  
րենք ալ ընդհանուր կանոններ  
պիտի ունենան, և ասոնց Միա-  
բանութիւններն ալ Ս. Երուսա-  
ղէմի միաբանութեան նման Ազ-  
գին օգտակար ըլլալու գրու-  
թեան մէջ պիտի մտնեն :

« Բայց Յանձնաժողովս ուրիշ  
փափաք մ'ալ ունի, զոր չի խոր-  
չիր պատկառելի ժողովոյդ ներ-  
կայացնելէ, ա՛յն է՝ օգուտ քա-  
ղել այս անգամ թէ՛ սոյն երկու  
կաթողիկոսութեանց ակտոնե-  
րուն և թէ՛ ամենայն Հայոց կա-  
թողիկոսութեան Ս. ԷՋՄԻԱՄՆԻ  
ԳԵՐԱԳԱՀ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՆ Երե-  
քին մէկէն թափուր մնացած  
գանուելէն, երեքին ալ Գահա-  
կալներն ընտրելու անթիւ, ե-  
րեքին մէջ պատշաճաւոր և ներ-

դաշնակաւ որ յարարերու թիւն  
հաստատելով որ կրնայ ապագա-  
յին մեծապէս օգնել ազգային  
եկեղեցական նուիրապետութեան  
կատարեալ և օրինաւոր կերպով  
բարեկարգութեան » :

« Ասյն մտօք Յանձնաժողովս  
պարտք կը համարի Ընդհանուր  
ժողովոյդ առաջարկել որ Ասոյ և  
Աղթամարայ կաթողիկոսաց ընտ-  
րութեան անմիջապէս ձեռնար-  
կութիւն չըլլայ, և մինչեւ որ ա-  
մենայն Հայոց կաթողիկոսն ընտ-  
րուի՝ սոյն երկու ակթոններն օ-  
րինաւոր տեղապահներու ձե-  
ռօք կառավարելու անօրէնու-  
թիւն ըլլայ » :

« Յանձնաժողովս կը կարծէ որ  
եթէ ամենայն Հայոց կաթողի-  
կոսն ընտրուելէ ետեւ Ազգային

Ընդհանուր ժողովն անոր ի Պօ-  
լիս առժամանակեայ ներկայու-  
թիւնը վայելելու պատիւն ունե-  
նայ, և նոյն միջոցին Ստոյ և Աղ-  
թամարայ կաթողիկոսաց ընարու-  
թիւններն ընելով երկ-ց-ն և զ-  
ի ներկայ-ութ-ն -մե-յն Է-յոց գեր-գ-ն  
կ-թ-ղի-թ-ին կ-տ-ր-ե-լ-ը +ե-ն-ե-լ-ը ք-զ-  
դ-ն -ը-ն-ն-ն-յ, մեծ և մեծ ծա-  
ռայութիւն մատուցած կը հա-  
մարուի Աղգային եկեղեցւոյ .  
վասն զի այս առթիւ Ստոյ և Աղ-  
թամարայ կաթողիկոսաց Սուրբ  
Էջմիածնի Մայր Աթոռոյն հեա  
ունենալու յարաբերութիւններն  
օրինաւոր հիմանց վրայ հաստատ-  
ուելով, եկեղեցին ներկայ ժա-  
մանակիս մէջ խաղաղութիւն և  
ապագային ալ կատարեալ և օ-  
րինաւոր բարեկարգութիւն վա-

խելելու գրութեան մէջ կը մտնէ,  
չորհիւ Տեառն և միջնորդու-  
թեամբ Անդհանուր Ժողովոյ » :  
(Տես տեղեկագիրը կաթող. Յանձ-  
նաժող. Երես 40 - 44) :

Կաթողիկոսական Յանձնաժո-  
ղովոյ առաջարկած և Ազգային  
Ժողովոյ ընդունած սոյն թէ՛ ա-  
մենայն Հայոց Հայրապետի ընտ-  
րութեան Թուրքիոյ Հայոց մաս-  
նակցութեան եղանակին վերա-  
բերեալ եօթն յօդուածները՝ և թէ՛  
Ազթամարայ ու Սոոյ կաթու-  
ղիկոսական ընտրութեան համար  
սահմանեալ վեց յօդուածները կը  
հարտատանն թէ՛ Հայաստանեայց  
Հայրապետութեան Մայր - Ի - Ն Ա-  
ԼՁՄԻԱՍԻՆՆ Է . . . թէ՛ ամենայն  
Հայոց Հայրապետն ըստ որում  
բոլոր ազգէն և միայն ազգէն

կընարուի, անոր ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆ  
և ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՁՈՒԹԻՒՆԸ կըտարա-  
ծի — Բէն-յն Հ-յոց իբր-ս որտ — Ի-Ե-Լ Է  
ընդ — Բէն-յն — շի-բն, յորս է Է՛ Աղը-ճ-բ  
Է՛ Սէ- : կը ցուցնեն թէ Հայաս-  
տանեայց Եկեղեցւոյ Հայրապետն  
և Հայրապետութիւնը Մէ՛կ է և  
միայն Մէ՛կ կընայ ըլլալ, թէ Աղը-  
ճ-բ և Սէ- շարաշուք ժամանակաց  
արտադրութիւնք են, և թէ պէտք  
է թէեւ Բ-ն-ը շն-ն-ի, բայց խո-  
հեմութիւնք և միայն խոհեմու-  
թիւնք կը պարտաւորէ որ Ժ-ն-ը  
ն-իւ ը-ն-ի — Ե Է՛ Ե՛ Ե՛ :

Ի մի բան՝ կաթուղիկոսական  
Յանձնաժողովոյ սոյն այս տեղե-  
կագիրն, զոր հանդիսապէս ըն-  
դունած է Ազգային ժողովը,  
իւր ամբողջութեամբք մեր սոյն  
գործոյն առաջին գլխոյն մէջ ա-

մենայն Հայոց Հայրապետութեան  
— Բ — Կ — Ե — Զ — Ը — Թ — Կ — Լ —  
Խ — Ծ — Ծ — Ծ — Ծ — Ծ — Ծ — Ծ — Ծ — Ծ —  
մամբ՝ գրածներուն՝ հաստատու  
թեանն ամենահզօր վկայութիւնն  
է, միանգամայն և վեռահան և  
վերջնական պատասխանը՝ Մար-  
տայցի Տ. Մկրտիչ Սրբազանի հա-  
կառակ եկեղեցւոյ կարգաց, կա-  
նոնաց և սովորութեանց և Ազ-  
գային ժողովոյ տուած որոշմանց  
ըրաժ գրաւոր պահանջմանց և  
բերանացի յայտարարութեանց և

Կաթողիկոսական Յանձնաժո-  
ղովն ըստ որոշման Ազգային ժո-  
ղովոյ, որ ի 27 մայիսի 1866,  
Նախագահութեամբ Տ. Պօղոս Բ.  
Պատրիարքի, ամենայն Հայոց Հայ-  
րապետի նորոգ ընտրութեան

մասնակցելու ընտրական գործա-  
ղութեանց կը ձեռնարկէ, և նախ  
Ս... Էջմիածնի Սինոդին կողմէն  
Հայրապետական ընտրութեան  
նկատմամբ Ազգային Պատրիար-  
քարան ուղղեալ 1865 Սեպտեմ-  
բեր 11 թուական կրկին գրու-  
թեանց Ի պատասխանի սա հե-  
տեւեալ պաշտօնագիրը կուղղէ  
արձ նոյն Սինոդականս և բանս  
բնաճ Գերապատի Սինոդականք  
Գերագահ Սրբոյ Աթոռոյց Էջմի-  
ածնի Ծ:

« Հոգեհարազատ սիրելիք մեր  
Ի Տէր »:

« Ազգային կեդրոնական վարչ-  
ութեան մերոյ կրկին ժողովք  
կրօնական և Քաղաքական ըն-  
կայան անաղան ուրեմն յինն և  
տասն նոյեմբերի ամսոյ անցելոյ

ամի զերկասին նամակս , զորս մե-  
տքանական ուխտդ Ա. Էջմիածնի  
Մայր Աթոռոյ մերոյ անաքեալ  
էր առ իւրաքանչիւրն ի մեռասան  
Սեպտեմբերի այնք ամի , առ ի  
հարգողել Հայոցս քնակերոց ի  
ասհմանի Օսմանեան Պետութեան  
դագառիմ գոյժ փոխելոց առ  
Աստուած Ահհարեալն մերոյ և  
Ընդհանրական Քահանայապե-  
տին Տ. Տ. Մամթեոսի երանելի  
Հօրն հարարակաց և առ ի հրա-  
ւիրել զթուրքիանակ Ազգայինս  
ի մասնակցութիւն քնարութեան  
Արժանաւոր Յովորդի յԱթոռ Ապ-  
թուղիկանական փոխանակ Հո-  
ղելոյս հանգուցելոյն ։

Նախ քան զժամանել ի ձեռս  
Ազգային կեդրոնական վարչու-  
թեանս երկացուն նամակաց ուխտ .

տիղ սրբութեան միշտ և թա-  
խիժ կանխաւ եւս պատեալ պա-  
շարեալ էին զօրոտս մեր . քանզի  
սգ ամանոյց համբաւ այրիանալոյ  
Ս. Աթոռոյդ յիւրն փեռայէ , հաս-  
եալ էր ամսով ինչ յառաջ ի լսե-  
լիս մեր ուղղակի ճանապարհաւ  
սովորական թղթատարութեան  
որ արագագոյն և ապահով եւս  
է միշտ քան զանուղղակի շաւիղ  
կրկնակի միջնորդութեանց (\*) .  
յեր լսաւ կանոնաց Տէրութեանդ

---

(\*) Մինչդէռ նամակաց Ռուսոյց դեռ  
պանատան միջոցաւ զրկուելուն նկատ-  
մամբ եղած է այս գիտողութիւնը , որ  
լսել կուզէ թէ փոխանակ անուղղակի  
միջոցներու՝ ուղղակի սովորական թղ-  
թատարութեան նեւօք պէտք է զըր-  
կուին ի Պատրիարքարան այս օրինակ  
և այլ ամեն անասկ նամակներ :

Թերեւս բերեալ էր պատուական  
Միաբանութիւնդ յայս պարս-  
գայի, որը ենթագրել մարթ է  
ինամակէ անտի գրելոյ ԵՃԵՅՁ  
յուժն և տանն գեկանմբերի  
անցեալ տարւոյ ընդ 2262 թը-  
ուահամարաւ ։

« Եւ յայս կանխատման լրոյ  
հասելոյ առ մեզ, ըստ մերոյ  
սեպհական պարտեաց փութաց-  
եալ կատարեալ էար դարձմայի  
պաշտօն Հոգեհանգստեան Հան-  
գուցեալ Հայրապետի մերոյ յա-  
մենայն եկեղեցիս Մայրաքաղա-  
քիս, և փրճակաց Առաջնորդու-  
թեանց եղելոց ընդ անմիջական  
իրաւասութեամբ Ս. Մայր Աթո-  
սոյդ ։

« Իսկ վասն որո՞՞ւմ թեպէտք  
« Իսկ վասն որո՞՞ւմ թեպէտք  
ընտրութեան յաջորդի նորոյ Հնգ-

հանրական կաթողիկոսի, ըստ  
կանոնաց Սահմանագրական Վար-  
չութեան Հայկազանցս Տաճկաս-  
տանի Ազգային Երեսփոխանք Ե-  
կեղեցականք և Ժողովրդականք  
հրատիրեցան ի համադուժար ժո-  
ղովյաւուք քսաներորդի չոր-  
րորդի ամսեանն դեկտեմբերի  
ի Տաճար Եկեղեցւոյ Ս. Լուսա-  
ւորչի որ ի Ղալաթիա, և ընթեր-  
ցան վերոյիշեալ հրատիրագիրք  
Չեր ։

« Ի պատկառելի և յՆ. Ազհա-  
նուք ժողովի անդ Եղեն ինչ ինչ  
ատենախօսութիւնք զարդի կա-  
ցութենէ կաթողիկոսական իշ-  
խանութեան Ազգիա, զայլ և այլ  
անախորժ և անհաւատալի յրոյ  
տարածելոյ ի քանի մի ժամանա-  
կաց հետէ հրատարակական և

մասնաւոր գրութեամբ, նաեւ  
քերականացի վկայութեամբ ակա-  
նատես անձանց, և յատկապէս  
դՊ-ը-է-է- անուն կանոնադրու-  
թենէ խմբէ, զոր ասեն հաս-  
աատեալ գոյ յամի 1836, զանա-  
զան մասամբ անհամաձայն թէ  
իրաւասութեան Ս. Աթոռոյդ,  
և թէ օրինաց կանոնաց և ա-  
ւանդութեանց սուրբ Եկեղեցւոյ  
մերոյ, և որպէս ասի հաստա-  
տութեամբ ի վաղուց անկեալ  
ընդ բողոքաւ մերազանց եղելոյ  
ի սփիւռս Հնդկաստանի, և որ  
մեծն է յաւերժայիշատակ Հայ-  
րապետացն մերոյ Ներսիսի և  
Մարթէոսի ։

Յերեսիոսիսանեական կեդրոնա-  
կան ժողովի յայամիկ յետ բազ-  
մաց առարկութեանց որպէսզար,

զի ի Յանձնաժողովի խմբ. բաղ-  
կացելոյ յեկեղեցականէ և ի ժո-  
ղովրդականէ, քննեսցի ճշգիւ  
արդեան կայութիւն Ա. Աթո-  
սոյդ, ցուցցին միջոցք բարու-  
քելոյ նորա, և բացածանուցի  
եղանակ մասնակցութեան թուր-  
քիարնակ Հայոցս յընտրութեան  
Ընդհանրական Հայրապետի մե-  
րոյ, և պատրաստեալ յայտագիր  
ի վերայ Ազգային փափուկ խընդ-  
րոցս այսոցիկ, հանցի ի ներկա-  
յութիւն Ընդհանուր ժողովոյ  
որպէս զի շիակատար ծանօթու-  
թեամբ զայսուիկ զամենայն զհար-  
կաւոր և զոյխտեւան տնտրէնու-  
թիւնս բաւական լիցին գործա-  
դրել, և ապա ընտրել զմի յե-  
կեղեցականէ և զմի ի ժողովրդ-  
ականէ զպատգամաւորս երկուս

որք իբրև զերեւփոխանս Հայոց  
Մայրաքաղաքիս և վաթսուն և  
հինգ վիճակաց Առաջնորդու-  
թեանց Օսմանեան դաւառաց  
փութացին դալ ժամանել յայդր  
ի Ս. Էջմիածին, ներկայ դատնել  
ի հանդիսի ընտրութեան և դը-  
նել ի դարձ զիրաւունս Հայոց բը-  
նակեցելոցս ի թուրքիս, որ որ-  
պէս յայտ է, կազմեմք զմեծա-  
դոյն մասն ընդ հանրութեան Աղ-  
ղիս ։

Եղեն այժմ, ի քաղիքս ինչ,  
և ի միաս և ի լեզուս տմանց բանք  
և խորհուրդք տեղափոխութեան  
ընդ հանրական կաթուղիկոսու-  
թեան (\*) որպէս և ցաւօք սրախ

---

(\*) Ստոյգ է որ այն միջոցին ամե-  
նայն Հայոց Հայրապետական Աթոռով

խօսի զայնցանէ վերջին նամակ  
Միաբանութեան Ս. Գաճիգ, այլ  
այն ամենայն բանք և խորհուրդք

անդամութեան նկատմամբ խնդիր  
մը երևան ելած և պաշտօնական շք-  
ջանակներէ դուրս իրօք խտրակցու-  
թեան և զրոգրական հրատարակու-  
թեանց նիւթ եղած է, թայց թողլով  
որ Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Միա-  
բանութիւնն այս տարածայնութեանց  
դէմ իւր գրաւոր բողոքն ու ցար հա-  
սուցած է ի Պատրիարքարան, ինչպէս  
կըսէ այն Պատրիարքական պաշտօ-  
նագիրը, թողլով որ Ռուսաստանի  
Հայք նոյնպէս բողոք բարձած են ի լը-  
բագիրս, (Տե՛ս Տփիսիսի Մեղու Հա-  
յաստանի թերթին 1866 յայւոյ 38 և  
41 թիւերը)։ Ասիական զինուորական Յանձ-  
նաժողովն իւր անդեկազրոյն երրորդ-  
թուրքիարձակ Հայոց՝ ամենայն Հայոց  
Հայրապետական ընտրութեան կերպը

են ծնունդ կարծեաց եթէ Ա.  
թոռդ Ս. Էջմիածնի դատանի ի  
վտանգ առ քիճակի, և թէ չիք

---

որպիսի — մասին ընտրական օրինաց  
Ե. յօդուածով օրինադրած ըստով թէ  
Հայաստանեաց Հայրազեցական Մայր  
Աթոռը կը մնայ միշտ ի Ս. Էջմիածին  
ի Մայր Ազգեղեցին Հայաստանեաց, որ  
Առաջաժամ հրաման անորէն թե անք  
Գրիգոր Կուսաօրչի ձեռքով շինուած,  
Անոր Աթոռն և համարէն Հայկազանց  
հոգեւոր միութեան կեդրոնն է ( Տես  
նայն յօդուածը ի վեր անդր երես 526 )  
և զոր, ինչպէս ակասնք, Ազգային ժո-  
ղովը իւր հանդիսական օճուովն ըն-  
դունած է ի 27 Մայիսի 1866 թ. Հե-  
տեւ ասկէ և նայն հետոյն Հայրազե-  
ցական Աթոռոյ անդամութեան նը-  
կատմամբ յարուցեալ տարածայնու-  
թիւնք ոչնչացած և անհետացած են  
թաղան :

յայս այլով եղանակաւ ապահո-  
վութեան իրաւանց Ազգին, բայց  
Երեսփոխանական ընդհանուր ժո-  
ղով կեդրոնական Ազգային Վար-  
չութեան աներկմիտ հաւատայ,  
և ի հաւատարիս իւրաց աներկբայ  
հաւատոց՝ յարժանահաւատ ազ-  
բերաց (Թէպէտ և ոչ ի սպաշ-  
տօնէ) ծանօթս առեալ է, եթէ  
ամենայն ունկնդրութիւն և թոյ-  
լատուութիւն շնորհեացի առ բո-  
վանդակ խնդիրս հիմնեալս յիրա-  
ւունս Հայ Ազգի և Եկեղեցւոյ,  
որք անխտոր և անվրէպ հայի-  
ցին ի բարւոքութիւն կաթուղի-  
կոսական վարչութեան Սրբոյ Ա-  
թառոյղ, և յապահովութիւն Նէ-  
-----նէնց Հայրապետի մերոյ:

«Ուստի եթէ սրբազան Միաբա-  
նութիւնդ եւս յայսմ մասին գը-

տանիցի ընդ մեզ վատահակից,  
մի բնաւ երկիցէ ի ստրաւնայեալ  
վտանգէ պատակաւելոյ՝ Երեւի  
Ազգի մերոյ, որ կայ մինչեւ ցարդ,  
և կացցէ նաեւ ցեաւ այսորիկ մի-  
այեալ անստան, ցորչափ ի  
վերայ հաստատուն և ապահով  
հիմանց անբացեալ իցէ Աթոռ  
Հոգեւոր Գլխոյ իւրոյ՝ և միայն  
... ի մտոյ՝ առաքեացուք ան-  
Չեզ Ս. Միաբանութիւն և զօրի-  
նակ մի յայտագրոյ յիշեալ Յանձ-  
նաժողովոյն զորմէ ի վերոյ ծա-  
նուցաւ . այլ և հաղորդեացուք  
Չեզ միանդամայն եթէ ո՞չք ո-  
մանք լինիցին պատգամաւ որքն  
ընտրեալք ի Թուրքիարեակ Հա-  
յոց կեդրոնական վարչութենէ,  
և երբ դնիցին ի ճանապարհ,  
և զոր ցուցակ ընտրելեաց բեր-

ցեն յայդր ընդ ինքեանս և նա  
 Աստ վախճան տու եւ ալ բանից  
 նամակիս ինդրեմք ի Չերոյց  
 սրբութեանց յայս ամենայն իրս  
 զու թիւնս յորս զամանիք նաեւ  
 ջերմեանցն Ազոթից մատուց  
 մամբ առ Աստուած հանխեցէք  
 ինդրեցէք զբարեկարգ հաստու  
 տութիւն Սրբոյ կաթն զիկէ Ե  
 կեզեցւոյ Հայաստանեայց և զուս  
 տի մանկանց հորս և զբարեյո՛ւ  
 ջոզ կեանս Հայ Ազգի և ժողո  
 վքրդեանս ի զ Ազգս Երփորսեան

Ըն յունիս 1866 թ

ՊԱՏԻԱՐԷ Կ. ՊՈԼՍՈՅՉ

ՊՕՂՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

( ԿԻ )

Կաթն զիկասական Յանձնաժող  
 զոյլը այն պատասխանազ իրն ո  
 բոյեւէն յետոյ Ազգային ժողովոյ

Ներկայանալի Հայրապետական  
ընտրելեաց ցանկը պատրաստուե-  
լու համար Եկեղեցական վիճա-  
կային (Համագումար) ժողովոյ  
գումարման նախապատրաստու-  
թեանց կը ներանարկէ : Աւստի  
մէկ կողմանէ իւր որոշմամբ իւր  
անդամակիցներէն Տ. Ներսէս Ե-  
պիսկոպոս վարժապետեան և Տ.  
Յովհաննէս վարդապետ Սեթեան՝  
նախագահութեամբ Տ. Պողոս Բ.  
Պատրիարքի , ի Մայր Աթոռն  
ի Ս. Էջմիածին , յԱզթամար և  
ի Սիս ներանարկեալ Հայաստան-  
եաց Ս. Եկեղեցւոյ յամենայն  
տեղիս գանուած բոլոր Եպիս-  
կոպոս պաշտօնէից ցուցակը կը  
պատրաստեն , որոց թիւը նոյն  
ատեն ընդամենը քառասուն և  
իննի կը յանդի , և միւս կողմա

նէ ալ ըստ որում ամենայն Հա-  
յոց Հայրապետի նորոգ ընտրու-  
թեան խնդիրը հանրական և կա-  
րեւոր, հետեւապէս և ընտրել-  
եաց զանկի պատրաստութեան  
մասնակցելու համար Աղթամա-  
րայ և Սոսի Տեղապահներն և Ե-  
րուսաղէմի Պատրիարքը կը հրա-  
ւիրէ որ յանուն իրենց մարա-  
նութեան և վիճակաց ի Կոստան-  
դնուպօլիս գանուող եկեղեցա-  
կաններէն մէկ մէկ փոխանորդ  
կարգեն, նաեւս Ազգային Սահ-  
մանադրութեան ԶԳ յօդուա-  
ծին տրամադրութեան համա-  
ձայն շրջակայ Պրուսայի, Նիկո-  
միդիայ, Կուտինայի, Պանարմայի,  
Ռատասթայի և Տրապիզօնի գա-  
ւառաց առաջնորդներն և Ար-  
մաշու վանից վանահայրը կը հը-

բաւիրէ, որ Յուլիա ամուսյ նկիզը-  
ները ներկայ գանուին ի կոստան-  
գնու պոլիս, որպէս զի գումարե-  
լի եկեղեցական վիճակային ժո-  
ղովոյն ներկայ գանուելով մասն  
նակցին պատրաստուելիք Հայրա-  
պետական ընտրելեաց ցանկին և  
Տ. Պօղոս Բ. Պատրիարք կը յայտ-  
նէ, Կաթողիկոսական յանձնա-  
ժողովոյ թէ՛ Եկեղեցիոյ և Աղթա-  
մարաց Աթոռներուն վիճակը որ  
աւուր փաստարանալու վրայ է,  
և յոստ վկայութեան Տեղապետ  
Եպիսկոպոսաց թէ՛ որ Անապ-  
Սոյն Աթոռոց գահակալները շինու-  
րալին և ոյն վիճակաց բողայնոց  
մէջ շխտութիւն, պատակաւ մ'  
մինչև անդամ կրօնափոխութեան  
վասնդ կրնայ պատահել ըստ մասն  
նշանն ըստ պատրաստութիւն 36

Յանձնատոմարսն անկատար թեան  
առնելով հանդերձ թէ Ազգային  
Ժողովն Ազգամարայ և Սոց կա-  
թոլիկոսաց ընտրութիւնն ամե-  
նայն Հայոց Հայրապետի ընտրու-  
թեանէն վերջը կատարել որոշած  
է, բայց Պատրիարքին սոյն յայ-  
տարարութեան վրայ Ազգամա-  
րայ և Սոց անմիջական անօրէ-  
նութեան կարօտ կացութեան առ-  
ջել կը պարտաւորի խնդիրն Ե-  
կեղեցական Վիճակային Ժողովոյ  
ատեններ հանել առաջարկելով  
որ եթէ պատշաճ կը դատի ի  
քննին առնու, և նախ ինքնըն-  
տիր Տ. Խաչատուր և Տ. Նիկո-  
ղայոս կաթոլիկոսաց նկատմամբ  
իւր վճիռը տայ, և ապա յա-  
նուն նոյն աթուոց միաբանու-  
թեան փոխանորդարար և միայն

այս մէկ անգամի համար Ազժա-  
մարայ և Սոյ զատ զատ երեքա-  
կան ընտրելեաց ցանկ պատրաս-  
տէ, և ստորագրեալ տեղեկագրով  
ներկայացնէ Ազգային ժողովոյ :

Հոս այսմ հրահրանաց կա-  
թողիկոսական Յանձնաժողովոյն  
Ազժամարայ Տեղապահը՝ Տ. Իդ-  
նատիոս Եպիսկոպոս Առաջնորդն  
Վանայ, փոխանորդ կը կարգէ զՏ.  
Յովհաննէս Վարդապետ Սեթ-  
եան, Սոյ Տեղապահը՝ Տ. Մկր-  
տիչ Եպիսկոպոս (\*) Այնթապցի,  
փոխանորդ կը կարգէ զՏ. Ներ-  
սէս Եպիսկոպոս Վարժապետեան  
և Երուսաղէմի Պատրիարք Տ.

---

(\*) Այս Եպիսկոպոսը կրօնափոխու-  
թեան դիմելով թողած է այժմ Հայաս-  
տանեայց սուրբ Եկեղեցին և բողոքա-  
կան եղած :

Երայի Արքեպիսկոպոս փոխանորդ  
կրկարգէ իւր ի կոստանդնուպոլիս  
դռնուող միաբաններէն զՏ. Սի-  
մոն Վարդապետ Սէֆէրեան (\*)  
(1867ին Եպիսկոպոս ձեռնադրու-  
ումս է ի Ս. Էջմիածին) : Նմա-  
նապէս բայ ի Պրուսայի Առաջնոր-  
դէն, որ է այժմեան Տ. Տ. Գէ-  
որդ Գ. Հայրապետան Հայոց, հը-  
րաւիրեալ միւս Առաջնորդներն

---

(\*) Արուսաղէմի Պատրիարքը Յանձ-  
նածողոյց հրաւերին ուշ պատասխա-  
նած ըլլալով՝ յանուս իւր միաբանու-  
թեան կարգած փոխանորդը՝ Տ. Սիմոն  
Վարդապետ Սէֆէրեան, Եկեղեցա-  
կան Ախակային ժողովոյ մէջ պատ-  
րաստում Հայրապետական ընտել-  
եաց ցանկի պատրաստութեան չէ կըր-  
ցած մասնակցիլ, բայց Ազգային ժո-  
ղովոյ մէջ կատարում ընտրութեան  
մասնակցած է :

և Սրմաշու Վանահայրն ևս ոչ  
բոշեալ ժամանակին կը հասնին  
ի Կոստանդնուպօլսոյ :

Եկեղեցական Վիճակային ժո-  
ղովք կը գումարի 1866 Յուլիս  
12 երկուշաբթի օր Պատրիարքա-  
կան Մայր Եկեղեցւոյ մէջ, ուր  
բաց ի Մայրաքաղաքիս եկեղեց-  
եաց Բարոզիչ Վարդապետներէն  
և Աւագ ու Աթոռակալ Բահա-  
նաներէն ներկայ կը գտնուին,

Տ. Պօղոս Արքեպիսկոպոս Թաթ-  
թաքեան, Պատրիարք Հայոց Կոս-  
տանդնուպօլսոյ, օր կը նախա-  
գահէ ժողովոյն :

Տ. Թադէոս Եպիսկոպոս Ա-  
ռաջնորդ Ռոմասթոյի :

Տ. Յակոբ Եպիսկոպոս Առաջ-  
նորդ Կուտինայի :

Տ. Նիկողայոս Եպիսկոպոս փոխ

Առաջնորդ Նիկոմիդիոյ ( 1873ին  
Պատրիարքական Տեղապահ ),

Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Առաջ-  
նորդ Տրապիզոնի, ( 1869ին Ա.  
առաջնորդ Եգիպտոսի )

Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Ե-  
դեսեան Առաջնորդ Պանտրմայի

Տ. Արիստակէս Եպիսկոպոս Բա-  
րոզիչ Նոր-Թաղի յԵւսկիւտար .

Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Կա-  
պուտիկեան քարոզիչ Միջագիւղի

Տ. Ներսէս Եպիսկոպոս Վար-  
ժապետեան Բարոզիչ Խասգիւղի  
և փոխանորդ Սոյ :

Տ. Յովհաննէս Վարդապետ  
Սեթեան քարոզիչ Բուղիունճուքի  
և փոխանորդ Աղթամարայ ,

Տ. Եփրեմ Վարդապետ Վանա-  
հայր Արմաշու Վանից

Տ. Մկրտիչ Վարդապետ Խրիմ-

եան Վանահայր Վարագայ և Մը-  
շոյ Գրակայ Վանից

Քնդ ամենը քառասուն և եր-  
կու հոգի :

Եկեղեցական Վիճակային Ժո-  
ղովը Կաթողիկոսական Կանձնա-

Ժողովոյ պատրաստել տուած  
քառասուն և ինն Եպիսկոպոսաց

ընդ հանուր ցուցակէն գաղտնի  
քուէարկու թեամբ Հայրապետա-

կան ընտրելեաց հետևելեալ եօթ-  
անուն ցանկը կը պատրաստէ, որ է

Տ. Գէորդ Արքեպիսկոպոս Ա-  
ռաջնորդ Գրուսայի քուէ 31

Տ. Գօղոս Գատրիարք Արքեպի-  
սկոպոս Կաստանդնուպօլսոյ քը-

ուէ 30

Տ. Իզնապիոս Արքեպիսկոպոս  
Առաջնորդ Վանայ քուէ 26

Տ. Թաղէոս Արքեպիսկոպոս Ա-

առջնորդ Ռոստոսթոյի քուէ 20

Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս Գարոբիշնոր - Թաղի յիւսկիւտար քուէ 19

Տ. Եսայի Գաորիարք Արքեպիսկոպոս Երուսաղէմի քուէ 18

Տ. Մակար Արքեպիսկոպոս Առաջնորդ Տիֆլիսի քուէ 16

Ասկէց Եւան ըստ առաջարկութեան Կաթուղիկոսանկան Յանձնաժողովոյն Այլժամարայ և Սոյիսնդրոց անցնելով Եկեղեցական Վիճակային ժողովը նախ իւր ընդհար կուտայ և ապա անոնց համար եւս զաղանի քուէսրկութեամբ զատ զատ Եռանուն ընտրելեաց երկու ցանկ կը պատրաստէ : Ահա վճռոց բուն օրինակը հանդերձ ընտրելեաց ցանկերով :

« Վիճակացին Աղեղեցական ժողովոյն անդեկանալով եթէ խաչատուր Եպիսկոպոս Աղթամարայ հանգուցեալ Պետրոս Կաթողիկոսին կենդանութեան ատեն ինքզինքը անոր անդ կաթողիկոս օծել տուեր է, անվաւեր վճռեց անոր կաթողիկոսութիւնը » :

« Եպիսկոպոս անվաւեր վճռեց Սրայ Նիկողոս Եպիսկոպոսին կաթողիկոսութիւնը, ըստ որում արժանաւորութիւն չունենալով զիչեր ասան գողնի գողը ասանց Աղգային հաւանութեան և կրօնախօսութեան արատով արտաւորեալ Եպիսկոպոսէ Տրօծուելու յանդդներ է » : (\*)

(\*) Աղեղեցական Վիճակացին ժողովոյ գումարումէն — 1866 Յուլիս 13էն — մէկ երկու օր անազն նյարտաբար :

« Աւստի եկեղեցական վիճակային ժողովս դադանի քուէարկութեամբ Աղթամարայ Աթոռոյն կաթուղիկոսու թեան ընտրելի նշանակեց հետեւեալ երեք արժանաւոր եկեղեցականները » :

---

կան ոչ պաշտօնական հրաւիրածօք Ապիսկապոսունք կը ժողովուին ի խորհրդարան Ս. Լուսաւորիչ Եկեղեցոյն Ղալաթիոյ և Աղթամարայ ու Սոսյ խնդիրները նկատողութեան առնչով կը կանխեն նախ — որոշում մը տալ թէ՛ Տ. Խաչատուրի և Տ. Նիկողայոսի կաթուղիկոսութիւնն անվաւեր է : Ասի կը ցուցնէ որ նախ քան զգումարու մն Եկեղեցական վիճակային ժողովոյն՝ Աղթամարայ և Սոսյ խնդրոց համար արուելիք մեծան արդէն պատրաստուած է , և ժողովը մեծոյն կատարեալ պաշտօնական կերպարանք մը տալու համար միայն գումարուած :

« Յակօբ Եպիսկոպոս Թօփուղ-  
եան քուէ 23 »

« Մկրտիչ Վարդապետ Երեմ-  
եան քուէ 22 »

« Երեմիա Վարդապետ Բաղի-  
շոյ քուէ 29 »

« Նոյնպէս Կիլիկիոյ Աթոռոյն  
Կաթուղիկոսութեան ընտրելի նը-  
շանակեց զարձեալ երեք արժա-  
նաւոր Եպիսկոպոս, որք են,

« Ներսէս Եպիսկոպոս Վարժա-  
պետեան քուէ 21 »

« Արիստակէս Եպիսկոպոս Ա-  
տանայի քուէ 17 »

« Յովհաննէս Եպիսկոպոս Ե-  
ղեսեան քուէ 15 » (\*)

---

(\*) Եկեղեցական Վիճակային ժողովոյ  
սոյն վճարաստութեան և ընտրելեաց  
ցանկերու պատրաստութեան ժողովոյ  
անդամներն Կիլիկիոյ փոխ-Առաջ-

Եկեղեցական Վիճակային Ժո-  
ղովոյն պատրաստած Հայրապե-  
տական ընտրելեաց եօթանուն  
ցանկն և Աղթամարայ ու Սուրյ  
խնդրոց նկատմամբ տուած վը-  
ճիւտներն և անոնց համար ուրոյն  
ուրոյն նշանակած ընտրելեաց ե-  
ռանուն ցանկերը Ժողովականաց  
կողմանէ ստորագրեալ տեղեկա-

---

ւորց Տ. Կիկոզարոս Եպիսկոպոս չէ  
մասնակցած և Տեղեկագիրը չէ ստո-  
րագրած առարկելով թէ՛ « նախ պէտք  
է յատենի տատամբաստանեալները լը-  
տենք, և ապա վնիս տանք ու Ամուք  
կրօնն թէ՛ Տ. Կիկոզարոս Եպիսկոպոս  
Ժամանակ մը աշակերտած ըլլալով ինք-  
դինքն Սուրյ կաթուղիկոս անել տուող  
Տ. Կիկոզարոս Եպիսկոպոսին՝ չէ ուզած  
մասնակցիլ անոր համար տրուած վըճ-  
նոյն և այս պատճառաւ Աղթամարայ  
խնդրոյն ալ չէ մասնակցած »

գրութիւն կը ներկայանան Ազգային  
ժողովոյ ք 22 Յուլիսի 1866, Կա-  
թոլիկոսական Յանձնաժողովու  
եւս Ազգային ժողովոյ նոյն նիս-  
տին կը մտաուցանէ իւր երկրորդ  
տեղեկագրին, որ ընտրական սոյն  
նախապատրաստութիւնները կը  
պարունակէ :

1866 Յուլիսի 22

Ազգային ժողովը թէ Կաթո-  
լիկոսական Յանձնաժողովոյ  
թէ Եկեղեցական Վիճակային  
ժողովոյ տեղեկագրերը միաձայն  
հաւանութեամբ կրնողունի թէ Ազ-  
թամարն ու Սիւր թափուր կը  
հրատարակէ :

Այս որոշումներէն յետոյ Ազ-  
գային ժողովու ամենայն Հայոց  
Հայրապետի ընտրութեան մաս-

Նախցու թեան քու էարկու թեանը  
կը ձեռնարկէ, և տեաներով որ  
ժողովոյն ներկայ գանուող երես  
փոխանաց թիւը 7 Մի շ յանդիր,  
կորոչէ որ քու էարկու թիւը սկսի  
նոյն օրը և ներկայ երեսփոխանք  
տան իրենց քուէն, իսկ բացակայք  
հրաւիրուին որ իրենց քուէն դրոշ  
կեն ի Պատրիարքարան Յուլիս 27  
չորեքշաբթի օրը, և քուէհա-  
մարի գործողութիւնը նոյն օրը  
կատարուի անդ Նախագահու  
թեամբ Պատրիարքի կարգեալ  
քննիչ Յանձնաժողովոյ մը հըս-  
կողութեամբ :  
Այս յանձնաժողովոյն անդամ  
կընարուին ,  
Տ. Ներսէս Եպիսկոպոս Վար-  
ժապետեան Փոխանորդ Սոյ  
Տ. Թովհաննէս Վարդապետ

Սեթեան Փոխանորդ Ազիթամարայ

Տ. Սիմոն Վարդապետ Սէֆէրեան Փոխանորդ Երուսաղէմի

Վսեմ. Բարունակ Պէյ Դերուխեան Ատենապետ Ազգային Ժողովոյ

Վսեմ. Ստեփան Փաշա Ատլանեան Ազգ. երեսփոխան

Վսեմ. Մկրտիչ Պէյ Բէյիզեան Ազգ. երեսփոխան

Մեծ. Աւետիս Էֆէնտի Քոլոլեան Ազգ. երեսփոխան

Ըստ այսմ որոշման նոյն օրը Ազգային Ժողովոյ նիստին ներկայ գտնուող ՏՏ երեսփոխանքանձամբ կուտան իրենց քուէն, յորս են Ազիթամարայ և Սոսյփոխանորդաց քուէներն, նոյնպէս Երուսաղէմի Պատրիարքին և միաբանութեան փոխանորդը՝ Տ.

Սիման Վարդապետ Սէֆէրեան  
անձամբ կուտայ իւր քուէն, և  
բացակայ երեք երեսօթիւանաց  
նոյն օրը նամակաւ դրկած քուէ-  
ներն եւս կրնդ ունուիլ, և ընդ  
ամէնը կըլլայ 59 քուէ: Եւ քը-  
ուէտաւփը կնքուելով Մայր Եկե-  
ղեցւոյ Աւագ յուսարար Տ. Սու-  
քիաս Քահանային պահպանու-  
թեան կը յանձնուի: Կարգը քրի-  
ստի Ազթամարաց և Սոսի ընտ-  
րութիւններն ուրիշ նիստի թող-  
լով ժողովը կը փակէ իւր այնօր-  
եաց նիստը: (Տես աստե՛նագր. Ազգ-  
ժող. 1866 յուլիս 22 ի նիստին,  
անտիպ) Կարգը մասնաւոր գործուն  
Յուլիս 27 շորեքշաբթի օրն  
Ազգային ժողովոյ որոշմանն հա-  
մաձայն քուէարկութիւնը կը շա-  
րունակուի ընդ հսկողութեամբ

քննիչ Բանձնաժողովոյն, որուն  
 կը նախագահէ Պատրիարքը ։ Քը-  
 ուէի մասնակցութեան հրաւիր-  
 եալ բացակայ 34 երեսփոխան-  
 ներէն ։ 18ը միայն կը մասնակցին,  
 որովք ամբողջ քուէից թիւը 77ի  
 կը յանգի ։

Որոշեալ ժամուն քուէհամա-  
 լի գործադրութիւնը կատարուե-  
 լով 77ը քուէից արդեամբ ամե-  
 նայն Հայոց Հայրապետական  
 ընտրելիք կրկան ։

Տ. Պէտրոզ Արքեպիսկոպոս քը-  
 ուէ 44

Տ. Եսայի Պատրիարք քուէ 44

Տ. Իգնատիոս Արքեպիսկոպոս  
 քուէ 29

Կաթողիկոսական Բանձնաժո-  
 լովք աեմնելով որ սոյն ընտրե-  
 ւածներէն 24 լուսարկ ԸՍՅ 79

ի ներէն առաջին երկուքը հաւա-  
սար քուէ առած ըզայով Թուր-  
քիարնակ Հայոց միակ բացար-  
ձակ ընտրելին որոշուած չէ, ինչ-  
պէս կը արամադրէ Հայրապետա-  
կան ընտրութեան Տաճկաստանի  
Հայոց մասնակցելու համար Ազ-  
գային ժողովոյ քուէարկած օրէն-  
քին վեցերորդ յօդուածը, ուստի  
համահաճութեամբ Ազգային ժո-  
ղովոյ նախագահին և Ատենա-  
պետին կրկին և վերջին անգամ  
քուէարկութեան կը հրաւիրէ բո-  
լոր երեսփոխանները և, օգոստոս  
1ին ըստ առաջնոյն քուէարկու-  
թեան և քուէհամարի գործո-  
ղութիւնք հսկողութեամբ քննիչ  
Յանձնաժողովոյն կը կատարուին  
ի Պատրիարքարանի, որոյ արդիւն-  
քը ցոյց կուտայ թէ երեսփոխա-

նաց մեծագոյն մասին քուէն ըս-  
տացած է, ապաքաղ մ զնաքանչ

Տ. Գէորգ Արքեպիսկոպոսն որ  
և կըլլայ Թուրքիարնակ Հայոց  
միակ բացարձակ ընտրելին :

Ընտրական սոյն գործողու-  
թիւններն աւարտելէն յետոյ,  
Կաթողիկոսական Յանձնաժողո-  
վը յանուն Թուրքիարնակ ամբողջ  
Հայ ազգին ի Ս. Էջմիածին կա-  
տարուելիք Հայրապետական վերջ-  
նական ընտրութեան մասնակցե-  
լու համար եկեղեցական դասէն  
Պատգամաւոր կընտրէ զՏ. Ներ-  
սէս Եպիսկոպոս Վարժապետ-  
եանն (\*), որ այս առթիւ Մեճիքնէ

---

(\*) Տ. Ներսէս Եպիսկոպոս Վար-  
ժապետեան երբ պատգամաւոր կընտ-  
րուի՝ ամբարձայնութիւն կեղէ թէ Ռու-  
սիոց Տէրութեան սահմանէն ներս չը

Երրորդ կարգի պատուանշան  
կրնգունի, և քաղաքայնոց մէջէն  
Պատգամաւոր կրնարէ Վսեմ. Յա-

---

պիտի ընդունուի: Այս տարանայնու-  
թիւնը իրականութիւն կը գտնէ, և  
Սուսոյ Վսեմ. Ինսպանին կողմէն ի  
պաշտօնէ պարոն Դաւիթ Սափալանեան  
կը ներկայանայ Պատրիարքին, որոյ քով  
կը գտնուին նոյն միջոցին Ազգային կեդ-  
րոնական Վարչութեան Խառն ժողովն  
և Վաթուղիկոսական Յանձնաժողովը:  
և կը յայտնէ թէ՛ Հայրապետական  
ընտրութեան համար Տանկաստանի Հա-  
յոց մասնակցութեան մասին ի գործ  
դրուած նախապատրաստութիւնները  
Ինսպանին գոհունակութիւնը գրուած  
են, միայն գիտողութիւն կրնէ Տ. Ներ-  
սէս Եպիսկոպոսի պատգամաւոր ընտ-  
րուելուն նկատմամբ, որ ստորագրած  
է Վաթուղիկոսական այն տեղեկագիրը,  
յորում Սուսոյ Տէրութեան գաւերա-  
ցուցած Պ-Ը-Բ-Է-Է- անուն որէնքը

կոր էֆէնտի նորատունկեան, որ  
նոյնպէս այս պատճառաւ Բե-  
հէնէ աստիճանն և շորթորդ կար-

խափ քննադատուած է, և այս պատ-  
ճառաւ Ռուսոյ Առաջադրութեան  
դէմ անհաճոյ ակնարկութիւններ ե-  
ղած են նոյն տեղեկագրոյն մէջ, որք  
Ռուսոյ պաշտօնական անձանց հա-  
ղորդուած ըլլալով՝ կրնայ ըլլալ որ  
պատգամաւորն — Տ. Ներսէս Նոյն-  
կոպոս — իւր պաշտօնին համեմատ  
ընդունելութիւն չզանէ. այսու ամե-  
նայնիս ինք — Դեպքանք — պատ-  
րաստ է անցագրերը տալ, եթէ ազգը  
դարձեալ արժան գատի :

Աս այս դիտողութիւն՝ Պատրիար-  
քն, Սառն ժողովն և Աթոռ դիկտատա-  
կան յանձնաժողովը սա արժանաւոր  
պատասխանք կու տան թէ՛ Տ. Ներսէս  
Նոյնկոպոսան անոր համար պատգա-  
մաւոր ընտրուած է ազգին կողմէն որ  
Ա - Ազգին արժանաւոր Սկեղեցա-  
կանաց գլխաւորներէն մին է :

դի . Դե՛կե՛րի՛ն պատուանշան կրն  
դունի :

Թարթիարնակ Հայոց սոյն եր-

Բ . Եկեղեցական Վիճակային Ժողո-  
փոյն մէջ Սոյ փանուց միտրանութեան  
և թեմական վիճակաց իրրեւ փոխա-  
նորդ ներկայացուցին ըլլալով՝ այս  
պարագային մէջ՝ անոր պատգամաւս-  
րութեան պաշտօնով ի Ս . Էջմիածին  
ուղեւորութիւնը կրնայ Սոյ աթոռոյն  
ընդ իւր-ն-ն-ն-ն ընդ հանրական Հայ-  
րապետութեան ենթարկեալ ըլլալուն  
ցոյցն համարուիլ , և .

Գ . Թէ՛ Տ . Ներսէս Ազնաւուրյանի  
պատգամաւորութեան պաշտօնին ընտ-  
րութիւնը Եւրօրագոյն Արամ Ժանուց-  
ուած է արդէն ,

Ուստի և անոր ընտրութեան և ա մը-  
նայր կամ փոխփոխութիւն կրելն ան-  
հնարին է , այնչափ որ կամ Տ . Ներ-  
սէս Ազնաւուրյան պէտք է երթայ Ա-  
կեղեցական պատգամաւոր , կամ անոր

կու պատգամաւորք 1866 Օգոստոս 26 ուրբաթ օր այցելութիւն կուտան Ռուսիոյ Դեպագանին, որ անոյ ոչ ոք Նկեղեցական պատգամաւոր :

Այս պատասխանն աննելով պարսն Դուիթ Սափալանեան, կը մեկնի Պատրիարքարանէն, վերստին յայտնելով թէ՛ Վսեմ Դեպագանին բրածը դիտողութիւն մ'է և թէ պատրաստ է անշաղրերը տալ :

Տ. Ներսէս Եպիսկոպոս երբ կը անդեկանայ իւր պատգամաւորութեան պաշտօնին նկատմամբ եղած այս դիտողութեանց՝ անմիջապէս նախ քանի և ապա 1866 Օգոստոս 20 թրուական գրութեանը պատգամաւորութեան պաշտօնէն կը հրաժարի, բայց Վաթնի դիկտանտան Յանձնաժողովը շնորհունիր անոր հրաժարականը, և իւր սրտմանը գրայ հաստատ կը մնայ :

Օգոստոս 23 ին Ռուսիոյ Դեպագանա-

խիսա պատուով կրնդ ունուին և  
երկրորդ օրը օգոստոս 27 շա-

տան Բ. Քարգմանը Պատրիարքին կը  
ներկայանայ, և ի պաշտօնէ կը յայտնէ  
թէ՛ ի Ռուսաստան չեաւորուած և  
պատասխան ընդունուած է թէ՛ «Տ.  
Ներսէս Եպիսկոպոսի և Յակոբ Էֆէն-  
տիի պատգամաւոր ընտրուիչն անպատ-  
շան շնկատուիր : »

Տ. Պօղոս Բ. Պատրիարք այս պաշ-  
տօնական լուրը անմիջապէս նոյն ա-  
ւուր թուական առանձին գրութեամբք  
Ազգային Ժողովոյ փետ՝ Ատենայեա  
Բարունակ պէջին և Ատենադպիր Մար-  
կոսեան Մեծ. Գրիգոր Էֆէնտիին կը  
ժառուցանէ :

Ասոր փրայ Պատգամաւորք, ինչ-  
պէս ըսինք, Օգոստոս 26 ին այցելու-  
թեան կերթան Ռուսիոյ փետ՝ Դեա-  
պանին, և այս կերպով կը վերջանայ  
պատգամաւորութեան զէ՛մ յարուցեալ  
զժուարութիւնը :

բաթ կուղևորին գէպ ի Ս. Էջմիա-  
ծին հեռեւեալ պատրիարքական  
երեք պաշտօնադրոյք, որք են:

Եւ զի պատրիարքական տեղապահ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ

Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ  
Ս. Էջմիածին քաղաքի մէջ ընդ

Ս. Գաղոս Արքեպիսկոպոս, շնոր-  
հին Աստուծոյ Պատրիարք կու-  
տանդ նուպօլսոյ, և պաշտօնա-  
կան գլխիս Հայոց բնակելոց ի  
սահմանս Օսմանեան Տէրութեան,  
բառ որոշման Ազգային Երեսիա-  
խանական Ընդհանուր Ժողովոյ  
անուանեմք և կարգեմք Պատ-  
րիարքաւորս ի դիմաց համօրէն և  
կեղեցականաց և ժողովրդակա-

նայ բնակեցոյ ի վաթառն և հինգ  
առաջնորդական փոճակս Լուսա-  
ւորչական Եկեղեցւոյ Հայոց որ  
ի Թուրքիա, զԳերապատիւ Ներ-  
սէս Եպիսկոպոս Վարժապետեան  
Քարոզիչ Ս. Ստեփաննոս Եկեղեց-  
ւոյ ի Խասգիւղ Կոստանդնուպոլ-  
սոյ, և զՄեծաշուք Յակօբիկ Է-  
ֆէնտի Նորատունկեան պաշտօ-  
նակալ Բարձրագոյն կարգի Տէ-  
րութեանն Օսմանեանց և Ազգա-  
յին Երեսփոխան որք ունին զը-  
նալ ի Ս. Էջմիածին, և մասնակ-  
ցիլ յանուն և ի դիմաց համօրէն  
Հայկազանց ի Թուրքիա բնակե-  
լոց, յընտրութիւն ամենայն Հա-  
յոց Հայրապետի և Գահակալի  
Մեծի Գերագահ Աթուոյ Կա-  
թուղիկոսութեան Հայաստան-  
եաց Եկեղեցւոյ գործակցու-

Թեամբ համադրական պատգամ  
մաւորաց Հայոց, որ ի Ռուսիա,  
ի Գարսիիս և ի Հնդկաստան, Եւ  
բաս վճռոյ և որոշման Ազգային  
Ընդհանուր ժողովոյ յանձնեմք  
սիրելի որդւոց մերոց Ազգային  
պատգամաւորաց զցուցակ երկոյ  
Արքեպիսկոպոսաց որք քուէար  
կու թեամբ ցուցան ընտրելիք  
Կաթուղիկոսական Համադրական  
Աթոռոյ Ս. Էջմիածնի ի դիմաց  
Թուրքիաքնակ Ազգայնոցս :  
«Նախ Համադրութար վիճակա  
յին ժողովով Եկեղեցականաց Ազ  
գիս, որ ներկայ դասն Գերա  
պատիւ ներկայացուցիչք Կաթու  
ղիկոսական Աթոռոց Կիլիկիոյ և  
Աղթամարոյ և Գաարիարքական  
Աթոռոյ Ս. Երուսաղէմի, և վի  
ճակաւոր Արքեպիսկոպոսուէք

չըջակայ առաջնորդութեանց Կ.  
Պօլոսյ. նաեւ եօթն Եպիսկոպոս-  
սունք որք ի կոստանդնուպօլիս  
պատահեցան, Գերապատիւ Հարք  
Վանաց Մշոյ Ս. Կարապետի և  
Արմաշու. Գերապատիւ Երեւփո-  
խանք Եկեղեցական դասու և  
Գարոզիչ Վարդապետք և Աւագ  
և Աթոռակալ Երիցունք ամենայն  
Եկեղեցեաց մեծի Մայրաքաղա-  
քիս, և ապա Ազգային Երեւ-  
փոխանական Ընդհանուր Ժողո-  
վով, որ ներկայացուցանէ զԱզ-  
գայինս ամբողջ, որք ի սահմանս  
Թուրքիոյ, զօրութեամբ Ազգային  
Սահմանադրութեան, որ վաւե-  
րացմամբ Վեհափառ Սուլթանի  
մերս Օգոստոսփառ Կայսեր՝ ար-  
րամադրեալ ունի համաձայն բարդ-  
ճադարեան առանձնաշնորհու-

Թեանց Ազգիս զեղանակ վարչու  
Թեան ազգային արժանին գործոց,  
յորոց կարգի է նաև գործ մասնակցութեան  
Թուրքիային և Հայոցս յընտրութիւն  
Հայրապետին Հայոց Կաթողիկոսի Սրբոյ  
Էջմիածնի և Սրբոյ Կաթողիկոսի Սրբոյ  
Ապարէն այսու վաւերական վկայագրով  
սահմանելով և հաստատելով զպաշտօն  
Ազգային պատգամաւորաց Թուրքիայ Հայոցս,  
խնդրեմք յորոց անկէ է և անաշխ  
զնոսա ունողս իրաւանց գործակցելոյ  
Համազգական Ժողովոյն որ ունի գումարի  
ի Սրբաւնուէր Տաճարի Մայր-եկեղեցւոյ  
Սրբոյ Էջմիածնի, առ ի յընտրութիւն  
Գերագահ Հայրապետին ամենայն  
Հայոց, մէն մի յերկոցունց ունելով  
զգորութիւն

վախժարուն և հինգ ձայնից և երկոցուն միանգամայն հարիւր երեսուն քուեայց և ի գէպս անակնկալ արկածից որ արգելցէ զմին յերկոցունցն գտանիլ ի Տաճարի Ս. Էջմիածնի յաւուր յորում ընտրութիւն Հայրապետին կրտսերելոցն է, ճանաչել զմին միայն որ ներկայացուցէ զայս վրկայագիր, և յայտ արասցէ ըզպատճառս արգելման ընկերին իւրոց վաւերական վկայագրով, միակ և ընդհանուր Պատգամաւոր Ազգին Հայոց որ ի Թուրքիա և նա ի կիբ արկցէ զիրաւունս մեր, վարելով յընտրական քուեարկութիւնս զօրութեամբ հարիւր երեսուն ձայնից, յորս վայելեմք ըստ իրաւանց և ըստ թրուոյ վախժարուն և հինգ անաջ-

Կարգական Վիճակաց Հարցոց Տարճ:

Կանոնաձեռնիչ Կարգադրութիւն Կարգադրութեան

26 Եղևաբաճ 1866 Վ. Կարգադրութեան

Կարգադրութեան Կարգադրութեան Կարգադրութեան

Ընդհանուր ժողովոյ Մայրաքաղաքիս որ կազմեալ գոլով յեկեղեցական և յայլաբնական երեսփոխանաց Ազգիս ընդ մերով Նախագահութեամբ զԱզգն ողջոյն դժուրքիարնուի առաջի Օսմանեան Պետութեան և առաջի Ազգին ներկայացուցանէ, և ըստ տրամադրութեան մերս Ազգային Սահմանադրութեան և երեսնաւոր անօրինելի քրաւունս մասնակցութեան թուրքիարնուի Հայոցս յընտրութիւն ամենայն Հայոց կաթողիկոսի » :

« Ազգային սրբի Ընդհանուր ժողովս հարու է զեւ կարգադրութեան Արրոյ Սինօդիկալայն և խնդրել ի Պատրիարքէն Կ. Պօլսոյ, զի հանդերձ կրօնական ժողովով նշանակեցէ զժի որ Եկեղեց

դեցակիան Պատգամաւոր, և ի Վա-  
զաքակիան Ժողովոյ, զի և նա օ-  
րոշեացէ զմի ոք աշխարհակիան  
Պատգամաւոր վասն Կոստանդի-  
նուպօլսոյ, և հրաւիրեացէ զամե-  
նայն Առաջնորդակիան վիճակայի-  
նքս Թուրքիոյ ընտրել իւրաքան-  
չիւր ի նոցունց կրկին Պատգա-  
մաւորս յորոց մին եկեղեցական  
ի դիմաց Առաջնորդի, և մին  
աշխարհակիան ի դիմաց Ժողո-  
վրդեան (\*) և այսու ամենեքին

---

(\*) Սինոդը Թուրքիաքանակ Հայոց ա-  
ռաջնորդական վիճակներէն եկեղեցու-  
կան և աշխարհական երկերկու պատ-  
գամաւոր հրաւիրած չէ, այլ մէկ մէկ  
և այն՝ վիճակաւոր առաջնորդները, և  
եթէ ամունք չկարենան երթալ ի Ա-  
ղջմիսածին, իրենց սեղ մէկ մէկ եկեղե-

մամնակից լիցի Պատգամաւորք ,  
և կամ նամակաւ ընտրութեան  
կաթուղիկոսի ամենայն Հայոց .

ցական փախանորդ կարգեն և դանձք  
դրկեն :

Ահա ասիկ Մինդի առ Պատրիարքն  
ուղղած պաշտօնագրոյն սոց մասին  
վերաբերեալ ըսն խօսքերը :

« Չայսմանէ ( զընտրութենէ նորոյ  
Հայրապետի ) հրատարակել և ընդ հա-  
մայն փնտկա հաւատացեալս ձերում  
հոխաւապետութեան , որպէս զի խրա-  
քանչիւր սք ի փնտկաւոր Առաջնորդաց  
• • • • , կամ ինքնին շնորհարեր  
լիցի այսր Աթոռս ցնչանակեողն ժա-  
մանակ ընտրութեան Հայոց կաթուղի-  
կոսի , կամ հաւատացէ զպաշտօնն  
այլում ումեք յեկեղեցականաց , զոր  
նայն դատէ նմին արժանի » :

( Տես ամենագրութիւն Ազգային  
Ժողովոյ , 1865 Դեկտեմբեր 24 ի նիստին ,  
անասիւց ) :

որ հանգերձեալ է կատարել ԱՅ-  
ԱԴ սեպտեմբերի այսր ամի ի Մի-  
սմնակ՝ Ս. Տաճարին, և տես-  
եալ զի ընտրական կարգադրու-  
թիւնս այս՝ որ թերեւս համա-  
ձայն կանոնադրութեան և կեդե-  
ցական վարչութեան մերազնէից  
Ռուսաստանեաց. այլ ոչ ի գէպ  
դայ ընտրին թուրքիարնակ Հայ-  
կազանցս քաղաքական վիճակի  
պարագայից՝ որք պահանջեն՝ մի-  
այն ի ձեռն պաշտօնական Գլխոյ  
Ազգին, այն է Պատրիարքին և  
Պօլսոյ և ընդ նորին Նախագա-  
հոթեամբ կարգեալ Ազգային  
կեդրոնական Ժողովոյ ունել պաշ-  
տօնական յարարերութիւնս ընդ  
համայն Համազգիս արարնակս,  
և նկատելով իսկ զի Սուրբ Սի-  
նոդն զհրախրագիրս իւր ի խըն-

դիր պատգամաւորացն պահան,  
Չեւոց ի մերազնեաց վիճակայնոց  
Թուրքիոյ ոչ առ վիճակայինս  
ուղղակի՝ այլ առ կեդրոնական  
վարչութիւնն ի կ. Պօլիս ուղղեալ,  
ակն յայտնի յերեւան ածէր զիւ-  
րըն քաղաքագիտական խոհակա-  
նութիւն ի պատճառս փափուկ  
դրից քաղաքական վիճակի Թուր-  
քիարնակ Հայկազանցս, վասն որոյ  
Ազգային Ընդհանուր Ժողովն  
սահմանեաց զմասնակցութիւն  
Թուրքիարնակ Հայոց յընտրու-  
թիւն ամենայն Հայոց Հայրապե-  
տի առնել ոչ ի վիճակաւորացն և  
ի Ժողովրդականաց պատգամա-  
ւորս և կամ քուեայս առան-  
ձինս խնդրելով ըստ պատուիրա-  
նաց Սուրբ Սինօղիդ, որ նոր իմն  
է եզանակ ընտրութեան, և ոչ

երբէք ապամուտի մէջ մեր ի  
դարձ եղեալ, և ոչ զԱզգն ող-  
ջոյն յերխա բաժանեալ, միայն ըզ-  
թեմականս Ս. Էջմիածնի ընդու-  
նիլ ի մասնակցութիւն ընարու-  
թեան՝ որպէս անուշադրութեամբ  
եղեալն է յընարութեան Հան-  
դուցերոյ Հայրապետին, վարե-  
լով արանքս զթեմականս Կիլիկիոյ  
և Աղթամարայ մասնաւոր Կա-  
թողիկոսութեանց, որպէս թէ  
չիցեն և նորա որդիք Հայաս-  
տանեայց Կաթողիկէ Առաքելա-  
կան Եկեղեցւոյ, և կամ թէ ընա-  
րելի Կաթողիկոսն չիցէ Կաթու-  
ղիկոս ~~մե՛ն~~ Հոյց ու ը՛ք տե՛ք  
է՛ն՝ Այլ զհամարէն Տաճկաստա-  
նի և Գանձապետն աշխարհաց  
Հայրեարն ընդունիլ ի մասնաւ  
կցութիւն ընարութեան Հայրա-

պետի ամենայն Հայոց ըստ կարգաց վարընջուց և օրինաց Հայաստանեայցս Մի, Սուրբ, Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ ։

Սուրբ արք. ըստ սուհմաներոյ Աղգային Երեւոփոխանական Ընդհանուր Ժողովոյ, գումարեցաւ Վիճակային Եկեղեցական Ժողով յերկասասաներորդն Սուլիաի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ Կ. Պոլսոյ, ընդ մերով Գահերեցութեամբ, ուր ըաց յեպիսկոպոսաց գտելոց ի Մայրաքաղաքիս և ի քարոզիչ Վարդապետաց, և յԱւագ և յԱթոռակալ Քահանայից ամենայն եկեղեցեաց Կոստանդինուպոլսոյ, ներկայ գտան նաև յատուկ հրաւիրմամբ մերձակայ վիճակաւոր Աբբեպիսկո-

սրտաւնք և վանահարք Ս. Ուխ-  
տիցն Գլակայ և Արմաշու հըս-  
չակաւ որ վանուցն և Կիլիկիոյ և  
Աղթամարայ և Ս. Երուսաղէմի  
Աթոռոց յայս սակա կարգեալ փո-  
խանորդք բարձրաստիճան եկե-  
ղեցականք . ի ժողովի աստ նախ  
սլաարատեցաւ ցուցակ ամենայն  
Եպիսկոպոսաց Հայաստանեայց  
եկեղեցւոյ առանց խորու թեան  
երկրի և սլաշտաման և այլ հան-  
դամանաց , որոց թիւն եհաս ի  
յիսուն , և ի յիանիցն անդէն ի  
ժողովի անդ որոշեցան Եօթանե-  
քին արժանեաւորագոյնք ի գահա-  
կալու թիւն Արարատեան Գերա-  
գահ Աթոռոյն Այս ցուցակ Եօթն  
անուանց ստորագրեալ ի հարց  
ժողովականաց , ներկայացաւ Աղ-  
գային Երեւոփոխանական Ընդհա-

Նուր ժողովոյ, որ ի քսաննեւորդ  
երկրորդ նախն ամսոյ զու մարեալ  
ի Տաճարի Սրբուհւոյ, Աստուա-  
ծամօր քաղաքիս, ընդ մերօվ Գա-  
հերեցութեամբ, և զորժակցու-  
թեամբ Էրկայացուցչաց Կաթու-  
ղիկոսական Աթոռոցն Կիլիկիոյ և  
Աղթամարայ, և Պատրիարքական  
Աթոռոցն Ս. Երուսաղէմի, զեօթն  
ընտրելեացն զցուցակ ըստ ասե-  
նական կարգաց և կանոնաց  
զազունի ըստ արկութեամբ վե-  
րածեաց յերկու ընտրելիս, յորոց  
առաջինն է և զյխատոր նախկին  
Պատրիարք Կ. Պոլսոյ Ամենապա-  
տիս Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս  
Պրուսայու, զինի նորա Ամենա-  
պատիս Տ. Եսայի Ս. Արքեպիսկո-  
պոս Պատրիարք Ս. Երուսաղէմի,  
և յեւ նորա Գերապատիս Տ. Իզ-

Նաախոս Ս. Արքեպիսկոպոս Վա-  
պուրականի ։ Սօքա են երեք ընտ-  
րեիք ։ Կաթմուղիկասական Գահուն  
Մօր Լուսոյ ։ Կաթմուղիկէ Սրբոյ  
Էջմիածնի ի դիմաց հանուրց Հա-  
յաստանեաց ընակելոց ի Թուր-  
քիա , և մեր ներկայացուցեալ  
զանուանադ առ Ս. Սիւնհօդօսդ ,  
և առ ամենայն Հայոց Կաթմու-  
ղիկօսութեան ընտրողական Հա-  
մազգային բարձր մողովդ , յա-  
նուն Քնդհանուր մողովոյ կեդ-  
րոնական Կարչութեան Աղգիւ-  
ի պաշտօնէ ազգ առնեմք , թէ  
ի բարանչիւր ի սոցանէ անին  
իրաւունս կրկնաթիւ ։ քուեացց  
վաթսուն և հինգ Առաջնորդա-  
կան վիճակաց Հայոցս Տաճկաս-  
տանի ։ Զառաջին անգ ընտրական  
գործողութեան որ անի կատա-

ըիլ ի Մայր Տաճարի Ս. Էջմիած-  
նի ի հինգ և առասաներ յորդն ա-  
ռաջիկայ Սեպտեմբերի ամսեան,  
որպէս յայտ արարեալ է դիր Ս.  
Սիւնհողոսիդ :

Իսկ յերկրորդ դորժողու-  
թեան ընտրական Գուէարկու-  
թեան որ առ ի վերջնական և  
վճռական ընտրութիւն ի միջոյ  
չորեցունց ստացելոցն առաւելա-  
դոյն քուեայս պարտի կատարիլ  
ի Համազգային ընտրողական բար-  
ձրր ժողովի : Գարտգ ամառ որ ըն  
Հայոց թուրքաստանեայց ունին  
հրահանգ լինող հանուր ժողովոյ  
մերմէ թէ սւմ պարտին առաւ  
դքուեայս ի միջոյ երկոց անտի  
ընտրելեաց, ունելով յայս նուազ  
եւս իւրաքանչիւր պարտգ ամառ որ  
վաթսուն և հինգ ձայնից դորու-

Թիւն և երկաքանչիւր միահա-  
ղոյն հարիւր երեսուն քուեայս,  
ոչ տարագէտ թուի մեզ աստա-  
նոր մեկնաբանել զտարբերութիւն  
վերոյ նշանակեալ թուոյ Առաջ-  
նորդական վիճակաց թուրքիա-  
րնակ Հայոցս թ թուոյն ցուցերոյ  
յԱզգային կեդրոնական վարչու-  
թենէս թ մասնակցութեան մե-  
րում յնարու թիւն նախորդ Քա-  
հանայտալեաթի Այս տարբերու-  
թիւն սրտէս տեսանի թ ցուցա-  
կէն որ թ ձեռս Պատդամաւ որաց  
մերոց թ ծագի յայնմանէ զի թ  
Ժամանակի նախընթաց Կաթու-  
ղիկոսական ընարու թեան Ազգա-  
յին կեդրոնական վարչու թիւն  
տեղոյս ոչ էր առեայ թ գիր զթե-  
մըս Կաթուղիկոսու թեանց Կիլի-  
կիոյ և Աղթամարայ, և ոչ զՍ

ճակս Պատրիարքութեան Ս. Ե-  
րուսաղէմի, զոր ի վեր անդր ա-  
սացաք, զորոց զմասնակցութիւն  
յայս Համազգային ընտրական  
գործողութեան, սահմանեաց ար-  
դի Երեսփոխանական Քնդհա-  
նուր վարչութիւն Թուրքիարենակ  
Հայոց և համազգային միասնական  
և Ազգային Քնդհանուր Ժողովս  
քաջ համոզեալ է, զի յետ օրի-  
նաւորացէս և ըստ անունական  
կարգաց կատարման առաջին և  
երկրորդ քուէարկութեանց յընտ-  
րութիւն կաթմուղիկոսին ամենայն  
Հայոց ի Մայր Տաճարին ներկա-  
յութեամբ և գործակցութեամբ  
մերս Պատգամաւորաց, Եկեղե-  
ցեկանն այն բարձրաստիճանն որ  
ստաւել քան զամենեւին ընկալ-  
նուցու քուեայս, նա ամբառնայ

արժանաւորութեամբ Ի ԳԵՐԱԳԱՀ  
 ԱԹՈՒ ՍՐԵԱԶԱՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ, ԹԱ-  
 ԳԷԻ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻՄԵԱՅ ԵՒ Ա-  
 ՌԱՔԵԼԱՆՄԱՆ ԱՌՆՆ ԱՍՏՈՒՄՈՅ  
 Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ՄԵՐՈՅ  
 ԸՍՏ ԻՐԱՒԱՆՅ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԸՍՏ ՕՐԻՆԱՅ ԱԶԳԱՅԻՆ Ս. Ե-  
 ԿԵՂԵՅԻՈՅՍ ՄԵՐՈՅ . . . . .

Աս եւ յայնժամ Ամբաստանաւոր  
 Կարգէիս լինելուց կէլիկէս Եւ Ազնու-  
 րոյ , Եւ Պարէրէնց կ. Պարոյ Եւ  
 Ս. Երաստղէ, Եւ ասելոյն Քիսկուր  
 Տեկուրնէ մասնակցեալք յընա-  
 րութիւն Հայրապետին ամենայն  
 Հայոց, ԻԱԱԻԱՄԲ ՈՐԻԻՍ ԳԱԻԱՆԻՆ  
 ԶԱՆԶԻՆՍ ԸՆՏՐԵԼՈՅՆ ՅԱՄԵՆԱՅՆ  
 ՀԱՅՈՅ , որ ե իրաւամբ կրէ ըզ-  
 րարձր տխարոս ԳԵՐԱԳԱՀ ԿԱԹՈՒ-  
 ՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ , իբրև  
 արգարեւ ԳԼՈՒԻ ՄԻՈՅ ՄԻԱՅՆՈՅ  
 ԿԱԹՈՒՂԻԿԷ Եւ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս-  
 ԵՒ ՈՒՂՂԱՓՆՈՒ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՀԱ-

ՅԱՍՏԱՆԵԱՅՅ , զոր պանծացու ա-  
ցէ Տէր Յիսուս Քահանայապետն  
երկնի և երկրի աջակից և զօրա-  
վեզն լինելով ընտրեալ Քահա-  
նայապետին և արխացուցէ զնա  
ի բարեզարդութիւն Եկեղեցւոյ  
իւրոյ , և յանայայլակ և յանվը-  
թար պահպանութիւն օրինաց և  
կարգացն Աւանդելաց ի Բրիտանոէ  
և ի օրրոց Հայրապետաց մերոց  
բարեխօսութեամբ Երանաշնորհ Ս.  
Լուսաւորչին մերոյ : Ամեն .

26 օգոստոս 1866

ՊԱՏԲԵՐԲ Կ. ՊՈՒՍՅ

ՊՕՂՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Գ.

Հ-հ-հ-հ-հ Պ-դ-հ-հ-հ-հ-հ

Կերտապատիւ Տ. Ներսէս Եպիս.

կոպտս ե Մեծ աշուք Յակոբիկ  
էքէնտի նորատունկեանս :

Ա. Ե ինչպէս որ յայտնի է Չեր  
սիրելոյ թեանց, Ամենայն Հայոց  
կաթուղիկասի ընտրութիւնը պի-  
տի կատարուի ի Ս. Էջմիածին,  
յս ապշիկայ սեպտեմբերի 15 —  
17 ին, ունտի իբր Պատգամա-  
ւորք Յամանեան Հայոց ի դիմաց  
Ազգին նոյն ընտրութեան մաս-  
նակցելու համար նոյն օրերը  
անդ ներկայ բլաշնիդ պէտք բլ-  
լաղով, ամսոյս 27 շարաթ օրը  
Փօթի երթալու շողենաւով Մայ-  
րաքաղաքէս ճամբայ ելնելու  
էք յորտեալ զտաճուսք մտաւն

2. Ե թէ ճանապարհին տեղ  
մը այնպիսի անակնկալ արդեւք  
պատահի որ, պէտք եղած օրը  
Ս. Էջմիածին չկրնալ համնելու

Երկիրդ ունենայք, այն սեղէն  
անմիջապէս եղելու թիւնը հեռա-  
գրան. և եթէ հեռագիր չի գրու-  
նուի ուրիշ արագ միջոցաւ խմա-  
ցունէք թէ ի Ս. Էջմիածին և թէ  
ի Կոստանդնուպոլիս, և խնդրէք  
Սինօղէն օր, ընտրական գոր-  
ծողութիւնը ուշացունէ մինչեւ  
Չեր սուրբ Էջմիածին հասնել-  
լու օրը և անկողնայն զամ անգրկ  
3. և եթէ մին ի ձէնջ օր և իցէ  
արդելիչ պատճառաւ անկարող  
լլլայ իւր ճանապարհորդութիւ-  
նը շարունակելու մինչ ի Ս. Էջմի-  
ածին, միւսը իւր ընկերին և ա-  
մնայուն պատճառը հաստատող  
վաւեր վկայագիր մի ասնելով,  
մինակ երթայ ընտրութեան մաս-  
նակցելու և քուէարկութեան  
ժամանակ ընդհանուր և միակ

պատգամաւորի պաշտօնը կատարէ հարիւր երեսուն քուէով :

4. Եթէ Աստուած մի արագէ՛ , այնպիսի արգելիչ պատճառ մը պատահի երկոցունցդ ալ , յայնժամ հաւատարիմ անձի մը փոխանորդական վաւեր իշխանութիւն տալով եւ պէտք եղած թուղթերն ու վկայագիրներն ալ անոր յանձնելով , ուղղէք ի սուրբ Էջմիածին : Եւ այս վերջին պարագայիս մէջ ալ եղելութիւնը հեռագրաւ իմօցնէք թէ ի սուրբ Էջմիածին և թէ ի Կ. Պօլիս :

5. Ընտրական գործողութեանց այսինքն քուէարկութեան սկսելէն յառաջ ամեն կողմէ եկած պատգամաւորաց վկայ-

յագիրները պէտք էք տեսնել, և  
ձերինք ցուցնել, և այնպէս շա-  
ւեր վկայագիր չունեցող որ և է  
պատգամաւորի մասնակցութեան  
դէմ բողոքէք :

6. Ընտրութեան սկզբնաւո-  
րութիւն ընելէ յառաջ խնդրեցէ՛ք  
տեղեկանալ թէ ի՞նչ եղանակաւ  
պիտի վարուի ընտրողական ժո-  
ղովք, և ծանուցէ՛ք և բացա-  
տրեցէ՛ք Կ. Պոլսոյ Երեսփոխանա-  
կան Ընդհանուր Ժողովոյ ընդու-  
նելի գատած եղանակը :

7. Մեր ընտրելեաց իւրաքան-  
չիւրին, ըստ թուոյ վաթսուն և  
հինգ առաջնորդական վիճակաց  
Թուրքիաքանակ Հայոց, կրկին  
թիւ քուէից արժէ՛ք ունենալիքը  
յայտնեցէ՛ք ընտրողական Ժողո-  
վին, իսկ եթէ Մատթէոսի ընտ-

բութեանն ժամանակ Տաճկաստանի  
նի Հայոց կողմէն ցուցուած առաջնորդական  
փնտկաց քանասուն և հինգ թուոյն և այս անգամ  
ցուցուած վաթսուն և հինգ թուոյն  
տարբերութեան վրայ դիտուցութիւն  
ըլլայ, պատճառք որ է Երուսաղէմայ  
Պատրիարքութեան և  
Կիլիկիոյ ու Աղթամարայ  
Կաթողիկոսութեանց փնտկաները  
անցեալ անգամ հաշուած չըլլալը,  
ընտրողական ժողովոյն ինացուցէք,  
և այս աւելի քան քուէն  
ընդունել տալու աշխատեցէք.  
Իսկ եթէ ընդդիմութիւն  
տեսնէք ու շլակոցիք համոզել,  
բողոքեցէք որ, այսպիսի  
ընդդիմութեամբ ցանկացում  
միութեան արդեւք կըլլան.  
Բայց Քաւարկութենէն ետ մի կենար.

սակայն քուէնիդ միշտ զատ զատ  
վաթառն և հինգ և երկուքդ  
մէկէն հարիւր երեսուն ձայնից  
զօրութեամբ հաշուեցէք, և քը-  
ռէ համարի արդիւնքն ստորա-  
գրելու ժամանակ սոյն դիտո-  
ղութիւնն նշանակելով ստորա-  
գրեցէք, թէպէտ և ուրիշները Չեր  
քուէից միայն իննսուն ձայնի զօ-  
րութիւն տան ։

Տ. և երկրորդ քուէարկութեան  
ժամանակ երբ հրաւէր կըլլայ ա-  
ռաջին շորս ընտրելիներուն մէ-  
ջէն երկու անձ զատել քուէար-  
կութեամբ, զուք միայն Պրուսա-  
յու Առաջնորդ Գեւորդ Եպիս-  
կոսոսին անուանը քուէ պիտի  
տայք ( քանզի այն է Ընդհանուր  
Ժողովոյ քուէից բացարձակ առա-  
ւելութիւն ստացողը ) և այսպէս .

« Գէորգ Արքեպիսկոպոս . Ա-  
ռաջնորդ Պրուսայու ի Թուրքիա,  
առաջին ընտրելի Թուրքիաբնակ  
Հայոց ի գիմաց վախճսուն և հինգ  
առաջնորդ ութեանց . Օսմանեան  
Հայոց , աւնելով հարիւր երեսուն  
քուէ կա՛ւ ձայնս .

Գ. « Երբ երկրորդ քուէարկու-  
թիւնը կը կատարուէ , քուէհա-  
մարի ատեն զգուշութիւն՝ ըրէ՛ք  
որ . Գէորգ Արքեպիսկոպոսը քը-  
ուէից առաւելութեան կարգաւ  
իւր օրինաւոր տեղը նշանակուի .  
և քուէհամարի արդիւնքը ըստ  
17 հրահանգի ստորագրելով բա-  
լոր ժողովականաց (ստորագրել  
ինդրեցէ՛ք .

10. « Անիվայէս Պօլիս հեռա-  
գրով իմաց տուէ՛ք թէ՛ ո՛ր ե-  
պիսկոպոսն է սոյն երկրորդ քը-

ուէ արկու թեան Տամաւանկ Հա-  
մաղղական Պատգամաւորաց ա-  
մենէն առաւել քուէնքն ստա-  
ցող և Տոմարի քանդից ընդ  
Տ. Ա. Պ. Չեր պաշտօնը դու ա Աղ-  
ղային և Կրօնական ըլլալով, ա-  
մենեւ ին քաղաքական խնդրաց  
միջամտել ըլլալու իրարունք չու-  
նիք, և Համաղղական Ընդհա-  
նուր Կաթողիկոսի ընտրու թեան  
վերաբերեալ քուէ արկու թեան և  
քուէ համարի առեւտագրու թիւն-  
նելէն ի դատ քննու որեւէ պիտի  
թեան ստորաց քու թիւն պիտի լու-  
արարան թիւն չունիք ի գրե Պատ-  
գամաւոր Օսմանեանէ Հայոց : (\*)

26 օգոստոս 1866

ՊԱՏՐԻԱՐԿ ԿՆՊՈՒՍՅԱՆ

ՍՏՊՈԼԻՍ ԵՎ ԵՆՊՈՒՄՆԱԿԱՆ

(\*) Պատգամաւորաց առջև հրահանգի,

Թուրքիաբնակ Հայոց Պատգամաւորք արոչեալ ժամանակին կը հասնին ի Ս. Էջմիածին : (\*)

1866 Սեպտեմբեր 17, Ս. Թաւրի Վերացման Տօնին Եօթներորդի

վկայակցիք ԿՐԻՍՏՈՍ Ե ի դիմաց Ազգային ժողովոյ առ Սինդոն ուղղեալ ԿՐԻՍՏՈՍԻ, նաև Սինդոն 1865 Սեպտեմբեր 11 թուական կրկին գրութեանց ԿՐԻՍՏՈՍԻ ԵՆԻՑԻԷ Ե ԻՆԻՑԻԷ Պատրիարքին հետ ստորագրած են Ազգայնաց, Սոս և Երաստակ մի Փոխանորդներն և Ապօրոգիկապետն Յաննիստ ժողովոյ Քեանդեայ անդամք :

(\*) Պատգամաւորաց ի Ս. Էջմիածին Երթեալէն ժամքն անբողջ փետ. Յակար է ֆէնտի Նորատու նկեան մհարած է, սր համար և Ազգային ժողովոյ մասնաւոր շնորհակալութիւնն բնդումն :

- շարաթ-օրը կը գումարի Համազ-  
գական Գատգամաւորաց ժողովը  
Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ,  
և միաքան հաւանութեամբ կրնա-  
րէ Հայրապետ Հայաստանեայց  
Առաքելական Ս. Եկեղեցւոյ՝ զԱ-  
ռաջնորդն Գրուսայի զՏ. Տ. Գէ-  
որգ Արքեպիսկոպոս :

Տաճկաստանի Հայոց պատգա-  
մաւորք իրենց պաշտօնն ըստ ո-  
րոշման և հրահանգաց Ազգային  
ժողովոյ ամենայն օրինաւորու-  
թեամբ ի գործ կը դնեն, և իւ-  
րաքանչիւրն առանձինն ընտրու-  
թեան յայտարար տեղեկագիրը  
կատորագրեն ըստ այսմ օրինակի  
թէ՛

« Ես պատգամաւորս ի գիմաց  
համայն Եկեղեցականաց ամենայն  
վիճակացն Ս. Էջմիածնի, որ ի

Տաճկաստան՝ և Կ-Ռ-ՆԿ-ՆԻ-ՆՅՆ  
Ս-Յ և ԱշՌ-Տ-Դ-Յ և Պատրիարքու-  
թեան Ս. Երուսաղէմի ըստ Հը-  
րահանգին առեւելոյ ինձ յԱզգա-  
ին ժողովոյ Կոստանդնուպօլսոյ  
ընտրելի Կաթողիկոս ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՅ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ՄԱՅՐ  
ԱԹՈՒՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՄՆԻ  
ԳՏ. Տ. Գէորգ Սրբազան Արքե-  
պիսկոպոսն Պրուսայու, և ոչ զոք  
Կ-ՆԴԻ-Դ-Դ (ընտրելի) : Ս Եւ կը հե-  
ռագրեն ի Պատրիարքարան թէ  
(Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոս  
միակ ընտրելին թուրքիարմակ  
Հայոց Համազգական ընտրողա-  
կան ժողովին մէջ միաձայն հա-  
ւանութեամբ ընտրուած է կա-  
թողիկոս ամենայն Հայոց) : և

Կը վերագրանան ի կոստանդնու-  
պոլիս :

Կաթուղիկոսական Յանձնաժո-  
ղովը զայս ամենայն իւր երրորդ  
և վերջին անգեկագիրովը կը ներ-  
կայացնէ Ազգային ժողովոյ 1867  
Փետրվար 10ի նիստին :

Ազգային շնորհակալութիւն

1867 Փետրվար 10

Ազգային ժողովը կաթուղի-  
կոսական Յանձնաժողովոյ սոյն  
վերջին անգեկագիրն եւս կըն-  
դունի , և Ազգային Գառգամա-  
ւորաց համար միաձայն հաւա-  
նութեամբ շնորհակալութիւն կը  
բռնարկէ :

Սոյ ինքնրնաիր վանահայր վի-  
ճակաւորն Տ. Նիկողայոս Եպիս-  
կոպոս որ ըստ պահանջման Գառ-

բիաբարանի Բ. Դրան միջոցաւ  
ուր ուրեմն 1866 Քեկտեմբերի  
սկիզբները հասած է ի կոստան-  
դնուպօլիս՝ Ազգային ժողովոյ այս  
նիստին գիր մը կը մատուցանէ ,  
որով Եկեղեցական Վիճակային  
ժողովոյ՝ իրեն նկատմամբ առանց  
զինքը լսելու՝ տուած վճարոյն  
գէժ կը բողոքէ , բայց վերաբրն-  
նութիւն չը պահանջէր , և կը յայ-  
տարարէ որ երբ Ազգը կամի պատ-  
րաստ է հրաժարելու կաթուղի-  
կոսական պաշտօնէն :

Ազգային ժողովը թէեւ առանց  
նկատողութեան առնելոյ զսոյն բո-  
ղոքագիր՝ կարձանագրէ զայն նոյն  
նիստին մէջ , սակայն կորոչէ որ  
յաջորդ Ուրբաթ որ — Փետրվար  
17 - յատկապէս գումարի ի վերջ-  
նական տնօրէնութիւն. Աղթամա-

րայ և Սոսյ խնդրոց : (Տես ատենագրութիւն Ազգ. ժողով. 1867 Փետր. 10ի նիստին, անարիւղ) :

Ազգային ժողովը շերտալով նոյն որոշեալ օրն գումարիլ Փետրր֊  
փար Չկին նիստ կընէ :

Ռուսաց Աղէքսանդր Բ. կայսրը կը հաստատէ Ազգին կատարած սոյն ընտրութիւնը, և առ նորընտիր Հայրապետն Քէրէ-ի-Կոն-ստանտին և Ս. Աղէքսանդրի նիւքսեայ կայսերական ասպետութեան պատուանշանը կը դրկէ անանձին նամակներով, որք են :

« Սրբազնակատար Պատրիարք Սրբոյ Էջմիածնի Տ. Գէորգ » :

« Երկարժամանակեայ վաստ

տակ ի հոգեւոր ասպարէզին ած  
գրութեաց առ ձերդ Սրբազնա-  
կատար դրութիւն զհասարակա-  
ցըն վստահութիւն Հայաստանի  
ժողովրդոց, որ ահա ընտրեալ  
բարձրացուցանէ զձեզ ի Պատրի-  
արքական Աթոռ Սրբոյն Գրեգորի  
Լուսաւորչին Հայաստանեայց ։

Ե ի Հովուական գործօն Նանս  
ճգանց ձերոց նկատելով իմ գը-  
րական իմն ի բարօրութիւն Ե-  
կեղեցւոյն Հայաստանեայց, որ  
այնչափ սիրելի է իմոյս սրտի,  
որպէս և առ հոգեւորն յառա-  
ջագիմութիւն որդւոցն նորա,  
ընծայեմ ձեզ սիրով մեծաւ ի  
զարդ Յուրիս սրբութեան Է-  
- - - - - (\*) գրոյն ասեմ նը-

(\*) Ամենայն Հայոց Հայրապետաց

ու իր անկան զհաս առոցն ֆրիւայտի,  
 որ մառեալ զօրացուցանէ զհոյ  
 վիւն և զհոյ միանգամայն  
 զճա Յանձն արարեալ զիս ազօ  
 թից ձերոց մնամ ձեզ բարեա  
 ցակամ: Վրձձձ Ս.Ղ.Ե.Պ.Ս.Ն.Կ.  
 Ս. Փետեր. 25 նոյ. 1866

վեղարի հակառար Է-Ն նշան կրեց շա  
 յաստանեաց Ս. Եկեղեցւոյ ստորոտ  
 թեւէն չէ, այլ Ռուսոյ կայսերաց իր  
 բնւ զարդ բնձայելէն սկսած, ինչպէ՛ս  
 յայտնի է այն կայսերական նամակէն  
 զոր առաջին անգամ ընդունած է Տ.  
 Յովսէփ Արքեպիսկոպոս Արզու թեանոց,  
 որ 1800 թուականին թէպէտ և բնա  
 րուած է Հայրապետ Հայոց, բայց  
 ի Ս. Եջմիածին չհասած և առանց Հայ  
 րապետական ձեռնադրութիւնն ու  
 ծումը ընդունելու անձանօթ հիւան  
 դութեամբ յանկարծ մախհանւած է  
 ի Տփլիս:

« Բարձրագոյն հրովարտակ առ  
Մայրագոյն Պատրիարք Սրբոյ Էջ-  
միածնի և Կաթողիկոս ամենայն  
Հայոց Գէորգ » :

« Ի հաւաստիս մտերմութեան  
մերոյ առ Ազգն Հայաստանեայց  
որ ընտրեալն զձեզ ի Մայրագոյն  
Պատրիարք և Կաթողիկոս ամե-  
նայն Հայոց որպէս և ի յարա-  
ցոյց մերձմա առ ձեզ սեփհա-  
կան և անանձին բարեհաճութեան  
համակցորդ անսեփ զձեզ  
ի Կայսերական սպեւտութեան ,  
Ս և բարեպաշտ մեծի Գրսին  
Աղեքանդրի Նիսքեայ , զորոյ  
զնչանակն առաքելով ընդ ամին ,  
մնամ ձեզ Կայսերական մերովս  
չնորհիւ բարեացակամ » :

« Ի բնագրին ձեռամբ Եսրուն  
Կայսերական մեծափառութեան

ստորագրեալ է, « Ա. Ղ. Ե. Ք. Ա. Ն. Ի. »

Այս միջոցին բարձրագոյն Իրաւ-  
նէն եւս նորընտիր Հայրապետին  
հաստատութեան պաշտօնական  
լուրը կը հասնի ի Պատրիարքա-  
րան, և Պատրիարքական յատուկ  
չրջարեւականի մը ծանուցմամբ  
յամենայն եկեղեցիս որ ի կոս-  
տանդնուպոլիս և որ ի գաւառս  
Օսմանեան Հայաստանի, կակսի  
նորընտիր Հայրապետին անուան  
յիշատակութիւնը :

Տ. Տ. Գէորգ Գ. նորընտիր  
Հայրապետն ամենայն Հայոց Ազ-  
գային Պատրիարքարանի կողմէ  
զրկուած յատուկ հրաւիրակաց  
ուղեկցութեամբ Պոստայէն կու-  
գայ ի կոստանդնուպոլիս ի 16  
Յունիարի 1867. Գ-դ-Ի-լէ նա-  
ւաճատոյցէն փառաւոր հանդի-

սիւ և խուռն բաղմութեամբ ժողովրդեան կը հասնի ի Ս. Երրորդութիւն Եկեղեցին Բերայի, ուր իւր Հայրապետական նախընծայող շնորհն ու օրհնութիւնը կուտայ բոլոր Հայ ազգին, որմէ ետքը ի թաղական խորհրդարանի նայն Ս. Եկեղեցւոյն ի ներկայութեան բաղմութիւ Եկեղեցականաց, Հայրապետաց և բաղմախուռն ժողովրդեան և երևելի ազգայնաց՝ իրազբայեաներէն Մեծ. Ստեփան Լ. ֆէնտի Փափազեան խմբագիր ժամանակ Հայրենանը՝ ուէր հանգիսի ի դիմաց իրազբայեաց և յանուն ժողովրդեան սա ուղերձը կարտասանէ.

« Կեհափառ Հայրապետ »

« Կ. Պօլսոյ Ազգային Երեսփո-

րոն » 2 դեղաց 20 Եմն 140

խանական ժողովք և ի Ս. Էջմի-  
ածին զուսմարեալ Համազգական  
ընտրողական ժողովն զՉեր Սըր-  
բաղնու թիւնը կոչելով ի Միած-  
նակ Քահ Սըրոյ Հօրն մերոյ Հու-  
սաւորչի, Գուսաջու ձեր սիրելի  
հօտին հովուութենէն կը բարձ-  
րացնէ յԸնդհանրական հովուու-  
թիւն բովանդակ Հայոց Ազգին  
ուստի այսօր Մայրաքաղաքիս  
ժողովուրդը, դասք եկեղեցա-  
կանաց և աշխարհականաց եկան  
դիմաւորելու զՉեր, վեհափառ  
Տէր, և Չեր անձին և ընտու-  
թեան վրայ խնդակցութիւն յայտ-  
նելով Չեր բարձր սրբազնու-  
թեան բարորութիւն և բարեյա-  
ջողութիւն գործոց մաղթելու :  
« Իրակք, վեհափառ Տէր, թէ  
որչափ մեծ ու բարձր է այդ

կոչու մե ու անտիճանը, առ որ  
Հոգին Սուրբ արածնորդեց զՁեզ  
նորնչափ մեծ և ամենամեծ և  
Ձեր սիրափքը զմանաւանդ արդ  
ժամանակին մէջ, յորում չէ Հայոց  
Ազգն ընդ որորում երկրի իբրեւ  
ի միակ յոյս և անպաւէն աս Ձեզ  
գործողացած է իր հայեցումքը,  
և Ձեր սիրձառութեան և կա-  
տարելութեան ձիրքերէն կ'ակրն-  
կալէս : ու զի զմեզ ցգ մեծ ոյժ  
դնախ' պահպանութիւն և ամ-  
բողո՞ւթիւն Հայաստանեայց ուղ-  
ղափառ Եկեղեցւոյ, անխախտ և  
անբապինդ պահելով Քրիստոսա-  
դիր կարգ ու կանոն : Առաքե-  
լական և Լուսաւորչական ասան-  
դութիւնք և արարողութիւնք,  
որ ի նախնեաց մերոց ի սրբոց  
Հարց և ի քաջարի նահատակաց

մեզի մնացած անդին ու անդիւայ  
սրտահատոր նշխարներ են բազմ-  
ճաթիւ Հայերու արիւնովը շա-  
ղախուած և մեզի հասած, որք  
մեր Ազգութեան մի միայն կնիքը  
կը կրեն և անտեցմով ենք այ-  
սօր Հայ Ազգ մը աշխարհի ան-  
լեւ և ջնջելով ու վերցընելով  
այն ամեն նոր ու Յիկեղեցւոյ և  
Ազգի մնաստակար կարգադրու-  
թիւնները, որոնք տգէտ, շահա-  
խնդիր ու թող անձերու ձեռօք  
ներմուծուած ու դօրութիւն դը-  
տած են և յարկերով արտաք  
ճերկորդ, երաշխաւորեալ պահ-  
պանութիւն Ազգիս, Ազգային և  
անհատական իրաւանց ապահո-  
վութիւն իւրաքանչիւր բարեխը-  
նամ կառավարութեանց ներքեւ,  
որոնց հարատակ կը գտնուին Հայ

Ազգի զաւակները : Վասն զի Չեր  
վեհափառութիւնը ոչ միայն Ռուս  
սխարնակ այլ եւ թուրքսխարնակ  
այլ եւ Հնդկաբնակ եւ Գարսխա  
րնակ եւ Աւստրիաբնակ ազգայ  
նոց վրայ Հնդհանրական տե՛սուչ  
էք ի Հոգւոյն, Հոյիւ էք Ազգէն  
ընտրուած եւ անոր հայրենիս անդ  
Ս. Կրօնին, Եկեղեցւոյն, աբան  
դութեանց, սովորութեանց, ազ  
գային եւ անհատական ամեն ի  
րաւանց սխաշտարանը առաջի Ռուս  
սիոյ ի Ռուսիա, առաջի թուրք  
սիոյ ի թուրքիա, առաջի Անդ  
ղիոյ ի Հնդկաստան, առաջի Գար  
սից ի Գարսխատան, առաջի Ա  
ւստրիոյ ի Աւստրիա : Ռուսիա եւ  
այլ ամեն իրաւաստարութեանց  
հետ իբրեւ ՔՆԴԱՆԲԱԿԱՆ ԳԸ  
ԱՌԿ եւ ներկայացնուցիչ Ազգին

կարող էք բանակցել և Չեր՝ հօ-  
տին ու ձեր ժողովրդեան համար  
բարեխօսել, մի՞ նորդել և և և  
նանց բարոյական նխածական և  
Տտաւորական զարդացման հոգ-  
տանիլն մայրապետքով լայն բուն  
ճշգրտող, լրատ կարգի շրայց  
լրատ պիտոյից պաշտին համարելի  
է ազգային դատարարական թեան  
ժաւարումը այն է որտեղ մրտ-  
քով և հոգևով Հայեր պատրաս-  
տել Հայաստանեայց Ս. Եկեղե-  
ցին և Հայոց Ազգը մեծ կարծ-  
առածին ունի քաջարժուն, հո-  
ղեղից բանիրուն, վերջուպէս ար-  
ժանաւոր Եկեղեցականներու և  
աշխարհականներու : Արժանաւոր  
Եկեղեցականաց պէտքը դուք  
ինքնին փորձով զգացած էք  
Վեհափառ Տէր, հսկիւ պէտք է

ոչ անձնդիր, գլուխ ոչ ինքնա-  
սէր, այլ ժողովրդասէր, եկեղե-  
ցասէր և ազգասէր: Այս պի-  
տոյքը մեծ և զգալի եղած է,  
մանաւանդ ներկայ ժամանակիս  
մէջ, յորում անարժան եկեղեցա-  
կանաց երեսէն՝ եկեղեցին նշա-  
ւակ, Ազգը յուսարեկ և մասնա-  
ւոր թեմեր ալ խայտառակ ե-  
ղած են »:

« Զգե՛ք վանքերուն մեծ մա-  
տին և ամենէն հռչակաւորներուն  
ոգրալի վիճակը, թողունք առաջ-  
նորդաց մեծ մասին անպիտա-  
նութիւնք, այլ անպատմելի խայ-  
տառակութիւնք, քստմնելի սրբ-  
րապղծութիւնք և անյուր և ան-  
խիղճ դայթակղութիւնք դար-  
ժուեցան Տօտ ատեններս երկու  
մասնաւոր կաթուղիկոսութեանց

Թեմերուն մէջ, յԱզգթամար և ի Սիս, երկու անարժան և խապտանարժան եկեղեցականաց միջոցաւ : Ազգը քսամեելով տեսաւ անոնց անվայել գործը, և վիճակային ժողովով այն ինքնընտիր, ինքնահրաւէր և ինքնակոչ անձանց անվաւերութիւնը և անարժանութիւնը վճռուեցաւ : Չեր վեհափառութիւնն այնպիսի Սրբապղծութեանց և Հայաստանեայց եկեղեցւոյ և Ազգի կործանում և ազէտ սպառնացող ոճրապործութեանց վրայ անշուշտ արժանաւոր սրտմտութեամբ կը նայի, և Տիրոջը այդին այնպիսի ազուէաներէ զերծ պահելու փոյթ պիտի տանի :

« Այս երեք գլխաւոր պիտոյից մէջ որոնք կակնկալէ Ազգը այ-

սօր Չեր վեհափառութենէն , կը  
պարունակին և այլ ամենայն պի-  
տոյք , զօրոնք հարկ շենք հա-  
մարիք մանրամասնել հոս և :

« Չեր վեհափառութիւնն այն  
ամենք գիտէ ու կզգայ , և ար-  
դէն Ազգը մեծ յոյսեր կը սնու-  
ցանէ իր սրտին մէջ , և վստա-  
հութեամբ կրնայ ըսել թէ իր  
ընտրութեան մէջ վրիպած չէ » :

« Իսկ այն արժանաւորութիւ-  
նը ոչ միայն խօսքով այլ և գործ-  
քով պիտի ցուցնէք . Չեր փառքը  
Հայաստանեաց Եկեղեցւոյ պահ-  
պանութեան և ամբողջութեան  
մէջ փնտռելով , Չեր պատիւը  
Չեր հարստիւն զարակաց կեն-  
դանի երախտացիութեան մէջ  
և Չեր յիշատակը ձեզի արժա-  
նաւոր յաջորդաց մէջ » :

Եւ իւր աշար կը Գահակալէք  
այն Աթոռը՝ զոր Չեզմէ առաջ  
բարմաթիւ կաթուղիկոսներ ժա-  
ռանդած են, բայց անոնցմէ  
մէկ մասը միայն իրենց անուանը  
հետ իրենց բարի, առաքինի, սի-  
րելի և պաշտելի յիշատակը թո-  
ղուցած են, իսկ մնացեալները  
միայն անուննին:

Անշուշտ դուք իշորս կա-  
թուղիկոսաց՝ միայն անուն թողե-  
լու չէք, այլ արժանաւորաց օ-  
րինակին պիտի հետեւիք և մա-  
նաւանդ Չեր նախորդին նախորդ  
Աշտարակեցի հոգեւոյն ներսէս  
կաթուղիկոսին, այն անմահ յի-  
շատակաց արժանի անձին, որուն  
համար Ազգը յանխտեան և բախ-  
տադէտ պիտի մնայ, կը տես-  
նէք, վեհափրաւ Տէր, թէ ժո-

դովան ընդ զ՝ ձեր սիրելի զաւակ-  
 ները ինչ սիրալիք և որդիական  
 գոռանաք զՁեզ շտըջ պատեր  
 են ւայո՛ւ, ոչ միայն գոռելի այլ  
 և պաշտելի պիտի ըլլաք երբ ի-  
 րենց քանկալութեանց կանաքու-  
 մը տեսնենք քան զձեզ զմեզ քան  
 զ՝ իսկ եթէ (Ապտուած մի ա-  
 րասցէ) զբնութն այս յոյսերէն ւ  
 սէ, այն անուն և ոչ մէկը պիտի  
 գանէք Ձեր շտըջը քան զմեզ  
 քան զ՝ իսկ մը խիտ են այն խօսքե-  
 րը, այո՛ւ, բայց Ազգիե մյա օրուան  
 ազէտալի և վտանգ աւորի վիճա-  
 կին մէջ ի դիմաց ժողովրդեան  
 այս ազգաբարձիքներն և հոս  
 պէտք է որ ըլլան ժողովուրդը  
 արթնցած է կողայ, կիսանայ,  
 կը յուզի, այնպիսի տեսարաննե-  
 րու վրայ շրամաութեամբ չընտ-

յիւր, հոգեւոր ու կենսական հան-  
գէտներու, և տեսարաններու կը  
բնորոշայ: Իսկ քաջա փառքին ու  
պատուոյն մէջ ոչ թէ հանդըս-  
տութիւն, խաղաղութիւն և եր-  
ջանկութիւն գտնելու կուգար,  
այլ գիշեր ցորեկ անքուն արք-  
նութեամբ՝ Աղգային Յիւզեցեոյ,  
հայրապետական կանոնաց, Աղ-  
գային յառաջադիմութեան և աղ-  
գային ընդհանրական և անհա-  
տական իրաւանց պաշտպանու-  
թեան համար մինչեւ իսկ նահա-  
տակութեան, փառքը մեծ է  
հարկաւ և Չեր վեհափառութեան  
աշխատութիւնն ալ մեծ  
պիտի ըլլայ, բայց աւելի փառք  
ու պարծանք պիտի գայ Չեր  
անուան և յիշատակին, զի այս-  
պիտի ալէկնձեար փութորկախոյ

Ժամանակի մէջ նաւապետու -  
 թեան կոչուեցաք . Ազգը պիտի  
 շտապի իր բնարու թեան մէջ .  
 Չեր վեհափառու թեան փորձա -  
 ռութիւնը ի ազգու բնաւորու .  
 Թիւնը կը խոստանայ մեզ ամէն  
 բարեյաջողութիւն մակը ձայնակ -  
 ցինք ուրեմն այս խումն բազ -  
 մու թեան . Չեր սիրելի Ժողովըր -  
 դեան հեա գոչելով կեցցեա վե -  
 հափառ . Տէր : յիս ցին մե . մմ  
 46 յունվար 1867 ըսքք շա նմ  
 Եւ Մնամք վեհ . Հայրապետիգ ք  
 Եւսոս Ամենախանարհ որդիք յիս  
 Կ . Ս . Իւթիւնեան խմբագիր  
 Եւսոսի գումարքով միւսուս շա  
 Համբարձում Ալանաճեան խմբ  
 բագիր Փաւնջի մարտի 20 նմ յիս  
 Կարապետ Փանոսեան խմբա -  
 գիր Մանգու մէի նամակն զիւս

Մարկոս Աղարեկեանն խմբա-  
գիր Ծիլն Աւարայրի խմբա-  
կարանպետ Չուխաճեանն խմբա-  
բագիր Ծիածանի խմբա-  
Ստեփանն Չ. Փարազեանց խմբ-  
բագիր Փամանակի  
Առ որ լամենայն Հայոց Հայ-  
րապետը կը պատասխանէ թէ՛ մի  
Չերայդ գրածներն իմ Սրբ-  
բազան պարտականութիւններս  
են. և ձեր այդ զգացածներն  
իմ ալ զգացմունքներս են. իմ  
պարտականութիւններս կանոս-  
րելու համար արդէն ուխտած  
եմ առաջի Աստուծոյ, և հիմա  
ալ առաջի Ընդհանուր Ազգիս  
կը խոստանամ. Աստուած և Ազ-  
գըս իմ անարժանութիւնս այս  
ճանի պաշտօնին կոչեցաւ բայց  
ես կը ճանչնամ իմ անարժանութիւնս

Ազօթեցէք, կաղաչեմ ինձ հա-  
մար հարք իմ և եղբարք, որպէս  
զի Աստուած գորացնէ զիս ։

Այս պատասխանը ներկայ գրա-  
նուոց բարբ Եկեղեցականք և հա-  
մայն ժողովրդականք մեծաւ հա-  
ճութեամբ կը լսեն ։ Եւ ապա  
Հայրապետը նոյն հանդիսիւ թե-  
րա իրեն համար պատրաստուած  
տունք (մեծ. նորատունկեան Յա-  
կոբ Էֆէնաթի տունք) կերթայ,  
ուր կը կատարուին ամենայն  
պաշտօնական այցելութիւնք ։

Այս միջոցին Տ. Պօղոս Բ. Պատ-  
րիարք՝ Աղթամարայ և Սոսյ խրն-  
դիրներն ամենայն Հայոց Հայ-  
րապետին կը ներկայացնէ ի տը-  
նօրէնութիւն ։ Հայրապետն ըստ  
թախանձանաց Պատրիարքին և  
նոյն իսկ անոր հաճութեամբ Ե-

կեղեցական Մասնատողով մը կը  
կարգէ ի 6 փետրվարի 1867 .

Այս մասնատողովը վեց յօդ-  
ուածէ բաղկացեալ յարաբերա-  
կան կանոնադրութիւն մը կը ծը-  
րագրէ և կը ներկայացնէ Հայ-  
րապետին , որ է . (\*)

Ա. կաթուղիկոսուէք Սոյ և  
Աղթամարայ ընտրին ի վիճակայ-  
նաց իւրեանց և յընդհանուր ժո-  
ղովոյն կոստանդնուպօլսոյ , յորմէ

Հասմուս միտոստով զի զտ

(\*) Տ. Մկրտիչ սրբազան Մարաշի  
այս մասնատողովն և ի 22 մարտի  
1867 ի փերա ի տան Հայրապետին հան-  
դերձ Պատրիարքով գումարեալ Եղթա-  
կոպտաց մէջ գտնուած ըլլալով Աղ-  
թամարայ և Սոյ կաթուղիկոսաց հա-  
մար պատրաստեալ --յն --յս կանոնքոյն  
խմբագրութեան հանկոչութիւն և հ-  
ան-նիւն ունեցած է :

— Կաթնախնայն անձնակազմով և համարապատասխան  
դիվանն ամենայն Հայոց է Կաթնախնայն  
ընտանիքն և է հասարակական և անհատական

Արդէն ի ցեղէ Աջապատահանց  
Սոյ բարձեալ է ընտրութիւն կաթնախնայն  
ժողովոսական՝ ընդհանուր հաւանութեամբ Ազգին, արժանաւորաց  
և եթ սեպհականերով զայն :

Բ. Կաթնախնայն Սոյ և Աղթամարայ ընտանիքն և ընտանիքն  
Երևանի է ընտանիքն և ընտանիքն  
Կաթնախնայն Հայոց է հասարակական և անհատական

Արդէն ըստ սմին օրինակի  
Ազունից, Վրաց և Ասորաց (\*)

(\*) Մեր ազգային պատմիչներէն  
Թովմա Մեծօփեցի Տ. Տ. Կերակոս Վրացացի  
Հայրապետին — 1441-1445 - պատմութիւնն ըրած ատեն այնպէս յընդ  
կը ցուցնէ Ասորաց համար որ յատուէն

Կաթուղիկոսուներ ձեռնադրելին  
ի սրբազան յաջորդէ Լուսաւորչին  
Հայաստանեայց ։

Գ. Կաթուղիկոսուներ Սոյ և  
Աղթամարայ ըստ բաղձամեայն

---

միշտ Հայոց Հայրապետէն ձեռնա-  
դրութիւն կրնդունելին և կը յաւելու ը-  
սել թէ՛ ապա Եւզիպտոսէ առին գիշ-  
խանութիւն կաթուղիկոսութեան ինքու-  
տի ազգէն ։

Մեծութեցոյն այս ըսուածքը կը  
ցուցնէ թէ Ասորիք Կաթուղիկոսական  
ձեռնադրութիւնն ու օծումը միշտ Հա-  
յոց Հայրապետներէն կրնդունելին , հե-  
տեւապէս և Հայաստանեայց Ս. Եկե-  
ղեցոյ իրաւասութեան ենթարկեալ ,  
բայց յետոյ կաթուղիկոսական ձեռնա-  
դրութիւնն ու օծումը Խալսի ազգէն  
առնլով Հայոց Հայրապետներէն ձեռ-  
նադրութեան և օծման նուիրագործու-  
թիւնն առնլոյ առաջին սուրբութիւնը  
դադրեցուցին ։

ստորութեան կարող են ձեռնադրել Եպիսկոպոս ընդհանրապէս առջադոյն շէրտի հարկէն Հայրապետին ամենայն Հայոց ։

« Ձեռնադրեալ Եպիսկոպոսուներ

---

Սոսից է որ Գաղարիկ Ասորոց Հայոց Հայրապետներէն անխափր ձեռնադրութիւն ընդունելու մասին վկայութիւն կուտայ նայն իսկ Ասորոց Անտիոքայ Պատրիարք Տ. Միքայէլ Ժամանակագիր պատմիչըն կրր կրտէ .

« Գայտմ Ժամանակի էր Աթանաս Պատրիարքն Անտիոքայ Ասորոց և Գովհաննէս ( Պ. իմաստասէր—718—729 — Հայրապետն Հայոց . . . և Աղուանք և Գաղարիկ Ասորիք էին ի մի դաւանութիւն առաքելական հիմանք : Եւ իսն այնքիկ երկայն Ասորի առ կաթողիկոսն Հայոց և ասէին « մեք ի սուրբ Գրիգորի ( Նաւասարչին ) դաւանութեանն եմք » . և սունին յեւնոցրտիւն : և շկայր հակառակութիւն ի նո-

ըստ թուոյ թեմից վիճակի իւր-  
եանց միայն պարտի վնիւ, զոր  
և պարտ է որոշել և սահմա-  
նել :»

« Գ. Կաթուղիկոսունքն Սոսյ և

սա ( Միխայէլ Ասորի ժամանակագր-  
երես 358 տպեալ յԵրուսաղէմ 1871 ) :

Սահայն պէտք է գիտնալ որ Տ. Մի-  
քայէլ Պատրիարք այս վկայութիւնք  
Բարշապուհ և Գարրիէլ անուն ազգաւ  
Ասորի երկու անձանց քսութեամբը  
նոյն ասեկները Հայ և Ասորի Եկեղեց-  
եաց միջև յուզեալ դաւանաբանական  
խնդրոյ մը պատմութեան իբր նախա-  
բան ի գիր առած է , (նոյն երես 358-  
340) , որով ոչ թէ ըսել կամք որ Յա-  
կոբիկ Ասորւոց Կաթուղիկոսունք կա-  
նոնական պայմանաւ մը միշտ Հայոց  
Հայրապետներէն ձեռնադրութիւն ըն-  
դունելու պարտաւորեալ էին , այլ սա  
թէ՛ մինչդեռ Յակոբիկ Ասորիք Հայաս-  
տանեայց Ա. Եկեղեցւոյ հետ մինչեւ

Աղթամարայ պարտին շնչելի սուրբ  
Պատարագի շնչելի վերսկիւն Վե-  
րսիւնի սեղանի շնչելի խաչեպետ  
Կոպոսունք, վարդապետք և քա-  
հանայք Ստի և Աղթամարայ

---

այն արտիճան դաւանակից ըլլալ կը  
խոստովանէին որ Հայոց Հայրապետ  
ներէն անխորթ ձեռնադրութիւն կրն-  
գանէին, Բարչապուհ և Գարբիէլ Հայ  
և Ասորի Ակեղեցեաց միջեւ կրօնա-  
կան խնդիր և շփոթ յարուցին, որ  
պատճառաւ և Տ. Տ. Յովհաննէս Գ.  
Իմաստասէր Հայրապետին ի Գուին  
— 7 Յին — դամարած ժողովոյն մէջ  
դատապարտուեցան : ( Տես և Արարկոս  
պատմիչ Երկն 58 ) : Ուստի Տ. Միքա-  
շէլ Գարբաւրքի այս վկայութենէն չը-  
հետեւիր երբէք թէ Ասորոց Ակեղե-  
ցին իբրև Հայաստանեաց Ս. Ակեղեց-  
ւոց իրաւատութեան ենթարկեալ եկե-  
ղեցի մը, ինչպէս էին Աղուանից և Վը-  
րաց Ակեղեցիներն, իւր Անթուղիկսաց

պարտին նախ յընդհանր շնորհ Վե-  
 հագոս և ինչպէս զանոն և զայնոց  
 և յետոյ զանոն և զայնոց զիսկոսի  
 վիճակին և զայնոց զիսկոսի  
 և զայնոց զիսկոսի և զայնոց զիսկոսի

ձեռնադրութիւնն կանոնական պայմա-  
 նաւ միշտ Հայոց Հայրապետներէն  
 ընդունելու պարտաւորեալ էր : Արիւ  
 բան է որ պատահարաւ այլ և այլ  
 պատճառներով մէկ կամ քանի մ'ան-  
 դամ տեղի ունեցած ըլլայ :  
 Սա եւս նկատուցութեան արժանի է  
 որ այն աչս Տ. Միքայէլ Աստրիարք  
 պատմիչը Հայոց և Եանքիկ Ասորւոց  
 Հայրապետաց միջեւ դաւանադրոց փո-  
 խանակութեան հին ստորութիւն մը  
 կը յիշէ, որ իւր օրովն իսկ կատարուած  
 է, ըստ Ասորւոց Կաթուղիկոսներուն  
 Հայոց Հայրապետներէն ձեռնադրու-  
 թիւն ընդունելու կանոնական պայմա-  
 նի կամ ստորութեան մը նկատմամբ  
 յիշատակութիւն չընէր ընտել մինչդեռ

արքայ Էջմիածնի միայն է սեպ-  
հական ստորագրել ԿՐԻՍՏՈՍ  
ԲՆԻՆԻ ՀՅՈՅ, իսկ Ստոյ և Աղթա-  
մարայ կաթողիկոսաց կանգա-  
կաց վերտառութիւնն լինելոց է

ի գիր առնուած խնդրոյն նիւթը կը պա-  
հանջէր որ ընէ :

Ահա՛ իւր խօսքերը

Եւ յորժամ ձեռնագրեցաւ ( Տ. Տ. Գրիգոր Դ. Տղայ - 1175-1195 - ) ա-  
ռաքեաց առ մեզ երկու եպիսկոպոս  
ըստ հին աստուծոյն Բերոյ, զոր ունիմք ի  
միջի մերում որ յորժամ Ասորաց ուղ-  
ղափառ ( Յակոբիկ ) Պատրիարք ձեռ-  
նագրի ուստի ու շոյոց շոյրդէրն  
չբարձրեմք իւր, նոյնպէս և շոյոց  
կաթողիկոս ընալ ուստի ու Պատրիարքն  
Ասորաց չբարձրեմք իւր Ծ ( Նոյն  
ժամանակագր. երես 472 ) :  
Շոյ և Ասորի շոյրանպետաց միջեւ  
դաւանագրոց փոխանակութեան այս

Կրթութիւնք Տանն Կրթիկէս, Կրթութիւնք  
 Տանն Աշխատանք, իսկ ասորացիք  
 թիւն նոցա Կրթութիւնք Առ, Կրթութիւնք  
 Աշխատանք, ի կրօնական գծուարին

ստորութիւնը յայտնի չէ մեզ թէ Երբ  
 վերջացած է, զի զարդիս ասանկ  
 ստորութիւն մը չկայ:

Նոյնպէս Կրթական Գանձակեցի ազ-  
 գային պատմիչը թէպէտ և կը գրէ թէ՛  
 « Առ նա (Տ. Տ. Ներսէս Գ. Շինող  
 = 640 = 660 = ) Եկեալ Ասորաց ազ-  
 գայականաց ինքրեկին ի նմանէ Մայրակո-  
 գոս, և նա պանահանիւաց ի նոցանէ գը-  
 րով խտրամբանութիւն հասանայ՝ . . . .  
 և ասոր ձեռնարկեցին (Հայր) գԱր-  
 դիսոյ Մայրակոգոսն: » (Կրթական պատմ-  
 Երես 54):

Բայց Գանձակեցեոյն այս վկայութիւն-  
 նը՝ ինչպէս յայտնի կերևի, պատահա-  
 բարձր անդի ունեցած Մայրակոգոսի մը  
 ձեռնարկութեան կը վերաբերի, և ոչ

ինքիրա Կաթուղիկոսաւնք Սոյ  
 և Աղթամարայ պարտին զվերջին  
 որոշու մե ընդ—նիւ յընդ—նը—ն շոյ—  
 ք—դէտէ —նտէ —քիւ Եկեղեց—ոյն շոյ—  
 ք—նէ—ոյ :

թէ Կաթուղիկոսական ձեռնադրու-  
 թեան և օծման հետեւ ապէս և շապա-  
 ցուցանէր որ Յակոբիկ Ասորիք իրենց  
 Կաթուղիկոսաց ձեռնադրութեան և  
 օծման նուիրաց որժութիւնք շայտց շայ-  
 րապետներէն ընդու ներս կանոնական  
 պայմանի կամ ստորութեան մը են-  
 թարկեալ էին . մ.մտաւանդ երբ նկա-  
 տողութեան առնուի որ պատմիչը Ար-  
 զիաոյի ձեռնադրութիւնք ի գիր առած  
 ատեն այսօրինակ պայմանի և ստորու-  
 թեան մը դոյութիւն ոչ միայն շնչանա-  
 կէր , այլ և շակնարկէր իսկ :

Արդ՝ այս ամենայն վկայութիւնք և  
 քննական խորհրդածութիւնք իրաւունք  
 կուտան մեզ հաստատ կարծիք դոյա-  
 ցնել թէ՛ Յակոբիկ Ասորւոց Կաթուղի-

Հայրապետն ամենայն Հայոց  
Տ. Տ. Գէորգ Դ. ընդունելով զայս  
յարաբերական կանոնադրութիւն՝  
կը յանձնէ Պատրիարքին՝ ի գոր-  
ծադրութիւն, բայց չգործադր-  
ուիր, հետեւապէս և Աղթամարայ  
և Սոյ խնդիրք մի և նոյն անոյժ  
վիճակին մէջ կը մնան :

---

Կոստանք՝ Աղուանից և Վրաց Կաթու-  
ղիկոսաց նման, իրենց ձեռնադրու-  
թիւնն ու օժուժը կանոնական պայմա-  
նաւ Հայոց Հայրապետներէն ընդունե-  
լու պարտաւորեալ, հետեւապէս և Հա-  
յոց Հայրապետական հոգեւոր իշխանու-  
թեան իրաւասութեան և նթ արկիւալ  
չէին :

Այժմ՝ Եակոբիկ Ասորոց Կաթուղի-  
կոստանք ըստ քաղաքականին միայն  
Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիար-  
քական իշխանութեան իրաւասութեան  
ներքեւ նանչցուած են :

Ազգային ժողովոյ Դիւանը տես-  
ներով որ Ազգային ժողովը հա-  
կառակ իւր ակնկալութեան գոնէ  
իւր մէկ նիստին մէջ ամենայն  
Հայոց Հայրապետին ներկայու-  
թիւնը և անոր Հայրապետական  
օրհնութիւնը վայելելու բազդա-  
ւորութիւնը շունենար, որպէս  
զի յանուն Թուրքիաքնակ Հայոց  
իւր իղձերն և մանաւանդ Պաշ-  
տէնի անուն կարգադրութեան  
վերաքննութեան հարկին նկատ-  
մամբ յետ մանր քննութեան ար-  
ուած որոշումը ներկայացնէ, և  
անոր գործադրութիւնը խնդրէ,  
և տեղեկանալով որ քանի մը օ-  
րէն ետքը պիտի մեկնի Կոստան-  
դնուպօլսէն, կը փութայ ի դի-  
մաց Ազգային ժողովոյ պաշտօ-  
նագիր մ'ուղղել առ իւր նախա-

դահն Տ. Պողոս Բ. Պատրիարք ,  
 և յիշեցնելով նմա Պալ-Քեճէ-Յէ վե-  
 բաքննելու թեան համար եղած ո-  
 թոշումը կը ծանուցանէ որ իբրև  
 Նախագահ Սղղային ժողովոյ  
 նորընտիր Հայրապետին ներկա-  
 յացնէ զայն որոշումն պաշտօնա-  
 պէս , և խնդրէ որ ի Ս. Էջմի-  
 ածին հասնելէն յետոյ անաջին  
 դորժ ընէ նոյն այն որոշումն ի  
 դորժ դնել խորհրդակցութեամբ  
 ի Տաճկաստան , ի Ռուսաստան ,  
 ի Գարսխաստան , ի Հնդկաստան  
 և յայլ տեղիս բնակեալ Հայոց :  
 Ահա նոյն պաշտօնագիրը :  
 « Ամենապատիւ Տէր Սրբազան »  
 « Յայտ իսկ է բարձր Սրբազ-  
 նութեան ձերում թէ ի հանդի-  
 սաւոր գումարման Սղղային Ե-  
 բեափոխանական Ընդհանուր ժո-

ղովոյ Հայոց Տաճկաստանի յա-  
ւուր քաններորդի չորրորդի ամ-  
սեանն Դեկտեմբերի յամի հազար  
ութ հարիւր վաթսուներորդի  
հինգերորդի, յաղաքս ի գործ ար-  
կանելոյ զսահմանադրական ի-  
րաւունս իւր ի մասնակցութիւն  
ընտրութեան ընդհանրական կա-  
թուղիկոսի ամենայն Հայոց, ե-  
ղեն բանք և վասն Պալատէնիա  
անուն կարգադրութեան, որ  
սահմանեալն էր յամի 1836 ի  
կայսերական կառավարութենէն  
Ռուսաստանի որպէս բարեկարգ-  
կանոն վարչութեան գործոցն Հա-  
յաստանեացց Եկեղեցւոյ » :

« Արդ՝ վերոյիշեալ կարգա-  
դրութիւնն թէպէտեւ սահման-  
եալ յամի 1836 ի մեծագոր Տէ-  
րութենէն Ռուսաց, բայց գոյով

յօրինելու առանց մասնակցութեան և խորհրդակցութեան Ազգիս, այլ միմիայն ի ձեռն անձանց ոմանց, որք թերեւս անդիտակ էին օրինաց և աւանդութեանց սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց, և յաղաղ սգարունակելոյն յինքեան ինչ ինչ տրամագրութիւնս անհամաձայն նախնի հարազատ դրութեան Հայրենի սուրբ Եկեղեցւոյս և կաթուղիկոսական անկախութեան. և ըստ որում կաթուղիկոսական Յանձնաժողովս որ կազմեցաւ ի վերոյիշառակեալ դումարմանն, յերկրորդ դումարման Ազգային Ընդհանուր ժողովոյ, որ վասն այսր խնդրոյ ի 1866 ի 27 մայիսի յայտ արար Տեղեկագրովս զանյարմարութիւն

և զանհարազատութիւնս՝ և Կէ-  
կարգադրութեանն, և ըստ ո-  
րում Հնդկարնակ ազգայինք մեր  
դրութեամբ և Հայք այլոց երկ-  
րաց (ընդ որս և մեք) լաու-  
թեամբ՝ և հոգելոյս Կաթողիկո-  
սունք մեր Ներսէս և Մատթէոս  
անդործադրութեամբ՝ ընդ բո-  
ղոքով արկեալ են զայն կարգա-  
դրութիւն, Ազգային Երեսփոխա-  
նական Ընդհանուր Ժողով Հա-  
յոցս Տանկաստանի միաձայն հա-  
ւանութեամբ որոշեաց, զի « ըզ-  
կնի ընտրութեան և հաստատու-  
թեան ընդհանրական Կաթողի-  
կոսի ամենայն Հայոց, խնդրես-  
ցի ի նորոյ Հայրապետէն բար-  
ձուին և փոփոխութիւն այնոցիկ  
անհարազատ արամադրութեանց  
նոյն կարգադրութեան՝ օրինա-

ւորք և արդար եղանակաւ , այ-  
սինքն մասնակցութեամբ և խոր-  
հըրդակցութեամբ Հայոց որք ի  
Տաճկաստան , ի Ռուսաստան , ի  
Պարսկաստան , ի Հնդկաստան և  
յայլ տեղիս :

« Եւ արդ՝ գործ ընտրութեան  
և հաստատութեան յաջորդի սըր-  
բոյ Աթոռոյ Էջմիածնի աւար-  
տեալ գորով , Ազգային Երեսփո-  
խանական Ընդհանուր Ժողով  
Հայոց Տաճկաստանի առ ի ներ-  
կայացուցանել զայս որոշումն իւր  
նաեւ զփափաք Ազգիս փան ինչ  
ինչ եկեղեցական բարեկարգու-  
թեանց , սպասէր երջանիկ ա-  
ւուր տեսանելոյ ի ծոց իւր զընդ-  
հանրական Կաթողիկոս և ծայ-  
րագոյն Պատրիարք զվեհափառ  
Տ. Տ. Գէորգ սրբազնակատար

Արքեպիսկոպոսն, որ այժմ ի Մայ-  
 րաբաղաքիս է, և ընդունելոյ  
 միանդ ամայն զՀայրապետական  
 օրհնութիւնն ի բերանոյ նորին  
 Վեհափառութեան, ըստ զայսօր  
 ոչ արժանացաւ այսմ ակնկալեալ  
 բարեբաղդութեանն յիշտմ յ յնդ  
 և Վասն որոյ ի իւանս Ազգային  
 Ընդհանուր ժողովոյ լսելով թէ  
 մերձ է օր ճանապարհորդու-  
 թեան նորին Վեհափառութեան  
 ի Ս. Էջմիածին, պարտն անձին  
 վարկանի ոչ եւս սպասել, այլ  
 պաշտօնական գրութեամբս փու-  
 թայ խնդրել խոնարհաբար, զի  
 բարձր Սրբազնութիւն ձեր իր-  
 բու նախագահ Ազգային Երեւ-  
 փոխանական ժողովոյ Հայոց Տաճ-  
 կաստանի հոգեւոյն առաջի արնել  
 մտնելուց յիստայ ինչ ձեռն

Նորին Ալեհամբարան թեանն զկա-  
րեւոր որոշումնս այս զոր Ընդ-  
հանուր ժողովն մահաւ եկնայց  
խնդիր հռչակեաց վասն նորիք ե-  
րդամբարան եկեղեցւոյս եւ ի դի-  
մաց Տաճկաստանի Հայոց խընդ-  
րել ի Նորին Ալեհամբարան թեանն,  
դիցարժամ անցէ նմա Տէր հա-  
ւանել ի Ս. Լ. զմիաժին յլթառ քրի-  
սոյ Հորն մերոյ Լուսաւորչի նա-  
ւաթին որով կանցի ինքեան ի  
ձեռս բերել ուստի եւ անկ լինի  
ցի զորինաւոր միջոց զորժա-  
դրութեան այսր որոշման որոշ-  
մը Ընդհանուր ժողովոյ դիւանոյ  
ոչ աւելորդ համարի ի յուշած ել  
բարձր Սրբազնութեան ձերում ե-  
ւ ձերով Նախագահական միջնորդ-  
դութեամբ Նորին Ալեհամբարան  
թեանն թէ ըստ վկայութեան

արձանագրութեանց յլեծի Սինո-  
դի Սրբոց Էջմիածնի, արդէն ի  
բանս ամաց հետէ նախկին Փոխ-  
որքացի Կաթողոսեան ըստմանաց  
մի զկնի թիւաց քանիցս գր-  
եալ են առ հոգեւոյն նախորդ-  
ւոր ներսէս և Մատթէոս Կա-  
թողիկոսունս վասն բարձման և  
փոփոխութեան ինչ ինչ յօդու-  
ծոց, այսինքն վասն վերաբնու-  
թեան վերոյիշեալ կարգադրու-  
թեանն :  
« Հետեւաբար որեւէ յայտ-  
դումն կատարման այսր ազգային  
փափաքանաց, համարեցի այ-  
նուհետեւ արգասիք ներքին ան-  
փութութեան և ազգիւր անմը-  
խիթար արտամութեան » :  
« մնամք եւս » :

Գրանցարար

Պի Գիւնաց Ազգ. Երեւոյ Ընդ.  
ժողովոյ Հայոց Տաճկաստանի  
Ատենայց պիր Ատենայեան  
Գրեթէ Մարտի 1867

Ազգային ժողովոյ գիւնակ աշն  
պաշտօնագիրը Տ. Գողոս Բ. Պատ.  
րիարք հետեւեալ Պատրիարքա.  
կան պաշտօնագրով կը մատու.  
ցանէ առ Տ. Տ. Գէորգ Դ. Հայ.  
րապետն ամենայն Հայոց, և կը  
խնդրէ որ յետ հասանելոյ իՄ այր  
Աթոռն ի Ս. Էջմիածին, հաճի  
Թուրքիարմակ Հայոց Պաշտ.  
անուն կարգ աղբու թեան վերա.  
քննութեան նկատմամբ ունեցած  
բաղձանքը կատարելու հոգ արա.  
նիլ :

Ահա նոյն Պատրիարքական  
պաշտօնագիրը :

Ամենապատիւ և Վեհափառ  
Սրբազան Տէր Եւրոպայի և Երկրորդ  
Սրբազան Տէր Երեւանին Ազգային  
Երեսօրհանական Ընդհանուր  
Ժողովոյ Հայոց Տաճկաստանի  
ստացեալ մեր գներփակեալ ուղերձ  
պարտանձին համարիմք  
իրբեւ Նախագահ նոյն Ընդհան-  
ուր Ժողովոյ ներկայիւս մատու-  
ցանել զայն Ամենապատիւ և Վե-  
հափառ բարձր Սրբազնութեան  
ձերում: Համաձայն որոշման և  
բաղձանաց Ընդհանուր Ժողովոյ  
զորմէ բանք են ի նմին ուղերձի,  
խնդրեմք և մեր ի Բ. Սրբազնու-  
թենէ ձերմէ զի ի հասանել Ձեր  
չնորհիւ Տերուն Յղթաճա և անպի-  
նան ի Մայր Աթոռ Սրբոյ Էջմի-  
ածնի և հաճեցիք Ձերոյ Հայրա-  
պետական խնամօք հոգ անձին

ունել յազնագն ի կարարունն և  
 յարդիւնս ածելոյ զնոյն ճակնա-  
 կարեւոր բարձանս Ազգիս Հայոց  
 Տաճկաստանի » մասնամասնօքսնոյն  
 վնասի վնասահու թեամբ ի բարե-  
 հաճութիւն քանքնող Սրբազնու-  
 թեան Չերում, մնամք ակնկալու  
 կատարման Ազգային այս կարեւ-  
 րորագոյն խնդրոյ և վստահաբա-  
 նաց յո յիտարարանն) մաս յմնաց  
 մաս 24 փարս 1867 զայս ստիպա-  
 թի Պանդրի Հայոց Կ. Պոլիս և սուրբ  
 յոխարս Կ. ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ  
 ժողովրդ ԿՊՈՂՈՍ ԱՐԲԵՅԻՍԿՈՊՈՍ  
 ամբազան Կ յ զմե ( ԿՅԷ ) Կնդրով  
 զմ Նորընտիր Հայրապետն անե-  
 նայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. 1867  
 Մարտ 26 Կիւրակէ օր Ս. Պա-  
 տարագ կը մատուցանէ ի Ս. Նր-  
 քնորդութիւն և կեղեցիկն Բերայի

և հանդերձ Տիրանուէր օգնուին  
 կը ձօնէ իւր Հայրնայեալական  
 օրհնութիւնը բովանդակ Հայ ազ-  
 դին և Եւ Բարա 28 կրեքչարթի  
 օրն ուղեկցութեամբ պաշտօնա-  
 կան հրաւիրակաց Միարանու  
 թեանն Ս. Էջմիածնի և ուղեկ-  
 ցաց Պատրիարքութեանցն Կա-  
 տանդնու պօլսոյ և Երուսաղէմի  
 մեկնելով Կատանդնու պօլսէն հա-  
 նապօրհ կեղէ գէպ ի ի մայր Ա-  
 թոռն Արարատեան ի Ս. Էջմիած-  
 ծին և զն նախնա զմով նախ զօ-  
 նն Նոյն օրն ի տանն վսեմ. Սիմեոն  
 Պէյի Մարտուտեան որ ի Միջն-  
 գիւղ, Ազգային Ժողովոյ Ատե-  
 նապետ Վսեմ. Բարունակ Պէյ  
 Թէրուխեան և ի ներկայութեան  
 Տ. Պօղոս Բ. Պատրիարքի և բազ-  
 մաթիւ պաշտօնական և ոչ պաշ-

ածնական անձանց՝ սա ուղերձը  
կարտասանե՛լ զսուրբ Գրքս Գրեմ  
Վեհափառ Տէր քս. Գրեմ զգո  
Վա Այս օր կը պատրաստուիք  
երթալ Ձեր բարձր կոչմանը՝ որք  
թողլով մայրաքաղաքիս Հայ ժող  
ղովուրդը՝ բայց մեք Ձեր հա  
ւատարիմ հօտը ու ամենահնա  
ղանգ զառակները՝ վերջին մխի  
թարու թեան մը համար կդիմենք  
այսօր Ձեր բարձր Սրբադնու թեան,  
Ձեր առաքելական կենսատու  
օրհնու թիւնը անդամ մը եւս փա  
յելելու ՝ Ձեր օրհնու թիւնն ու  
Ձեր իմաստալից խօսքերը պիտի  
փառանդեն անտարակայն ատե  
լա թիւնն ու նենգ ու թիւնը, ար  
մատախիլ պիտի բնաջնջեն տի  
րոզ ազգ ատեցու թեան մը ոգին,  
պիտի փարատեն տգիտու թեան

խառարբ և այն արհամարհելի  
յառակութեան փոխարէն պիտի  
աերմանեն ըստ ի միտս արդան  
լուծիւն ի գործս և սէր ի սիր-  
արս . որոց արդիւնքը պիտի ըլ-  
լայ հաւատարմութիւն , ազգա-  
սիրութիւն , մարդասիրութիւն  
և Աստուածսիրութիւն և այլն յայն  
Այնուհետեւ Հայկական հո-  
տին ոչխարներն իրենց աշակարհ  
ու անխոնջ Հովուապետին հովա-  
նաւորութեանը ներքեւ իրարու  
հետ անբախտելի սիրով սիրա-  
կապեալ , ձեռք ձեռքի տուած  
Վճռաւ լուսաւորեալ գարուն  
ասպարէզին մէջ ի յառաջագի-  
մութիւն պիտի արշաւեն Երե-  
ւանք ուրեմն , աշխատինք , եղ-  
բայրք , կրէնք մարդկութեան պա-  
տիւր , վասն զի խորհորանք ոչ

շատ հեռի է մեր ստերուց և առ  
 կէնք Ուն անարարենք Կիրիւս  
 թեան նաւահանգիստը համեմտութե  
 այսինքն ևս որոյ և երգիւոր թեան  
 նաւահանգիստը քաղաք քաղաք և քա  
 ղաք Ինչ որ կամ վարար թունայ  
 Ինչ որ արժանքն սիր նաւահանգիստ  
 առաջնորդ է մեր դարերէ ի վեր  
 ալեկոծ կալ նաւակը անգամ թէ ոչ  
 կորնոյիք Տէր քի մոյժմոյսայն միտ  
 ՎՏՅԻՆՆԻՆԻ ԶՅԵՐԸ ԻՔԵԼ ԻՔԵՆՑ ԶՅԵ  
 ԸՆԴԵՐ ԸՆԴԵՆԻՆԻ ԶՅԵԸ ԸՔԻՆ ԶՅԵՆՆԻՆ  
 ՎԻՆԻՆ ԶՅԵՐԻՆ Ը Զեր ընտրու  
 թիւնը բարգմանց ճայնուիր եղաւ  
 կը հաւատանք որ Աստուծոյ յայն  
 երկուսին առաջինն միջնորդարար  
 Ը Հայերը մեծ յոյս ունին Չեր  
 վրայ, վասն զի զգացին որ Աստ  
 քերոյ նման պիտի աշխատիք,  
 երջանկայիշատակ նախորդացդ

խշատակը պիտի կենդանացնէք,  
եւ Քու գործքերդ պատմու թեան  
խշատակին մէջ Քու անունդ ան-  
մահ պիտի պահեն զամբողջսն յայ  
Մեք վկայ ենք որ Քու քա-  
նիցս անգամ կրկնեցիր յս որ այս  
մեք կրօնական Ազգին Նկեղեց-  
ւոյն իրաւունքները պիտի պաշտ-  
պանէք յե մինչեւ անգամ Չեր  
կեանքը հոր մեզ համար թան-  
կագին է յ պիտի գոհէք ի հար-  
կին որ յոքոյիմա ար քանակ  
« Այսու ամենայնիւ չենք կրն  
նար ուրանալ որ Նթէ Եւ Տէր  
պահէ զքաղաքն ի նանիր արեւն  
պահապանք նորա », բայց կը  
հաւատանք որ ամարդ է որ դոր-  
ձէ զերկիր զսա զս , ու զսադս  
Սի Քուք քաղ զինէք ի Վեհա-  
ժառ Տէր որ Ազգին կենաց ու

մահուան արժանապատեանսն  
թիւնը կը կրէք Աստուծոյ առջեւ  
վստան զի և Որում շնամարտաւ  
շատ խնդրեացի ի նմանէ մը Զան  
և Արդ կազաշեմք Տէր քրտ-  
նաջան աշխատեցէք Ազգին բա-  
րեխաւութեանն յունայնազգի-  
մութեանը համար յանապոյ յայն  
ընեմք ամենքս ալ կը խընդ-  
րենք ի Տեառնէ Աստուծոյ յար-  
զիւնդ հրեշտակաց թեւերովն ան-  
վտանգ եւ անվրդով հասցնէ  
Միաձնութիւնսն արքայքը Ա-  
ստուծոյ Ամենիւն իւր տայ զօ-  
րութիւն եւ կարողութիւն ձգոր-  
ծելոյ քոյ և աղան գնացա՞նք  
և կը պաղատիմք Վեհափառ  
Հայրապետ, որ անպակաս քնէք  
Ձեր օրհնութիւնները Արեւելից  
Արեւմուտս մեր վրայ Նորուն

միշտ կարօտու թիւն կզգանք ։  
708 28 Տարւա 1867 յուն ձիւարքի  
Հայրապետան ամենայն Հայոց  
կրժամանէ Միթոս Առաքելահան  
Հայրապետութեան Հայաստան  
եայց Ս. Եկեղեցւոյ Ի Ս. Էջմիա-  
ծին և Ի Մայր Տաճարի անդ Ի  
ձեռն Երկտապան Արքեպիսկո-  
պոսոց ընդունի զձեռնադրու-  
թիւնն և զօժուին Հայրապետա-  
կան յամի 1867 թ 24 ամսեանն  
Մայիսի յաւուր վեցերորդ կիւ-  
րակէի Յինանց) որ ունի արդ և  
վարէ զիշխանութիւն Հայրապե-  
տութեան ամենայն Հայոց ։ ։ ։ ։  
Ամենայն Հայոց Հայրապետա-  
կան այն ընտրութեան յանուն  
Տաճկաստանի Հայոց, ըստ օրի-  
նաց Ազգային Սահմանադրու-  
թեան, մասնակցութեան վերա-

բերեալ անօրէնութեանց մասին  
Ազգային ժողովոյ տուած Յրդոր  
որոշումներն և յանդէս իւր գրք-  
ուած պաշտօնագրերը մանաւանդ  
Թուրքիաքնակ Հայոց Պատգամա-  
ւորաց հետ առ Սինօզն Ս. Էջ-  
միածնի պրկուած վերջին պաշ-  
տօնագիրը արացարձակ կը վճռէ  
թէ ինչպէս կանխանկէտ պայտայ  
և Էրդասպէմի Պատրիարքունի-  
ք ամենայն վիճակաւ որք Թուր-  
քիաքնակ Հայոց իրենց իրաւա-  
տութեան ենթարկեալ պաշտօնէ-  
իւր եկեղեցւոյ և հովուութեան  
յանձնեալ ժողովրդովք նմանա-  
պէս և Ազգամարայ և Սոնյ Պա-  
թարիկոսունք ու խախը եկեղեց-  
ւոյ սեփու և Էրդասպէմ եկեղեցւոյ  
պարտաւոր են հանդէս գլխաւոր  
պետն ամենայն Հայոց իրերն

ԳԼՈՒԽ և Տայրադոյն ՊԱՏԻԱՐԲ  
 ՄԻ, Սուրբ, Կաթուղիկէ և Ա.  
 ա. քեչական եկեղեցւոյ Հայաս-  
 տանեայց, և իբրեւ որդի ՀՆԱ-  
 ՉԱՆԳԻԼ ՆՄԱ, երբ կըսէ:

« Ազգային Տնդհանուր Ժողովոյ  
 քաջ համոզեալ է, զի  
 յընտրութիւն Կաթուղիկոսին ա-  
 մենայն Հայոց ի Մայր Տաճարին  
 ներկայութեամբ և գործակցու-  
 թեամբ ընդ Պատգամաւորաց ե-  
 կեղեցականն յայն թարծրասամի-  
 ճան որ առաւել քան զամենե-  
 օին ընկալնուցու թուեայս, նա-  
 ամբառնայ արժանաւորութեամբ  
 Ի ԳԵՐԱԳԱՀ ԱՔՈՒ ՄԲԲԱԶԱՆ Ա-  
 ՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԳԿԻ ԵՒ ԲԱՐԹՈՒ-  
 ՂԻՄԵԱՑ ԵՒ ԱՌԱՔԵԼԱՆՄԱՆ  
 ԱՌՆՆ ԱՍՏՈՒԹՈՅ Ա ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒ-  
 ՍԱՌՈՉԻ ՄԵՐՈՑ, ԸՊ ԷՐ—

արքայաժեռի և ըստ օրինոյ արքայի  
Ա. Եկեղեցւոյ հոգւոյ ։

« Եւ յայնժամ Աթոռոյ հոռնոց  
Կեկեղեցւոյ և Աղթնհոց Կթնդիկոսոս  
Քեռն և Պարթւոսոս Կ. Պաւլոս և  
Ա. Երանդակ, և հինյն Վիճիկոսոս  
Տեղաւորն Տասնակցեալք յընտ-  
րութիւն Հայրապետին ամենայն  
Հայոց ԻՐԱՒԱՄԲ ՈՐԻՒՍ ԴԱՒԱՆԻՆ  
ԶԱՆՉԻՆՍ ԸՆՏՐԵԼՈՅՆ ՅԱՄԵ-  
ՆԱՅՆ ՀԱՅՈՅ որ և ԻՐԱՒԱՄԲ Կրէ  
զբարձր տիտղոս ԳեթԱԳԱՀ ԿԱ-  
ԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ Իր-  
քեւ արդարեւ ԳԼՈՒԽ միոյ մի-  
այնոյ կաթուղիկէ և առաքելա-  
կան սուրբ և ուղղափառ ԵԿԵ-  
ՂԵՑԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ։

Ահա՛ յայտուէս Համազգային  
Տասնակցութեամբ ընտրեալ Հայ-  
րապետն է, զոր՝ Տ. Մկրտիչ սըճ-  
բազան Մարաշցի անսասակելով

Եկեղեցական կանոնաց և կամաց  
Ազգին կը յաւակնի զանէ իրրեւ  
ՀՈՒՄՆԱԳԵՏ ամենայն Հայոց, և  
ԳԼՈՒՆ հողեւոր տեսչութեան Ս.  
Եկեղեցւոյն Հայաստանեայց, մինչ-  
դեռ ինքն այս այսպէս ընդու-  
ներու պայմանաւ ընտրուած է,  
և նոյն այն պայմանաւ իւր ընտ-  
րութիւնը վաւերացած :

Սակայն Տ. Մկրտիչ Սրբազան  
Մարաշցի իւր փորձառութեամբը  
պէտք է գիտնայ, որ Ազգը կա-  
րող է և կը հնազանդեցնէ զինքը  
Եկեղեցական կարգաց և կանո-  
նաց և Ազգային ներքին վար-  
չական իշխանութեան :

Թուրքիարնակ Հայոց Ազգա-  
յին Ժողովոյ մասնակցութեամբ  
կատարուած ամենայն Հայոց



Վասիլ Երեւելի-Յիւն

Կարուղիկոսական խնդրոց

Աղթամարայ եւ Սոսյ

Աղթամարայ Տ. Խաչատուր եւ Սոսյ Տ. Նիկողայոս ինքնընտիր վանահայր վիճակաւորաց նկատմամբ Եկեղեցական վիճակային ժողովոյ տուած վճիռներէն (տես երես 569 - 571 ), եւ Աղգային ժողովոյ զայն վճիռներն ընդունելով Աղթամարն ու Սիսը թափուր հրատարակելէն (տես երես 573 ) յետոյ՝ Տ. Գողոս Բ. Պատրիարք մասնաւորապէս Տ. Նիկողայոս Եպիսկոպոսի համար սահեւեւեւալ կոնդակը կը հրատարակէ , եւ կը զրկէ ի թեմա Սոսյ վանուց , որ զՏէր Նիկողայոս Եպիսկոպոս իսպառ անարժան կը

վճռէ կաթուղիկոսական Աստի-  
ճանին արմով մարտարիբարգով

« Յիսուսի Բրիտանոսի ծառայ Տէր  
Պօղոս Արքեպիսկոպոս և Պատրի-  
արք մեծի արքայանիստ Մայրա-  
քաղաքիս Կոստանդնուպօլսոյ :  
Յորմէ Աստուածային սուրբ ող-  
ջունիս եւ օրհնութեամբ զիսու-  
թիւն եղիցի համօրէն բարեպաշտ  
լրութեան Ազգիս Եկեղեցականաց  
և Ժողովրդականաց, մեծաց և  
փոքունց, արանց և կանանց առ  
հասարակ միաբան սիրով բնակե-  
լոց յԱստուածախնամ քաղաքդ  
և յամենայն վիճակս և ի թեմս  
դորին » :

« Յայանի է ձեր բարեպաշտու-  
թեանց թէ Սուրբ Եկեղեցւոյ ա-  
մեն կարգի անդամակիցք Եկե-  
ղեցական եւ Աշխարհական նոյն

Սուրբ Եկեղեցւոյ կանոնաց և օրինաց հոգովէն զորոնց է և թէ մէկը յանդին մնայ հոգովէն Եկեղեցւոյ քրտնիւն և հետեւաբար քրտնաբերելու կենթարկէ զինքն ինչ կրօնի եւ ինչ եւ իցէ Եկեղեցւոյն ու Աշխարհական քրտնիւն և իշխանութիւն տէր որ ըստ » :

« Գոյնիդեցոցն յանդինութիւն իւր և Եկեղեցւոյ իրանց անկողն է ԽՍԿԱԼԻ ԲՈՒՆԱՔԱՐՈԹԻՒՆ ՄԸ տեղի ունեցաւ մօտ ատեններս Հալէպի նախկին Առաջնորդ Նիկողայոս Եպիսկոպոսի հետ ինքն ինքն առաջ որ մինչեւ հիմայ զանազան ՊԺԳԱԼԻ ԳՈՐԾԵՐ ԸՐԱՄԻ ԵՆԱՏԵՐՈՒ ՎԿԱՑՈՒԹԵԱՄԲ՝ բարեյիշատակ Բ. Կիրակոս Կիրակոսի Սրբազան կաթողիկոսի մահուան մօտ ատեններէն սկսեալ Սոյ

կողմերը կգտնուէր : Ազգային  
վարչութիւնը կասկածելով անոր  
վրայ՝ յատուկ տեղապահ մը կար-  
գեց նոյն Աթոռոյն , եւ Նիկո-  
ղայոսը Պօլիս բերելու համար  
Փօխարքայական հրամանագիր  
ստացաւ : Նիկողայոս հրամանա-  
գիրը խրկուելէն ետքը՝ գիշեր  
ատեն գողն ի գողը կրօնափոխ  
Եպիսկոպոսի մը ինքզինքը օժել  
կուտայ Յունիս ամսոյ 1 Արն : Այս  
յանդղնութեան լուրը առած-  
նուս պէս իսկոյն Պօլսոյ մէջ դրա-  
նուող Եպիսկոպոսաց հետ Բ. Իր-  
բան բողոքեցինք , և Նիկողայոսին  
Մայրաքաղաքս բերուելուն հա-  
մար հրամանագիր խնդրեցինք  
կրկնակի և ստացանք , բայց փո-  
խանակ բարեխնամ կառավարու-  
թեան և Ազգին հնազանդելով

Պօլիս դարու սեփի սեփի Իսթեթ,  
 Տար-նիւի, սպար-նիւի միամիտ  
 ժողովրդոց մէկ մասը Ե-բել-է ք-նի  
 հանդիսէ առեր և Պօլիս խրկելու  
 շ-հոն է շրմա խոյժուղամ զոյժ  
 զմա ի Բայց ահա կժանու զանեւք  
 ձեր քարեպաշտութեանք որ Ե-  
 կեղեցական Վիճակային Համա-  
 դումար ժողովով ար ասան (\*)  
 Եպիսկոպոսներ և թաղմաթիւ  
 Եկեղեցականք ներկայ էին և  
 Ազգային Երեսփոխանական Ընդ-  
 հանար ժողովով Սոյ այս Ինժ-  
 նԱՀԲԱԻԲ ու ԻՆՖՆԱԿՈՉ ու ԻՆՖՆ-  
 ԸՆՏԻՐ կաթուղիկոսք շի-տէ ու

---

(\*) Տաաներորդը Տ. Անդրէաս Եպիս-  
 կոպոսն եղամ պիտի ըլլայ, որոյ ստա-  
 րադրութիւնք չէ տեսնուած վճապարոյ  
 ներքեւ (Տես 515 Երեսին ծանօթու-  
 թիւնք ի շրմաք մասնմա պարտէ

— Գրեմբ — Գրեմբ Ըստ որում Մեծ  
 եւ արեւելեան թիւերն ՅԱՆՅԱՆՔԸ Զմառ  
 Մեծ Թ ՆԱՏԱՊԱՐՏՈՒԹ ԻԻՆԸ ։ Եւ  
 որպէս զի մի գուցէ պարզամիտ  
 ները խարուելով անոր յանցա  
 նաց եւ զատարարութեանը  
 մասնակից ըլլան անգոյններէն  
 անոնք որ տգիտութեամբ կամ  
 կուտակցութեան ոգւով անոր  
 պաշտօնան կալ ուղեն հայրա  
 կան պարար կը համարիմ այժմէն  
 զգուշացնել առ հասարակ ամեն  
 օրհնեալ ժողովուրդն Հայաս  
 տանեայց Ս. Եկեղեցւոյ, հրա  
 տարակելով Եկեղեցական Վիճա  
 կային ժողովոյ ի՞նչ թէ ԱՆՎԱ  
 ԻԵՐ Է ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՕԾՈՒՄՆ ՈՒ  
 ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԱԼԸ ։

« Ըստ որում չէ թէ Աստուած,  
 հապա անձամբ զանձն ընտ

րեր եւ ինքզինքը ինք միայն ար-  
ժանի համարելով համարձակեր  
է ընծայեցուցանել այն բարձր  
Աստիճանին . որով եւ Հոգւոյն  
Արքայ կաշման գէժ մեղանշած է .  
« Ըստ որում Եկեղեցւոյ կա-  
նանաց հակառակ ո՛չ Եկեղեցւո-  
կանաց եւ ո՛չ Ազգին հաճու-  
թեամբը ընտրուած է . վասն զի  
եթէ անցելոյն մէջ ասանկ գէպ-  
քեր երբեմն պատահած է, այն ալ  
ապատամբ բռնաւորներու օժան-  
գակութեամբ, բայց այսօր Օս-  
մանեան կառավարութեան հզօր  
զօրութեամբն այն կողմերը նը-  
ուանեալ ըլլալով՝ Եկեղեցին ու  
Ազգն իր իրաւունքէն ետ չկե-  
նար, եւ այն հաշակաւոր վան-  
քը բարեկարգելու եւ արժանա-  
ւոր կաթողիկոս մը ընտրելու վը .



կեղծ աւարութեամբ եւ անարեւել  
 ընելով միամիտ ժողովուրդը, ու  
 բոնք իր մեծ յանցանաց զբայ  
 աւելի կը ծանրանան եւ զինքը  
 անարժան կընեն ինչպէս զայն  
 և Աստի կը յորդորենք զանե-  
 նեանանգ զհարստաց զաւակու-  
 նքս Հայաստանեայց Ասորք Եկե-  
 ղեցւոյ որ ոչ միայն նիկողայոս  
 Եպիսկոպոսը կ'ընտրուի և զայն  
 այլ եւ ոչ մէկ ինչպէս Եպիս-  
 կոպոսները Եղեկոյի Եւզեմեմ  
 յանգ զնի ձեռնադրելն զայն

և Ողջ լերուք ի խնամն բարձ-  
 րելոյն Աստուծոյ և

ՊԱՏՐԻԱՐԷՔ Կ. ՊՕԼՍՈՅ

ՊՈԼՍՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՅՈՍ

Գրեցաւ 1866 Օգոստոս 13

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի Կոստանդնուպօլիս

Այս ամեն պաշտօնական որոշու մներն ու հրատարակու թիւները ըլլալով հանդերձ առկա ին Ազ. թամարայ և Սոսյ կաթմողիկոսական ընտրութիւնք՝ դժուարութեանց պատահելով առ կախ կը մնան և իբրև դժուարաբան ձեռք ինչիք կը ներկայացուին Ազգային ժողովոյ 1867 Փետրվար 24 թիւի նիստին, որ ինչպէս ըսինք արդէն, սոյն այս կաթմողիկոսական ինչքոց անտէնտութեան համար յատկապէս տեղի կուներնայ:

Արդի Ընդհանուր Ժողով

1867 Փետր 24

Ազգային ժողովն ի նկատի առնելով Ազ. թամարայ և Սոսյ կաթմողիկոսական ինչքերները, կը տեսնէ որ սոյն ինչքոց նկատ

ճամբ Եկեղեցական Վիճակային  
Ժողովոյ ատամ վճուոց գործա-  
դրութեան դէմ բաց ի Կ. Պօլիս  
գանուող Աղթամարցի ազգայնոց,  
և Տ. Նիկողայոս Եպիսկոպոսի բո-  
ղոքներէն դժուարութիւն յա-  
րուցած են նաև ոմանք յանգա-  
մոց Եկեղեցական Վիճակային Ժո-  
ղովոյ և նոյն իսկ Տ. Պօղոս Բ.  
Պատրիարք, որ մինչև անգամ  
յատենի Խառն Ժողովոյ յայտա-  
բարած է առկաթուղիկոսական  
Յանձնաժողովն թէ՛ Վ. յն վճիռը  
չէ՛ թէ է թէրս կերէ՛ կերէ՛ Էամա.  
գումար Ժողովոյ կողմէն. եթէ  
էրէ՛-դրէ՛ Եկեղեցին էրէ՛ մէջ  
կիյնայ :

Իրաց այս վիճակին մէջ Ազ-  
գային Ժողովն Եկեղեցական Վի-  
ճակային Ժողովոյ վճուոց Երէ՛-

և ինչպէս որ ինչպէս ինչպէս, և իսկն-  
 դիրն իւր բոլոր թղթերովն ամե-  
 նայն Հայոց Հայրապետին վրձ-  
 ուոյն յանձնուել կամ յանձնուել  
 մասին երկար փնտրանութենէ  
 յետոյ, առաջարկութեամբ Վսեմ-  
 Աէրսիէն Էփէնտիի շորս Եկեղե-  
 ցականէ և շորս աշխարհականէ  
 բաղկացեալ նոր Յանձնաժողով մը  
 կը կարգէ, որ պաշտօն կը սահ-  
 մանէ,

Ա. Աղթամարայ և Կիլիկիոյ  
 Կաթուղիկոսաց ընտրութեան ե-  
 ղանակը որոշել:

Բ. Երեք Կաթուղիկոսական  
 Աթոռոց թէ իրարու հետ և թէ  
 Կոստանդնուպոլսոյ Կեդրոնական  
 վարչութեան հետ ունենալիք յա-  
 բարեբուծեանց սահմանները որ-  
 ընել:

( Տես Ատենագրութիւն Ազգ. Ժողով. 1867 Փետրվար 2 է ի նիստին. անտիպ ):

Ազգային ժողովն այս նոր Յանձնաժողովը կազմելով ինչպէս յայտնի է բացօրոյ, կը բեկանէ իւր այն որոշումը, զոր տրուած է կաթուղիկոսական Յանձնաժողովոյն Աղթամարայ և Ստոյ կաթուղիկոսական ընտրութեան եզանակն որոշող օրինաց ծրարոյն համար, և զոր իբրև ընտրական օրէնք ընդունած է ի 27 մայիսի 1866 (տես երես 518 և 531 - 543 ):

Այս նոր Յանձնաժողովն իւր ստանձնած պաշտօնը չկրնալով ի գլուխ հանել առանց բան ճշնելու ինքնին կը լուծուի, և իրն գիրը կը մնայ իւր անյոյժ և ան-

որոշ վիճակին մէջ : Տ. Պօղոս Բ.  
Պատրիարք այս միջոցին ( 1867 )  
Օսմանեան Հայաստանի Առաջ-  
նորդական վիճակաց բարխման  
բարեկարգութեան հարցումս ի  
կոստանդնուպօլիս կը հրաւիրէ  
Առաջնորդ Եպիսկոպոսներն , յորոց  
եօթը միայն կուգան : Պատ-  
րիարքը Աղթամարայ և Ստոյ խնդ-  
իրները կը ներկայացնէ անոնց  
և նոյն խնդրոց համար անոնց  
կարծիքը կուզէ :

Վիճակաւոր եօթն Եպիսկոպո-  
սունք կը գումարին ի ժողով —  
1867 սեպտեմբեր 19 — , և առ  
Պատրիարքն ուղղեալ տեղեկա-  
գրով մը իրենց կարծիքը կը յայտ-  
նեն , որոյ համառօտութիւնն է  
սա հետեւեալը :

« Հաս որում Աղթամարայ և

Մտոյ կաթնուղիկստական խնդրոց  
նկատմամբ Պօլտոյ Եկեղեցական  
Համագումար ժողովն արդէն իւր  
վճիռը առւած է, ուստի այդ  
վճուոյն վրայ կարծիք ուղելը ի  
վիճակաւոր Եպիսկոպոսաց՝ ա-  
ւելորդ կը համարինք, և եթէ  
դործադրութեան մասին դժուա-  
րութիւններ ծագած են՝ ՀԱՐԿ Է  
ԳԻՍԵԼ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱ-  
ԿԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ :

Ասկից վերջը Պատրիարքական  
առժամանակեաց խառն ժողովն(\*)

---

(\*) 1866 թուականի Ազգային վարչութեան կրօնական (սրոյ Համաձայն գտնուած է և Պատրիարքը) և Քաղաքական ժողովոց միջև իրաւասութեան խնդիր մը կը ծագի, ոչք պատահաւոր Ազգային Սահմանադրութիւնը

Աղթամարայ և Սոսոյ խնդիրներն  
ինքնին չուժելու կը ձեռնարկէ  
(անս իսան ժողովոյ 1867 սեպ-  
տեմբեր 22 ի և 29 ի և Հոկտեմբ-  
րեր 6 ի նիստերու արձանագրու-  
թիւնքք) , բայց չյաջողիր , ուս-

---

Պետական Հրահանուս արտատալ փե-  
րաքննութեան կենթարկի միսն զա-  
մայն և կը դադրի ի 20 մարտի 1866,  
և Վարչական սահմանադրացէս ընա-  
րեալ ժողովոց անդ՝ Բ. Իսան և Պատ-  
րխարքին ընտրութեամբ Հեւոզեան  
ձէկ քանի իսան ժողովներ միմեանց  
կը յաջորդեն՝ մինչեւ 1870 թուական-  
նին սկիզբը , որ ատեն Ազգային Վար-  
չութիւնը Սահմանադրացէս կառմելու  
և Ազգային ատանին գործերը Սահ-  
մանադրութեամբ անտեսելու կը — — — — —  
փերասին պետական Հրահանուս կը փե-  
րողանանայ ատ Ազգե , այն պայմանա-  
որ փերաքննութիւնը շարունակուի :

տի և կը պարտաւորի ներկայա-  
ցրնել զանոնք Ազգային Ժողովոյ  
1867 հոկտեմբեր 20 ի նիստին :

Արդ-յի՛ն Ընդհանուր Ժողով

1867 Հոկտեմբեր 20

Առ ժամանակեայ Խառն Ժո-  
ղովոյ ատենապետ Վսեմ Սէր-  
փիլէն Էֆէնտի՝ Ազգային Ժողո-  
վոյ այս նիստին՝ յայտնելով որ  
Ազգային Ժողովէն կազմեալ նոր  
Յանձնաժողովը լուծուած է՝ կա-  
ռաջարկէ որ որիչ նոր Յանձնա-  
ժողով մ'ընտրուի, որ քննէ Ազ-  
Թամարայ և Սոսյ խնդիրներն և  
սեղեկագիրք մը բերէ : Ահա իւր  
խօսքերը :

Ասկից առաջ Ընդհանուր Ժո-  
ղովը Յանձնաժողով մը կազմեց  
կաթուղիկասական Աթոռոց յա-

բարերութեան սահմանները ( այլ  
և Ազխամարայ և Սոսյ կաթու-  
ղիկասական ընտրութեան եղա-  
նակը ) որոշելու պաշտօնով : . . .  
Յանձնաժողովը գործ մը չկրցաւ  
յառաջ բերել : Ասոր տեղ նոր մը  
կազմելու է . . . որ այս կա-  
րեւոր խնդիրը քննելու գրադի :  
Քանի մը գիտողութիւններ կրլ-  
լան անդին ասդին՝ որք ուշա-  
գրութեան արժանի են : »

« Ա . Թեմական իրաւունքները  
յարգել ժողովրդային գրգռ-  
մանց առաջ քը առնելու հա-  
մար : »

« Բ . Քննել թէ Աջապահեան  
դերդաստանը ունի՞ այնպիսի ա-  
ռանձնաշնորհութիւն մը՝ որ մին-  
չեւ անդամ իւր ցեղէն անարժան  
մէկն ալ ըլլայ Ազգը պատուէ

զանի , և Աթոռը յանձնէ անոր : 7

Ձ Գ. Աղթամարայ Աթոռը՝ Էջմիածնի կամ Գօլսի Գատրիարքութեան , և Սիօք՝ Երուսաղէմի Գատրիարքութեան հետ միացընել :

« Խառն ժողովք Ընդհանուր ժողովին կը թողու վատահալթեան արժանի Յանձնաժողով մը կազմել , որ այս դիտողութիւններն իւր մարին առջեւ ունենալով օրինաւոր որոշում մը ընէ :

Ազգային ժողովք բաւ առաջարկութեան վսեմ . Ստեփանի Փաշայի Ասլանեան , աւելորդ համարելով նոր Յանձնաժողովոյ մը կազմութիւնը , Աղթամարայ և Սառյ խնդրոց վրայ ծրագիր մը բերելու պաշտօնը կը յանձնէ Խառն ժողովոյն , որ կընդունի :

( Տես անունագրութիւն Ազգ. Ժողով. 1867 հոկտեմբեր 20ի նիստին, անտիպ ) :

Խառն Ժողովն Ազգային Ժողովէն իրեն յանձնարարեալ պաշտօնն աւարտելով Ազգամարտի և Սոսի ինդրոց համար կանոնագրութիւն մը կը ծրագրէ, և հանգերձ իւր տեղեկագրով կը տրտագրէ զայն, և կը պատրաստուի հանել յատեանն Ազգային Ժողովոյ, ( տես Խառն Ժողովոյ 1867 նոյեմբեր 17ի, և 1868 յունվար 19ի և փետրվար 23ի նիստերուն արձանագրութիւնը ), բայց չյաջողիր, և կանոնագրութիւնը կը մնայ իւր ծրագրեալ փնտկին մէջ, որ ահա :

ՏԵՂԵԿԱԳԻԹ

ՍՈՈՅ ԵՒ ԱՂԹԱՄԱՐԱՅ ԱԹՈՍՈՅ  
ԿԱԹՈՒՂՈՍՈՍԱԿԱՆ ԽՆԴՐԱՅՆ

« Սոյ և Աղթամարայ կաթու-  
ղիկոսութեանց խնդիրը որ քանի  
մը տարիներէ ի վեր ի կախ, Ընդ-  
հանուր ժողովդ Խառն ժողովիս  
խնձնեց, և ահա Խառն ժողովս  
այ իր գիտողութիւնները և իր  
առաջարկութիւն իր որոշումները  
այսօր ժողովոյդ կը ներկայացնէ .  
ձեզ կը մեայ ուրեմն անօրինել  
ինչ որ անկ է : »

« Կը յիշեցնեմ ձեզի որ եթէ  
մինչեւ հիմայ քանի քանի որո-  
շումներ ի գործ չդրուեցան կամ  
գործադրուելու ատենն գժուարու-  
թեանց հանդիպեցան, ասոր մի-  
մեակ պատճառը սա է որ ա-  
սանկ փափուկ խնդրոյ մը մէջ

որոշմանց հաստատուն հիմ մը չէ  
փնտառած . Ընդհանուր ժողո-  
վը եթէ կուզէ Ազգային իրա-  
ւանց ակոյեան ու պաշտպան կե-  
նալ, պէտք է որ նախ ինք յար-  
դել գիտնայ որ և է իրաւունք .  
նոյնը կրտսեմք Համագումար Եկե-  
ղեցական Ժողովոյն . պարզեմք  
մեր խօսքը . Սոյ կաթուղիկու-  
սին քնարութիւնը՝ ըսա որում  
օրինաւոր կերպիւ չէ եղած, երբ  
Եկեղեցական դասը անիկայ ապ-  
օրինաւոր կը հրատարակէ, և  
ոչ մէկը զուրցելիք մը ունի ա-  
սոր . բայց քանի որ նիկողայոս  
Եպիսկոպոսը Եկեղեցական դա-  
սէն դուրս չէ ձգած և զինքը թէև  
ամբաստանութեան տակ իրք  
Առաջնորդ ու Հովիւ անգին և  
ասգին զրկած է, նոյն ամբաս-

տա՛նու թեանց վրայ հիմնելով ըզ-  
սոյն Եպիսկոպոսը կաթուղիկո-  
սութեան անարժան հրատարա-  
կելու իրաւունքը շունի : »

« Եմանասէս Ընդհանուր ժողովը՝ թեմականաց իրաւունքը մէկ գիէն ճանչնալով, միւս կողմէն առանց անոնք յարգելու սոյն կաթուղիկոսութեան ընտրութիւնը ուղղակի ինք ընել ուղեւը թէ և մէկ անգամի համար ալ ըլլայ, արդարութեան սկըզբանց համեմատ չէ : Ուստի այս գիտողութեանց առջին աւելի արդար համարեցինք խնդիրը այս որոշումներէ և վճիռներէ զատել, և բնաւ որոշում չեղած համարիլ, և վարուիլ ինչպէս որ կարելի է վարուիլ թէ որ խընդիրը այսօր երևան ելած ըլլար : »

Նախ՝ նիկողայոս Եպիսկոպոսը կաթուղիկոս շեմք կրնար ճանչնալ . որովհետև իր ընարութիւնը օրինաւոր կերպիւ չէ եղած . այս խնդիրը արդէն լուծուած է ինքնին , որովհետև իր հրատարականք տուած է նոյն իսկ նիկողայոս Եպիսկոպոսը :

Երկրորդ՝ Սոյ Աթոռը որ երբեմն հակառակ ատու է երբեմն հաւասար ատու ճանչցուած է նոյն իսկ Մայր Աթոռոյ կողմէն<sup>(\*)</sup> , մեզի համար մեր Եկեղեցական պատմութեան մէկ երեսն է . ուստի դոյն կը յարգեմք . կը բաւէ որ Մայր Աթոռոսոյ և Սոյ Աթոռոյ մէջ մեր Ե-

---

(\*) Մայր Աթոռոյ կողմէն էրբէք հաւասար ատու ճանչցուած չէ ոչ Ման և ոչ Ազգամարք :

կեղեցւոյ ոգւոյն համեմատ յարարաբերութիւններ հաստատուին ըստ սրում Էջմիածնայ Աթոռարդէն Ազգիս ընդհանրութեան կողմէն Մայր աթոռ ճանչցուած է, ուստի Մայր և Էջմիածնայ Աթոռներուն մէջ ընդհանրութիւնը արդէն գտնակարգութիւն մը ճանչցած է։ Այս երկու Աթոռներուն մէջ և Ազգիս այս աթոռներու հետ յարաբերութեանցը գալով, կրտսէք որ Եաբի աստններս այս յարաբերութիւնները հաստատելու սկզբնաւորութիւն մը եղած է։ Էջմիածնայ Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ Մայր թեմականները քուէ տուած են, և Էջմիածնայ թեմականները սոյն քուէները ընդունած են ուրեմիւր քարոյարարէս երկու Ա.

թո՞ղ մէկզմէկու արդէն կապ-  
 ուած են (\*). ասանկ կը տես-  
 նեմք մեք ինդիրը: Ուստի կը  
 մնայ միայն երկու Աթոսոյ մէկ-  
 զմէկու հետ ունենալու յարա-  
 բերութիւնները որոշել... ասի-  
 կայ մեր Եկեղեցական աւանդու-  
 թեանց յարմարցնելու աշխարհած-  
 եմք, ինչպէս որ կանոնագրու-  
 թեան մէջ կը տեսնուի:

Գրեմք միւս շարքերու մէջ

(\*) Սոյ թեմականաց ամենայն Հա-  
 յոց Հայրապետական ընտրութեան  
 մասնակցիք, սղջամիտ արամարանու-  
 թեամք, Հայաստանեայց Ա. Եկեղեց-  
 ւոյ Հայրապետին հողևոր իշխան-  
 և իշխանութեան իրենց վրայ իսկ Կ-  
 Բ-Ն-ԻՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ և եւս իրենց  
 ըԲ Ն-Ի-Ն իշխանութեանք ԸՈՒՄ ԿԸ  
 ՅՈՒՅՆԷ, և ոչ թէ անոնց ընդ Մայր Ա-  
 թոսոյ Բ-Բոյսդե կողմէն իշխան միայն:

« Երբորդ՝ Ստոյ Աթոռը թա-  
փուր սեպելով, կը մնայ հոն տե-  
ղակալ մը գնելով, թեմական-  
ներէն ուղել ըսա սրոյման ընդ-  
հանուր ժողովիդ, որ երեք ա-  
նուն ցուցընեն, սրոյ արժանա-  
ւորութիւնը խառն ժողովին կող-  
մէն քննուի, Ընդհանուր ժողովը  
լուսաւորելու համար, և յետոյ  
ներկայանան Ընդհանուր ժող-  
ովիդ, որպէս զի մէջէն մէկը կա-  
թուղիկոս ընտրէք. ընտրութեան  
գործողութիւնը լիննալէն ետքը  
կաթուղիկոսէն ուզուի նոյն բա-  
րեկարգութիւնները որ վանքե-  
րու գլուխ գտնաւողներէն ուղե-  
լու սովորութիւնը ունիմք ։ »

« Զորբորդ՝ Աջապահեանց ցեղը  
որ ժամանակէ մը ի վեր Ստոյ կա-  
թուղիկոսներուն աղբիւրն է ե-

ղամ, կորուսած բլլալով իր հան-  
գամանքները, Սոյ կաթուղիկու  
բլլալու յատկութիւնը Հայաս-  
տանեաց բոլոր եպիսկոպոսաց կը  
վերաբերի ըստ մեզ:

Ահա մեր գիտողութիւնները,  
և ահա այս գիտողութեանց հա-  
մեմատ մեր առաջարկած կանո-  
նագրութիւնը:

ԱՌՆՁԱՐԿՈՒԹԻՒՆ

Սոյ կաթուղիկուր կրնորուի  
իրեն միճակացիներէն և Պօլսոյ  
Ընդհանուր ժողովէն հետեւեալ  
կերպիւ:

Երբ կաթուղիկուր վախճանի  
կամ անտար թախար գտնուի,  
Պօլսոյ վարչութիւնը հան եպիս-  
կոպոս մը կը ղրկէ կոնդակա իրը  
տեղակալ, որն որ հրաւեր կը

գրէ բոլոր վեհակայիններուն թէ՛  
Եկեղեցական թէ՛ աշխարհական,  
որոշեալ ժամանակի մէջ երեք ա-  
նուն յուցընեն կաթուղիկսու-  
թեան համար Հայաստանեայց Ե-  
պիսկոպոսներուն մէջէն : »

« Սոյն բաւէները Սոյս միարա-  
նից ներկայութեան տեղակալը  
կը համրէ և երեք առաւելա-  
զոյն բաւէ ստացողները կաթու-  
ղիկացոյ կը հրատարակէ : »

« Տեղակալը ստորագրելով բը-  
ռուէ համարը, բուէթղթերուն հետ  
մէկ տեղ կը դրկէ առ Սըրբազան  
Պատրիարքն Պոլսոյ : »

« Այս ընտրելիներուն արժա-  
նաւորութեանը վրայ կրօնական  
և Քաղաքական ժողովները իրենց  
կարծիքը ապէն ետքը կը ներ-  
կայանան Բնդ հանուր ժողովոյն »

որ անոնց մէջէն գաղանի քուէ-  
արկութեամբ մէկը կընտրէ և  
զնա կաթ ուղիկոս Տանն կիլիկիոյ  
կը հրատարակէ :

« Ընտրեալին՝ Սրբազան Պատ-  
րիարքը պաշտօնական կերպի-  
րմաց կուտայ, նոյնպէս և Սույ  
տեղակալին : »

« Անմիջապէս նորընտիր կա-  
թողիկոսը իր թեմը երթալով  
տեղակալին առջին կամ հոս գա-  
լով Էնդհանուր Ժողովին առջին  
հանդիսաւոր ուխտ կընէ, և ապա  
կօծուի ըստ ժաղեմի սովորու-  
թեան : »

Բ.

« Նորընտիր կաթողիկոսը ան-  
միջապէս իր օժմանէն ետքը պար-  
տաւորեալ է օրհնութեան գիր

գրել կեդրոնական վարչութեան,  
 և բարեկամական նամակ ուղղել  
 առ կաթողիկոսն Սայր Աթո-  
 սոյ, իրեն իմաց տալով բոլոր ե-  
 ղելութիւնը, և ըն :

Գ.

« Սոյ կաթողիկոսը պարտա-  
 ւորեալ է յիշել սուրբ Պատարա-  
 գին մէջ էջմիածնայ կաթողիկո-  
 սին անունը, բայց երուսաղէմի  
 և Գոլտոյ Պատրիարքներն ալ և  
 Հայաստանեայց բոլոր եպիսկո-  
 պոսունք և Քահանայք փոխա-  
 դարձ պարտաւորեալ են յիշելու  
 էջմիածնայ կաթողիկոսին ան-  
 ուանը հետ Սոյ կաթողիկոսին  
 անունը՝ էջմիածնայ կաթողիկո-  
 սին հաճութիւնն առնելով :

Գ .  
« Էջմիածնայ կաթուղիկոսը մի-  
նակ իրաւունք ունի՝ կաթուղի-  
կոս ամենայն Հայոց ստորագրել :  
Իսկ Սոոյ կաթուղիկոսը՝ Սոոյ կա-  
թուղիկոս կամ Տանն Կիլիկիոյ : »

Ե .

« Սոոյ կաթուղիկոսը պարտա-  
ւորեալ է ի քաղաքական յարա-  
բերութիւն ունենալ Պօլսոյ Վար-  
չութեան հետ . ինք կրնարէ իր  
թեմերուն առաջնորդները (\*) ,  
բայց պէտք է որ վարչութեան  
ընդունած անձեր ըլլան : »

Զ .

« Սոոյ կաթուղիկոսը իր վի-

---

(\*) Ասի Առաջնորդական Վիճակաց  
սահմանադրական Էրեւանի քանարա-  
րել ըսել է, բայց ինք բախանդակ նշա-  
նակութեամբ :

ճակին համար կորհնէ Միւռոն ,  
և կը ձեռնադրէ պէտք եղածին  
չափ Եպիսկոպոսունք , է . յօդ-  
ուածին արայմադրութեանցը հա-  
մեմատ : Եւ որ ձեռնադրուածն  
լիցի . . . . .  
Երբ էջմիածնայ մէջ ամենայն  
Հայոց կաթուղիկոսին հովանաւո-  
րութեանը տակ բոլոր Հայաբնակ  
դաւառներէ ընտրուած Եպիսկո-  
պոսներէ բաղկացեալ Միւնհողոս  
մը կազմուի , որ և է Եպիսկո-  
պոսի ձեռնադրութիւն . թէ էջ-  
միածնայ կաթուղիկոսի ձեռամբ  
և թէ Սոսյ կաթուղիկոսի ձե-  
ռամբ , պէտք է սոյն սիւնհողո-  
սին քննութեամբը ըլլայ : Ասանկ  
Միւնհողոս մը կազմուածին պէս  
Սոսյ կաթուղիկոսը պարտաւոր-  
եալ է իրեն Եպիսկոպոս ձեռ-

նադրելիք անձերը այն Սիւնհո-  
ղոսին քննութեանը ներկայացը-  
նել, և մինչև որ Սիւնհոգոսէն  
թողաւու թիւն չըլլայ, ցանոնք  
չձեռնադրել: Քանի որ այս Սիւն-  
հոգոսը չի հաստատուի, Սոսյ  
կաթուղիկոսը արածնութիւն ու-  
նի իրեն միաբանութեան խոր-  
հրդին քննութեանքը արժանա-  
ւոր դատած անձերը իրեն վե-  
ճակին պիտոյիցը թաւով Եպիս-  
կոսոս ձեռնադրել: Սակայն զն  
երկու պարագայիս մէջ ալ,  
պարտաւորեալ է ձեռնադրու-  
թենէն ետքը էջմիածնայ կաթու-  
ղիկոսին իմաց տալ բարեկամա-  
կան նամակաւ և թուով ամեն ինչ  
անքաղակ անկողնի զն սարձնելի  
Սոսյ կաթուղիկոսը պարտա-  
ւորեալ է ունենալ իր մտալ չորս

Եւսիակոսոսէ բազկացեալ Խոր-  
հուրդ մը, որուն պաշտօնն է կը-  
րօնական խնդիրները լուծել, բայց  
ի անոնցմէ որոնք սոյն խորհրդին  
ձեռնհասութենէն վեր ըլլալուն  
պէտք է ներկայացուն ին Էջմիած-  
նայ Երեւմտխանական Սինհոգո-  
սին, երբ հաստատուի : »

« Սոյ կաթուղիկսը պարտա-  
ւորեալ է մասանդաւորաց կրթ-  
թարան մը ունենալ փանքին մէջ,  
որուն հակողութիւնը իրեն պա-  
հելով, մատակարարութիւնը պի-  
տի յանձնուի, ինչպէս ուրիշ փան-  
քերու մէջ՝ փանական Տնօրէն խոր-  
հրդի մը : »

« Եր գիտողութիւնները կը  
վերջացնենք ըսելով որ Ազխանա-  
րայ աթոռայ մասին՝ պարտան

ընելիքը հոն տեղակայ մի դրկել,  
և կաթուղիկոսը հոս բերել տա-  
լով իրեն թեմի առաջնորդու-  
թիւնները բարեկարգել, և Աղ-  
թամարայ վիճակը եղածին շափ  
բարուքել, և ըն. ահա հիմակուան  
գործողութիւնները ասոնք պէտք  
է ըլլան. կաթուղիկոսը հոս դա-  
լէն ետքը Աթուոյ մասին ինչ  
անօրէնութիւն որ խոհեմութիւնը  
կը խորհրդէ իր բաշոր պարագա-  
ներովը որոշել, ի գործ դնել : »

« Գամբ Նիկողայոս Եպիսկոպոս-  
սին համար. այսօրուան ընելիքը  
գինքը Սիա չի դրկել մինչեւ որ  
ընտրութեան գործողութիւնները  
լմնան : »

Գրեթէ ըստ ամենայն մասանց  
ըննադատելի, միանգամայն և ան-  
գործադրելի սոյն կանոնադրու-

Թեան ծրագրոյն տպագիր մէկ  
օրինակը կը հասնի ի Ս. Էջմիա-  
ծին առ Հայրապետն ամենայն  
Հայոց, որ մանրակրկիտ քննու-  
թեամբ կը մերժէ զայն առ Տ.  
Պօղոս Բ. Պատրիարք ուղղած սա-  
հետեւեալ ազդարար կոնդակաւն.  
« Գէորգ ծառայ Քրիստոսի և  
անհասանելի կամօքն Աստուծոյ  
Եպիսկոպոսապետ և կաթողիկոս  
ամենայն Հայոց, ծայրագոյն Պատ-  
րիարք համազդակաւ նախամե-  
ծար Աթոռոյ Առաքելական Մայր  
Եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջ-  
միացի . »  
« Սրբազան Պատրիարքի կոս-  
տանդնուպօլսոյ Պօղոս Արքեպիս-  
կոպոսի սիրելի եղբօր մերում  
Քրիստոսական սուրբ ողջունիւ  
Ծանուցանեմք . »

« Զգիտողութիւն Մասնավոր  
վայն ( Խառն ժողովայն ) և գու-  
նավարկութիւն նորա առ Երես-  
փոխանական ժողովն և Պօլսոյ,  
որ վասն ընտրութեան կաթու-  
ղիկոսացն Սսոյ և Աղթամարայ,  
ընթերցան առաջի մեր, և ոչ  
սակաւ գարմացուցին զմեզ —  
կռն և զ—ըն ի—հիւր—ըն—ըն—ըն որ  
ի նմա ի գիտողութիւն հասա-  
րակութեան եղեալ էին : »

« Բանդի Ազգ մեր փոխանակ  
բանուարոյ խորախորհուրդ և հե-  
ռատեա գատողութեամբ ի գա-  
րաւոր ժամանակաց անտի դան-  
վաւեր համարեալ զփնասակար  
իշխանութիւնն այն, որ սկսա-  
լաւուրց անտի Գրիգորի Մուսա-  
բէկեանոյ, և փոխանակ միաւո-  
րելոյ գրաժանեալ անդամն ի մի

գլուխ Ազգի և Եկեղեցւոյ ի շին-  
մութիւնն նորին և ի հաստատու-  
թիւնն, զվնասակարսն ազգային  
բարեաց սասանել խորարմատ կա-  
մին կանգազել, ոչ ի միա բերե-  
լով զսխառէր Աւետարանին Վր-  
բիառոսի «Տուն բնութանեալ յանձն  
խորաների սքանազայն յառաջ  
«Սրբազան Եզրայր, զուր ինք-  
նին քաջագէտ էք Ազգային պատ-  
մութեանց և Եկեղեցական սուրբ  
խաւանց - տեսեալ և ընթերց-  
եալ էք ուրեք, եթէ ժողովուրդք  
վիճակեալ Մայր Աթոռոյն սրբոյ  
Էջմիածնի ընդ որս է և Հայագգի  
ժողովուրդ մեծի Մայրաքաղա-  
քից, եղեալ իցեն երբէք ձեռն-  
երէց ընտրել և հաստատել զկա-  
թուղիկոսունան Սույ և Ազժա-  
մարայ, ոչ գիտէք զաւուրս փի-

խաղաղութեամբ կաթառնուցանուի, որ էր  
յամբ Տեառն 1654, հակաթուքն  
այնոքիկ իբրև ապստամբք հըն-  
չակեալ կային ամենայն ուրեք,  
և ոչ երբէք կարէին համարձակ  
մուտ գործել ի վիճակս Մայր Ա-  
թուոյ Ս. Էջմիածնի, ոչ յայն-  
ժամ և ոչ յետ նորա ամենեկին,  
Զի թէպէտ եղաւ անդանօր յե-  
րուսաղէմ դիտա ի միջի անել  
սէր առ մսկեանս, և այն յողումս  
համադղեաց, բայց ոչ իրաւա-  
սութիւն հաւատար, փասն զի այլ  
է պայման սիրելոյ զմիմեանս և  
այլ իրաւասութիւն իշխանու-  
թեանս, որ Ս. Էջմիածնի քաղաքս  
և Տեառն և լուեալ իցէք, և  
թէ նորա փաստացեալ իցեն ար-  
տաքոյ սահմանափակեալ վիճակի  
իբրևանց, ընտրել զԵսլիակոսար-

սունս Ս. Մայր Աթոռոյս ի կա-  
թուղիկոսութիւն ինքեանց : Լք-  
ուեալ իցէք, զի ազգամլասող այդ  
հաւասարութիւն, զոր ճղնի յանձ-  
նածողովդ կերպաւորել ի միջի  
երկուց կաթուղիկոսաց, օրինա-  
ւորին ասեմ և ապօրինաւորին,  
եթէ իցէ երբէք եղեալ, և որ  
առաւել զարմանալին է, զկնի յի-  
շատակութեան անուան ընդհա-  
նուր կաթուղիկոսին ամենայն Հա-  
յոց Պատրիարքունքն Երուսաղե-  
մայ և Կոստանդնուպօլսոյ, որք  
են Փոխանորդք նորա, Եպիսկո-  
պոսակցօք հանդերձ յիշել պար-  
տաւորեացին և զանուն կաթու-  
ղիկոսացն Սոյ և Աղթամարայ,  
քանզի մի և նոյն է ասել թէ  
Ընդհանուր կաթուղիկոսն ամե-  
նայն Հայոց պարտաւոր է յիշա-

տակել և զանտանա նոցա : Արդ  
գուք ինքնին դատեցէք ողջմտու-  
թեամբ , ոչ ապաքէն այս ամե-  
նայն ընդդէմ են Եկեղեցական  
իրաւանց , նա մանտանդ և սխա-  
տա պառակտման աղգային մի-  
ութեան , յարմէ անվրէպ են սոս-  
կաթի մնաս և անգարմանելի կո-  
րուսա ողորմելի Ազգիս :

« Բաջ իսկ դիտէք , զի քու-  
թին Ազգիս յաւուրց անաթի Լու-  
սաւորչացն մերոց Թագէտի և  
Բարթուղիսէտի , և Առաքելա-  
նման Հօրն մերոյ Արքայան Գրի-  
գորի Լուսաւորչի ունէր զմի և եթ  
Պատրիարք Եպիսկոպոսապետ և  
Կաթուղիկոս յաջորդարար ժա-  
մանեալ ցկաթուղիկոսն Արքա-  
համ յամի Տեառն 600 , յորում  
ժամանակի միայն Յոյնք թշնա-

մարար վարեալք ընդ Հայս կա-  
ցուցին ի բաժնի իւրեանց հակ-  
աթոս կաթուղիկոս զԵպիսկոպոսն  
Յովհաննէս, ընդ որ (ընդ բա-  
ժանումնս այս) ոչ սակաւ կա-  
րեվէր խոցեցաւ Ազգն մեր, և  
խռովեցաւ, և բարձաւ խռովու-  
թիւնն այն՝ միայն մահուամբ նո-  
րաւ և եւ եղև դարձեալ միութիւն  
և խաղաղութիւն: Եւ միութիւնս  
այս և խաղաղութիւնս յաջորդա-  
բար յարատեւեաց ցաւորս Գրի-  
գորի վկայասիրի, յորս էր Ազգ  
մեր մի հօտ և մի հովիւ: Սակայն  
անդարձ բացակայութիւն նորա և  
ժամանակին ալեկոծութիւն յե-  
րեսաց բարբարոս ազգաց, եղևն  
պատճառ, զի քեռորդի նորա  
Բարսեղ ըստ թախանձանաց ան-  
աէրունչ և հարստահարեալ ժո-

դավրդոց ձեռնադրեցաւ կաթուղիկոս կողմանցն արևելեան յամի Տեառն 4082 : Այլ ասդա յետ մահուան նորա դարձեալ միացաւ ազգութիւնն ընդ միով գլխով առանց որ և իցէ բաժանմանց մինչեւ յԳրիգորն Մուսարէկեանց , որ առանց հաւանութեան Արևելեան շորից օրինաւոր Աթոսոց (\*) ձեռնադրեցաւ կաթուղիկոս , զոր մարթ է կոչելանելաւեր , ուստի հարկադրեցան լրութիւն ազգիս և օրինաւոր հովիւք նորա , յետ այնքան պան-

---

(\*) Այս Աթոսներն են Բջնոց , Հաղբատոց , Քաղէսի վանուհ ( յարտաշ ) և Ստաթեու կամ Տաթեու : Հայրապետական ընտրութեան համար այն այս Աթոսոց Առաջնորդաց հոյն հոսանքիւնց հարկ համարուած

դրխառութեան և տարադրութեան  
փոխադրել յիսկական օթոս իւր-  
եանց ի սեպհական զահ սրբոյն  
Գրիգորի մերոյ Լուսաւորչի ի  
1440 (\*) ամի Տեառն, և որք կա-  
ցին և մնացին արտաքոյ այսր ի-  
րաւանց յամառեալք ի կամս իւր-  
եանց և ի խորհուրդս, անուա-  
նեցան հակաթոսք և ապստամբք  
մինչև ցայսօր ժամանակի : »

« Աւրեմս արժան է Մանա-  
ժողովոյդ սիրելի որդւոց մերոց  
և սեպհական ժողովրդոց Մայր

---

և որչաւած էր իբրև կանոն՝ Ազմա-  
մարայ Տ. Դաւիթ Ապիսկապոս Թոս-  
նիկեանի ապստամբութեան ամի ի  
1114 թուականին ի Սեառ լեառն գու-  
մարեալ ազգային Եկեղեցական ընդ-  
համար ժողովոյն մէջ ու կայ յամսոյ

(\*) Քիչքը 1441 : զմառա զմնաս

Աթոռոյս Արքայ Էջմիածնի գալ  
յայտպիտի անտեղի խորհուրդ ըզ-  
գարևոր ժամանակօք հակաթուան  
և հակառակսն ընդհանուր գըլ-  
խոյ Հայաստանեայց Ելեղեցւոյ  
ընդգէմ ամենայն կանոնաց և ի-  
րաւանց, մանաւանդ ի քակտումն  
Ազգային միութեան և հետեւա-  
պէս ի կործանումն նորին ընա-  
րել, անօրինել և համարել իբրև  
վաւերական, և զանուն նոցա  
յիշատակել ի Պատարագի, և ճա-  
նաչել զնոսա հաւասար այնպէս  
մինչեւ բարեկամական թղթովք  
միայն բերել առ ընդհանուր կա-  
թուղիկոսն ամենայն Հայոց և ոչ  
հզատակութեամբ ։ »

« Եթէ օրինաւորութեամբ ըս-  
կըսեալ կաթուղիկոսունքն Ազ-  
ուանից առանց հզատակութեան

և ձեռնադրութեան Հայոց Հայ-  
րապետի անվաներ համարեալ  
լինէին, որքան եւս առաւել  
ապա Սոյն և Աղթամարայն :  
Եւ եթէ այս կանոն, որ ի վա-  
ղընջուց հաստատեցաւ, ոչ պա-  
հեցցի անխախտ, միութիւնն բա-  
ժանի անշուշտ ի բազումս, յորմէ  
և կործանումն Ազգի, ուստի հան-  
ճարեղ նախնիք մեր զգուշացան  
յամենայն գէպս : »

« Բա՛ջ գիտէք, զի երջանիկ  
կաթողիկոսունքն նախորդքն մեր  
ի սաստկագին սասանութեանց  
Հայաստանի յերեսաց բռնակա-  
լաց թողին զսեպհական գահ և  
զԱթոռ Ս. Գրիգորի մերոց Լու-  
սաւորչի և պանդխտեցան յարեւ-  
մուտս, որպէս գրէ Ներսէս Նը-

նոր հայի յասելն « Ա. II եմք իբրև  
զայժեանն յորսորդաց և ի շանց  
փախուցեալք ի քարանձաւիս այս  
ընակելոյ » ար տարակացու թիւն  
իւր ի սեպհական Աթոսոյն փա-  
խուստ անուանէ և զտեղին բը-  
նակութեան քարանձաւ և զու-  
մենայն կեանս իւր գմեւայ պուն-  
դրխտութիւն, որպէս տեսանի ի  
բազում էջս ընդհանրական թրգ-  
թոց իւրոց : »

« Յետ այսորիկ իակական Ա-  
թոս և գան Հայրապետական  
մեաց թափուր բոս ամենայնի ի  
Հայաստանի, և կաթուղիկասու-  
թիւն ի բազում ամս յաւարու-  
թեան յամենազգալի ցաւ սրտի  
երջանկայիշատակ նախնեաց մե-  
րոց իշխանաց և հոգեւորականաց,  
սակայն և այնպէս լաւ համարե-

ցանն նորա ի դառնազէտ վշտի  
այն և յանտանելի նեղութեանց  
ակնկալու մնալ դարձի նոյն իշ-  
խանութեանն ի սեպհական տեղի  
գահու իւրում, քան զայլ ոք ևս  
ընտրելով զմիութիւն հոգեւոր  
իշխանութեանն բաժանել և կոր-  
ծանել զընդհանրական զօրու-  
թիւն նորին, և ածել միանգա-  
մայն մտաս անձանց եւ համայն  
Ազգիս : Ահա այսպէս եղեւ յի-  
շատակաց արժանի խորհուրդ և  
մեծահանճար հեռատեսութիւն  
հոյակապ եւ հայրենասէր իշ-  
խանաց և հոգեւորականաց յայ-  
նրմ դարու : »

« Այլ գուցէ և այժմ, որք  
հետամուտք լինին յայդ խոր-  
հուրդ Ազգային տաժանելի բա-  
ժանման, շեն անխորհրդաբար

և աննպատակ բերեալ ի դոյն, և ո՛չ առանց ազգօգուտ կարծեցեալ կշռադատութեան իրիք, գուցէ և նուազ չարիս համարին որ ի ներկայ պառակտմանէ մարմնոյ Ազգին քան թէ՛ գուշակել զապագային զմեծ մնաս: Այլ սակայն կարեն լաւ եւս հասուիինել ի դարաւոր ժամանակաց հետէ ի վեր երեւելոց աղեաիցն յերեսաց բաժանմանց և երկպառակութեանց բազում փորձառութեամբ զչափ առելոցն, յանդարմանելի հարուած բարոյական կենդանութեան Ազգին: . . .

. . . . .  
. . . . .  
. . . . .

• • • • •

• • • • •

• • • • •

• • • • •

• • • • •

• • • • •

• • • • •

• • • • •

• • • • •  
• • • • •  
• • • • •

Ապարէն եթէ գորա շունի-  
ցին առաջի աչաց այլ իմն ապա-  
ցոյց ճշգրտեալ, եթէ հեռատե-  
սութեան նոցա ասպարէզ տը-  
կարանայ խորհրդածութեամբ  
մակարերել զապագային զվտան-  
գըն, գէթ իբրև ի փորձոյ ան-  
ձին շօշափեացեն մտօք, զայս և  
եթ ի միտ առցեն անտարակոյս  
եթէ բաժանումն միոյ իշխանու-  
թեան յայլ ծնաւ զկործանումն  
զօտութեան, ապա և բաժանու-  
մըն միոյ ընդ հանրական հոգե-  
ւոր իշխանութեան յանկախ և  
համահաւասար իրաւամբ իշխա-

նութիւն , զիշխանութիւնն ասեմ  
Կաթուղիկոսութեան , որ ասա-  
քելահաստատ միութեամբ իւրով  
պահպանեալ է ցարդ , հեռեանս  
ունի ծնանել մնասակարս և վը-  
տանդարս :

« Եւ ահա յայս և ի սոյն կան-  
խատես լինելով , յորժամ էաք  
ի Մայրաքաղաքիդ , դժուարին  
եղեւ մեզ նեռնամուխ լինել ի  
դորժս Կաթուղիկոսացն Սոսյ և  
Աղթամարայ , միայն զիջեալ ի  
խմտանձ ներ և ժողովրդոցդ ,  
դորժս ան Ազգին խորհելով զմի-  
ջին կամեցայ ընտրել զեղանակ ,  
և համահաճութեամբ ներ հաս-  
տատեցաւ Եկեղեցական մաս-  
նամողովն ի Նն Փետրվարի 1867  
առի , որ յորհեալ զկանոնագրու-

Թիւնս առաջարկեաց, յորում  
գլխ աչսպէս :

« Ա. Կաթուղիկոսունք Սոյ  
և Աղթամարայ կրնարուին ի վի-  
ճակայնոց իւրեանց և ընդհա-  
նուր ժողովոյն Կ. Պօլսոյ, յորմէ  
կառաջարկուին առ վեհափառ  
Կաթուղիկոսն ամենայն Հայոց ի  
վարերացումն և ի հաստատու-  
թիւն : »

« Արդէն Սոյ Աջապահեանց  
ցեղէն վերցուած է Կաթուղիկո-  
սական քնարելութիւնը ընդհա-  
նուր հաւանութեամբ Ազգին,  
արժանաւորաց և եթ սեպհակա-  
նելով զայն : »

« Բ. Կաթուղիկոսունքն Սոյ  
և Աղթամարայ զօժումն կաթու-  
ղիկոսական ընդունին ի ձեռաց  
վեհ. Կաթուղիկոսին ամենայն

Հայոց ի սուրբ Էջմիածին . . . ար-  
դէն ըստ ամին օրինակի Վրաց,  
Աղուանից և Ասորաց Կաթուղի-  
կոսուներ կը ձեռնադրուէին ի  
սրբազան յաջորդէ Լուսաւորչին  
Հայաստանեայց :

« Գ . Կաթուղիկոսուներ Սոսյ և  
Աղթամարայ ըստ բազմամեայն  
սովորութեան կարող են ձեռնա-  
դրել Եպիսկոպոս, ընդունելով յա-  
ռաջագոյն դգրաւոր հասանու-  
թիւն Հայրապետին ամենայն Հա-  
յոց :

« Ձեռնադրեալ Եպիսկոպո-  
սուներ միայն իրենց վիճակին  
թեմերուն թուովը պիտի ըլլայ  
դոր և պարտ է որոշել և սահ-  
մանել :

« Դ . Կաթուղիկոսուներն Սոսյ և  
Աղթամարայ պարտին յիշել ի Ս .

Պատարագի զանունն Վեհափառ  
 Կաթուղիկոսին ամենայն Հայոց,  
 իսկ Եպիսկոպոսունք, Վարդա-  
 պետք և Քահանայք Սոսյ և Աղ-  
 թամարայ պարտին նախ յիշա-  
 տակել զանունն Վեհափառ Կա-  
 թուղիկոսին ամենայն Հայոց, և  
 յետոյ զանունն Կաթուղիկոսի մե-  
 ճակին: »

« Ե. Վեհ. Կաթուղիկոսի Ս.  
 Էջմիածնի միայն է սեպհական  
 ստորագրել « Կաթուղիկոս ամե-  
 նայն Հայոց. » իսկ Սոսյ և Աղ-  
 թամարայ Կաթուղիկոսաց կոն-  
 դակաց վերտառութիւնն պիտի  
 լինի « Կաթուղիկոս Տանն Կիլի-  
 կիոյ. » « Կաթուղիկոս Տանն Աղ-  
 թամարայ. » իսկ ստորագրու-  
 թիւն նոցա պիտի լինի « Կա-

« Ե. Վեհ. Կաթուղիկոսի Ս. Էջմիածնի միայն է սեպհական ստորագրել »

Թուղիկոս Ստոյ » « Կաթուղիկոս  
Աղթամարայ : »

« Զ. Ի կրօնական դժուարին  
խնդիրս Կաթուղիկոսունք Սը-  
սոյ եւ Աղթամարայ պարտական  
են զվերջին որոշումն ընդունիլ  
յընդհանրական Հայրապետէ ան-  
տի սուրբ Եկեղեցւոյն Հայաս-  
տանեայց : »

« Եւ զայս ասելով մի՛ ոք կար-  
ծեացէ թէ՛ զոր գրեմքս և ցան-  
կամք խափան լինել խորհրդա-  
ծութեանցդ այդոցիկ , հայի յիշ-  
խանական միապետութիւնս ինչ ,  
կամ յայլ ինչ անդոսնելի մտա-  
ծութիւն , զոր քաւ մի՛ լիցի , այլ  
զի իշխանութիւն և իրաւասու-  
թիւն ընդհանրական Աթոռոյս և  
Աթոռակալի նորա մնացէ հաս-  
տատուն ի զօրութեան իւրում

յօգուտ Ազգին , եւ մի՛ բաժա-  
նեացի ի բազումս , որոյ հետե-  
ւանքն գուշակի նոյնն , որ ինչ  
զհետ եկին ի բաժանմանց մարմ-  
նաւոր իշխանութեանց մերոց ի  
մասունս : »

« Եւ այսմ կարէ այր իւրա-  
քանչիւր հասու լինել մտօք եթէ  
լրջմտութեամբ խորհեացի , զի  
հպատակական յարաբերութիւն  
պահպանէ ի միութեան զԱզգն ,  
և ընդհանրութիւն նորա և իշ-  
խանութիւնն կեդրոնանայ ի մի  
գլուխ Հայաստանեայց Եկեղե-  
ցւոյ , յորմէ ոչ սակաւ օգուտ  
ունի ընդունել ամբողջութիւն  
մարմնոյ Եկեղեցւոյ և Ազգի , իսկ  
ընդհակառակն եթէ բաժանեա-  
ցի ի հաւասար իրաւասութիւնս  
և իշխանութիւնս տկարանայ եւ

կործանել ինքն և որ ընդ իւրեւ  
իցեն : »

« Չայս խորհել միշտ սեպուհ  
պարտաւորութիւն է մեր և հարկ  
պաշտամանս , զոր ստանձեալ  
եմք առաւել ի սէր Ազգին , իսկ  
եթէ ընդ հակառակն հանդիպեա-  
ցի , մեք ո՛չ երբէք կարեմք ա-  
ռաջի աչաց զվտանդն տեսանելով  
եւ զանկանդների կործանումն ,  
հաւանիլ և ընդունել զայն իշխա-  
նութիւնն վաւերական , և ճանա-  
չել անդամ Սրբոյ Աթոռոյն էջ-  
միածնի , այլ պարտաւոր եմք  
թողուլ ըստ առաջնոյն ի թիւս  
հակաթոռ եւ ապօրինաւոր կա-  
թուղիկոսաց , սարտուցելոց ի  
գրկաց Մօրս լուսոյ Հայաստան-  
եայց եկեղեցւոյ սրբոյ էջմիածնի  
և Աթոռակալաց նորին : »

« Եւ ձեզ և ընդ ձեռք ամե-  
նայն Եպիսկոպոսաց, Վարդապե-  
տաց եւ Քահանայից անաչառ  
պաշտպանացդ եկեղեցական կա-  
նոնաց և իրաւանց և նախանձա-  
խնդիր եղելոց Հայրապետական  
միութեան և ցանկացողացդ բա-  
րօրութեան լրութեան Ազգիս  
պատուէր հրամանի աւանդեմք,  
մի՛ երբէք խառնել կամ լինել  
ձեռներէց յայնպիսի իրողութիւ-  
նքս, որք հային ի քակտումն  
սահմանաց եւ իրաւանց սրբոց  
Հարց մերոց Հայրապետաց : »

« Յանձն առնեմք ձերումդ  
բարձր Սրբազնութեան տալ ըն-  
թեռնուլ զայս կոնդակ յամենայն  
Եկեղեցիս Մայրաքաղաքիդ և ի  
վիճակս դորա, ի լուր բոլոր  
Հայազգի հոգեւոր որդւոց մե-

բայ, և զհետեւ անայն ծանոցանելու մեզ ի անդեկութիւնս :

« Ուր լեբուք զօրացեալ Տերամբ :

ԳԷՈՐԳ Գ.

ԿԱԹՈՒՂԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յամի Տեառն 1868 ասորիլ . . .

Ի Մայր Աթոռն Արարատեան ի Ալիմիանիս ի Վարդապետական թիւակաւն

Այս Հայրապետական կանդակին պատկառման կամ անոր հետեւեալ անայն նկատմամբ անդեկութիւնս մը տուած է Պատրիարքը

Հայրապետին թէ ոչ յայտնի չէ մեզ Սակայն տանչմարիս է թէ

Խառն ժողովոյն պատրամատմ կանոնաց թեւեւ ծրագիրն որ

այն նյա Հայրապետական կանդակին նիսիս թեղած է այլ ևս

նկատուողութեան անդամ չէ առնուածով 8081 խոստով 88 4

նկատուողութեան անդամ չէ առնուածով 8081 խոստով 88 4

Ստոյ ինքնընտիր վանահայր փ-  
ճակաւորն՝ Տ. Նիկողայոս Եպիս-  
կոպոս այս միջոցին կաշխատի և  
ապարէն մեղադրելի թողաուու-  
թեամբ Ազգային Պատրիարքա-  
րանին կը յաջողի ի Սիս՝ իւր Հայ-  
րենիքը երթալ բնակելու համար  
միայն Բ. Դռան հաւանութիւնն  
ստանալ (այս մասին Բ. Դրան  
և Պատրիարքարանի միջև փո-  
խանակութեամբ պաշտօնական թղթ-  
թոց պատճէնները հրատարակ-  
ուած են Մասիս լրագրոյ 1868  
Օգոստոս 29 ամսաթիւ Օրնթեր-  
թին մէջ ակա անդ), ուստի և  
դիտութեամբ Ազգային Պատրի-  
արքարանին և հրամանաւ Բ. Դր-  
ռան՝ կաթուղիկոսական խնդիրն  
դրեալ է 23 Օգոստոսի 1868 կաղեւորի

դէպ ի Սիւս . բայց երբ ի Ռուսոս-  
թոյ կը հասնի , տեղւոյն առաջ-  
նորդ Տ . Թաղէոս Եպիսկոպոսէն  
( վախճանեալ 1875 ) իբրև Կա-  
թուղիկոս կը ճանչցուի և իբր  
այն Ռուսոսթոյի Եկեղեցական  
դասէն , և Հասարակութենէն և  
տեղական Կառավարութենէն իսկ  
մեծարանք և ընդունելութիւն կը  
գանէ , և կաթուղիկոսական շը-  
քով ու հանդիսիւ Ս . Պատարագ  
եւս կը մատուցանէ , և այս օ-  
րինակ ընթացքով կը շարունակէ  
իւր ուղեւորութիւնը և կը ժա-  
մանէ ի Սիւս :

Այս թուականին արդի ամե-  
նայն Հայոց Հայրապետը Տ . Տ .  
Գէորգ Դ . Թուրքիարնակ Հայոց  
հոգեւոր գործոց ի մօտոյ հսկե-

լու համար ի կաստանդանուպոլիս  
կ-թ--դիկ---ի-ն Ն--ի-ր-ի--թ-ն կամ  
Փ-ի-ն-դ-դ--թ-ն մնայուն գ-լ-դ-ն-ի-  
թ-ն մը հաստատել կը ձեռնար-  
կէ, ուստի և առ մեծ Եպար-  
քոս Ծուռա Փաշա յանձնարարա-  
կան գրով և առ Տ. Պողոս Բ.  
Պատրիարք ուղղեալ Հայրապե-  
տական կոնդակաւ մը առաջին  
անգամ այս պաշտօնին կը յատ-  
կացնէ զՏ. Սարգիս Արքեպիս-  
կոպոս Զաւալեան, որ Ազիժամա-  
րայ և Սոյ կաթմուղիկոտական  
խնդրոց օրինաւոր լուծմանն հա-  
մար Պատրիարքին հետ խորհրդ-  
դակցելու յատուկ պաշտօն եւս  
(տես Ս. Էջմիածնի Արարատ ամ-  
սագրոյն Ըրդ թիւը 34 Գեկա .  
1871) ունենալով հանդերձ, կը

Հասնի ի կոստանդնուպօլիս ի 13  
Սեպտեմբերի 1868 :

Ամենայն Հայոց Հայրապետին  
առ մեծ Եպարքոսն ուղղած յանձ-  
նարարական գրոյն ի պատասխա-  
նի՝ Բ. Գուռը ի ձեռն Արտաքին  
գործոց Պաշտօնեայ վսեմ. Սաֆ-  
վէթ Փաշայի սա պաշտօնագիրը  
կուղղէ առ Նա :

« 12 Նոյեմբեր 1868 »

« ՆԱՄԱԿ »

« Նորին վսեմութեան Սաֆվէթ  
Փաշայի Առ Նորին Սրբազնութիւն  
Ամենապատիւ Գէորգ Կաթուղի-  
կոս Հայոց : »

« Սրբազան Տէր »

« Պատիւ ունեցայ ընդունելու  
այն նամակը , զոր Ձեր Սրբազ-

նա թիւնք բարեհաճած էր գը-  
րել առ նորին բարձրութիւն  
Պաւլոս փաշա ի յանձնարարու-  
թիւն Գերատառի Սարգիս Զա-  
լայեանի :

« Մեծապէս ուրախ եղայ յիշ-  
եալ պատուարժան Արքեպիսկո-  
պոսը տեսնելով, և այն առ թիւ  
Չեր Սրբազնութենէն ալ լուր առ-  
նելով, որոյ անձնութեանն  
ու յաւանդին այնքան անգամ  
փորձն առած է կայսերական կա-  
ռավարութիւնը՝ այն դանազան  
եկեղեցական պաշտօններուն մէջ,  
զորս վարեցիք երբեմն Օսմանեան  
կայսրութեան մէջ նախքան զկա-  
լումն Չեր այդ բարձր պաշտօ-  
նին՝ զոր այնքան փառօք կը վա-  
րէր այսօր :

« Հետեւաբար Չեր Սրբազնու-

Թիւնը ամենէն առեցի կրեայ վը-  
կայել այն կամարեալ անգամու  
Թեան զոր բարս կրանքնը կը  
վայելեն Տաճկանսանի մէջ, ինչ  
պէս նաեւ Վաչսերական Առաւմ-  
վարու Թեան Լուսանորչական Հայ  
կրօնին նկատմամբ ունեցած մար-  
նաւոր համակրու Թեանն աւ այն  
յարգանաց որ նայն կրօնին գը-  
լուխներուն ցոյց կը տրուի Գաւթ  
Իսկ Սրբազան Տէր, տարինե-  
րով նորաբ կարանդնու արտոյ  
Պատրիարքական Աթոսը, և մշ  
նու արքան զայլս նախան ձեռքն-  
գիր ըլլարով անոր պատմուցին և  
իրաւանցը լաւ վերնահարու Ե-  
ղաբ Վաչսերական Առաւմվարու  
Թեան անայլոյլեի զգացմանցը,  
որք Չեր գգացու մեներուն կը պա-  
տասխանէին և Հարկ չըկայ ըս-

րեմն ըսել Չեզ թէ ո՛րչափ հող  
կը տանինք որ մէկը փասս մը չի  
հասցնէ այն իրաւունքներուն՝ ո՛-  
րոնք կայսրութեան զանազան  
Ֆրիատոնեայ Եկեղեցեաց սեպ-  
հականութիւնն են, և այս պահ-  
պանողական սկզբունքը Տէրու-  
թեան ներքին քաղաքականու-  
թեան հիմը պիտի ըլլայ անյեղի-  
կերպով :

« Արդ՝ Չեր Սրբազնութիւնը չը  
կրնար ուրանայ որ էջմիածնայ  
կաթ ուղիկոսական Աթոսին կող-  
մանէ Պօլսոյ մէջ նուիրակ մը  
զանուիլը չը կրնար երբէք հա-  
մաձայնիլ Կ. Պօլսոյ Պատրիարքին  
պաշտօնին հետ, որ ուրիշ բան  
չէ այլ եթէ թուրքիոյ Հայոց հո-  
գեւոր շահերուն վրայ հսկել :  
Բաց ասկէ, մինչեւ հիմա բնաւ

օրինակ մը տեսնուած չէ որ կա-  
թողիկոսին նախակը Թուրքիոյ  
մէջ բնակութիւն հաստատած  
ԸԱՄՅ, Երբեմն երբեմն Չեր նա-  
խորդներուն կողմէն զրկուած նը-  
ուիրակներուն պաշտօնն էր միմի-  
այն Ս. Միւռոնը բերել, և իրենց  
գործը տեսածնուն պէս ի Ռու-  
սիա կը վերադառնային: Այսու-  
ամենայնիւ, անոնց կարճատե-  
ներկայութիւնն ալ անպատեհու-  
թենէ ազատ չէր. ուստի հարկ  
եղաւ այս սովորութիւնն ի բաց  
Թողուլ նոյն իսկ Ազգին գան-  
դատանօք, որ խնդրած էր Էջ-  
միածնի Ս. Աթոռէն միայն Ս.  
Միւռոնն և կանգակներ զրկել,  
-74- Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՆԻՈՐՉԻ ՅԱ-  
ՉՈՐԴԱՅ օրհնութիւնները կը բե-  
րէին Թուրքիոյ մէջ գանուած

ԻՐԵՆՅ ԶՈՒԵԻՈՐ ԶՕՏԻՆ

« Զեռեարար Բ. Դուռն իր աւանդութեանց հաւատարիմ կենալով պարար կը համարի բնար որ և իցէ պաշտօն մը չը ճանչել Գերապատի Սարգիս Չարաչեանի Հայաստանեայց Եկեղեցւոյ ԿԿ-յ Վերջ-յ-յ-ճէւ ( Ի Թուրքիա միայն , և այն յանուն Հայրապետին Հայոց ) Կ. Պոլսոյ Պ-տէ-րէ-ւել : Արդարեւ Չեր Սրբազնութիւնն իր նամակին մէջ Գեր. Չարաչեանի յատկացուցած ԴՆՏՏ. ( Կաթուղիկոսական Նուիրակութեան կամ Փոխանարդութեան հոգևոր պաշտօնը ) ոչ ապարէն ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՈՒՆԵՅԱԾ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆ Է : » ( Պատրիարքը Չեր Նուիրակը կամ փոխանարդն է ի Կ. Պոլիս ,

և այս նուիրական հողեր որ պաշ-  
տանք կը վարէ) : Եւ այս մասով  
Ս. Պարտ անձին համարեցայ և  
մենայն անկե զժուժեամբ իմ միտ-  
քս Չեր Սրբազնութեան բացա-  
արել, որ անտարակոյս եմ թէ  
իբ բարձր իմաստութեամբ պիտի  
հանչնայ Բ. Դրան մերժման պատ-  
հարները : և պիտի բարեհաճի  
խելամուղ որ այս հանգամանաց  
մէջ Գերապատիւ Չարաբեանի Ի  
Կ. Պոլիս ներկայութիւնը այն-  
պիտի իրողութիւն մըն է, որ ան-  
վրէպ ցաւալի հետեւանքներ յա-  
ւա՛ղ պիտի բերէ, այնպիտի հե-  
տեւանքներ զորս Բ. Դուռը չը  
կրնար անտարբեր աչօք տես-  
նել : Եւ անտարակոյս մասով յայտն  
Բ. Դրան այս Դժուրութե-  
պէս և Կաթուղիկոսական նուիր.

բակութեան կամ Փոխանորդու-  
թեան ուրոյն ԴԱՄԱՆԻՆԻՆԻՆԻ ԲԵՏԻ  
Կ. Պոլիս հաստատութեան ԿԸ ՄԵՏԻՆԻ,  
բայց ի բովանդակ թուրքիս ա-  
մենայն Հայոց Հայրապետական  
ՓՈՒԱՆՈՐԴՈՒԹԻՒՆՆԸ ՅԱՆՁԻՆ Կ.  
Պոլսոյ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ԿԸՆ-  
ԴՈՒՆԻ, և ՊԱՇՏՈՆԱՊԷՍ ԿԸ ՀԱՍ-  
ՏԱՏԷ, որ արդէն Ազգովին որոշ-  
ուած և գրուած էր առ երջան-  
կայիշատակ Հայրապետն ամե-  
նայն Հայոց Տ. Տ. Ներսէս Ե.  
Աշտարակեցի: (Տես երես 169-  
172):

Իսկ Տ. Պողոս Բ. Պատրիարք Տ.  
Սարգիս Արքեպիսկոպոս Զալաշ-  
եանի կաթուղիկոսական Փոխա-  
նորդութեան հաստատութեանը  
մերաբերեալ Հայրապետական  
կանգակը ( թերեւս Բ. Դան

մերով մանն համար) Եկեղեցեաց  
մէջ չկարդացնէր :

Հետեւ ապէս ի Կոստանդնու-  
պոլիս Կաթուղիկոսական Փոխա-  
նորդութեան առանձին պաշտո-  
նէութիւնը շահաստատուիր, և Տ.  
Սարգիս Արքեպիսկոպոս Չալալ-  
եան կը մեկնի անտի ի 14 Յու-  
նիտի 1869 և կը վերադառնայ  
ի Ս. Էջմիածին :

Արտաքին երեւոյթով (ներ-  
քինը քննել գործոյս սահմանէն  
դուրս է) Չալալեանի Կաթուղիկո-  
սական Փոխանորդութեան պաշ-  
տոնին մէջ շահաստատուիլը, և  
Աղթամարայ ու Սոսյ՝ և այլ կրօ-  
նական և Ազգային խնդիրներ, և  
մանաւանդ Ազգ. Սահմանադրու-  
թեան վերաքննութեան պատ-

Հասան Գաղարու մը՝ Տ. Պօղոս  
Բ. Պատրիարքի պաշտօնավարու-  
թեան դէմ այնչափ դանդաղ և  
դժգոհութիւն կը գոյացնեն, որ  
մինչև իսկ ժողովրդական յուզ-  
ման կը յանգի, և ուր աւելին  
Պատրիարքը կը հրաժարի ի 17  
Յունվարի 1869 և խառն ժո-  
ղովը նայն օրը Պատրիարքական  
Տեղապահ կընարէ Տէր Աթա-  
տակէս Եպիսկոպոսը : (վախճան-  
եալ 1875)

Բ. Իւսւք Պատրիարքին հրա-  
ժարականը կընդունի, և Տեղա-  
պահին ընարութիւնը կը հաս-  
տատէ ի 27 Յունվարի, որ և  
նայն օրէն կսկսի վարել իւր պաշ-  
տօնը :

Պատրիարքական Տեղապահը  
խառն ժողովոյ որոշմամբ կը փո-

Թայ Տ. Եկեղազոս Եպիսկոպոս  
սին ի Սիս վերադարձին և անդ  
անոր ունենայիք կացութեան նը-  
կատմամբ սա Տեառեւեալ կոն-  
դակը գրկել ի Սիս և ի Թեմա-  
կան վիճակս կիցիկիոյ :

Ե Յիսուս Բրիտանոս Ժառայ  
Տէր Արիստակէս Արքեպիսկոպոս  
և շնորհիւ Սրբոյ Հոգւոյն Տեղա-  
պահ Պատրիարքական Աթոռոյն  
կոստանդնուպոլսոյ : Եորմէ Ասա-  
ուածային Սուրբ ողջունիւ և օրհ-  
նութեամբ գիտութիւն լիցի կի-  
լիկիոյ ամենայն Տիրախնամ վի-  
ճակաց, Գերապատիւ Առաջնոր-  
դաց, Հոգեշնորհ Եպիսկոպոսաց,  
Խոհեմացարդ Վարդապետաց,  
Սրբակրօն Բահանայից, Հոգե-  
սէր Իշխանաց և համայն բարե-

պաշտ ժողովրդոց սիրելեաց ձե-  
րոց ի Տէր :

« Ստեցի Նիկողայոս Եպիսկո-  
պոսի վերադարձին նկատմամբ ,  
ինչպէս կը լսուի , զանազան սր-  
խալ տարաձայնութիւններ կան-  
այս սխալմունքը ուղղելու հա-  
մար խորհրդով Խառն ժողովոյ  
Պատրիարքարանիս արժան դա-  
տեցաք պաշտօնական կերպիւ  
ժանուցանել ի տեղեկութիւն ,  
մանաւանդ կիլիկիոյ վիճակին  
օրհնեալ ժողովրդոց , թէ Բ . Գու-  
ար միայն հաւանութիւն տուած  
է յիշեալ Ստեցի Նիկողայոս Ե-  
պիսկոպոսին իր հայրենի երկրին  
ձէջ բնակելու . բայց կաթուղի-  
կոսութեան խնդիրը կախ ձգած  
է , յարգելով Ազգային իրաւա-  
տութիւնը : Ըսել է որ Նիկողայոս

Եպիսկոպոս ոչ Ազգային Վարչ-  
չութեանն կաթողիկոս հաստատու-  
ած է, և ոչ մեծագոր Տէրու-  
թիւնը ըստ այնմ վաւերացուցած  
է զայն: Հետեւ արար Նիկողայոս  
Եպիսկոպոս կաթողիկոսական  
ամեն առանձնաշնորհութիւններէ  
զուրկ ըլլալով հոգիսն ու Եպիսկո-  
պոս յետագային ու Ս. Միգայի օրհնելու:  
և ոչ սուրբ Աթոռոյն ստացուած  
ծոցը տէր ըլլալ: Իսկ Կիլիկիոյ  
սուրբ Աթոռը տակաւին իր կա-  
ռավարութիւնը պիտի ունենայ  
ասկէ առաջ Տեղապահ հաստատու-  
ած Գերապատիւ Հաճընու Պետ-  
րոս Եպիսկոպոսին հսկողութեանը  
տակ, և այսպէս պիտի շարու-  
նակուի մինչև որ Ազգային Վար-  
չութիւնը Կիլիկիոյ կաթողիկո-

սութեան ինդիքը լուծէ օրինակ  
 ւոր կերպիւ յիշք առկայ մեծ մեծ  
 Այս պաշտօնական յայտարար  
 լուծիւնը օրհնութեան կոնդա-  
 կաւս ծանուցանելով կիլիկիոյ Տի-  
 րախնամ բողոք փրկակաց Եկե-  
 ղեցական և Ժողովրդական լու-  
 թեան, կը մաղթեմք ամենեցուն  
 համար երկնաւոր և երկրաւոր  
 յաջողութիւնս, և մնամք աղօ-  
 թարար միշտ

ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ  
 ԱՐԻՍԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Տուաւ օրհնութեան կոնդակս  
 Ի Պատրիարքարանի Հայոց, որ  
 Ի Կ. Պօլիս, յամի Տեառն 1869  
 Ի Փետրվարի 4 :

Տեղապահին այս կոնդակը կի-  
թկիոյ թուրք թեմերը հասնելէ  
ետքն իսկ Տ. Նիկողայոս Եպիս-  
կոպոս կը յանդգնի Թանգի փա-  
նուց Վանահայր Տէր Ստեփան  
Վարդապետը և Ատանայի Ա-  
ռաջնորդական Փոխանորդ Տ. Դա-  
թիթ Վարդապետը (\*). (Ներշա-  
պուհ) Եպիսկոպոս ձեռացնել  
1869 ժարտ ամսոյ վերջերը կամ  
ապրիլի սկիզբները, առաջնայն  
անունը Նիկողայոսի և երկրոր-

---

(\*) Այս Տ. Դատիթ Վարդապետ  
Մարաշի Տ. Մկրտիչ Արքայանին ձեռ-  
նառունն է, որ Եպիսկոպոս ձեռանա-  
լէն յետոյ երբ Ազգային փորձութիւնը  
սխառմել կը ձեռնարկէ գինքը՝ փա-  
խուսա կուտայ թ Նոսիմ, և կրնայ ունի  
պտուպականութիւնը:

դիմեր թէ ոգորոտի փոխելով և  
Իրաց այս վիճակին՝ դարման  
տանելու համար Պատրիարքա-  
կան Տեղապահը 1869 ժայիս 24,  
և 28 և յունիս 19 երկու ի ժո-  
ղով կը դուրսարէ Կոստանդնու-  
սթոլոյ մէջ դանուող Եպիսկոպոս-  
ները, որոց խորհրդածուծեան  
եզրակացութիւնը սա կըլլայ թէ  
« Սոյ կաթուղիկոսութեան խըն-  
դիրն Արարատեան Մայր Աթո-  
ռոյ լուծմանը պէտք է յանձնել,  
և Ստեփան ու Դաւիթ վարդա-  
պետները Կիլիկիոյ վիճակներէն  
դուրս հանել և արսորել ի Կիպ-  
րոս կամ յայլուր, մինչեւ որ ա-  
մենայն Հայոց Հայրապետն առ-  
այս խը որոշումը հաղորդէ Ազ-  
գային Վարչութեան, » ըսոյց  
դարձեալ կը յարատուէ խնդիրը

մնալ իւր անորոշ և անկերպա-  
րան միճակին մէջ :

Պատրիարքական տեղապահն  
Ազգին դարաւոր մէկ իրաւանց  
պաշտպան կենալուն համար կը  
պարտաւորի , մանաւանդ թէ  
անուղղակի կը հրաւիրուի որ հը-  
րաժարի ( թէպէտ և իսպառ ժո-  
ղովոյ 1869 յուլիս 3 ի նիստին  
արձանագրութեան մէջ այս հը-  
րաժարման իբր պատճառ Սոսյ  
ինդիրը նշանակուած է ) ուստի  
և կը հրաժարի յ' 3 յուլիսի 1869:  
Կրնգունի Բ. Գուր Տեղապահի  
հրաժարականը , և Պատրիարքա-  
կան ընտրութեան համար յու-  
լիս 20 թուականը կրող հրամա-  
նագիր մը կը զրկէ ի Պատրիար-  
քարան :

Ազգային ժողովն ըստ այսմ

Հրամանագրի Պատրիարքական  
ընտրութեան ձեռնարկելով 1869  
յուլիս 31, 4. Պոլսոյ Պատրիարք  
կընտրէ Վանայ Առաջնորդ Տ.  
Իգնատիոս Արքեպիսկոպոսն Բար-  
մաճեան, որ այս առթիւ իրեն  
դէմ եղած անիրաւ և խապառ գա-  
տապարտելի յարձակմանց պատ-  
ճառաւ քաղցկեղի ( Չէ: Է: Է: ) դը-  
ժընդակ հիւանդութեամբ ասի-  
տանալով յետ երկուսուսան աւուր  
կը վախճանի ի 12 ամսեանն օչ  
գտնոտի :  
Ազգային Ժողովը վերստին  
Պատրիարքական ընտրութեան կը  
ձեռնարկէ, և յետ Պատրիար-  
քական ընտրելութեան կրօնա-  
կան պայմանաց նկատմամբ տեղի  
ունեցած շփոթից և ընդ երկար  
փնտրանութեան հուսկ ուրեմն

Ազգային Սահմանադրութեան ա-  
ռաջներորդ յօդուածոյն տրա-  
մադրութեան համաձայն ի Ս.  
Էջմիածին ձեռնագրեալ և անդ  
ուխտեալ Տ. Մկրտիչ Արքեպիս-  
կոսոսն Խրիմեան առաջարկու-  
թեամբ Վսեմ Գրիգոր Էփէնախ  
Օսեանի, կրնարէ Պատրիարք Կ.  
Պօլսոյ ի Կտակածքերի 1869,  
որ գեղակածքեր 5 թուական դը-  
րով մը իւր ընտրութիւնը կը ծա-  
նուցանէ ամենայն Հայոց Հայ-  
րապետին, և ի պատասխանի մա-  
հետեւեալ Կոնգակը կրնդունի,  
որ Աղթամարայ և Սոյ խնդրոց  
համար իւր մասնաւոր կարեւո-  
րութիւնն ունի անկողնայ  
Գէորգ Ժամայ Բրիտանի և  
այն հարսանելի կամօքն Աստուծոյ  
Եպիսկոպոսապետ և կամ թուղիկա

ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ ԷՋՄԻՍՄԵՆԻ Գերապատիւ նորոգ Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ Հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք ։ »

« Ընտրութիւն ձեր ի Պատրիարքութիւն Կ. Պօլսոյ, մխիթարական յուսով ցնծութեան շնորհաբա այնոցիկ, որք միանգամ ծանօթ են բարեձիր յատկութեանց սրտի ձերոյ ։ »

« Այ ինչ անյայտ գորով և մեզ հայրենասիրութիւն ձեր կամիմք յաներկրայս ինեւ, զի այս կոչումն ձեր ի բարձր պաշտօն Պատրիարքութեան բացցէ առաջի գործունէութեան ձերոյ զեւս

ընդարձակագոյն անպարէզ աստիւ  
խնամ աստեղոյ բարոյական վըշ-  
տաց Ազգիս , փոյթ ունելով հաւ-  
նապագ շիջուցանել զօրութեամբ  
սուրբ Գրոց վարդապետութեան  
զկիրս ( ազգամբնաց ) կուսակցութեան  
թեանց , սերմանել ի սիրտ ամե-  
նեցուն զաէք և զխաղաղութիւն ,  
և օր մեծն է ջան ի գործ ար-  
կանել , զի հեռ զհեռէ բացցին  
բարեկարգ գործոց բնական օրկո-  
ցունց սեռից ոչ միայն ի Մայ-  
րաքաղաքից , այլ և յամենայն քա-  
ղաքս և ի գիւղօրայն գնաւորացն  
Տահկաստանի : Քանզի չգտա-  
նեմք զայլ շահեկանագոյն զեղ  
գարմանոյ վասն անպագ այլեր  
Պանկաւէտ բարեկեցութեան Ազ-  
գիս : Բայց եթէ զընդհանուր  
տարած գէմն ուսման և կրթու-

խեան, զոր և ձերդ ժնայն խոր,  
հըրդ սոյ սիրելի և հաճոյական  
ճանաչեմք : Ս  
« Ախորժ բերկրու խեամբ սրախ  
ընթերցեալ զնամակ ձեր որ ի 5  
Դեկտեմբերի (1869 ամի) ծան-  
եաք զձերմեռանդու թիւն ձեր և  
զորդիական հնազանդու թիւն առ  
մեզ և առ Մայր Աթոսն Հա-  
յաստանեայց, վասնորոյ և սրբ-  
տեռանդն աղօթիւք աղաչեցաք  
և յաւէտ աղաչեցաք զամենա-  
կայն Աստուած, զի զօրավիզն  
եղեալ ձեր մշտաբուխ շնորհացն  
իւրոց անսպառ ծաւալմամբ ի  
վերայ ձեր առաջնորդեացէ ըզ  
գործս ձեր ի բարին և յազգա-  
շահ ձեռնարկութիւնս, զի սրպէս  
վայել է գործել ներհուն և ող-  
ջամիտ հովուաց Ս. Եկեղեցւոյ ի

յանձանձել զպէտա հոգեւոր և  
բարոյական պիտոյից Ազգին  
գործեալիք և դուք զօրացեալ  
Տեառն առատագեղ ինքանցն զօ-  
րութեամբ և զնախկին եռանդն  
ազգասիրութեան վառ և բար-  
բոք պահեսլիք ի սրտի ձերում,  
զի խաւարելոցն մատակարարես-  
լիք զլոյս գիտութեան և կարօ-  
տելոցն զհաց հոգեւոր կենդա-  
նութեան: Ուստի և անկեղծ ու-  
րախութիւն որդեգորով սրտի  
մերոյ ընդ անբազայ բարօրու-  
թիւն հաւատացեալ հօտին Բը-  
րիատոսի ձերովդ մշտանեւ հո-  
ղատարութեամբ զհարկ ըստց-  
րութեան զնէ ի վերայ մեր այ-  
սու Հայրապետական կենդակա-  
շնորհել ձեզ Արքեպիսկոպոսու-  
թեան զպատիւ հաստատելով մի-

անգամայն զընտրութիւն ձեր ի  
պաշտօն Պատրիարքութեան Կ.  
Պօլսոյ եւ յետ շնորհաւորելոյ  
բերկրապատար սրտիւ զնորա-  
ստաց Կոչումն նշանաւոր ըստ  
պարտուց Հայրապետական ծայ-  
րագոյն պաշտամանս ՊԱՏՈՒԻ-  
ՐԱՄԻ Արեւելեան Կեանքեանց  
նախից սիրով զուէր զորձեացի  
ընդ ամենայն աւուրս կենաց ձե-  
րոց բանիւ եւ արգեամբ զհետ  
երթալ ուղիղ շաղաց երանելի  
հարցն սրոց եւ ի կրեւոր սեր-  
նԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՆԱԿ  
ՆԱԽԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՅ ԵՒ ՕԳՏԻՑ  
ՄԱՅՐ ԱՔՈՒՈՅՕ

\* Բանգի Բարձրձեռն Ենտեւնոյ  
որդէ Կէնայն Ե ինդիրն հակ-  
աթառ Կրեւելեան Կեանքեանց Եւ Աշ-  
տարաւոր սրտապիւնն պէս պէս

անախորժ ասարաձայնութեանց ,  
զի նորին սգնականութեամբ Խո-  
զանեանց և ապօրտամբ Վրթաց  
Խան Մահմուտի և ըն , դառաջինն  
անկախօրէն վարէին զապօրինա-  
ւոր իշխանութիւն իւրեանց , և  
նախնիք մեր անկարող իմն գտա-  
նէին կոչել զնոսա յազգութիւն :  
Իսկ այժմ որովհետև բարեխնամ  
Պետութիւնն Օսմանեանց ընդ իւ-  
րև նուաճեալ է զապստամբ բռ-  
նակալս և բացարձակապէս իշխէ  
ի վերայ լերանց Տարբուի և Քիւր-  
տիսթանու , ուստի և բնականա-  
պէս ունելով ի նկատի զօգուտ և  
զբարգաւաճանս Եկեղեցւոյ և  
զանխաղելի միութիւն Ազգին՝ հաս-  
եալ է ժամանակն այն , զի ի բաց  
ընկեսցին անկարգութիւնքն այ-  
նորիկ : Բայց ցաւօք սրտի ըն-

Թեոնուժք յազգային Սրազիրո,  
դի տմանք ի մերազնեայց կամ ի  
պատճառս անհեռաւորութեան  
իւրեանց և կամ յանճարական շա-  
հուց առաջ նորդեալ ճգնին սգ-  
նել ապօրինաւորութեանց նոցին  
առանց զչարագուշակ հեանեանս  
զմտաւ ամելոյ, որ կարեն ան-  
շուշտ մեասել միտ թեան Ազգի և  
Եկեղեցւոյ :

Չերդ սիրելու թեան պարտի  
ապաքէն յայտնի լինել, դի նա-  
խորդք մեր շտային զպաշտօն  
միաբանիցն Սոսյ և Աղթամարայ  
յայգոսիկ կողմանս նոյնպէս և  
Վարդապետաց դիմելոյ պատի  
առ հակաթուան յընդունիլ ըզ  
ձեռնադրութիւնն Էպիսկոպոսու-  
թեան, արդ ելս դնէին վարել  
զպաշտօն Վարդշու թեան կամ

Առաջնորդութեան մինչեւ չգի-  
մէին նորա անձամբ ի Ս. Աթոս  
սակս ուխտելոյ գոխան կատար-  
եալ հաւատարմութեան և հնա-  
զանգութեան, քանզի վերջինքն  
ձեռնադրեալ գոյով Սարկաւոց  
կամ Վարդապետ Եպիսկոպոսաց  
(ի միաբան Եպիսկոպոսաց) Լ. Թ.  
միաժնի և դիմելով ի Սիս և յԱզ-  
ժամար սակս զԵպիսկոպոսու-  
թեանն ընդունելոյ դատարնան  
յորպիսի եւ իցէ նպատակաց  
չարժեալ ընդդէմ առաջնոյ ուխ-  
տի հաւատարմութեան մեղուց-  
եալ եւ քան զքնիկ Ստեցիս եւ  
զԱզժամարցիս անհնազանդս հա-  
մարէին և համարին իսկ : Ծ  
Եղծմանք այսպիսի կարգաց  
և կանոնաց Եկեղեցւոյ ի վեր ե-  
րեւելցան առաւել ի յետին ժա-

մանակս յանհոգութենէ Հոգևոր  
Իշխանութեան Կ. Պօլսոյ, ըստ և  
բում թոյլ տուաւ այնպիսեաց  
վարել զպաշտօն Անդամութեան  
Կրօնական և Երեսփոխանական  
Ժողովոց, նոյնպէս և Քարոզչու-  
թեան և վիճակաւոր Առաջնոր-  
դութեան առանց կանխապէս դի-  
մելոյ նոցա ի Ս. Աթոռս և ուխ-  
տելոյ, և առանց ընդունելոյ զօ-  
րինական օրհնութիւն Ընդհան-  
րական Հայրապետի Հայաստան-  
եացոյ Ս. Եկեղեցւոյ, որով տեղի  
եւտուն ոչ սակաւ աղմկայոյզ խը-  
ռովութեանց և Ազգային տարօ-  
րինակ դժտութեանց :

« Մեք առ ի զառաջս առնուլ  
յապագային այսպիսի ազգամլաս  
տարաձայնութեանց և առ ի խա-  
փանել իսպառ զպատճառս ծագ-

Ճան նոցին յանձն առնելք ձերոյ  
Գերապատուութեան, զի խոհա-  
կան հանճարով ողջմտութեան  
ձերոյ փոյթ տարջիք ածելոյ զնո-  
սա առ տակաւ տակաւ յուղղու-  
երկու Աթոռոց ընդ Մայր Աթո-  
ռոյ յարաբերութեանց ծրագիրը,  
որ եկեղեցական Յանձնաժողովով  
մը պատրաստուած էր (\*), և ու-  
րուն մէջ յայտնի գրուած էր թէ  
Սոյն Աթոռոյն վրայ Ազապահ-

---

(\*) Այս Յանձնաժողովն Աջ-դ-է-ն-  
գեղապատանին Սոյն կաթողիկոսական  
ընտրելիութենէ մերժուած և ազգո-  
վին արժանաւորաց և եթ պահուած  
ըլլալն կանոնելուն հետ՝ զստացում  
ներով ուրիշ պայմաններ ոչ կանոնած  
է, զորս շիշեր աստ Քաղաքական  
ժողովը, (տես երես 640 — 649),  
որք եթէ յիշուած ըլլային՝ նոյն ծրա-  
գիրը չէր կրնար իրել փաստ գործած-  
ուիլ Քաղաքական ժողովոյ այս գրա-  
րոյն մէջ:

եան գերդաստանին ունեցած  
ժառանգական իրաւունքն ազ-  
գոյին զնջուած և արժանաւորաց  
և եթ պահուած է, երբէք չը  
մերժեց այս սկզբունքը : »

« Արդ՝ յայտնի կերեւի ներկայ  
բացատրութիւններէն, որ Ազ-  
գային վարչութիւնս, ինչպէս  
նաեւ Կ. Պօլսոյ Ազգային Երես-  
փոխանական Ժողովը, ոչ թէ մե-  
ղանչած է սուրբ էջմիածնի Մայր  
Աթոռոյ իրաւանցը դէմ, ընդհա-  
կառակն անոր գերագահութիւնը  
պահպանելով Հայաստանեայց Ս.  
Եկեղեցւոյ միութեան և ամբող-  
ջութեան սպառնացող վտանգին  
տալեւն առած, և Սոսյ անկա-  
խութիւն սպառնացող գիւրքը օ-  
րինաւոր սահմանի առկ մտցնե-  
լով անպագայն իսկ ապահովելու  
յաջողած է : »

«Մեր նախորդ պաշտօնակից-  
ները՝ Սոսյ և Աղթամարայ մի-  
ճակներն ալ Չերզ Վեհափառու-  
թեան իբրև Ընդհանրական Կա-  
թողիկոսի ընտրութեան մասնա-  
կցել տալով մեծ քայլափոխ մը  
առնել առւած էին Եկեղեցւոյ  
միութեան ապացոյցին : »

« Կիլիկիոյ թեմականք զայն ա-  
ռաւել պարզեցին՝ ի սուրբ Էջ-  
միածին ձեռնադրեալ Եպիսկո-  
պոս մի անխտրութեամբ իրենց  
թեմին կաթողիկոս ընտրելով,  
զոր նուիրագործեց Ազգային Ե-  
րեսփոխանական ժողովք այդ  
ընտրութիւնը վաւերացնելով, որ  
Հայաստանեայց մի սուրբ և ա-  
ռաւաքելական Եկեղեցւոյ ամբող-  
ջութեան յաւիտենական վկայու-  
թիւնն է : »

«Արդ որովհետեւ Ազգային  
 Վարչութիւնս ապահով է «Թէ  
 Չեր վեհափառութիւնը ներկայ  
 յայտագիրս կարգալէ և լնգ-  
 հանուր ժողովոյ Ատենագրու-  
 թիւներն ալ ուշագրութեան  
 առնելու բարեհաճելէ ետքը բա-  
 ցայայտ պիտի տեսնէ թէ ի՞նչ է  
 այն ոգւոյն շարժանիքը որ քանի  
 տարիէ ի վեր փոքրագոյն առիթ  
 մի չկորսնցնէր կեդրոնական Վար-  
 չութիւնն անդադար զրպարան-  
 լու, իւր բոլոր ազգագումա մտա-  
 ծութիւնները շարաշար մեկնե-  
 լով, և որ ամենէն քստմնելին է,  
 նոյն իսկ Չեր վեհափառութիւնը  
 խաբելու յանդգնելով . . . աւե-  
 լորդ կը համարի՞ք այլ եւս եր-  
 կարել այս մասին փայլ :

« Գալով յարարերու թեանց  
խնդրոյն, Ազգային Վարչութիւնս  
մեծ ցաւօք կը խոստովանի թէ  
իւր կազմութեան առաջին օրէն  
պարտաւոր էր սոյն խնդրոյն մի-  
ջամտել, բայց չկրցաւ. և պատ-  
ճառն յայտնի է արդէն. 1866էն  
ասդին Ազգային Վարչութեան  
խանդարեալ փիճակէն պատճառ-  
եալ աշնչափ ազգային դորձեր  
և խնդիրներ կային գիղեալ, և  
մանաւանդ Նիկողայոսի ապրս-  
տամբ և ազգակործան խորհր-  
դոց և. շանից գէմն առնելու  
աշնչափ գրադեալ էր, որ ա-  
ռանց դոյն կարգադրելու՝ մեծա-  
մեծ արդելքներ կային յարարե-  
րութեանց խնդրոյն ձեռնարկու-  
թեանը (\*): Միւս կողմանէ մեծ

(\*) Արդելք չկար բնաւ եթէ Վա-

բայն ունէր որ Չեր Վեհափա-  
ռութիւնն քստ առ աջարկութեան  
ազգային երեսփոխանական ժո-  
ղովոյ որ 1867 Փետրվար, և քստ  
հանգիստ որ խոստման և ուխտի  
Չերդ Վեհափառութեան ի սուրբ  
երրորդութեան և կեղեցւոյն ի Բե-  
րա, ձեռնարկած է արդէն Մարտ  
Աթոսոյ Հայրապետական անկա-  
խութեան և պատմութեան անկախ  
քստութեան վերահաստատու-  
թեան պարծին, այն է Չեղեցու  
Պատմութիւն անուն կարգադրու-  
թեան այն մասերը, որունք պա-  
տմութեան Բնդհանրական պաշ-  
տօնին կը վերաբերին և պատմ-  
ութեան հակառակ են մեր սուրբ և

---

պատմական ժողովրդականութիւնը, և յա-  
րաբերութեան Բանձնախոս մըր հրա-  
պարհ ի դարձ: (Տես Երես 881—891):

ուղղափառ Եկեղեցւոյ կանոնաց  
և աւանդութեանց : Ուստի կրա-  
պասէր Չեր վեհափառութենէն  
տաանալ այս ժամին յաջող եւ  
բերկրառիթ լուրն : »

« Ահա այժմ ուրախութեամբ կը  
տեսնեմք որ մեր յոյսն ի դերեւ  
չէ ելած , զի Չեր վեհափառու-  
թիւնը Սոյ կաթողիկոսական  
խնդրոյն առթիւ կը բանայ որչ  
յարաբերութեանց խնդիրը , և  
իւր հեռագրին մէջ կը ծանու-  
ցանէ թէ իւր նախագահու-  
թեամբը գումարեայ Եկեղեցա-  
կան ժողովոյ մը մէջ պէտք է ու-  
րոշուին . Ազգային վարչութիւնս  
ալ պատեհ առիթը հասած կը  
համարի սկիզբն ընել բանակցու-  
թեան , հետեւապէս կը խնդրէ  
որ Չեր վեհափառութիւնը բա-

ընհանի ծանուցանել թէ ո՛ր և  
ի՛նչ եղանակաւ այդ ժողովը պի-  
տի գումարուի . և յարարեալ-  
թեանց խնդրէն զատ այս առթիւ  
եկեղեցական ուրիշ ի՛նչ կարեւոր  
խնդիրներ պիտի ներկայանան :

Առանց կարեւորութիւն տա-  
լու մասնաւորաց այս խնդրոյս  
վրայ արտայայտած գաղափար-  
ներուն , անտարակոյս եմք որ  
Ձեր Վեհափառութիւնը պիտի  
ընդունի Ազգային Վարչութեան  
համայն անդամաց անկեղծ զգաց-  
մանց և հաւատարիմ որդեգրու-  
թեան հաւաստիքը , որք խընդ-  
րոյն բնական վիճակը Ձեր Վե-  
հափառութեան հայրախնամ նր-  
կատարութեանը ներկայացնելով  
անտարակոյս ե՛ն որ Սրբազնա-  
զոյն Հայրապետդ ալ պիտի հա-

մուգուի թ թ լ, այն երևե ախաչե աղ  
 բարբ լաանդներն պիտի ցնդին  
 յարարերու թեանց խնդրոյն լուծ  
 մամբը, որոյ կարգադրու թեանն  
 մեծ գործն թ գլուխ հաներու  
 փառքը և Հայաստանեայց Եկե  
 ղեցւոյ հարադատ որդւոց անքն  
 կաշու թիւերն ու խղճը պանկիլու  
 պարծանքը Չեր Վեհափառու  
 թեանն պահուած է

Վնայք միշտ Չեր Վեհա  
 փառու թեանն ամենախոնարհ ծա  
 ւայք : Երկրորդ Գ. Կ.

ԱԿՐԿԵԶ ԱԲԻՊՏ ԻՐԻՄԵԱՆ  
 ԱՐԲԵՊ. ԳԼԱԿԱՅ ԱՆՆՈՒՅ

Ի գիմաց Բաղ. Ժողովոյ

ԱՏԵՆԱԲՊԻՐ                      ԱՏԵՆԱՊԵՏ

Տ. Ի. Ե-----ՖԵՆ                      Ի. Ա. Դ.

10 Մարտ 1872

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի Կ. Պոլիս

Ամենայն Հայոց Հայրապետը  
Բաղարական Ժողովոյ այն ոչ  
նուայ ուշադրութեան արժանի  
գրութեան ի պատասխանի հե-  
տեւեալ կոնդակը կը զըկէ :

« Բէարդ ծառայ Բրիտանի և  
անհասանելի կամօքն Ատուծոյ  
Յայնսկոպոսապետ և կաթողիկոս  
ամենայն Հայոց ծայրագոյն Պատ-  
րիարք համազգական նախամե-  
ծօր Աթոռոյ Արարատեան Ա-  
ռաքելական Մայր Եկեղեցւոյ Ս.  
կաթողիկէ Է.ՉՄԻԱՅՆԻ . Բերա-  
պատիւ Պատրիարքի Հայոց Կ.  
Պօլսոյ Մկրտիչ Սրբազան Արքե-  
պիսկոպոսի Խրիմեան խնդալ ի  
Տէր : »

« Անագան ուրեմն ընկալեալ  
յնամանկն թուազրեալ ի 10 Մարտ  
ամսոյ սարգազրութեամբ Չեր և

Մեծապատիւ Անդամոց Վաղա-  
քական ժողովոյ իբրեւ ի պա-  
տասխանի մերում հեռագրի ,  
ընթերցար մեծաւ գարմացմամբ ,  
զի հարուածեալ զհնաւանդ և  
գնուիրագործեալ իրաւունս Մայր  
Աթոռոյ և Ազգի , և մանուածոյ  
բանից ճարտարութեամբ յեղա-  
շրջեալ յայլ իմն կերպարան զիս-  
կութիւն անցից խնդրոյն Սոյ ,  
Գանայիք ցուցանել օգտաւէտ  
և նշան միութեան և ամբողջու-  
թեան Ազգի . սոյն օրինակ սխալ  
և հակառակ կանոնաց Եկեղեց-  
ւոյ մերոյ եզրակացութիւն Պատ-  
րիարքարանին Պօլսոյ առաջինն  
է , զոր լսեմք և տեսանեմք . ա-  
յս , և առաջին համարեացի յԱզգ  
մեր :

Զեմք յերկրայս զի և խփղճ

Չեր ունի վկայել, եթէ Գերա-  
պատում թիւն Չեր, և Ս. Եպիս-  
կոսոսումնք որ լճնդ հանուր ժո-  
ղովի յայանապէս ժխտելով ուխ-  
տի իւրեանց և երդմանց որ ա-  
ռաջի ահաւորին Աստուծոյ մե-  
ղանշեցին մեծապէս. իսկ վար-  
դապետք և Գահանայք և իշ-  
խարհական անդամք Երեսփոխա-  
նական ժողովոյ, որք գործակից  
եղեն Չեզ՝ ներողութեան թեան են  
արժանի, զի ոչ գիտէին իսկա-  
պէս զարարողութիւն ուխտի և  
զձեւ երդման Եպիսկոպոսաց ի  
ձեռնադրութեանն, բայց քաջ  
գիտեն Եպիսկոպոսումնք, զոր  
ուխտեն և երդնուն նախ ի ժո-  
ղովի Եպիսկոպոսաց ի Սինոդի ա-  
ռաջի սրբոյ Խաչի և Աւետարա-  
նի, և սպաս ի ժամու կոչման

յատարեան Եպիսկոպոսութեան  
մինչ զգետաւորեալ և ի ծունկս  
իջեալ կան ի վերայ ատարեանաց  
սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի .  
Թողում ասել զբանն զոր ար-  
տասուօք խօսեցաք Ձեզ և ամե-  
նից Եպիսկոպոսաց ձեռնադրելոց  
ի մէնջ ի սուրբ Պատարաց ի յա-  
ռաջ քան զհաղորդելն զՁեզ ի  
կենարար Մարմնոյ եւ յերենէ  
Տեառն վասն նախանձախնեցիք ի  
նելոյ անխախտ պահպանութեան  
կանոնաց Եկեղեցւոյ մերոյ եւ  
պատարարաց Ազգիս , որ և  
ընկալայք յօժարակամ և խոս-  
տացայք կատարել անթերի զա-  
մենայն աւուրս կենաց Ձերոց .  
Եթէ հանձարեզք ոմանք եւ  
զին առաջի աչաց Ձերոց զօգուա-  
րն աշնպիսի վասն Ազգի և Եկե-

ղեցւոյ, որ նոր էր և ընդդէմ  
հնաւանդ սովորութեանց Եկե-  
ղեցւոյս, պարտ և արժան իսկ  
էր Չեզ Երեւել Եւ Մայր Աթոռոյ  
ըստ անխախտ կանոնաց Եկեղեց-  
ւոյ մերոյ և ըստ Սահմանադրու-  
ման Եկեղեցւոյ, և խորհրդակցել ընդ  
մեզ, և քանզի հեղինակ ուխ-  
տին այնորիկ և երդմանն մեր  
խնային չէաք, զի յանձնապատ-  
ասն և ջնջելոյ ունէաք զիրա-  
ւանս, վասն որոյ հարկ լինէր  
մեզ յայնժամ կողմել ժողով և  
կեղեցական յամենայն կողմանց  
և խորհել և դարձանն և զօգ-  
տակարագոյնն անորիներէ միարան  
հաւանութեամբ: Ահա զայս կա-  
մեցաք ծանուցանել Չեզ հեռա-  
գրաւ, այսինքն չձեռնամխել  
յանձնապատասն ի գործս և

ի խնդիրս անդր քան զիրաւա-  
տութիւն Չեր, շխտօրից ի շա-  
ղաց սրբոց նախնի Հարց . և եթէ  
իցէ հարկ ստիպողական սահմա-  
նել զնոր ինչ, Եկեղեցական Ժո-  
ղովոյ միայն է անկ կազմեցելոյ  
ընդ նախագահութեամբ Ընդ-  
հանրական Հայրապետի ամենայն  
Հայոց՝ բայց սակայն Բ-ն, Ն-ն, Կ-ն  
Չեր, Գլխովին Վ-ն, Հ-ն, Է-ն մերոյ  
-ը-ը-ն-ի-ն իբր ընկալեալ արդէն մեր  
եւ Եկեղեցւոյն Հայաստանեայց  
ղապօրինի գործողութիւնս Ժո-  
ղովոյց վասն ապագայի և եթ  
զգուշացուցանէաք . մի այնպէս  
թուեացի Չեզ սիրելիք, այլ ի  
լսել մեր, զի ի միաբան Եպիս-  
կոպոսաց սրբոյ Էջմիածնի ընա-  
րելիք պատրաստին վասն Ստոյ,  
փութացաք հեռագրել և հրա-

ւերել զՁեզ ի զգուշութիւն, զի  
խորհեալն ի Ձէնջ զոր կամիք ի  
գործ դնել, նա ի վեր է քան  
զձեռնհասութիւն Ձեր, և վե-  
րապահեալ միայն Ընդհանուր  
ժողովոյ. բայց կարծել կամիք  
թէ մտադիր լեալ իցեմք կազմել  
զժողով վասն յարարերութեան,  
որ և ցանկայք իմանալ եթէ ուր  
ունիցի գումարումն ժողովոյն և  
որպիսի եղանակաւ. մեք չկար-  
ծեմք երբէք զի երեսփոխանա-  
կան ժողովն Գոլտոյ մեռացեալ  
զպարտիս Քրիստոնէական անլսող  
լիցի մինչև իսպառ արինաւոր ա-  
ռաջարկութեան Հայրապետի իւ-  
րոյ և յամառեացի ի կարծիս ար-  
խալանաց իւրոց, զի յակամայս  
պարտաւորիցուք կազմել զայն  
ժողով մեծ՝ նախ քան զամենայն.

զուխտադանցս և զհակառակորդս  
Եկեղեցւոյ դասել։»

« Արդ՝ գորովս Հայրական չք  
ներեն մեզ յողուած առ յողուած  
պատասխանել բանից նամակի Չե-  
րոյ առ ի ոչ վշտացուցանել ըզ  
սիրաս հոգեւոր օրդւոցդ, և ա-  
ւելորդ համարիմք հարցանել և-  
թէ՞ ո՞ւրտի ուսայք թէ՞ ուխտ-  
եալ իցէ մեր յեկեղեցին Բերայ  
կամ՝ տեղեակ գործողութեանց  
66 ամի ժողովոյն Պատրիարքա-  
րանի, և կամ անխայթ զօրրա-  
գրութենէն Պաշտօնէն, և յն։»

« Բողոքէիք ի նամակի ձերում  
ընդդէմ՝ դաւ և խարդաւանանք  
բառից, բայց յազադս սխալանայ  
և յանցուածոց յայանի գործե-  
ցելոց յամենայն գորութենէ և  
յամենայն անձնէ բողոքումն Հար-

դարացուցանէ զօք . արդարեւ  
դժուարին է մեզ հաւատալ , զի  
դուք և ժողովն որ ընդ Ձեզ  
յադագս վնաս ինչ հասուցանե-  
լոյ Եկեղեցւոյ մերում և Ազգի  
գործեալ իցէ , այլ անտարա-  
կոյս եմք , զի ի գործողութեանդ  
յայդմիկ գոն դաւ և խարդա-  
ւանք օտարի . աղետաբեր ձեռն  
օտարի նշմարի այդր , ո՛չ երբէք  
կարծեմք եթէ Հայն վատթա-  
րասցի ա՛յնչափ , մինչ զի և յան-  
ձըն առնուցու վնասել Եկեղեցւոյ  
իւրոյ և Կրօնի ի կործանել գլխո-  
վին զԱզգ իւր . . . . .

. . . . .  
. . . . .  
. . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

« Յորչափ զօրեն միտք մեր , յօ-  
րէ լինելոյ մերոյ , յազգային գործս  
և ի պաշտամունս իբր ի քառա-

սուն և ի շորից ամաց հետէ քա-  
նիցս յողորմացնոց սմանք ունայն  
յուսով և միամտաբար կալան ըզ  
խարեբայ ձեռաց օտարաց, և  
ջանացին փոփոխութիւնս ինչ մա-  
ծանել Ազգային և Եկեղեցական  
իրս, գողցելս նշմարելով յայնս  
փրկութիւն Ազգի, յորս կային  
դարանեալ անդէն կորուսա Ազ-  
գութեան, այլ ողորմութեամբ  
բարձրելոյն Աստուծոյ փառս ինն  
մնասու տուժմամբ դերձաւ յու-  
թիւն Ազգիս: Եւ ահա ի քանի  
ամաց հետէ դարձեալ տեսանի  
ձեռն օտարին ի մերայինս, գաւ  
և խարգաւանանք օտարոտոյն  
խառվէ զխաղաղութիւն Եկեղեց-  
ւոյ մերոյ, յաջողեալ է նա գրաւ  
ւել զարս սմանս խոստանալով

դունայն և զերեւակայականն բա-  
րիս յօգուտ Հայ Ազգութեանն :  
Եթէ այս նկատմունք մեր հան-  
դիպեցիկն ի կողմանէ Չերմէ  
ընդդիմութեանն և աստպիք թէ  
չիք ի մեզ ձեռն օտարի, դըժ-  
ուարին է մեզ հաւատալ, զի ե-  
թէ ոչ գոյ շարժող ձեռն յար-  
տաքնոյ, զի արդ արդա ոչ իմա-  
նամք զմիտս և զգիտաւորութիւն  
և դրանս միմեանց : մեր բազ-  
ձամք ի սրտէ օր քան զօր պայ-  
ծառութեանն եւ յստաջանէմն  
զարգացման Ազգիս Հայոց, զնոյն  
բազձայք անշուշտ և Գուք : մեր  
կամիմք պահել և յարգել զա-  
ւանդութիւնն Եկեղեցւոյ և զկա-  
նանս օրրոյ Հարց, զուղղափառ  
հաւատս մեր և զկրօնն, և չկո-  
րուտանել զնախնի շուք և զիրա-

ւանա Մայր Աթոռոյ Ս. Էջմիածն  
 Տնի յազատութիւն և ի վերկա  
 թիւն միջիդնաւոր մողսվրդեան  
 զնոյն և գուր կամիղ խոստովա  
 նիք ուրեմն անտարակոյս պարտ  
 էք համաձայնութիւն ի միջի մե  
 րում յինիղ և համաձայնութիւն  
 զինչ իցեն ապա Սահակարծիք  
 քանք տարաձայնութեանցդ զինչ  
 իցեն գործելն ի թաքտեան և  
 գաղա ի Մայր Աթոռոյ զինչ  
 հակառակութիւնք ուխտագր  
 ժութիւնք Եկեղեցւոյ վարդան  
 պետութեանց հակառակ քանք  
 և գրուածք էլն և զինչ նշա  
 նակն թիւն ունել մարթ է յար  
 վոմսիսն թեանց խնայտից ի կար  
 գրա ինգրոյ վանն Կրճաւորից  
 ինգրոյն ի Դիւանի Ընդհանր  
 ժողովոյ և հոսկ արեմն Կա

Թողիկոսական և Պատրիարքա-  
կան յարարերու թիւնք զորոյ շի-  
մանամբ տակաւին զգաղանիսն .  
ուրեմն անշուշտ մին ի նախնի օ-  
տարական ձեռաց և կամ նոր  
ոմն օտարամիտ տայ գործել Չեզ  
յանձնապատասան ընդդէմ իրա-  
ւանց Մայր Աթոռոյ և Եկեղեց-  
ւոյ յուղերով միշտ գնորօրինակ  
ինդիրս , զի բաժանելով զամ-  
բողջութիւն Եկեղեցւոյ մերոյ  
տակաւ ան տակաւ , ազատ գոր-  
ծեսցէ զոր կամի ի մնաց Ազգու-  
թեան Հայոց : Եւ զանմեկուսից  
Սայա իսկ է զի ձեռն օտար  
ոյ զօրէ երբէք մնասել Ազգի մե-  
րում ցորչափ ազատ է Ազգ մեր  
յանիշխանական դրից և ի խոս-  
մութեանց եւ յերկպառակու-  
թեանց . քանզի չէ զանխուլ յո-

սոխաց Եկեղեցւոյ մերոյ ընաւո-  
րութիւն Ազգիս : Կանն որոյ ջա-  
նան միշտ կազ և կոխ յարու-  
ցանել ի Հայս և թշնամիս գոր-  
ծել միմեանց և ի ձեռն Հայազ-  
գոյն մնասել և ի դրունս կար-  
ծանման հասուցանել զՀայազնն :  
որպէս մինչև ցարգ եղեալքն  
քաջայայտ են բազմաց և մեզ :  
Ուստի Հայրական սեպուհ պար-  
տաւ որութեամբ անեմք : Ազգա-  
յինք մեր փոխանակ զյոյս իւր-  
եանց առ օտարս և առ այլա-  
կրօնս դնելոյ : բարեօք անենն  
եթէ գիցեն զյոյս իւրեանց նախ  
յԱստուած և ապա ի սերս միա-  
բանութիւն : Հայազդի եղբարց  
համակրօնից : զի գացեն զօգուտ  
զգորութիւն և զյառաջադիմու-  
թիւ : Ազգի և Եկեղեցւոյ մերոյ :

Արեւիք նախապէս զխաւը  
արժանէ հաւատանալ և ի վե-  
րայ հասանել մտայ և հանաչել  
և խմանալ պիտու և զգիտանա-  
լու թիւն միմեանց և մի ընդ ու-  
նայն ի խաւարի մարտնչելով վի-  
րաւորել զհամարիւն և զքարս ի  
կործանու մե Յկեզեցւոյ և Աղգի-  
և մի ընդ ունայն շանալ ի պնա-  
րել զմիմեանս անողուտ փառ-  
տաբանու թեամբ և մի սքողել  
զախալանս վասն անսխալ երեւե-  
լոյ աստուէտ յայժ համարիմք  
մեք վասն Աղգի և Յկեզեցւոյ ի  
մտանում անուանել զմիմեանս և  
խոսիլ արպէս զի յետս ընկրկեա-  
լին բախտակին մնասակար ձեռք  
ստարաց և Յթէ ներէին մեզ մա-  
մանակիւ և հանդ ամանք իրաց  
ու անողանէար անձամբ զար

այդք փոխանակ կանգակիս, այ-  
տորիկ և բերանն առ բերանն խա-  
տիչ զօգուանն Ազգի մերոյ սիրել-  
լոյ և սուրբ Եկեղեցւոյ, Քանզի  
վաանց մեծ և ահագին երեսի  
վաանն ապագայի Ազգիս, և զի  
ոչ ներկեն մեզ այժմիկ Տանգա-  
մանք ժամանակիս և բազմայոյլ  
և բազմափոյտ դրադմունք մեր  
գայի Մայրաքաղաքդ և որպէս  
քաջայայտ է և ոչ փայտաբանու-  
թեամբ և եթէ բուժի այս փայտ  
մահաբոյր այրանաանել և սղայ-  
րանայ, և կիրք անձնականք և ս  
քան զիս անեցեաց բարձրմանն  
և Կառնովք և երկրպանակու-  
թեամբ մերանայ՝ օգուս Ազգի  
և Եկեղեցւոյ դիւրագնոյ վաճառի  
անարաց և արանչուն ճանադանն  
ոյսն և որպէս օգուտն և ճանաչուցից

և Ռուսոյն պատշաճ վարկանիմք  
կարելին փութով ի գիրկս Մորն  
Եկեղեցեաց Հայոց ի սուրբ Էջ-  
միամին — — — — —  
ղմին քարձրաստիճանն Եկեղե-  
ցական և զմիւսն աշխարհական  
ի կողմանէ Ազգային Երեսփոխա-  
նական Ժողովոյ Պատոյ, որպէս զի  
պարզեցին միտք և գաղափարք  
չերկուստեք և որինչ կարևոր են  
ի գիտել և ի գործել վասն Ազգի  
և Եկեղեցւոյ խորհեացուք, որով  
յաջողի մարթացուք խափան  
դներ մզանլուս շարեաց և ա-  
պառնի վտանգին և յայնպէս մտք  
և Ահաւասիկ կատարելով ըզ-  
պարտիս մեր, սոյին Հայրապե-  
տական կանգակաւ և Հայրական  
հեղեոանդն սիրով հրաւիրեմք  
զերկուս անձինս քնտիրս ի ձէն՞

ի խորհրդակցութիւն, և կամփոք  
յուսակ զի ողբով Բրիտաննէսե-  
թեան և խաղաղութեամբ լուիջիք  
Հայրապետական ձայնի, որոյ իս-  
կական նպատակ հայի միայն և  
միմիայն յօգուտ ընդհանրու-  
թեան Ազգի և յառաջագիծու-  
թեան և պայծառութեան Հա-  
յաստանեայց սուրբ Եկեղեցւոյ .  
աւելորդ համարիմք յաւելուլ աս-  
տանօր զի պատգամաւորքն Չեր-  
լինիցին արք խաղաղասէրք եւ  
ճշմարիտ ազգասէրք և ըստ կա-  
րելոյն հեռատես և խոհեմք .  
եկեղեցականն եղիցի հմուտ ե-  
կեղեցւոյ կարգաց և օրինաց .  
կենցաղագէտ, և որպէս կուսա-  
կրօն անձնուրաց Սաւա եւ սիրող  
Ազգի և Եկեղեցւոյ (քան անձինն) .  
« Արդ լիայոյս եմք զի զկան»

դակ մեր զայն առանց յապա-  
 դելոյ ընթերցեալ յատենի Երեւ-  
 փոխանական ժողովոյց և ընկալ-  
 եալ Արդիական ջերմեանոցն սի-  
 րով զկողմոցն առաջագրու-  
 թիւն մեր իսթասիք ընտրել  
 զերկուս արժանաւոր անձինս և  
 առաքել ի Մայր Աթոռս :

Ողջ լերուք և արհնեալք  
 յԱստուծոյ և ի մէջ :

ԿԼԹՈՂ. ԱՄԷՆ. ՀԱՅՈՅ  
 Ե Երան Տեառն մերոյ 1872 Սպրի  
 28 և յԱզգային թուղականութեան  
 ԱՅԻԱ. ի Ա. Կճմաճին Համար 208 :

Հայրապետական սոյն կոնգակն  
 և անոր աեզի աւելոյ Քաղաքական  
 ժողովոյ գրութիւնն ի Բ. նիւտին  
 մէջ որ ի 26 Մայիսի 1872, կը  
 կարդայուին որք անոր Առթ

Նիսապետուն գրադարանն նիւթ կը լլանա  
չապա Ազգային Բնագրանոց Գրադարան  
այս ցանցի մէջ 1870 թ. Բնագրանոց  
ցանցի մէջ յիշուաւ Երանցի Գրադարան  
Եր. Եր. Լ. Երանցի ցանցի

Ազգային Ժողովն այս ութ  
Նիսապետուն մէջ Հայրապետական  
Կանգակն, և անոր տեղի տուող  
Քաղաքական Ժողովոյ գրութիւնն  
և Ստոյ կաթուղիական վեր-  
ջին ընտրութիւնն ուշադրութեան  
առնելով երկար փնտրանութենէ  
ետքը Եր. Նիսապետուն մէջ որ ի 29  
Քեկտեմբերի 1872, վեց Եկեղե-  
ցական և վեց Աշխարհիկ անձերէ  
խառն Յանձնախումբ մը կը կար-  
գէ, և անոր կը թողու շարու-  
նակել փնտրանութիւնը և մտա-  
ծել թէ այս խնդրոյն լուծ-  
ման նկատմամբ ինչ ընթացք

արժան է բռնել և թէ Հայրա-  
պետին թնչ պատասխան տալ  
հարկաւ որ է և հեռեւորար այս  
խնդրոյն վրայ տեղեկագիր մը  
բերել իրեն :

Այս Յանձնաժողովոյն անդամ  
կրնարուին

1. Տ. Ներսէս Եպիսկոպոս Վար-  
ժապետեան :

2. Տ. Խորէն Եպիսկոպոս Նար-  
դէյ :

3. Տ. Մամբրէ Վարդապետ Մա-  
միկոնեան ( ձեռնադրեալ Եպիս-  
կոպոս ի սուրբ Էջմիածին 1873 ).

4. Տ. Մատթէոս Վարդապետ  
Իզմիրլեան , ( ձեռնադրեալ Եպիս-  
կոպոս ի սուրբ Էջմիածին ի 13  
Մայիսի 1876 ).

5. Տ. Յովհաննէս Քահանայ  
Մկրտան :

6. Տ. Սահակ Բահանայ Տէր  
Սարգսեան :

7. Ղ. Եւսէմ. Ստեփան Փաշա Առ-  
լանեան :

8. Մեծ. Յարութիւն Էֆէնտի  
Մերեէ մզաւի :

9. Մեծ. Օգսէն Էֆէնտի Խօ-  
ճասարեան :

10. Մեծ. Պօղոս Էֆէնտի Պար-  
նասեան :

11. Մեծ. Թաղէոս Էֆէնտի  
Պէկեան :

12. Մեծ. Յովհաննէս Էֆէնտի  
Յովակիմեան :

Յանձնատողովոյ առաջին մէկ  
բանի նիստերու միջոցին երևան  
կեցէ Պատրիարքական հրատա-  
րականի խնդիրն, որ ըստ սովո-  
րութեան բարական կը յուզէ թէ  
Ազգային ժողովն և թէ ժողո-

վարդը և հասկարեմն Տ. Մը-  
կըրախչ Պատրիարք ի Ե. Հոկտեմ-  
բերի 1873 թ. Իսան կը մատու-  
ցանէ իւր հրատարականն և կը  
վերջանայ խնդիրը և ըստ թ

Բ. Իսան ընդունելով Պատ-  
րիարքին հրատարականը Տեղա-  
պահական ընտրութիւն կը հրա-  
մայէ, ուստի և Աղգային կեդ-  
րոնական վարչութեան իսան  
ժողովը Տեղապահ կընտրէ զՏ.  
Նիկողայոս Եպիսկոպոս Աղաս-  
եան ի 27 Նոյեմբերի, որ ի նոյն  
պաշտաման կը վախճանի ի 10  
Փետրվարի 1874, որոյ փոխան  
Պատրիարքական Տեղապահ կընտ-  
րուի Նիկոմիդիոյ Առաջնորդ  
Տ. Ներսէս Եպիսկոպոս վարժա-  
պետեան ի 15 Փետրվարի, և որ  
ապա կընտրուի Պատրիարք ի 26  
Ապրիլի 1874:

Յաննան աւստրիացի երկարաբնակ շահի  
 Ժամանակ յետոյ ուր ուրեմն կը  
 մատուցանէ իւր տեղեկագիրն  
 Ազգային Ժողովոյ 1874 Վախճան  
 ման (\*) Ը. դ. նիստին, որ յ' 8 Նա-  
 յեմբերի այնք տարւոյ, և որ ահա

Ազգային Ընդհանուր Ժողով

Բացած 1874 - 75 Նիստ Ը.

Տեղեկագիր

Կ-Ր-ՎԿ-Ի-Ն Կ-Ն-Բ-Ի Ինքնուրույն

Յ-Ն)Ն-Վ-Գ-Վ-Յ

« Վսեմաշուք Առեւնապետ

Ազգային Երեսփ. Ժողովոյ »

« Ամենայն Հայոց Վեհափառ

Հայրապետին կողմանէ 1872 Ապ-

(\*) Ազգային Ժողովոյ 1870 Վախճան  
 ցումն շարունակութեամբ է մինչ ց' 1874,  
 որով նկատուի ամեն այսինքն ընտելե-  
 րին կանանկ որո՞վեանն, Մայքիս Բո-

րի 28 թուով առ Ազգային Ե-  
 րեսփոխանական Ժողովն ուղղեալ  
 կանգակին առթիւ նոյն տարւոյ  
 ՚նեկա . 29 ին կազմուած Յանձ-  
 նաժողովս՝ որ 12 անդամէ կը  
 բաղկանար, իր քննութեանց ար-  
 գիւնքը տեղեկագրելէ առաջ  
 հարկ կը համարի իւր ակամայ  
 յապաղման համար բացառու-  
 թիւն տալ պատկառելի Ժողո-  
 վոյդ : Այս յապաղումը երկու  
 պատճառէ յառաջ եկաւ, նախ՝  
 իւր անդամոց ոմանց մի և նոյն  
 միջոցի մէջ ճանապարհորդու-  
 թեամբ բացակայութենէն, եւ

կիզը բացուած է Ազգային Ժողովն  
 և յաջորդ տարւոյ Մարտի վերջը փակ-  
 ուած, հետեւեալէս և յետ այնորիկ  
 Ազգային Ժողովոյ համար ամեն տարի  
 յոր բացումը նշանակուած է :

Երկրորդ՝ ազգային Վարչական փո-  
ճակին ծանուցեալ և անդ նմանե-  
րէն, որ անկարելի կընէին յանձն-  
նաժողովոյն նիւսերուն շարու-  
նակութիւնը :

« Յանձնաժողովոյ առաջին նիւ-  
տին մէջ իր պաշտօնը ճշգրեւ-  
ղելով Քնդհանուր ժողովոյ առ-  
տենաց ըստ թեան մէջ հետեւեալը  
գտար : »

« Յանձնաժողովոյ պաշտօնը  
պիտի լինի Վեհափառ կաթողի-  
կոսին կողմանէ եկամ վերջին կոն-  
դակին վրայ վիճարանել և մտա-  
ծել թէ այս խնդրոյն լուծման  
նկատմամբ ինչ ընթացք արժան  
է ընել և թէ Վեհափառ կաթո-  
լիկոսին մի նշան պատասխան  
տալ հարկաւոր է և հետեւեալ »

պէս այս խնդրոյն վրայ տեղեկ  
կազմը մը բերել Ընդհանուր ժողով  
դուրսն : »

« Այսպէս Յանձնաժողովս իւր  
պաշտօնը սահմանեալ զանեւէ  
ետեւ նկատողութեան առաջ  
մենայն Հայոց վեհախառն կազմ  
թուղիկասին կողմանէ եկած կանգ  
դակը որոյ բովանդակութիւնն  
է հետեւեալը : »

« Նորին վեհախառն թիւնք՝ Էջ-  
միածնայ միաբան Եղիսկոպոս  
ներէն միայն Սոսյ կաթողիկոս  
ընտրուիլը նոր և Եկեղեցւոյ հը-  
նաւանդ սովորութեանց դէմ կը  
զանէ, միանգամայն Եղիսկոպոս  
կան ուխտն յիշեցնելով այսպիսի  
գործոյ մը ձեռնամխելէ առաջ  
Եկեղեցւոյ անխախտ կանոնաց և  
Տաճկաստանի Հայոց Ազգային

Սահմանադրութեան համեմատ  
պարտ և արժան իսկ էր կըսէ ,  
Մայր Աթոռոյ հետ խորհրդա-  
կցիլ , և որովհետեւ այն ուխտին  
և երդման հեղինակը մենք չէ-  
ինք , որպէս զի շնչելու իրաւունք  
ունենայինք , այն ատեն հարկ  
կըլլար մեզի Եկեղեցական Ժողով  
գումարել ամեն կողմերէ և ար-  
ժան ու օգտակար եղածը տնօ-  
րինել . մենք այս բնէ ուզեցինք ,  
կըսէ , Եօրին Վեհափառութիւնն  
առ Պատրիարքն ուղղած հեռա-  
գրովնիս . իսկ Ազգային Վարչու-  
թիւնը հեռագրին միտքը բոլո-  
րովին այլայլած է տուած պա-  
տասխանովը և Սոսյ խնդրոյն  
անցքերուն իսկութիւնը ուրիշ  
կերպարանքի յեղաշրջած է . և ի  
վերջոյ կը յաւելու որ երկու

պատգամաւ որնեք զբիւրին յԵՊ-  
միածին, մէկք բարձրաստիճան  
եկեղեցական և միւսը աշխար-  
հական, որպէս զի պարզութիւն  
երկու կողմէն մտքերն ու գա-  
ղափարները և ինչ որ Ազգին հա-  
մար գիտնալու և գործելու կա-  
րելուք են՝ խորհինք, որով կարե-  
նամք ապառնի վտանգին առաջ-  
քնն առնուլ:

Ե Յանձնաժողովս խնդիրը հե-  
մէն քննելու համար հարկ տե-  
աւ աշս կոնդակին վերաբերեալ  
բոլոր պաշտօնական գրութիւն-  
ներն աչքէ անցնել, որք են վե-  
հափառ Հայրապետին հետագի-  
րք, Քաղաքական ժողովոյ պա-  
տասխանը, և Ազգային Երեսօ-  
խական ու Քաղաքական ժողովոց  
Ստոյ խնդրոյն վերաբերեալ ար-

ձանադ բու թիւնները և այն և այլն»  
« Այս ամէնը յանձաժողովս  
մանրամասնաբար քննութեան  
առնելէ ետեւ՝ նկատեց թէ ա-  
ռանց կանխաւ ամենայն Հայոց  
Վեհափառ Հայրապետին հաւա-  
նութեանը դիմելու՝ Էջմիածնայ  
միաբան Եպիսկոպոսի մը Ստոյ  
կաթուղիկոս ըլլալը տեղի տուած  
է իրաց արդի փիճակին։ Սակայն  
Ընդհանուր Ժողովս ալ կատար-  
ուած ընտրութիւնը վաւերացը-  
նելովը ազգային հնաւանդ սովո-  
րութեանց և ամենայն Հայոց  
Հայրապետութեան իրաւասու-  
թեանը դէմ գործել ընաւ մի-  
տում ունեցած չէ։ Վստն զի ի  
սկզբան Ընդհանուր Ժողովը  
« Ասի յարարերութեանց հաս-  
տատութեան և յետոյ Ստոյ կա-

Թուղիկոսական ընտրութեան վա-  
ւերացման և իմաստուն որոշումը  
տուեր է . և այս որոշման հա-  
մեմատ յատուկ Յանձնաժողով  
ժ'ալ կազմեր է նոյն օրը , որպէս  
զի նախ յարաբերութիւնները  
հաստատուին և յետոյ Սոոյ կա-  
թուղիկոսական ընտրութիւնը վա-  
ւերանայ : Սակայն մինչդեռ յա-  
րաբերութեան Յանձնաժողովը իր  
պաշտօնը չէ սկսած իսկ գործել ,  
Գաղաքական ժողովը Սոոյ կա-  
թուղիկոսական ընտրութիւնը կա-  
տարել տալով , երբ կրօնական  
ժողովը գոյութիւն ալ չունի ե-  
ղեր , իբրև կատարուած իրողու-  
թիւն ընդհանուր ժողովոյ ատ-  
եանը բերած է , և հաստատ-  
ուելիք յարաբերութիւններն ըն-  
դունելուն համար ընտրեալ ե-

պիտեղապատէն խոստովնապիլ մը  
առած զլալը մէջ բերելով յա-  
ռապէքան զհաստատութիւն յա-  
րաբերութեանց, ընտրութեան  
մաւերացու մը խնդրած է, սղա-  
մրաց ալից Ատիպողականութիւն  
ցոյց տալով զնոց զմեզ, զմեզ  
մեզ « Ահաւասիկ խոստովնապիլն  
պատճէնը »  
« Ամենապատիւ Սրբազան եղ-  
բայր և Ազգային կեդրոնական  
Վարչութիւն : զմեզ մէջ առաջնայն  
« Սոյց կաթուղիկոսական ընտ-  
րութեան համար սահմանադրա-  
պէս գումարուած Գաւառական  
Ժողովոյն կողմէն բուէից բացար-  
ձակ առաւելութեամբ նոյն ա-  
թուոյն կաթուղիկոս ընտրուե-  
լու սմասին սրբան ալ տնձնական  
ակարութիւնս և միանգամայն

անբաւականութիւնս յարաներով  
թէ ներկայ Գուարական ժողո-  
վոյն բերանացի և թէ Կեդրո-  
նական Վարչութեան հետագրով  
հրատարականս մատուցի ալ նէ,  
անկարելի ըլլալ ցոյց արուերուն  
համար, ի սէր Ազգիս և ի սէր  
խաղաղութեան՝ Աստուծոյ ամե-  
նակարող զօրութեանն ապափ-  
նելով և Կեդրոնական Վարչու-  
թեանդ օժանդակութեան և ձե-  
ռնտուութեանը փութահանալով  
պարտաւորեցայ նոյն սահմանա-  
դրապէս եղած ընարութիւնը ըն-  
դունիլ, ուստի սոյն ամենածանր  
և փափուկ պաշտօնը փարելու  
եղանակին մէջ ինչպէս Ս. Էջմ- շն-  
կ-Ն-Ն-Ն-Ն և Ս. Երուսաղէմի  
Պատրիարքը, նոյնպէս Ն-Ն-Ն-Ն ալ  
Ազգային Կեդրոնական Ընդհա-

նոր ժողովոյ յագում մեծի ա-  
վանայս կելկելոյ և Հայաստանե-  
ւոյց Ս. Եկեղեցւոյ ըրած որո-  
շումները յարդել կը խորտակուի ։

1871 Նոյեմբեր 8

Առանձն Վ. Մկրտչ Եպիսկոպո-  
սոյն ըրածն ԱԲՅ Երեւանի(\*) և  
Ֆեհեյ Կոնստանտինոպոլ  
Բնագրին յար և նման է ։  
Ինչո՞ւն է Ս. Եկեղեցւոյ

Ազգային Ընդհանուր ժողովը՝  
Ֆազարական ժողովոյ մէջ ըրած  
զախարականութեան և հատուա-  
րուելիք յարարութեանց Սոյ  
նորընտիր կաթողիկոսին կող-  
մանէ ընդունուելու մասին տը-

---

(\*) Ս. Մկրտչ Արքայան այս սուղ-  
բագրութեան մէջ ալ Երուսաղէմի Ե-  
պիսկոպոս եղած է զարմանալի սն-  
թացք ։

ուած ապահովութեանցն առջե-  
կը նախկին որոշումը փոխելով  
կատարուած ընտրութիւնը վա-  
ւերացուցեր է, բայց առավ՝ ինչ-  
պէս ըսինք, բնաւ միտում ունե-  
ցած չէ Եկեղեցւոյ հնաւանդ սո-  
վորութեանց և ամենայն Հայոց  
Հայրապետութեան իրաւասու-  
թեանը դէմ գործելու. այլ ընդ-  
հակառակն ընտրութիւնը վաւե-  
րացնելով, բայց հաստատուելիք  
յարարելութիւնները ամենայն  
Հայոց վեհափառ Հայրապետին  
հաւանութեանը վերապահելովը,  
Ազգին և Եկեղեցւոյ օգտակար  
և նորին վեհափառութեան իսկ  
հաճելի գործ մը ըրած ըլլալ  
կարծեր է։»

« Արդ Յանձնաժողովս կեցրա-  
կացնէ թէ, քանի որ դիտում

չկայ դորժոյն մէջ, և քանի որ  
կատարուած իրողութիւն մ'է,  
կը մնայ ընդհանուր ժողովոյն  
առ վեհափառ Հայրապետին ծա-  
նուցանել իւր այս պարագայիս  
մէջ ունեցած անկեղծութիւնը,  
եւ ըստ որում վեհափառ կա-  
թողիկոսը երկու պատգամաւոր  
ուզած է սոյն խնդրոյն համար  
բերան առ բերան խօսելու, Յանն-  
նաթողովս բնաւ արդելք չ'տես-  
նէր վեհափառ Հայրապետին այս  
կամքը կատարուելուն մէջ, մա-  
նաւանդ կարեւոր իսկ կը դատէ:  
Այս պատգամաւորութիւնը ա-  
ռանց յիազօր իշխանութիւն ու-  
նենալու կրնայ նորին վեհափա-  
ռութեան հետ Սոսյ և Ալթա-  
մարայ կաթողիկոսութեանց հա-  
մար հաստատուելիք յարաբերու-

Թեանց վրայօր ալ բանակցիլ, և միանգամ ընդ միշտ աւարտել այս ծանր խնդիրը՝ որ ստէպ կըրնայ նորոգիլ և Հայաստանեայց Եկեղեցւոյն միութեան ներդաշնակութեանը դէմ արդելքներ յարուցանել : »

« Այս է Յանձնաժողովոյս կարծիքը Սոսյ կաթուղիկոսական խնդրոյն նկատմամբ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին կողմանէ եկած Կոնդակի խընդրոյն լուծմանը համար : »

« 15 Յունիս 1874 »

Սոյն տեղեկագրոյն մէջ օրինակուած խոստմնագիրն է ահա՛, Տ. Մկրտիչ սրբազանի առւած խոստմնագիրը, զոր Տ. Սիմոն Եպիսկոպոս Սէֆէրեան իբրև Բաղաբական Ժողովոյ պահան-

Զամ խոստմնագիրն ընդունած և պաշտօնապէս ծանուցած է առ նա թէ՛ «Վարչութեան անուան պէտքեղամ խոստմնագիրը յանձնած է իրեն Տ. Մկրտիչ Սրբազան», և զոր Գաղաքական Ժողովն առանց ի ներսն ունենալու հիմ բռնած է Սոյ կաթողիկոսական ընտրութեան տեղեկագրոյն, և անոր յենդով յայտարարած է միանգամայն յատենի անդ Ազգային Ժողովոյ թէ՛ «Վարչութիւնը խոստմնագիր առած է նորրնաիր կաթողիկոսէն որ . . . յարարերութեանց մասին Ընդհանուր Ժողովոյ ընելիք որոշումը պիտի յարդէ» (բացում Ազգ. Ժողով, 1870 ամին Նիսա ԼԳ. երես 523). Նոյնպէս ի պատասխանի ամենայն Հայոց



Այս պաշտօնական յայտարարութիւնքն երբ ըրած է Քաղաքան ժողովը, կարծած է անշուշտ որ յարաբերութեանց մասին Ազգային ժողովոյ ընելիք որոշումը ԴԻՆԴԵՆ ԸՊԻՆԷԼ Է ԻՆՏԵՆՍՅ Տ. Մկրտիչ Սրբազան, այն ինչ նա իւր ստորագրած խոստմնագրով կուզէ ունենալ այն է՝-----ԹԵՐ և ԻԷ-----ԻՒՆԸ, զոր ----- և կը----- ԿԷՆԸ ԿԷՆԸ ամենայն Հայոց Հայրապետք, որոյ ուժով և ցայսօր կը յամառի Տ. Մկրտիչ Սրբազան և զնոյնս կը պահանջէ հակառակ Եկեղեցական կանոնաց և Ազգային ժողովոյ որոշմանց։

Իրաց այս վիճակին էական պատճառ Տ. Սիմոն Եպիսկոպոսի առանց հետեւեալնաց ծանրութիւնը նախատեսելու, կամ շաւն է

ըսել՝ նախատեսել ու գելու, Տ.  
Մկրտիչ Սրբազանի խոստմնագիրն  
իրբև պարզ և օրինաւոր ընդու-  
նիլն եղած է :

Սակայն այսու ամենայնիւ քա-  
նի որ Բազմաբան ժողովոյ Սույ-  
կաթուղիկոսական վերջին ընա-  
րութեան և անոր վաւերացման  
վերաբերեալ յայտարարութիւնք  
և առ Հայրապետն ուղղած գը-  
րութիւնն և Ազգային ժողովոյ  
որոշումները պաշտօնապէս հրա-  
տարակեալ են ժամանակին, և  
քանի որ զանոնք իւր լուսութեամբն  
ընդունած է Տ. Մկրտիչ Սրբա-  
զան, հետեւապէս օրինօք պար-  
տաւոր է հնազանդիլ Ազգային  
ժողովոյ որոշմանց և կեդրոնա-  
կան Վարչութեան հրահանգաց,  
յորոց խուսափելու իրաւունք չը

կրնար երբէք տայ իւր խոստումնա-  
 գիրը, որ կը թողում ըսել թէ՛  
 Ազգային Ժողովոյ Ստոյ խնդրոյն  
 առթիւ տուած որոշմանց առջև  
 իւր բաղադրեալ փիճակը կորու-  
 սելով իբրև շուք եւ շուքէն նկատ-  
 աւած է տարածման ընդամենը

Ազգային Ժողովն ի նոյն նստի  
 Յանձնաժողովոյ տեղեկագիրը կը  
 յղէ Չեռնիստուծեան և Իրաւա-  
 սուծեան դիւանաց ի նախաքնն-  
 նութիւն : Սոյն դիւանք միանա-  
 լով կը պատրաստեն իրենց տե-  
 ղեկագիրն և կը Ընտանցանեն  
 Ազգային Ժողովոյ նոյն բաղման  
 Մ. Գ. Նիստին որ ի 20 Գեղեցեւի  
 բերի 1874, որ ահա ի յաճախ  
 մտնելու արտաքին սխրակիւնս, իսկ  
 լուծուց եւրոպ. և արեւմտ.  
 իրենց յաճախման զգուշացալ ըստ ի

Ազգային Ընդհանուր Ժողով  
Բնակավայր 1874 թ. Նոյեմբ. 10-Ա.

Տեղեկագիր

Կարգադրության համար 1277

1872 Ապրիլ 28-թ.ուսով ամենայն Հայոց վեհափառ Հայրապետին կողմանէ առ Ազգային Երեսփոխանութիւնն ուղղեալ Կոնգրային առ թիւ՝ Ազգային ժողովէ դատկապէս կարգուած Յանձնաժողովոյ 1874 Յունիս 15 թրուականաւ Տեղեկագիրք՝ պատկառելի ժողովոյդ յանձնարարութեան համեմատ այսօր Չեռնհասութեան և Իրաւասութեան միացեալ դիւանացս աւանդուելով, անմիջապէս նկատողութեան առնուեցաւ եւ եղած քննութեանց արդիւնքը հետեւեալ կեր-

պիսի արանկարէք յայտօյցի կը  
նեքկայացուի զնա՝ միտկապողա՝  
Վիսայեալ զիւանքն ի պա-  
տասխանի վերայ իշեան Հայրապետ  
տական Կոնգակին արուելիք բա-  
ցարութեանց մասին . Յանձնա-  
ժողովոյ Տեղեկագրին մէջ նշա-  
նակուած եզրակացութեանց կը  
ձայնակցին . այսինքն թէ՛ « Ընդ-  
հանուր ժողովը կանարուած ընա-  
րութիւնը (Սոցիալիստական  
թեան) վաւերացնելովը՝ Ազգա-  
յին հնամանց ստորութեանց ե-  
տեւանայն Հայոց Հայրապետութեան  
իրաւասութեանը գէ՛մ գոր-  
ծելու ընտրութեամբ ունեցած  
չէ . » միայն թէ՛ « Նկատելով որ  
նայն Կոնգակին ընդունելութեան  
թուականէն ի վեր անցած եր-  
կար ժամանակի միջոց մը եղա-

Նազան պարագաներ՝ Վեհափառ  
Հայրապետին խնդրած Երկու  
պատգամաւորաց ստիգողական  
կարել որու թիւնք թերեւս նուա  
զեցուցած են, կառավարկեն որ  
սոյն կէտը Նորին Վեհափառու  
թեան գրուելիք պատասխանա  
գրին մէջ յայտնուելով՝ այս մա  
սին պէտք եղածը անորինելու  
համար Նորին Ս. Օծու թեան կող  
մանէ գալիք վերջնական գրու  
թեան մը սպասուի : »

« Ուստի կեզրակացնենք միաց  
եալ գիւանքս թէ, ժամ յառաջ  
վերոգրեալ խնայտով պաշտօնա  
կան գիր մ'ուղղուի առ Վեհ. Հայ  
րապետն ամենայն Հայոց յանուն  
Ազգային Ժողովոյ, խորհրդակցու  
թեամբ միացեալ գիւանացս : »

« 15 Նոյեմբեր 1874 »

Ազգային ժողովն ի սոյն նստի  
նկատողութեան առնելով միաց-  
եալ դիւանաց Տեղեկագիրն , յետ  
միճարանութեան երկու բուէի  
դէմ միաձայնութեամբ կընդունի  
տեղեկագրոյն ամբողջութիւնը ,  
հետեւապէս և խորհրդակցու-  
թեամբ Չեռնհասութեան և Ի-  
րաւասութեան դիւանաց , և քըն-  
նութեամբ Խմբագրութեան դի-  
ւանին ի պատասխանի Հայրա-  
պետական կոնդակին՝ յանուն Ազ-  
գային ժողովոյ առ Հայրապետան  
ամենայն Հայոց յղելի սա պա-  
տասխանագիրը կը պատրաստը-  
ուի , և կը մատուցուի Ազգային  
ժողովոյ նոյն բացման ժՁգ նիս-  
տին , որ ի 21 Մարտի 1875 :

ԱՂՏՅԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՒՄ

ԲՈՅՈՒՄ 1874 ՎԵՐՆԻՍ ԺԶ.

« Աստուածարեալ Մեծի Եպիսկոպոսապետիդ և ծայրագոյն Պատրիարքիդ համադրական նախամեծար Աթոռոյ Արարաւեան առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, արժանաժառանգ Աթոռակալիդ սրբոյ առաքելոյն Քաղէոսի և Բարթողիմէոսի և Հօրն հաւատոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Ընդհանրական Կաթողիկոսի ամենայն Հայոց շնորհաձիր սրբոյ Աջոյն համբոյր որդիական : »

« Վեհափառ Քահանայապետ  
և Տէր Հոգեւոր : »

« Կանգակ Հայրապետութեան »

Մեծի և անաքերաշնորհ Լորդ  
մերոյ, թուադրեալ 208 համա-  
րաւ և արուեալ ի 28 Ապրիլի 1872  
ամի, ընթերցաւ ի 26 Մայրսի  
այնք ասարոյ յատենի Ազգային  
Ժողովոյս Հայոց Տանկատան  
եայց և անմիջապէս մանկաւ  
Ազգային Ժողովա ի բարուք խե-  
լամատի ինչ անաղարկութեանց  
պարունակելոց ի կոնգակի անդ  
Վեհափառութեան Չերոյ և ի  
քննել զամենայն անցս որ ի ժա-  
մանակն յայնուսիկ անցին, կարգ-  
եայց Ժողով Մանական, Սակայն  
որ ինչ այնուհետեւ զէպք ազ-  
գայինք ի Մայրաքաղաքիս պա-  
տահեալք չեն զանխուլ յիմա-  
տութենէ Չերսէ, որք և պատ-  
հանու ետուն յապագմանս անդե-  
կադրի Մանական Ժողովոյն,

ուստի և պատասխանուոյ կոնդակի  
Վեհափառութեանց : և զայն  
ՏԵՔ Ապրիլի խաղաղել ամենայնի  
Տեառն օգնականութեամբ վե-  
րբասին ատեն ի նկատի առա-  
ջարկութիւն կոնդակի Վեհափա-  
ռութեան Չերոյ ի նիստ Ազգա-  
յին ժողովոյն որ յ' 8 նոյեմբերի  
1874 ամին և տեղեկագիրն զոր  
Մասնական ժողովոյն մատուց-  
եալ էր կանխաւ յատեան մեծի  
Ժողովոյն չղեցաւ ի գիւան նա-  
խաքննութեան յորմէ վերասին  
յատեան ժողովոյն տեղեկագրը  
եալ էզբնականութիւն նախաքնն-  
նիչ գիւանացն ընկալեալ եղեւ  
յատենի մեծի ժողովոյն ի 20  
Դեկտեմբերի որպէս է տեսանել  
ի սոցագրեալ ատենագրութիւնս  
անգ Ազգային ժողովոյն :

Արդ ըստ եզրակացութեան  
այնքան յանդեկագրի փութամբ նախ  
յայտ առնել խոնարհարար առ  
Վեհափառութիւն Ձեր թէ՛

Ա. Ազգային Ժողովս Հայոց  
Տաճկաստանեայց ի հաւանել անդ  
իւրում ընդ դաւառական ընտ-  
րութիւն կաթողիկոսին Սոյ՛  
նկրտէր ամենեւին եղծանել  
զվաղնջուց սուրբութիւնս Ազգին  
և անցանել ըստ սահման իրա-  
ւասութեան Հայրապետութեանն  
ամենայն Հայոց :

Բ. Քանզի յաւուրց անտի ժա-  
մանելոյ կանգակի Վեհափառու-  
թեան Ձերոյ և այտր՝ բազում  
ժամանակք անցեալ են և նո-  
րանոր դէպք պատահեալ ի Մայ-  
րաքաղաքիս, թերեւս նուազեալ  
իցէ այսոքիւք կարեւորութիւն

հարկի պատգամաւ որս ապաւստ  
պահանջելոյ Վեհափառութեան  
նրդ . և ամին իրի իղձ լինի Ազ-  
գային ժողովս գիտել , թէ զի նշ  
զայդմանէ կամք իցեն արդ Վե-  
հափառութեան Չերոյ .  
— Առաքելաշնորհ Տէր , զայն  
զայս յայտարարութիւն Ազգային  
ժողովոյս փութալով անկեղծօրէն  
Ժանուցանել Վեհափառութեան  
Չերում , պարտ համարիմք յայտ  
աննել սխանդամայն , զի ժողո-  
վարդ Հայոց որ ի սփիւռս Տան-  
կատանի կեաց , և համախումբ  
պատգամաւ որս թիւն նորա Ազ-  
գային ժողովս կոտուանդնու պօլսոյ  
անձկան հանապաղ ճեկասէր գո-  
րովոյ , սրբոյ Աթոռոյն Դմիտրի  
կ Վեհի Աթուակայիդ , և սրպէս  
երէկ և այսօր նոյն և յաւիտեան

կացցէ և մնացէ ժողովուրդս  
այս մեծ ընդ հովանեաց իւրոյ  
առաքելականն Աթոռոյն, անխա-  
թար սրահելով զփառս և զիրա-  
ւունս նորա, հաւատացեալ հաս-  
տատութեամբ թէ ի միութեան  
անդ իւրում և եթ ընդ Մայր Ա-  
թոռոյ սրբոյ Էջմիածնի գայանիցէ  
միշտ կեանս և սփոխանս և  
ոչ ոք և ոչ ինչ կարացէ գրդ-  
ուել զլրութիւն մեր և ուծացու-  
ցանել ի հայրենի նախրական օ-  
րինաց և ի բազմադարեան սրբ-  
բանանեալ աւանդութեանց ։ Եւ  
Աստուած ոչ թողցէ զժաման-  
գութիւն իւր ի բաժին օտարաց ։  
զի յիշատակք հարցն մերոց սրբ-  
րոցն Գրիգորեանց և Ներսիս-  
եանց մեծարոյն են և լիցին միշտ  
առաջի Բարձրելոյն ։ Եւ ահա

յԱթոս, անդ նոցա անցեալ բազմի  
 այսօր արժանապէս Հայրդ հասա-  
 րակաց, և շուրջ զնովաւ են սրգիք  
 հարանգաւք, յորոց ի միասն վառ-  
 եալ բորբոքի նախանձ բարեպաշ-  
 տաւթեանց հարցն ի բեանց :

« Հաճեացի վեհափառութիւն  
 Ձեր ընդունել զսրտագին ակր  
 սրգւոց իւրոց և ընտլ զնոսա ա-  
 ռաքելական օրհնութեամբ ի օ-  
 բովորս :

« Ազդ ըբ Անտուածարեալ Հայ-  
 րապետ, ի փառս և ի շինու-  
 թիւն Եկեղեցւոյ և պարձանս  
 Ազգիս :

« Ի զիմաց Ազգային ժողովոյ ?  
 « Ի զԹոնարհ ծառայք և սրգիք ?

ՆԱԽԱԳԱՀ  
 ԱՐԲԵՊԻՌՈՍՈՍ  
 « ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՕԼՈՍՃ »

ԱՏԵՆԱԳՊԻՐ և ԱՏԵՆԱՊԵՏ

ՆՏԵՓԼԵՆ և ՅԱՐՈՒԹԻՒՆ

Գ. Պ. ՓԼՓԼՁԵԱՆՅ և Գ. ՏԱՏԵԱՆ

Ը 21 Մարտ 1875 և ազգային ժողովի  
կողմից Գոթիսի պրոնոցիայի

Ազգային Ժողովն առանց դի-  
տողութեան կրնգունի սոյն պա-  
տասխանագիրը յանուն և ի դի-  
մաց իւր՝ իւր նախագահին և  
Մայր Իււանին ստորագրութեամբ  
կը յղէ առ Հայրապետն ամե-  
նայն Հայոց որ յետ ընդունելոյ  
զսոյն պատասխանագիր՝ երկու  
պատգամաւորաց ատօի ի սուրբ  
Էջմիածին առ ինքն առաքման  
պահանջու մը չկրկնէր :

Ազգային Ժողովն այս պաշտո-  
նական գրութեամբ այս անգամ  
եւս հանդիսապէս կը հաստատի  
և կը կնքէ առ ճշմարտութիւնը

Թէ՛ Հայաստանեայց առաքելա-  
 կան՝ սուրբ Եկեղեցւոյ՝ Հայրա-  
 պետութեան առաքելական Մայր  
 Աթոռը սուրբ Էջմիածինն է, և  
 անդ բազմոզք միայն ամենայն  
 Հայոց առաքելայաջորդ Հայրա-  
 պետն և Մայրագոյն Պատրիարք  
 կաթողիկոսն է և լին :

ԿԱԹՈՒՂՒԿՈՍԱԿԱՆ ՎԱՒԵՐՈՒ  
 ՅՈՒՄՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ

Ազխամարայ Տ. Պետրոս վա-  
 նահայր փեռապետն յետ ըն-  
 դունելոյ կաթողիկոսական ձեռ-  
 նագրութիւնն և օծումը (տես  
 երես 416 — 424) կակտի դամբան  
 դդամ իւր կոչման անվայել ան-  
 կարգ վարուց փորձեր ապլ Մի-  
 արանութիւնը զանի յուղղու :

Թիւն ամերու համար ամեն շաբաթ  
և միջոց ի դարձ կը դնէ, բայց  
ի դուրս կը շարունակէ նա մնալ  
նոյն անկարգ վարուց մէջ. մինչ  
դիւրս Միտրանու թիւնն և թեմա-  
կան ժողովարար շեն հանգուր ձ-  
մեր այլ ևս և ի 10 սեպտեմ-  
բերի 1864 թեմական ժողով կը  
գումարեն ի վանս նարեկայ, և  
բաւ հին ամերու թեմն իւրեանց  
կը հրատարեցնեն զանի և մի-  
աձայն հանու թեմաք միարաննէ-  
րէն Տ. Խաչատուր Եպիսկոպոսը  
կաթուղիկա կը նարեն և ի 25  
Սեպտեմբերի կաթուղիկասկան  
ձեռնադրու թիւնն և օժուժը հան-  
դիտուր կերպի կը կատարեն  
Ազխարայ վանուց Ս. Խաչ-  
ատանքին մէջ, որոնք մեծն յարար  
Այս միջոցին Տ. Պետրոս կա-

Թողիկոս Փշապանք գիւղն իւր  
եղբորը տունը կը գտնուի. երբ  
կը լսէ կաթողիկոսական նոր ընտ-  
րութիւնն և օծման հանդիսի  
պատրաստութիւնը՝ կանապարէ  
և կուղէ գնալ ի վանս Աղթա-  
մարայ. բայց Միաբանութիւնը  
կարգելու. ուստի և կատարուի  
վերստին դառնալ ի նոյն գիւղն  
և անդ Էօթէեան Մանուկ ա-  
նուն ազգայնոյն տունն օթեւա-  
նիլ:

Վանայ առաջնորդ Տ. Իգնա-  
տիոս Եպիսկոպոս Բաբմանեան  
ևս կ'իմանայ կաթողիկոսական  
նոր ընտրութիւնն և օծման արա-  
րողութեան պատրաստութիւնն,  
և կը փութայ տեղական կառա-  
վարութենէն արգելիչ հրամանա-  
գիր մը ստանալ և կառավարա-

կան պաշտօնէի մը ձեռօք հան-  
դերձ մէկ քանի ուստիկանով  
գրկել յԱղթամար, սակայն մին-  
չեւ որ հրամանատար պաշտօն-  
եան և ուստիկանք կը հասնին՝  
կաթուղիկոսական ձեռնագրու-  
թիւնն և օժուճը կը կատարուի  
ու կը վերջանայ : Սոյն պաշտօն-  
եայք և Միարանութիւնը ծովուն  
ալեկոծութեան պատճառաւ կրա-  
տիպուին երկու օր մնալ ի կըղ-  
զին : Այս երկաւուր միջոցին Տ.  
Պետրոս կաթուղիկոս գիշեր ա-  
տեն պատկած տանը երդիբէն  
հրացանի հարուածներով կսպան-  
նուի ի 28 Սեպտեմբերի 1864 :

Տ. Պետրոս կաթուղիկոսի ըս-  
պանման սճրոյն գոյճը, և Տ.  
Թաշատուր Եպիսկոպոսի կաթու-

դիկոսանալուն լուրը հեռագրով  
և նամակօք կը հասնին առ Ա. Ղ.  
գային Կեդրոնական Վարչու-  
թիւնն :

Ա. Ղ. գային Վարչութիւնն անժի-  
շապէս Բ-է-է-է կը գրէ առ Բ. Գուռն  
և Բ. Գուռը հրամանագիր կուղղէ  
առ Կառավարութիւնն Վանայ որ  
սոյն սպանութեան ոճրագործու-  
թիւնը քննէ և արդիւնքը յայ-  
տագրէ :

Սոյն քննութեան, ըստ խընդ-  
րանաց Ա. Ղ. գային Վարչութեան,  
ներկայ կը գտնուին Վանայ Ա-  
ռաջնորդ Տ. Իգնատիոս Եպիսկո-  
պոս Բարձաճեան և Կարնոյ Ա-  
ռաջնորդ Տ. Յարութիւն Եպիս-  
կոպոս Վեհապետեան : Քննու-  
թիւնը նախ ի Փշափանք գիւղն  
և ապա Վանայ Կառավարու-  
թեան

Գատական ատենին մէջ կատարուելով կը շարունակուի ց'15 Ապրիլի 1865 :

Տ. Իգնատիոս և Տ. Յարութին Եպիսկոպոսուք 1865 Ապրիլ 21 թուական տեղեկագրով մը Աղթամարայ մէջ տեղի ունեցած անցքերն երկարօրէն կը պատմեն . նոյնպէս և Տ. Պետրոս կաթողիկոսի անվայել կեանքը կը նկարագրեն , և անոր ըստանման պատճառ իւր խառնագնաց վարքն ըստը կը նշանակեն , և Տ. Խաչատուր Սրբազանն ու Միաբանութիւնն անպարտ կը կացուցանեն . կը յաւելուն ըսել նաև որ եթէ Տ. Խաչատուր Սրբազան Աղթամարայ աթոռին վրայ չհաստատուի՝ մոզովօրոգը կը օնափոխութեան պիտի դիմէ :

Սոյն տեղեկագրոյն հետ Վա-  
նայ կառավարութեան Գասա-  
կան ատենին մէջ եղած հարցա-  
քննութեան արդեանց <sup>— հիշէն</sup>  
յայտագրոյն պատճէնն ևս կը  
յղեն առ Ազգային կեդրոնական  
Վարչութիւնն :

Իսկ Բ. Գուռը՝ Վանայ կառա-  
վարութենէն առ ինքն հասած  
յայտագրոյն վրայ (զոր նոյն եր-  
կու եպիսկոպոսունք ևս ստորա-  
գրած են) 1865 Յունիս 7 թը-  
ւական պաշտօնագրով իջ կը ծա-  
նուցանէ Ազգային Պատրիարքա-  
րանի թէ՛ որչափ որ Տ. Պետրոս  
կաթուղիկոսն սպաննողները Եու-  
սուֆ և Շահին անուն երկու  
փախստական քիւրտերն են կըս-  
ուի, այսու ամենայնիւ Տ. Խա-  
չատուր սրբազանն այ ուրիշ մի-

արանից հետ կերևի թէ մեծ  
 մասնակցութիւն ունեցած է գործ  
 ժոյն մէջ, և մինչև փախստա-  
 կանքիւր տերը չձեռքակալուին  
 և չհարցաքննուին՝ Տ. Խաչատուր  
 Սրբազան չկրնար կասկածանքէ  
 ազատիլ, և չկրնար այժմէն կա-  
 թողիկոսութեան մէջ հաստատու-  
 ուիլ:

Բ. Դուռը 1865 Նոյեմբեր 4  
 թուական երկրորդ պաշտօնագիր  
 մը եւս կը յղէ ի Պատրիարքա-  
 ըան, որով իւր առաջին պաշտօ-  
 նագիրը կը յիշեցնէ, և միանգա-  
 մայն կը յանձնարարէ որ սպան-  
 եալ կաթողիկոսին տեղ շուտով  
 արժանաւոր մէկը գրուի:

Այժմ ամառայ թեմականք երբ  
 1866 թուականի սկիզբները մին-  
 չեւ իսկ կրօնափոխութեան ըս-

պատնայեօք Տ. Խաչատուր Արք-  
եպոսկոպի կաթողիկոսական հաս-  
տատութիւնը կը խնդրեն թա-  
խանձագին, Ազգային Վարչու-  
թիւնը կը արտօնուի թ. Դուան առ-  
այն ունեցած արամազրութիւնը  
հասկնալու և հարցաքննու թեանց  
վերջնական արդիւնքը փութա-  
ցընելու համար Ե-ժէէ մը գրել-  
թ. Դուան ալ այս Ե-ժէէէ փայ-  
կարնոյ կուսակալութեան հրա-  
մանագրելէ և պատասխանն ըս-  
տանալէ յետոյ՝ 1866 Սեպտեմբեր  
6 թուական պատասխանագրով  
մը վերասին կը ծանուցանէ Ազ-  
գային Վարչարարքարանին թէ եր-  
կու փոխառական Քրդաց ձեր-  
րակալութեան և հարցաքննու-  
թեան կը կարծաթի Խաչատուր կա-  
թողիկոսի անպարտ կամ յան-

ցապարտ քլլալն ստուգելու հա-  
մար . ե թէ՛ անոր կաթուղիկո-  
սութիւն տրուիլն ալ չյարմարիր .  
Ի 12 Յուլիոսի 1866՝ ամենայն Հա-  
յոց Հայրապետական նոր ընտրու-  
թեան ընտրելեաց ցանկի պատ-  
րաստութեան համար կը գումարի  
Նկեղեցական Վիճակային ժողո-  
վըն , որ նոյն ընտրելեաց ցանկը  
պատրաստելէն ետքը՝ Տ. Խաչա-  
տուր Արքեպիսկոպոս Նկատմամբ ալ  
սա վճիռը կուտայ :

« Վիճակային Նկեղեցական ժո-  
ղովս տեղեկանալով եթէ Խաչա-  
տուր Եպիսկոպոս Աղթամարայ  
հանդուցեալ Պետրոս կաթուղի-  
կոսին կենդանութեան ատեն  
սեպրիմբր անոր տեղ կաթուղիկոս  
օժել տուեր է , անվաւեր վճռեց  
անոր կաթուղիկոսութիւնը : » Եւ

նոր ընտրութեան համար եռա-  
նուն ընտրելէաց ցանկ մը կը պատ-  
րաստէ, և կը տեղեկագրէ առ  
Ազգային ժողովն : (Տես երես  
565 - 573) :

Ազգային ժողովն 1866 Յուլիս  
22ի նիստին մէջ ըստ վճռոյ Ե-  
կեղեցական վիճակային ժողովոյ  
Թափուր կը հրատարակէ զԱզ-  
Թամար, և նոր ընտրութիւնն ու-  
րիշ նիստի կը թողու կատարել  
(Տես երես 573 և 576) :

Պատրիարքական Խառն ժողո-  
վը (\*) 1866 Հոկտեմբեր ամսոյ  
փերջերն ԱզԹամարայ միտրան Խի-  
զանցի Տ. Յակոբ Եպիսկոպոսը  
ԱզԹամարայ վանուց կաթուղի-  
կոսական Տեղապահ կը կարգէ :

---

(\*) Տես 689 երեսին ժանաթութիւնը :

Նոյն տարւոյ Նոյեմբերի 14 ին ալ  
կորոչէ որ Տ. Խաչատուր Արքա-  
զան գայ ի Կոստանդնուպօլիս .  
սուտի և մէկ կողմանէ Գատրի-  
արքական պաշտօնագիր կուղղէ  
առ Նա և միւս կողմանէ ալ Բ.  
Դանէն հրամանագիր կառնու որ  
Վանայ Տեղական Կառավարու-  
թիւնը արդելք չըլլայ անոր ի  
Կոստանդնուպօլիս Եանապար-  
հորդութեան : 30 - 360 անոյն 1867

Եկեղեցական Վիճակային Ժո-  
ղովոյ վճիռն և Ազգային Ժողո-  
վոյ որոշումն առ կախ կը մնան  
և գործադրութեան մասին գըժ-  
ուարութեանց կը պատահին .  
մինչ զի Ազգային Ժողովոյ 1867  
Փետրվար 10 ի և 24 ի , և Հոկտ.  
20 ի նիստերուն մէջ խնդրոյ ներ-  
քու կիյնան և նոր որոշման կեն.

Թարկին : (Տես երես 648 և 694 - 735) :

Ազգային Ժողովոյ այս նիստե-  
րու միջոցին ի 19 Սեպտեմբերի  
1867 Պատրիարքական հրաւիր-  
մամբ եօթը Վիճակաւոր Եպիս-  
կոպոսուներ ի ժողով կգումարուին  
և Աղթամարայ խնդրոյն վրայ ի-  
րենց կարծիքը կը տեղեկագրեն  
առ Տ. Պօղոս Բ. Պատրիարքն :  
(Տես երես 688 - 689) :

Տ. Խաչատուր Սրբազան Պատ-  
րիարքական Խառն ժողովոյ սրու-  
չումէն երկատրուայ շտի մամա-  
նակ յետոյ՝ կուղայ ի Կ. Պօլիս  
ի 12 Հոկտեմբերի 1868 :

Այս միջոցին Տ. Պօղոս Բ. Պատ-  
րիարքի հրամարեցնուցման խոն-  
դիրն երեսան կելլէ . . . . . Պատ-  
րիարքը կը հրամարի . . . . .

ուր արեմն կը յաջորդէ Տ. Մկեր-  
տիչ Արքեպիսկոպոս Խրիմեան ի  
4 Սեպտեմբերի 1869 : (Տես Ե-  
րես 747-748 և 755-757) :

Ազխամարայ ի Կոստանդնու-  
պոլիս գանուող թեմականք ա-  
ղերսագրով մը Բ. Դրան կը գի-  
մեն , և կը խնդրեն որ Տ. Խա-  
չատուր Արքազան կաթուղիկոսա-  
կան պաշտօնիս վերագանայ  
յԱզխամար : Բ. Դուռը 1869 նո-  
յեմբեր 22 թուական պաշտօնա-  
գրով մը գնոյն աղերսագիր կը յղէ  
ի Պատրիարքարան և հարկ եղածը  
անտրինել կը յանձնարարէ :

Ազխամարի Ընդհանուր Ժողով

1870 Յունիս 25

Ազգային Ժողովոյ սոյն նիստին  
մէջ Տ. Մկրտիչ Պատրիարք . Ե .

ընտրութեանս ուշադրութեան կը  
ներկայացնէ Աղթամարայ խըն-  
դիրը : Ահա իւր խօսքը :

« Այս օրերս ստիպողական գը-  
րեր եկած են վիճակայնոց կող-  
մէն թաշատուր Եպիսկոպոսին հա-  
մար , և անհամբեր պատասխանի  
կատարեն . այս խնդիրը կնճռա-  
լից կերպարանք մը ստացած է .  
մէկ կողմէն Եկեղեցական Համա-  
գումար ժողովին վճիռը կայ ,  
զոր Երեսփոխանական Ընդհա-  
նուր ժողովն ալ հաստատեր և  
վաւերացուցեր է . միւս կողմէն  
Թաշատուր Եպիսկոպոսն , որ նոյն  
վճռոյն ենթակայ կը գանուի ,  
և որ երկար ատենէ ի վեր Պօ-  
լիս եկած է , կը գանդատի թէ՛  
Տիեզերական երկից Ս . ժողովոց  
հակառակ առանց իր ներկայեւ .

Թեան տրուած է այն վճիռը . և որովհետեւ ինք ներկայ է այժմ, կը խնդրէ որ նորէն դատուի Մասնաժողովոյ մը առջեւ և իր փաստերն ալ քննուին : »

Եւ կառաջարկէ որ խնդիրը նկատողութեան առնուի և խոհական ու միջին ճամբով անօրէնութիւն մ'ըլլայ անմիջապէս :

Ազգային ժողովն Պատրիարքին սոյն առաջարկութեան վրայ բաւական վիճարանութիւն ընելէ ետքը՝ միաձայն հաւանութեամբ Ազխամարայ կաթողիկոսական խնդիրը Պատրիարքին և Եկեղեցական Վրճակային (Համագումար) ժողովոյն անօրէնութեանը կը յանձնէ : (Տես նոյն նիստի ատենագրութիւնն անտիպ) :

Ազգային ժողովոյ սոյն որոշ-

ման գործադրութիւնը կը յապազի ա՛յնչափ, որ վերստին Ազգային ժողովոյ ատենանը կելլէ խնդիրը :

Տ. Խաչատուր Սրբազան զկնի վերակազմութեան Ազգային ժողովոյ 1870 Օգոստոս 28 և Սեպտեմբեր 11 թուական երկու բողոքագիր առ Ազգային ժողովն և Հոկտեմբեր 27 թուական բողոքագիր մ'ալ առ Ազգային կեդրոնական վարչութիւնն կը մատուցանէ, որովք մէկ կողմանէ Եկեղեցական վիճակային ժողովոյ առանց իւր ներկայութեան իրեն նկատմամբ տուած վճռոյն դէմ կը բողոքէ, և վերաքննութիւն կը պահանջէ, և միւս կողմանէ առանց Ազգային վարչութեան գիտութեան կաթուղիկո-

սական պաշտօնանկութիւն և նոր  
կաթուղիկոսի ընտրութիւն եւ  
ձեռնադրութիւն ու օծումն կա-  
տարուելուն համար ալ ներողու-  
թիւն կը խնդրէ, միանգամայն և  
ի շինութիւն Աղթամարայ Վա-  
նուց և թեմական ժողովրդեան  
ամենայն հրահանգ և կանոնա-  
դրութիւն ընդունիլ և գործա-  
դրել կը խոստանայ :

Աղթամարցիք դարձեալ ուրոյն  
աղերսագրովք երկիցս Բ. Գուան  
կը գիմեն և Տ. Խաչատուր Սըբ-  
րազանի վերագարձը կը խընդ-  
րեն : Բ. Գուան ալ 1871 Յուն-  
վար 28 և 1873 Մարտ 1 թուա-  
կան երկու պաշտօնագրովք Աղ-  
թամարցւոց աղերսագրերը վե-  
րըստին կը յղէ ի Պատրիարքա-  
րան, եւ պարտ ու պատշաճը

զործագրել և արդիւնքը հաղորդել կը յանձնարարէ :

Ազգային ժողովոյ 1870 Յունվար 23ի նիստին որոշուիմք, ինչպէս ըսինք, անգործագրելի կը մնայ : 1870-1872 ամի Բաղաքական ժողովը կը խոստանայ Ազխամարայ խնդիրը տեղեկագրով մը ներկայացնել Ազգային ժողովոյ, (Տես բացում Ազգային ժողով, 1870 ամին նիստ Է, Երես 108), բայց չկատարէր իւր խոստումն, առարկելով թէ՛ Տ. Խաչատուր Սրբազան բողոք բարձած է առ Ազգային ժողովն ևյն : (Տես նոյն բացում նիստ Թ, Երես 128) :

Ազգային Վարչութեան 1872-1874 շրջանին կրօնական և Բաղաքական Խառն ժողովն իւր մէ-

քէն խառն Յանձնատոգով մը կը  
 կարգէ, և Ազիմամարայ խրնդ-  
 բոյն համար նոյն խոստացեալ  
 տեղեկագրոյն պատրաստութիւնն  
 անոր կը յանձնէ, որ եռամեակ  
 միջոցի մէջ աւարտելով իւր պաշ-  
 տօնը խառն ժողովոյ կը ներկա-  
 յացնէ իւր տեղեկագիրը: Խառն  
 ժողովն ալ զնոյն տեղեկագիր  
 յատուկ պաշտօնագրով մը կը  
 մատուցանէ Ազգային ժողովոյ  
 1870 ամի բացման ԾԳ. նիստին  
 որ յ' 8 Գեղեւեմբերի 1872:

Ազգային Ընդհանուր Ժողով  
 Ընդհանր 1870 - ԳՆ

Նիստ ԾԸ. Կ. Կ. ԿԱ.

Ազգային ժողովը ԾԸ. և Կ.  
 ԳՆԻՎ նիստերուն մէջ այն վար-  
 չական տեղեկագիրը նկատողու-

Թեան հասնու , և յետ երկու-  
րասու և յուղեալ փիճարանու և  
Թեան ԿԱ. նիստին , որ յ' 30  
Մարտի 1873 , գաղանի քուէար-  
կուժեամբ վերստին կորոչէ և կը  
յանձնէ Աղթամարայ խնդիրն Ե-  
կեղեցական Վիճակային ժողո-  
վոյ ի վերաքննութիւն : (Տես նոյն  
նիստերու աստեճագրութիւնները) :

Սոյն այս որոշմամբ Ազգային  
Ժողովն Աղթամարայ խնդրոյն հա-  
մար պահանջուած վերաքննու-  
թիւնը կրնդունի : նոյնպէս կրն-  
դունի և Եկեղեցական Վիճակա-  
յին ժողովը :

Եկեղեցական Վիճակային ժո-  
ղովը կը գումարի յ' 7 Մայիսի  
1873 , և ասան երկու Եկեղեցա-  
կաններէ ( վերը Եպիսկոպոս )  
Մասնաժողով մը կը կարդէ , որ

պաշտօն կը գծէ խնդրոյն պատ-  
մական անցից վիճակը քննել և  
մանրամասն ի գիր առնուլ, նոյն-  
պէս և Տ. Թաշատար Արքայանի  
բացատրու թիւներն և բողոքող  
անձանց առարկու թիւները լսել  
ու քննել և արդիւնքը տեղեկա-  
գրել:

Սոյն քննելու Մասնաժողովոյ  
պաշտօնի շարունակութեան մի-  
ջոցին պատրիարքական հրամա-  
րականի խնդիրը կը ծագի: Տ.  
Մկրտիչ Պատրիարք կը հրամա-  
րի, և հետո հռակ տալու Պատ-  
րիարք կընտրուի Տ. Ներսէս Արք-  
եպիսկոպոս Վարժապետեան ի  
26 Ապրիլի 1874 (Տես երես  
972 - 974):

Այժմ ամարցիր դարձեալ աղեր-  
սագիր կը մատուցանեն առ Տ.

Գուռն , որ 1874 Մարտ 22 թը-  
ուական պաշտօնագրով մը Աղ-  
թամարցւոց աղերսագիրը նորէն  
ի Պատրիարքարան կը յղէ , և  
պարտ ու պատշաճը անօրինել  
կը յանձնարարէ :

Եկեղեցական Քննիչ Մասնա-  
ժողովն իւր տեղեկագիրը կը մա-  
տուցանէ Եկեղեցական Վիճա-  
կային ժողովոյ 1874 Փետրվար  
25 ի գումարման :

Եկեղեցական Վիճակային ժո-  
ղովը թէ՛ սոյն և թէ՛ հետզհետէ  
Մարտ 4 ի և 11 ի գումարմանց մէջ  
նկատողութեան կառնու Մատ-  
նաժողովոյն տեղեկագիրն , և Տ.  
Խաչատուր Սրբազանի կաթուղի-  
կոսական օժման վաւերականու-  
թեանը նկատմամբ սա վճիռը  
կուտայ , որ է .

« Ամենապատիւ Տեղապահ

« Սրբազան Հայր »

« Եկեղեցական Համադուժար  
Ժողովս այս երրորդ անգամ գում-  
արուելով ի Պատրիարքարանս,  
Աղթամարայ կաթուղիստու թեան  
խնդրոյն նկատմամբ Մասնատո-  
ղովոյ բերած տեղեկագրոյն հա-  
մեմատ ընտրութեան հրձ-հ-ն հա-  
սրչափ որ ընդունելի կը համա-  
րի, բայց և այնպէս խնդրոյն  
հ-հ-ն ըննութիւնը՝ որուն  
մէջ է մարդասպանութեան կե-  
տը, և որ սոյն խնդրոյն վերջ-  
նական լուծումը պիտի տայ, ի-  
րեն ձեռնհասութենէն վեր ըլլա-  
լով, Ձեր Սրբազնութեան կը վե-  
րագործնէ յանձնել որ ժողովոյ  
որ անկ է : »

(Աստուծոյ խնայողութեամբ)

« 11 Մարտ 1876 »

Ազգային ժողովն իւր 1874 ամի  
բացման Ը. նիստին, որ յ 8 նո-  
յեմբերի, զորն վճռագիր կը յղէ  
Չեռն հաստ թեան և Իրաւաւո-  
թեան միացեալ դիւանաց ի նա-  
խաքննութիւն :

Միացեալ Դիւանք իրենց տե-  
ղեկագիրը կը մատուցանեն Ազ-  
գային ժողովոյ նոյն տարւոյ բաց-  
ման ժ.դ. նիստին որ ի 6 Դեկ-  
տեմբերի :

Ազգային Ընդհանուր Ժողով

Ընդհանուր 1874 թին Նիստ Ժ.

Ազգային ժողովն նկատուցու-  
թեան կառնու միացեալ Դիւա-  
նաց տեղեկագիրն և յետ մեծա-  
քանութեան՝ ըստ եզրակացու-  
թեան տեղեկագրոյն մտակամ հա-  
ւանութեամբ Ազգամատարայ խորեց-

բայն Կոնստանդնուպոլսի քրիստոնէական թիւակաւորութեան և խնդիրն ամբողջապէս իրրեւ թեմական մասնաւոր խնդիր Ազգային կեդրոնական վարչութեան խառն ժողովոյ անօրէնութեանը կը յանձնէ :

Այս սրտման վրայ վարչութեան կրօնական և Բաղաքական խառն ժողովն 1875 Ապրիլ 5 թրտական Բ-էրէր մ'ուղղելով առ Բ. Գուռն կը խնդրէ իմանալ թէ Տ. Խաչատուր Արքայան իւր նախորդին սպանութեան անբայն մէջ տակաւին ընդ կատկածանօրէ թէ ոչ : առ որ Բ. Գուռն նոյն տարւոյ Յուլիս 26 թրտական պաշտօնադրով իր կը պատասխանէ թէ :

« Սպանութեան դորժին մէջ մասնակցութիւն տեսցոյց եւր-

սուֆ և Շահին անուն Քիւրաները  
փախած և ի վերջոյ մեռած ըլ-  
լալով, կարելի չէ եղած քննու-  
թիւնն առաջ տարուիլ, աստի  
իրաց այս վիճակին մէջ Բ. Դուռը  
Խաչատուր Սրբազանի մասին ը-  
սելիք մը չունի այլ անոր ներքինը  
գիտնալ և անօրինել Պատրիար-  
քարանձիղ անկ է :

Բ. Դուռն այս պատասխանա-  
դրոյն վրայ Վարչութեան Քաղա-  
քական Ժողովը կորոչէ թէ՛ Տ.  
Խաչատուր Սրբազան իւր նախոր-  
դին սպանման սնրոյն մէջ քաղա-  
քականապէս անպարտ է :

Իսկ կրօնական Ժողովը խրնդ-  
րոյն եկեղեցականօրէն որոշումն  
իւր ձեռնհասութենէն վեր համա-  
րելով Եկեղեցական Վիճակալին  
Ժողովոյ ասեանք կհանէ խնդիրը :

Ի և Դեկտեմբերի 1875 կը գումարի Եկեղեցական Վիճակային Ժողովն և երկար խորհրդածուծենէ ետքը կորոչէ նախ Տ. Խաչատուր Արքաղանի՝ իւր նախորդին սպանման ոճրոյն նկատմամբ, խոստովանութիւնը ըսել և ապա վճիռ տալ. ուստի և յատեան իւր կը հրատարէ զՏ. Խաչատուր Արքաղան, և յետ (անոր ներկայութեան) ընթեռնելոյ Բ. Գռան պատասխանագիրը, սա եղանակաւ կը կատարէ անոր խոստովանութիւնը ըսելու գործողութիւնը, որ ահա,

Առանձնապէս Արքաղան. — Արքաղան Տէր, Ձեր Արքաղանութեան Համագումար Ժողովոյ Հարց կողմանէ կը հարցնենք յ՝՝՝ Ա՝՝՝ յոյ և Ի՞նչէ՞ թէ ձեր նախորդին

ազանմանն որ և է կերպով ի մե-  
 առջ կամ ի հեռուսա յարարերու-  
 թիւն մ'ունեցա ծ էք թէ ոչ: Հա-  
 մազումնար մողովք կադէ լսել  
 ձեր Կ...-Գ...-Բ...-Բ... Ե Ե...-Գ...-Բ...-  
 Բ...-Բ... Ե Ե...-Գ...-Բ...-Բ... միջ

Ե Թաշաանուր կաթուղիկաւ: —

Ես յոյժ կը դարմանամ որ այս  
 խնդիրն այսչափ տարիներէ ի վեր  
 Ազգային մողովոց սէջ խողովակէ  
 խողովակ անցնելէ յետոյ դարձ-  
 եալ մի և նոյն հարցումն ինձ կը-  
 նէք այսօր: Հարցէք Համազու-  
 մար մողովոյդ կողմանէ կարդ-  
 եալ Քննիչ Մասնատողոյ: Ես  
 անոր ատենին առաջ ամեն բան  
 յայտարարած եմ. երեք ամսէ ա-  
 լելի շարունակ կատարած քին-  
 նութեանց մէջ պէտք եղած բա-  
 ցատրու թիւները առած եմ:

Բացարձակացէս դիտ ամբաստան  
 նայ մը կրցա՞ւ դ'անել : ո՞վ է դիտ  
 սծրաց որժ կամ կամկամ աւոր ան :  
 աւանդե՞ս որ այսօր այդպիսի  
 հարցում մը կրնէ՞ ինձ պատկա՞ծ  
 աւելի ժողովոյ : Եւ այսօր իմ  
 թէ՛ կ'արտօրինակ կը թուի  
 ինձ ժողովոյդ այդ հարցումը :  
 բայց պատկառելի ժողովոյդ աւ  
 աւջարկու թ ի՞նք կրնոյ՞ն իմ : Եւ  
 ըստ որում ի՞նչ - - շ - - է՞ կը յայ  
 տարարեմ յանուն Ա - - - - - Եւ ի՞նչ  
 որ չէ թէ՛ ես իմ նախորդիս ըս  
 պանման մէջ ի հեռուստ կամ ի  
 մասոյ - - - - - Եւ  
 այլ - - - - - անցած չէ

Տ. Խաչատուր Սրբազան կը մեկ  
 նի ժողովէն :

Ստեփանայեւ Սրբազան : — Ժո  
 դովանէն Հարբ : խեղիք Խաչատ

տուր կաթուղիկոսի այս յայտ-  
ընթացն ու իսկուհիսն, որ ան-  
խառն և խղճի հանդարտութեամբ  
արտասանեց : Արդ՝ արդարու-  
թիւնք պարտք կը գնէ իմ վրայ  
հարցնել պատկառելի ժողովոյս  
Ս. Հարցդ թէ՛ Խաչատուր Սրբ-  
բաղանի այս յայտարարութեան  
և երգման վրայ ձեր ամենուն  
խիղճը հանդարտած է, և հա-  
մադուած էք նորա անմեղու-  
թեան : »

« Ժողովականք միահամուռ . --  
Այո՛ , համադուած ենք : »

« Ատենապետ Սրբաղան . -- Թէև  
խնդիրն իւր եզրակացութիւնն  
ստացաւ ժողովական Հարցդ յայ-  
տարարութեամբ . սակայն զայն  
օրինական կերպով վերջացնելու և  
վերջնական վճիռն արտասանել .

լու համար կառավարկեմ խրն-  
դիրը քու էի գնել հեռու ետը կեր-  
պիւ . թէ ո՛վ որ խղճի մտօք հա-  
մաղուած է և կրնդ ունի որ խա-  
շատուր կաթուղիկոս իւր նախոր-  
դին սպանու թեան մեղսակից  
կասկած էն քոյորովին անպարտ է  
թող գրէ թղթին վրայ — ԳՂԻԳ  
բառն , իսկ ո՛վ որ չընդունի՛ր  
թող գրէ — ԳՂԻԳ

« Ատենապետ Սրբազանի սոյն  
առավարկու թիւնն ընդ ունու ելով՝  
քուէ արկու թիւնը գաղտնի կա-  
տարու եցաւ և քուէ համարն ըլ-  
լալով արդիւնքը ցոյց տուաւ թէ՛  
երեւուն և ինն քուէովք՝ ընդ-  
դէմ երեք քուէից , որք պարտապ  
էին , — ԳՂԻԳ — հռչակու եցաւ Տ. Խա-  
շատուր կաթուղիկոս ի մեղսա-  
կից կասկած անայ սպանու թեան

Պետրոս Կաթուղիկոսի Տանն Աղ-  
թամարայ նախորդին իւրայ զգի-  
նէն Հետեւապէս և Եկեղեցական  
Վիճակային ժողովք յան վճիռը  
կուտայ զի ստիկը տեղաք դատու-  
մ և Եկեղեցական Համագումար  
ժողովս հրաւիրուած իննելով այս-  
օր յԱմենապատիւ Ներսէս Արքե-  
պիսկան Պատրիարքէն՝ Աղթամար-  
այ Խաչատուր Արքեպիսկանին յուր  
նախորդին Տ. Պետրոս Կաթու-  
ղիկոսին սպանու թեան մէջ Բ-  
Դանէն ժամանակաւ և զամ մեղ-  
սակցութեան կասկածին վրայ Ե-  
կեղեցականօրէն իւր վճիռը ասոյ  
իւր այս գումարման մէջ յետ  
յիսուի խորհրդամութեանց և հա-  
սունքննութեանց յետ ԷԵԷԷԷ  
զԷԷԷԷԷԷԷԷԷԷ յիշեալ Արքեպի-  
սկան յատենի ժողովոյս յայտն

« Ա. Կանխորդ թաշատուր կա-

թաղիկոս Ազգին կողմանէ՝ ամ-  
բաստանեալ շէ՛ր :

« Բ. Կանխորդ ո՛չ Բ. Գրան և  
ո՛չ Ազգ աշին՝ վարչութեան առ-  
ջեւ բացարձակ ամբաստանող մը  
ունեցած չէ այս մասին :

« Գ. Կանխորդ թաշատուր կա-  
թաղիկոսի վրայ՝ իւր նախորդ  
Պետրոս Կաթաղիկոսի ապանման  
ոճրոյն մասնակցութեան կանկա՞ծ  
յարուցանող Բ. Գրան Իշխանու-  
թիւնը (որ միակ վճռատու է ոճ-  
րող որժական խնդրոյ) , մինչեւ  
ցարդ չկրճարով յիշեալ Սրբազան  
նին վրայ և ո՛չ մի ինչ ստուգել ,  
իւր ասեիք մի շունենայր վերջ-  
նայէս յայտնած է :

« Համազումար ժողովս կը վրձ-  
նէ թէ՛ Խաչատուր Կաթուղիկոս  
խըր նախորդին այսինքն Պետրոս  
Կաթուղիկոսի սպանման ոճրոյն  
մէջ Բ. Դրան ժամանակաւ յա-  
րուցած կատկածէն — և — և — և —  
է Ազգային Եկեղեցւոյ և խղճի  
առջև : »

« Աւստի Ամենապատիւ Խաչա-  
տուր Արքազան ո՛չ միայն ըստ  
նախորդ վճռոյ Համազումար ժո-  
ղովոյս , որ ի 11 Մարտի 1874  
ամին , օրինաւոր Կաթուղիկոս է  
Տանն Ազխամարայ , այլ և ամե-  
նայն կատկած մեղսակցութեան  
է — և — և — է իւր վրայէն : »

« Հետեւապէս Եկեղեցւոյս Հա-  
մազումար ժողովս կը յանձնէ  
սոյն վճիռս Ազգային Եկեղրոնա-

կան Վարչութեան ի գործադրու-  
 թիւն լինի յայտն ի մարտիկան  
 (Առհասարակ ի իւր իւր իւր)  
 ի Վ. Դեկտեմբեր 1875 թ.  
 ի Պատրիարքարանի Հայոց  
 ի կապտանդնու պոլսոյ  
 Եկեղեցական Վիճակային ժողով  
 ղովան իւր այս գումարման մէջ  
 նաև յան աջարկու թեամբ Արմա-  
 շու Վանից Վանաճաշր Տ. Խորէն  
 Եպիսկոպոս Աշքեանի կորուչէ որ  
 Տ. Խաչատուր Սրբազան Արա-  
 թաանեան Մայր Աթոռոյ Տեառ յա-  
 րարերու թեան պայմանագիր մը  
 ստորագրէ հոգեւոր հնազանդ  
 գումարան պայմանաւ յան Հայ-  
 րապետան անկեայն Հայոց ղոր և  
 կը յանձնէ Արժանեան ժողովոյ ի  
 գործադրութիւն ի մարտիկան

Տ. Ներսէս Բ. Պատրիարք Արքեպիսկոպոսն Կ. Պօլսոյ թէ՛ Աղթամարայ և թէ՛ Սսոյ Կաթուղիկոսական խնդրոց միանգամ և ընդ միշտ լուծմանն համար 1875 Ինկտեմբեր 3 թուական գրով մը կը դիմէ առ Հայրապետն ամենայն Հայոց, և անոր վերջնական կարծիքն ու որոշումը կը խնդրէ, և ի պատասխանի հետեւեալ Հայրապետական Կոնդակը կընդունի :

« Իհորդ ծառայ Գրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթուոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ ԷԶՄԻԱԾՆԻ :

Բաղարթուն Պատրիարքի Հայոց  
Կոստանդնուպոլսոյ, եւ յաւէտ  
սիրելոյ մերում Գերապատիւ  
Ներսէսի Սրբազան Արքեպիսկոպոսի ի Տէր խնդալ։

« Առ ծանրակշիռն այն հարցումն սիրելոյդ զոր առնէք ի նամակի Ձերում գրելոյ . 3 ամսոյս, թէ գիարդ պարտ իցէ լուծումն ինչ առնել բաղձակնճիռն եւ անլուծելի կարծեցեալ խնդրոց կաթմուղիկոսութեանցն Աղթամարայ եւ Սսոյ, շատ գրեացի մեզ առ այժմ յուշ առնել Ձեզ գրաղձապատիկ խորհրդածութիւնն եւ զրոյցս կարևորս զխնդրոյդ զայդմանէ, զորս արարաք ի միջի մերում մինչդեռ աստ առ մեզս էիք։ Իսկ առ տեղեալս զայս ինչ եւ եթ հարկ համարիմք համար

աօտի կրկնաբանել, զի ի գործ  
և ի խնդիր այսպիսի, որ յամ-  
բողջութիւն և յանթերի պահ-  
պանութիւն հայի ազգայնոյ Ե-  
կեղեցւոյս, և իրաւանց առաքե-  
լական Աթոռոյ սորին, քաջ ի  
բաց հեռի է ի մէնջ և հեռի պար-  
տի լինել միշտ ամենայն խնդիր  
կամ հետամտութիւն անձնական  
պատուոյ և փառաց և կամ այ-  
լոց ինչ շահուց և օգտից մարմ-  
նականաց. այլ միայն զկանոնա-  
կան և զանժխտելի իրաւասու-  
թիւն Աթոռոյս Ս. Լիմիածնի ա-  
ռաջի աչաց ունել յամենայնի, որ-  
պէս և զցանկալին արգասիս ան-  
քակտելի միութեան ի միոյ կող-  
մանէ, և ի միւսմէն զբազմավտանգ  
հետեւանս պառակտմանն որ ի  
պատճառս Աթոռոցն այնոցիկ : »

«Առ այս աւելորդ համարիմք յուշ ածել ազգայնոցն մերոց սիրելեաց առ հասարակ զանհերքելի փաստս նախամեծար լինելոյ Արարատեան Մայր Աթոռոյս և կեդրոն միութեան հաւատոյ ամենայն Եկեղեցեաց Հայոց՝ որ գտանիցին յՕսմանեան աշխարհից և ի Ռուսաստան և ի Պարսկաստան և ի Հնդկիս և յայլ զանազան կողմանս աշխարհի, որով օրինաւոր Աթոռակալք սորին՝ կաթողիկոսունք են Սրբոյ Էջմիածնի ոչ եթէ պիտակ անուամբ կոչեցեալք անդօտին ի սկզբանէ՝ Կրօնիկոս - Բնոյն Հոյոյ, այլ արդեամբք և ճշմարտութեամբք : Ապա ուրեմն անհրաժեշտ պարտք են այլոցն ամենեցուն հոգեւոր առաջնորդաց մերումս Առաքե-

լական Եկեղեցւոյ, զորպիսի և  
ունիցին զտիտղոս կամ զպատ-  
ուանուն, հոգիւնք ըրդեմք Զոյ-  
բոգոյ Քրիստոսի և Ընդհանրիւն կո-  
ւորիչի Ազգիս : Քանզի և շիք  
երկբայութիւն՝ զի հարկ ի վերայ  
կայ՝ ոչ յանուանակոչութիւնս մի-  
այն հայել, այլ մանաւանդ յի-  
րացն արդիւնս . սակայն ըստ  
տարարազդ հանգամանաց տեղ-  
եաց և ժամանակաց՝ բազում այն  
է զի մարդիկ մանաւանդ որք  
յոգւոյ փառամոլութեան և շա-  
հախնդրութեան գրգեռալք իցեն՝  
կամակար մտաք զաւալի իմն խա-  
բանօք պատրեն զանձինս և զմիմ-  
եանս՝ որպէս թէ ըստ տիտղո-  
սացն մեծաց և զմեծութիւն իշ-  
խանութեանցն ունիցին : Ապաքէն  
առ մեզ անունդ Արարիչ, որ

խնքն ըստ ինքեան զէշտիւնսն  
ձայնիդ ունելով ճշդիւ զնշանա-  
կութիւնսն շկարէ երբէք տեղի  
տալ զի բաց ի միոյ միայնոյ Պատ-  
րիարք կաթուղիկոսէ ընդ հանուր  
Ազգիս Հայոց գտանիցի այլ ոք  
որ զնոյն կրիցէ զանուն և զպաշ-  
տօն ոչ եւս իրրեւ զմասն ինչ  
բողոքին այլ իրրեւ զամբողջու-  
թիւնսն բովանդակիչ ամենայն մա-  
տանց Եւ թէ ո՞րքան և որպիսի  
մնասք և վէճք և հակառակու-  
թիւնք ազգակործանք եւ աչ-  
խարհաւերք յառաջ եկին յայն-  
պիսեաց անախ անհիմն և անյա-  
րիւր անուանակոչութեանց և ճո-  
խանալոյ առաջնորդաց Եկեղեց-  
ւոյ ի վերայ իրերաց՝ ոչ է հարկ  
ասել Արդ մեր դատարացն ի բաց  
թողեալ զվին մտնա իրաւաստե-

Թեանց, օրինակ իմն զՅունացն  
և զՀռոմէաց Պատրիարքութեանց,  
այլ զմերոցն և եթ փոյթ ի մտի  
դնելով, ոչ ապաքէն ակն յայտնի  
տեսանեմք՝ զի որք անուանեալքն  
են ի միումն կամ ի միւսում ի  
մասանց Հայաստան աշխարհի,  
թէ պէտ և ի հարիւրաւոր ամաց  
հետէ, կաթուղիկոսունք Սոյս և  
Սղիթակարաց, զանուն և եթ ար-  
նին զԿոնստանդնուպոլիս, և այն՝ զԵրզնէ,  
և արակայն յորովք ի նոցանէ, թե-  
րեւս և ամենեքեան իսկ, եղևալ  
թուին ի մտի, և այնպէս հզնին  
հաւատացուցանել, պարզամիտ  
ժողովրդոց փրճակացն իւրեանց,  
թէ օրինաւորք իցեն և յայտնաւոր  
և Ս. յոնցիկ այսպէս եղելոց, ան-  
մենայն իբրք պարտ և պատշաճ  
էր, մանաւանդ ի ժամանակի

ասոր յորում ամենայն ոք քաջ  
նշմարէ զհոգևոր և զմարմնաւոր  
մնասս անգային բաժանմանց ,  
փութալ ճեպել ի սպառսպուս  
բարձունն երկրորդական և եր-  
րորդական Աթոռոց կաթուղիկո-  
սական անուանելոց , որպէս զի  
Եկեղեցին զխաղաղութիւն առ-  
նուցու և յՅամանեան աշխարհիդ ,  
զոր օրինակ խաղաղացաւն ի կող-  
մանս յայտորիկ ի բառնայ աթո-  
ռոյն Գանձասարայ : Բայց եթէ  
հապշտայ կարգադրութիւն ինչ  
այնպիսի պատճառս տացէ յուզ-  
ման և խռովութեան յազգայինս ,  
բարիոք համարիմք ակնկալեալ  
սպասել դէպ ժամանակի յորում  
յաջողեացէ արդեօք Աստուած  
ազգիս մերում լնդ հանրական ինչ  
գումարել ժողով Եկեղեցական :

ընդ նախադասու թեանք Եպիս-  
կոպոսապետի և Կաթողիկոսի  
Սրբոյ Էջմիածնի, և անդ զվախ-  
ճանականն առնել անօրէնու-  
թիւն :

« Ողջ լերուք զօրացեալ Տերամբ »

Գ. Լ. ՈՐԳ. Գ.

ԿԱԹՈՒԼ. ԱՄԵՆ - ՀԱՅՈՑ

Ի 27 ն Գեղարեւելի 1875 ամի . Հաս-  
տատարիս ՌՅԻԼ : Ի Ս . Էջմիածնի .  
Թիւ 418 :

Կրօնական ժողովը նկատողու-  
թեան առնելով զսոյն Հայրապե-  
տական Կոնդակ ըստ որոշման և  
յանձնարս ըութեան Եկեղեցական  
Վիճակային ժողովոյ հետեւեալ  
խոստմնագիրը կառնու Տ . Խա-  
չատուր Սրբազանէն իրրեւ պայ-  
մանագիր , որ ահաւասիկ .

ՊԼՅՈՒՆԱՆՈՒԹԻՒՆ

« Ա. Հոգեւոր հնադանդուծիւն  
առ Հայրապետն ամենայն Հայոց,  
Քահակալ Մայր Աթոռոյ Ս. Էջ-  
միածնի, որ է օրինաւոր յաջորդ  
Սրբազան Առաքելոց Բարթոլոմէոս  
եայ և Թադէի, և Վեհափառ  
Կաթողիկոս ամենայն Հայոց ընդ  
աշխարհ համօրէն: »

« Բ. Ի Ժամ Ս. Պատարագի և  
յաղօթս Ժամերդուծեան յիշա-  
տակել նախ զանուն Վեհ, Հայ-  
րապետին ամենայն Հայոց, ապա  
զանուն Սմեն, Կաթողիկոսի Տա-  
նըն Աղթամարայ: Այս յիշատա-  
կութիւն պարտի լինիլ յՍմեն,  
Կաթողիկոսէն Աղթամարայ և ի  
Թեմակաւնաց նորա: »

« Գ. Չձեռնադրել ընաւ Եպիս-  
կոպոս ի Թեմա Ս. Էջմիածնի, Իսկ

Վասն Եպիսկոպոսաց Տանն Աղ-  
թամարայ առնուլ կանխաւ զգրա-  
ւոր հաճութիւն Ամեն . Ս . Գաորի-  
արքին Կոստանդնուպօլսոյ և Աղ-  
գային Կեդրոնական Վարչու-  
թեան և ապա ձեռնագրել :

« Դ . Չհանել զԵկեղեցականս  
Աղթամարայ ի վիճակս Ս . Էջ-  
միածնի ի պաշտօնատարութիւն ,  
առանց սենեղոյ կանխաւ զհա-  
ճութիւն Ամեն . Ս . Գաորիարքին  
Կ . Գօլսոյ և Աղգային Կեդրոնա-  
կան Վարչութեան :

« Ե . Չսուրբ Միւռօնն օրհնել  
միայն վասն Տանն Աղթամարայ ,  
և շառաքել նուիրակս ի բաշ-  
խումն Ս . Միւռօնի ի վիճակս Սրբ-  
բոյ Էջմիածնի առանց գրաւոր  
հաճութեան Ամեն . Ս . Գաորիար-  
քին Կ . Գօլսոյ յանուն վեհ . Հայ-

բաղեւին ամենայն Հայոց : »

« Ի Կոստանդնուպօլիս , յԱզգային Պատրիարքարանի Հայոց , յամի Տեառն 1876 ի Փետրվարի 16 , ՌՅԻԵ : »

« Զվերոգրեալ Հնդեւին յօգուածս ընդունիմ սրտի մտօք և խորտանամ գործադրել ընդ բոլոր կեանս իմ : »

« Ի Կոստանդնուպօլիս յԱզգային Պատրիարքարանի 1876 Փետրվար 16 : »

« Ի վկայութիւն ինքնագիր ըստորագրութեանն նտորագրեմ : »

Տեառն Սուրբ Գրեմ . Կ. Ստամբուլի մարտի 15 ՆԵՐՍԵՆ ԱՐՔԵՊԵՍԿՈՊՈՍ մարտի 15 ( 1876 )

Պատրիարքն Հայոց Կ. Պօլսոյ Տ. Ներսէս Բ. Աղթամարայ կա-

Թուղիկասական խնդիրը Տ. Խաչատուր Սրբազանի կաթնուղիկասական ընտրութենէն մինչեւ այս խոստմնագրոյն ստորագրուած ատեն ի գործ դրուած պաշտօնական գործողութիւնները յատուկ տեղեկագրով Տը կը ներկայացնէ Ազգային Ժողովոյ 1875 ի բացման Ժ. գ նիստին, որ ի 20 Փետրվարի 1876, հետեւեալ վերջաբանով և անոր կից հարցմամբ :

« Արդ՝ բովանդակ այս գործը ձեր պատկառելի Ժողովոյն ուշագրութեան յանձնելով, սոյն գործոյն վախճան մը տալու, և Աղթամարայ թեմականաց անդու անդադար արտունջներուն և մինչեւ իսկ կրօնափոխութեան սպառնալիքներուն վերջ գնելու համար, ոչ իբրեւ կաթնուղիկա-

առկան խնդիր , զի Հայրապետին  
ըսածին պէս — — — — — է — — — — —  
— — — — — է — — — — — է — — — — — է , այլ իր-  
րեւ գծուարին խնդիր կը ներ-  
կայացնեմ ձեզ՝ սա հարցումը մի-  
այն ընելով , »

« Թէ՛

« Ազգամարայ Խաչատուր Սըր-  
բազանի իւր նախորդին սպան-  
ման ոճրագործութեան մասնա-  
կցութենէ — — — — — է — — — — —  
համարուելու բաւական կը հա-  
մարի՞ ժողովդ Բ. Դանէն եկած  
Բեշեբէն : »

Արտոյն Ընդհանուր Ժողով

Բնօրինակ 1875 թին

Նիւր ԺԹ . 1876 Փետրէլէր 20

Ազգային Ժողովը սոյն պատ-  
րիարքական տեղեկագիրը հինգ  
անգամներէ բաղկացեալ խառն



Ազգային-Յիշխանութեան Գործակալ  
Նշանակուած է 1875 թ. 4-րդ Դեկտեմբերի  
(Յանվարի 1-ի 1876 Մարտի 26) յիշ

Ազգային Վեհաժողովին խառն Մասնա-  
նաժողովոյն Եկեղեցական և Աշ-  
խարհական անդամոց կրկին ան-  
դեկտեմբերին ու շահ-բուժեան կան-  
նաք և յետքննութեան փնտրաց  
նախնայն նախապէս կարգէ լաւ

Ա. Թէ Բ. Իսահան Բեքեճեան (Տ)  
Խաչատուր Արարիկանի անկար-  
տութեան վճիռ չեն կրնար նը-  
կանութիւն և յայտնա կրն մոյն

Բ. Թէ Բ. Իսահան վերջին Բեք-  
եճեանի կարգովէն դատական խա-  
ղարկութեանց շարունակութիւ-  
նը անկարելի զգայն յայտնելով  
լնդրոյն խղճովի քննութիւնը  
(Գործակալութեան) (Տ. Խաչատուր Արարիկանի)



քննել, և արդիւնքն ու Ազգին  
կարծիքն իրեն հաղորդել . և  
«Յ. Հասարակ Համագումար  
Եկեղեցական Ժողովը կը յայտա-  
բարէ թէ, Խաչատուր Կաթու-  
ղիկոսին անպարտ ըլլալուն անոր  
երդմանն համագումարէ . »  
«Վ. Պատասխանել Վարչութեան  
Սրբազան Նախագահին որ Բր-  
բան հրամանագրերն Աղթախ-  
բայ Կաթուղիկոսին իբրև ան-  
պարտութեան վճիռ չեն կրնար  
նկատուիլ և պէտք է Համագու-  
մար Եկեղեցական Ժողովին կողմէ  
այս խնդրոյն վրայ կատարուած  
դատարարական գործողութիւնը  
Բ. Իրան հաղորդուի և խընդ-  
րուի որ բացարձակապէս յայտ-  
նէ թէ անոյն գործողութիւնը Խա-  
չատուր Կաթուղիկոսն անպարտ

վճռելու քաւական կը համարի  
թէ ոչ և եթէ չհամարիր շնորհ  
քնէ Բ. Գուն ինդրոյն քնու-  
թիւնն ինքն ընել և պէտք եղած  
վճռը տալ և այլ ինչ  
Այս որոշման ձեւին մերթիւն  
կէան , այն է Համադումար Ժո-  
ղոսոյ կատարած դատաւորական  
գործողութիւնը Բ. Գուն հա-  
ղորդել և հարցնել թէ սոյն գոր-  
ծողութիւնը խաչատուր կաթու-  
ղիկոսն անպարտ վճռելու քաւ-  
ական կը համարի , թէ ոչ և ա-  
ռանձինն քուէի կենթարկուի և  
Ազգային Ժողովն ձայնից մեծա-  
մասնութեամբ կը ընդունի , եւ  
հոսկ ուրեմն որոշման ձեւն ամ-  
բողջ միաձայնութեամբ կը ընդունի  
Ազգային կեդրոնական կար-  
չութիւնն , ըստ այսմ որոշման Ազ-

գային ժողովոյ՝ Եկեղեցական  
վիճակային ժողովոյ կատարած  
գարաւորական գործողութիւնը  
Բեւեւ մը կը հաղորդէ Բ. Դը-  
ռան, կ'անոր առ այն տնեցած  
կարծիքն ու վերջնական պա-  
տասխանը կը խնդրէ : Բ. Դուռը  
վարչական Բեւեւ իւր վերջնա-  
կան պատասխանը կուտայ ծա-  
նուցագրով մը որոյ հայերէն  
թարգմանութիւնն է :

Աղթամարոյ սպանեալ Պետ-  
րոս կաթուղիկոսին լաջորդող և  
սպանութեան խնդրոյն համար  
ասկից տասներեք տարի առաջ  
Պօղիս բերուող խաչատուր Արա-  
զանին նկատմամբ ինչ ինչ խըն-  
դիրներ պարունակող ձեր պա-  
տասխանագիրը նկատողութեան  
առի : Եւ ինչպէս որ ձեր Սըր-

բազմութեան գրութեան խնամար  
կը յայտնէ որ Խաչատուր Սրբա-  
ղան Պատրիարքարանի քննութե-  
նէն և երէտ-երէտ յայտնուի-  
նուի երէտ-երէտ և նմանապէս աս-  
կից ասաջ Տեղական կանախա-  
րութեան ուղղութեամբ գրութեան  
վրայ և կամ արատասխանագրէն  
հանկցուած է որ Խաչատուր Սրբ-  
րազանին կողմէն Բարեկցութեան  
ժողով ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն  
ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն  
այս վիճակին մէջ և խաչա-  
տուր Սրբազանին անարատ  
թեանը մասին Չե՛սք ևն ևն ևն ևն  
ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն  
ևն ևն որոյ համար ասոյն ժամանակ  
ցաղիրը գրուեցաւ յիշգրտութեամբ  
թիւն և յայտատար զոր քանակաւ  
ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն ևն

դիրն Ազգային Ժողովոյ 1876 ամի  
բացման Դ. նիստին վիճարանու-  
թեան նիւթ կըլլայ:

Ադր-ըն Ընդհանուր Ժողով

Բացում 1876 -ին

Նիստ Դ. 1876 Յունիս 4

Ազգային Ժողովը նկատողու-  
թեան կառնու Բ. Դռան պա-  
տասխանագիրն և մէկ քանի ե-  
րեսիօխանաց թեր ու դէմ ա-  
տենարանութենէն յետոյ՝ Ատե-  
նապետ վսեմ. Ստեփան Փաշա  
Ասլանեան կառաջարկէ որ՝ ըստ  
որում Բ. Դռան իւր պատասխա-  
նագրով կըսէ Սրբազան Պատրի-  
արքին թէ՛ «եթէ դուք համոզ-  
ուած էք Խաչատուր Սրբազանին  
անպարտ փնելուն ես ալ ըսելիք  
մը չունիմ. և ըսել է կատարելա-

արէս Սրբազանին շրթունքէն կտօն  
 ետլ է այս խնդրոյն վճիռը, ուս-  
 տի թող շնորհ ընէ մեզ յայտնել  
 իր անձնական կարծիքն ու հա-  
 մոզումը, վասն զի նա մեզնէ շատ  
 առաւել գիտակցութիւն ունի  
 խնդրոյն ամեն պարագայից . . .

դարձեալ կրտսէմ, մեր խիղճերն  
 հանդարտեցնելու համար, նախ  
 Սրբազան Հօր անձնական կար-  
 ծիքն ու համոզումը բերու ենք:

Տ. Ներսէս Բ. Պատրիարք՝ այս  
 առաջարկութեան վրայ կը յայ-  
 տարարէ թէ՛ դաշտաւայ՛ մասնապէս՝

«Խնդրոյն կրտսէսն էսքիւ. համար  
 Համապար. մարտադրոյ տուած վր-  
 նիւն ընդ Եւսէք Ե.Ս. գալով Եւսէք  
 Եւսէք Եւսէք, եւ ժողովներուն ու  
 րոշմանց գէ՛թ բան մը չունիմ ը-  
 սելիք, երբէք սիրտս չուզէր հա՛յն»

ւատար չէ թէ կաթուղիկոսի, այլ  
մինչեւ անգամ պարզ Բահանայի  
մը հարցազոյն-մեծ հանկու-մեծ  
հոգի եղած կու-նեն:

Պատրիարքին սոյն յայտա-  
բարութեան վրայ Ատենապետը  
յայտնելով որ խնդիրը վճռուելու  
վերջնակէտին հասած է, քուէ-  
արկութեան ենթարկելի ձեւին  
նկատմամբ եւս կը հարցնէ Պատ-  
րիարքին թէ ի՞նչ կերպ պա-  
տասխան կուզէ ժողովէն, առ որ  
կը պատասխանէ Պատրիարքը:

«Ես կուզեմ որ ժողովս ինձ  
պատասխանէ թէ «Բ. Դրան  
վերջին պատասխանագիրը բաւա-  
կան է Խաչատուր կաթուղիկոսն  
ազատ հրատարակելու իր վրայ  
եղած մեղասկցութեան կասկա-  
ծանքէն, և Աղթամարայ խնդիրը  
վերջացնելու»:

Այս բաներով քուէի կը դըր-  
ուի խնդիրն , և Երեսփոխանք ա-  
մենատուար մեծամանութեամբ  
և ձեռամբարձ հաւանութեամբ  
— (բաւական է) կը պատասխա-  
նեն Պատրիարքին հարցման :

Հետեւապէս և Ազգային Ժո-  
ղովն սոյն որոշմամբ Աղթամա-  
րայ կաթուղիկոսական խնդրոյն  
— — — — — վճռարար կը լուծէ  
և կը վերջացնէ :

Ազգային վարչութեան Խառն  
Ժողովն Եկեղեցական վիճակային  
Ժողովոյ՝ Աղթամարայ խնդրոյն  
կը — — — — — և Ազգային Ժողո-  
վոյ — — — — — առւած վերջ-  
նական վճռոց վրայ՝ կը վաւե-  
րացնէ Տ. Խաչատուր Սրբազանի  
կաթուղիկոսական ընտրութիւնը ,  
և յատուկ Ը-իւր-ի կատանայ Բ .

Դռնէն անոր հարստութեան  
Պերաթը ինչպէս նաև Մեծիկե  
առաջին կարգի պատուանշանը :

Այսպէս ահա յետ երկուտա-  
սան ամաց կը վերջանայ այս  
կնճռալից խնդիրն , և Աղթամա-  
րայ Միաբանութիւնը կամ անոր  
մէկ քանի գլխաւոր Անդամք ի-  
րենց Առաջնորդին սպանման ոճ-  
րոյն մեղսակից ըլլալու կասկա-  
ծէն կազատին , որ յաւիտենա-  
կան նախատինք պիտի ըլլար նոյն  
Միաբանութեան և Հայաստան-  
եայց առաքելական Ս. Եկեղեց-  
ւոյ պատմութեան :

Տ. Խաչատուր վանահայր վի-  
ճակաւոր կը մեկնի ի Կ. Պօլսոյ  
ի պաշտօնատեղին իւր յԱղթա-  
մար ի 20 Հոկտեմբեր 1876 :

Երանի էր թէ Տ. Խաչատուր

Սրբազան Իգնատի և Գրգորի ու Քրիստոս  
 անկեղծն շքանշանք զարեթ իւր պաշ-  
 տօնը ի յիսուսիւն Վանուց Աղ-  
 թամարայ և թեմական տարա-  
 քաղղ ժողովրդեան :

ԿԱԹՈՒՂՒԿՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՏՈՆԱ

ՎԱՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԿՐՏԻԶ

ՍՐԲԱԶԱՆԻ

Ապաքէն Ստյ Վանուց և Կի-  
 լիկիոյ թեմական այլ Վանուց և  
 առաջնորդական Գաւառաց Երե-  
 թական և թարոյական քաղմա-  
 կարօս փեմակին Մէջ Ստյ Կա-  
 թուղիկոսու թեան պարչտօնին կոչ-  
 ուեցաւ Տ. Մկրտիչ Սրբազան  
 քնականաբար իրեն հակառակաբղ

ունենալով նաև Աջապահեան ցեղին մնացորդն, որ Ստոյ կաթուղիկոսական յաջորդութեան շնորհիւ իրաւունքէն (տես երես 452 - 462) քաջարձակ մերժուած էր ազգովին, եւ իւր անմիջական շուրջն ունենալով Ստեցի Հայ ժողովուրդն, որ Աջապահեան ցեղէն Տէր նիկողայոս Եպիսկոպոսի Բժշկիւնէ կաթուղիկոսութեան վճարով Եկեղեցական վիճակային ժողովոյն շնորհիւ և շնորհիւ հրատարակման վրայ յուղեալ և երկար ատեն Ազգային կեդրոնական վարչութիւնը զբաղեցնելէ ետեւ հազիւ ուրեմն հանդարտած և իւր ընտրութիւնն ընդունած էր:

Վարչապետը Ս. Մկրտիչ Սրբազան իրաց այս վիճակին մէջ այն ինչ սխալաւոր



Մկրտիչ Սրբազան՝ իբրև կաթու-  
ղիկոս ի Սոոյ, Սափայն Տ. Մը-  
կրտիչ Սրբազան նայն օրը խո-  
սած քարոզով մինչև անդհալու և  
նահրահետ հը կրօնքէ զՍսեցիա, որք  
նայն հերտայն կը մեկնին Եկեղե-  
ցիէն, և նոյն յամսոյ 45-46դ  
օրը կը խանին անդ, և Տ. Մկրտ-  
տիչ Սրբազանի անուան յիշատա-  
կութեան ատեն, նոյն իսկ անոր  
ներկայութեան՝ մեծ աղմուկ և  
շփոթ կը յարուցանեն, և կա-  
ղաղակին որ անոր անուան յի-  
շատակութիւնը գաղբի Յուզ-  
մունքն և անկարգութիւնն այն-  
չափ յառաջ կերթայ որ Տաճարը  
կռուոյ ասպարէզ կը դառնայ և  
մինչև իսկ մէկ քանի անձինք կը  
վիրաւորին, որմէ յետոյ հազիւ  
ուրեմն կը խաղաղի:

Այս կրկայ, ճահայ, Տ. Մկրտիչ  
 Արքազանի կաթուղիկանան վի-  
 ամանայ պաշտօնավարութեան որ  
 նուազ յոսի և խոհեմութենէ ու  
 խաղաղանիքութենէ: Տեոխ ըն-  
 թացից խալատ գատապարտելի  
 հեռեւանքը զոր փութանակի  
 դարձանելու անդ 1872 Յուն-  
 վար 23 թուական «Պե Առ-  
 ՚ու 27 երեկոտը կեզժ անորա-  
 գրութեամբ «Անճնճն» երտը Թ  
 «Իճն» անուն հայագիր և ան-  
 կարարաւ անարակ մը կը հրա-  
 տարակէ (\*) և կը գրուէ ի թեմա-

---

(\*) Տ. Ազիշէ վարդապետ Գազան-  
 ճեան որ նոյն միջոցին Տէր Մկրտիչ  
 Արքազանի քարտուղարն եղած է,  
 պատմած է մեզ թէ՛ նոյն ինքն Մկր-  
 տիչ Արքազան խմբագրած է նոյն այս  
 անարակն, և ինք — Տ. Ազիշէ վար-

բայս կիլիկիոյ և ի կոստանդնու-  
պոլիս, յարուժ Սասյ Վանուց կահ-  
կարասեաց նորոգութեան, Տա-  
ռազ առ որաց վարժարանի մը  
հաստատութեան, վանական կար-  
գերու կանոններ սահմանելու,  
վանուց գողօնները գտնելու և  
այլ բարեկարգութեանց մասին  
ձեռք առած միջոցներն և ըրած  
նորանոր ձեռնարկութիւնները՝ և  
թէ ստոյգ են, կը թուէ, իւր  
անուան յիշատակութեան նկատ-  
մամբ անդի ունեցած վերոյիշա-

---

գապեա — խմբագրեալը մարտի տ-  
ռած և իւր հարազատը՝ Աեծ. Սենե-  
քերիմ էֆէնայի Գազաննեան ազա-  
գրել տուած է գայն՝ աստ ի կ. Պո-  
լիս, որ վաճառուելու համար Մայր  
Եկեղեցւոյ բանկալն իսկ գրուել է :

տակեալ անկարգութիւնը կը պատմէ, առանց սակայն բուն պատճառն ի մէջ բերելու, և իբր Սոսյ Վանուց բարեկարգութեան թշնամի շարաշար կանարգէ ու կը նախատէ Աջապահեան ցեղն և Սոսցի ամբողջ Հայ Ժողովուրդը. կա՛նուանարկէ նաև ամենայն Հայոց Հայրապետն և հուսկ ապա տեարակին վերջարանին երբեք կէտէ ինքզինք Ս. Թագէտս և Բարթուղիմէոս Առաքելոց և Ս. Գրիգոր Լուսավորչի յԵՒԵԿ կը յայտարարէ :

Ահա նոյն մասին հայերէն թարգմանութիւնը :

« Երբ որդ' Մկրտիչ կաթուղիկոսին խանարհարար կը յիշեցնենք ( որպէս թէ Ատանացի Հայ Երիտասարդը կըսէ ) և կը թախան-

ձեներ որ վհատութիւնը ի բաց  
թողու և քաջաբար իւր գործը  
չարունակէ : որովհետեւ եղածը  
եղած լինցած է . կը մեռնինք՝  
ալ չենք գտնար : Զայս եւս  
պէտք է գիտնայ որ իրեն հա-  
մար շատ ու շատ զոհողութիւն  
ընողներ կան թէ՛ Վիճակներուն  
մէջ և թէ՛ ինչպէս կը կարծեմք  
ի կոստանդնուպօլիս , նաև ուրիշ  
տեղեր : Սոյ երեք ու կէս կ-նէր  
մարդիկը չեն որ Ազգը կը կազ-  
մեն , այլ Օսմանեան Պետութեան  
մէջ գտնուած բոլոր Հայ ժողո-  
վարդը . ի մտի ունելով զայս  
նախ վարդապետաց առաջին հե-  
ղինակին մեր Փրկչին՝ և երկրորդ  
Հայաստանի հրեշտակ թագէտ  
և Բարթուղիսէոս Սրբազան Ա-  
ռաքելաց և անոնց յաջորդ երկցս

երանեալ Ս. Գրիգոր Լուսաւորչին՝ մեր բազմերախա Հայրապետին սիրոյն համար, ՈՐՈՒՆ Ինչ շատ մը ընտրողներու կարծեօքնու ձայնովը, որ ձայն բազմաց ձայն Աստուծոյ է, այնք որ զՍԱԶՈՒՄԻՆ էլն է, իւր գործը աշտարարութեամբ շարունակէ հանդերձ պէտք եղած զոհողութեամբ, որուն համար մենք ալ ամբողջ Ազգին հետ ի սրտէ կաղօթենք:

Տ. Մկրտիչ Սրբազան սոյն այս յայտարարութեամբ ինքզինք իւրովի Ս. Գրիգոր Լուսաւորչի յօգուտ հանկու թէ եւ ինչ ստորագրութեան ներքեւ ըլլալով ըստ ինքեան կարեւորութիւն չունի, այլ սակայն սա անտարակուսելի ճշմարտութիւն մ'է թէ Սոսյ վա.

նահայր փնճակաւորութեան թե-  
մական մասնաւոր պաշտօնէն Հա-  
յաստանեայց Ս. Եկեղեցւոյ առա-  
քելայաջորդ Հայրապետական Ե-  
րանութեան Բ-Է-Ն-Է-Է կամ ա-  
մենայն Հայոց Հայրապետութեան  
հոգեւոր էր-----ԲԷՆԷՆ և ընդ-  
հանրական ԳԵՆԷՆԷՆ Ս.Չ.Ս.Տ և  
ԱՆԿԱԽ ԸՄԷԷ յԳԳ----- Խըր պաշ-  
տօնավարութեան առաջին օրե-  
րէն ունենալ յաւակնած է, զոր  
արդ յայտնապէս իրականացնել  
կը ճգնի առ ոտն կոխելով Եկե-  
ղեցական պատմութիւնն ու կա-  
նոններն և Ազգային ժողովոյ ո-  
րոշմունքը, որք բացարձակապէս  
հակառակ են իւր ազգամիտաւ  
խորհրդոյ ու ձգտմանց :

Ստեղծք տեղեկանալով որ նոյն  
այն տեսրակին բուն իսկ հեղի-

Նապր Տ. Մկրտիչ Սրբազան ինքն է (\*), որ Առանայի Հայ երիտասարդի մը գիմակով այն անլուր անարգանօք եւ նախատանօք կանուանարկէ զիրենք եւ կը վատահամբաւէ, կը յուզուին սատիկ եւ կը զայրանան առաւելքան զառաջինն, այնպէս որ Տ. Մկրտիչ Սրբազան կը տեսնէ բացորոշ եւ կը համոզուի իսկ թէ այլ եւս իւր ի Վանա Ստոյ յարատեւ յոյժանայրացի սէրամարտչաց քղա

---

(\*) Ինչիկ Ստեցի Յակոբ Նաղագանուեան անուն անձ մը Ստոյ ժողովուրդը նոյն քաղաքի Ահեղեցին կը համարէ, եւ քորէ շարի հաստի անօք կ'կերեցաւ ի լուր ժողովրդեան կրօնթեանու նոյն կիլիկի-նըն է-ր-ըը եւն անուն անարակը, որով գրեթէ բոլոր Ստեցիք մէկէն նաև անօք պարունակութեանը մանրամասն կը անդեկանան:

մնալն եթէ ոչ անկարելի գէթ կարի դժուար է, և փոխանակ իրաց այս տխուր վիճակն օրինաւոր եղանակաւ անմիջապէս դարմանել փութալու՝ խել մը պատճառանքներով ակտուոյ տեղափոխութեան խնդիրը կը յարուցանէ, և 1872 Հոկտեմբեր 25 թուական գրով մը Ազգային Վարչութեան կը ներկայացնէ, և անոր գործադրութիւնը կը պահանջէ, և ինք թողլով Սոսյ վանքն ու թեմական վիճակներն իրենց բաղդին անտէր ու անհովիտ՝ կը քաշուի Մարաշի մօտ Բիրխան ըսուած տեղն իրեն համար պատրաստած բնակարանը :

Ակտուոյ տեղափոխութեան առաջարկն, որ ազգային միանգամայն եւ քաղաքական տեսու-

Թեամբ անտեղի էր, որ Սոսյ Վա-  
նուց բացարձակապէս մնասակար  
էր, և որ մանաւանդ Սոսյ կա-  
թողիկոսութիւնը կուսանդնու-  
պօլսոյ կամ Երուսաղէմի Պատրի-  
արքայ թեանց մէկին կամ միւսին  
հետ միացնելու համար ժամա-  
նակաւ (1868) եղած թէ՛ արգա-  
յին և թէ՛ կրօնական տեսակէ-  
տով միապէս ամենախաւանդաւ որ  
առաջարկին յոյժ նպաստաւոր, և  
որ գործադրութիւնն անշուշտ  
պիտի զայրացնէր կիլիկիոյ թե-  
մական ժողովուրդն և առաւել  
եւս արդէն յուզեալ և զայրաց-  
եալ Սեւեղիները, և Աղզին մէջ  
անվերջանալի և ծանր հետեւա-  
նաց յանդող խնդիր պիտի յա-  
րուցանէր անտարակոյս. Աթոսոյ  
տեղափոխութեան խնդիրը, կը-

սեմք , կը մերժէ Ազգային Վարչութեան Խառն ժողովն , և կը ծանուցանէ իրեն որ Սոսյ կաթողիկոսարանին այլուր փոխադրութիւնը չընդունիր , ուստի և Աթոռն ըստ հին յիշատակաց պէտք է մնայ ի Սիւ : (Տես 1872 - 1874 ի շրջանին Խառն ժողովոյ 1872 Նոյեմբեր 23 ի նիստին արձանագրութիւնը ) :

Տ. Մկրտիչ Արքաղան ոչ միայն չէր վարչութեան շնորհիւ , այլ և նոյն առաջարկութեան ուրիշ երեք խնդիր իւր կցելով 1873 Յունիսը 17 և 31 թուական կրկին գրութեամբք վերստին Ազգային Վարչութեան կը ներկայացնէ , և ստիպաւ անոնց գործադրութիւնը կը պահանջէ : Հետեւապէս մէկ անըն-

դունելի և ամենամիասակար ա-  
ռաջարկը կըլլայ շորս, որք են,

1. Կաթուղիկոսարանին Սիսէն  
ուրիշ տեղ փոխադրութիւնը:

2. Տէրութեան կողմէ ամսա-  
կան մը սահմանուիլը:

3. Սոյ Վիճակաց ընդարձակ-  
ուիլը:

4. Կաթուղիկոսական պաշտօ-  
նին Առաջնորդութիւններէ աւելի  
արտօնութիւն մը Տէրութեան  
կողմէ արուելու կարևորութիւնը:

Անկարօտ է բացատրութեան  
որ Տ. Մ կրտիչ Սրբազանի սոյն ա-  
ռաջարկութեանց ոգին կոտան-  
դնուպօլսոյ Ազգային Պատրիար-  
քական իշխանութեան մէջ կրճատ-  
անկէ ընդ-դն-ի և +-զ-+-ի-մ-դէ- նոյն  
և նման -+-դ-դէ-է-է-է-ի-լ ինքնուրոյն  
և յամենայնի անկախ և ազատ

Ի՛նչ-նչ-Ի՛նչ-նչ է հաստատու թիւնն է  
ի կիլիկիա, ոչր անտարակուսելի  
հետեւ անքն է բաժանուիմս միտ-  
թեան Ազգային ոչ կրօնական  
գործոց Վարչութեան որ թուր-  
քիա, և բաժանուիմս Հայաստան-  
եայց Ս. Եկեղեցւոյ կառավարա-  
կան միութեան, որ ընդ աշխարհ  
համօրէն :

Թուրքիոյ Հայոց ներքին վար-  
չական միութեան ~~+~~ է, զոր  
կը պահանջէ Տ. Մկրտիչ Սրբա-  
զան : ամենայն Հայոց Հայրապե-  
տական իշխանութեան անբաժա-  
նելի միութեան ~~+~~ է, զոր  
կը պահանջէ նա : կիլիկիոյ առե-  
րուիմս ու Սոսյ Վանուց կործա-  
նուիմս է, զոր կը պահանջէ նա :  
կը պահանջէ անդադար, ինչպէս  
տեսաներ, իւր պաշտօնավարու :

Թեան թուականէն , և ցարդ ոչ  
միայն անասան լով Ազգային և  
Եկեղեցական օրինաւ որ իշխանու-  
թեան այլ և արդէն թե լիակ ընդ-  
դէմ Ազգին ոչ նուազ դատա-  
տարան լի միջոցներով ամեն ճիգ  
և ջանք կը թափէ իրականացնե-  
լու համար իւր ազգամիտս խոր-  
հուրդք :

Ազգային վարչութեան նոյն  
Խորն ժողովն այս ցորտ առա-  
ջարկութիւններն եւս մէկէն ան-  
ընդունելի կը գտաւ և որպէս  
զի սոյնօրինակ ազգամիտս առա-  
ջարկութեանց , օրովք կցրաղի Տ.  
Մ կրտիչ Արքայան և կցրաղեցնէ  
Ազգային Պատրիարքարանը , մի-  
անգամ և ընդ միշտ վերջ տրը-  
ուի , և Սոսյ կաթուղիկոսութեան  
ընդ թեմական Առաջնորդս կի-

ի կիսոյ և ընդ Ազգային Կեդրո-  
նական Վարչութեան ունենալիք  
Սահմանադրական յարաբերու-  
թեանց ի դուռսսու թեան սահմանը  
ճշդութիւն իբր յաւելուած գաւա-  
ռաց համար հաստատեալ Սահ-  
մանադրական հրահանգին, կիսի-  
կիսոյ վիճակաց համար մասնաւոր  
հրահանգ մը կը պատրաստէ, որ  
թէպէտև Խառն Ժողովոյ 1873  
Յունիս Ա ի նիստին կը ներկա-  
յանայ ի վաւերացումն, բայց Տ.  
Մ կրտիչ Պատրիարք Արքեպիսկո-  
պոս Խրիմեանի պիտողութեան  
վրայ կը յետաձգի, սակայն ի  
վերջոյ այժմեան Պատրիարք Տ.  
Ներսէս Արքեպիսկոպոս Վարդա-  
պետեանի Տեղացահութեան օ-  
րով կը վաւերանայ ի 24 Ապրիլի  
1874, որ ահա,

ՀՐԱՆՈՒՄ

ԿԻՆԻՆԻՆՅԱՆ ԳՆԱՆՈՒՄ ԶԱՄԱՐ

Վ. Կիլիկիոյ առաջնորդական  
փրճականութեն իւրաքանչիւրը կրնա-  
րէ իւր Գաւառական Ընդհանուր  
Ժողովը ըստ Սահմանադրական  
հրահանգի կեդրոնական Վարչու-  
թեան, և ընտրական գործողու-  
թեանց տեղեկագիրը կը դրկէ  
առ կեդրոնական Վարչութիւնն,  
որ որին աւորու թիւնը ստուգելէն  
ետքը կը վաւերացնէ, և կը ծա-  
նուցանէ Կիլիկիոյ Ս. Կաթողի-  
կոսին որ իւր կոնդակաւը ծա-  
նուցանէ Վրճակին Ժողովրդեան,  
և կեդրոնական Վարչութիւնն յի-  
թը վաւերացումը յատուկ նամա-  
կաւ կը ծանուցանէ Առաջնոր-  
դին և Գաւառական Ժողովին ։

« Այսպէս կրչլայ նաև վիճակի մը կրօնական եւ Քաղաքական ժողովոց ընտրութեան վաւերացումը : »

« 2. Գաւառական կրօնական ժողովը կրօնական խնդրոց համար ի հարկին նախ կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին կը դիմէ , եւ ապա ի հարկին կը դիմէ կեդրոնական վարչութեան կրօնական ժողովոյ , կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին կարծիքն ալ ի միասին ծանուցանելով : »

« 3. Կիլիկիոյ առաջնորդական վիճակի մը կրօնական ժողովը եւ թէ իւր վիճակին մէջ վարդապետ ձեռնադրել ապաւ հարկաւանէ , կը դիմէ խնդրագրով մը կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին , եւ

անոր հաւանութեամբը ձեռնա-  
դրել կուտայ : 22 ճախարհով զի  
« Իսկ եթէ Վերակիւ մը ժողովուրդը  
փափաքի իւր վարդապետ Առաջնորդը էպիսկոպոս ձեռնադրել տալ նախ պիտի դիմէ  
Կեդրոնական Վարչութեան՝ որ ըն-  
ծայացութիւն արժանաւորութիւնը  
տեսնելէ ետքը, իր հաւանու-  
թիւնը կուտայ : »

« 4. Կիլիկիոյ վիճակին Գաւառական  
անտուկներուն ելքն են նաև Սոսյ Աթոռոյն սահմանուած  
տուրքը, պաղի ելն, զորս ըստ  
անխորտակեան անխափան հա-  
տուցանելու պարտաւոր են : Եւ  
Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսը նաև իրր  
վանահայր Սոսյ վանուց պարտաւոր  
է հոգ տանել նոյն վանուց  
պայծառութեանը, անոր մէջ

հաստատելով դիշերօթիկ վար-  
ժարան ժառանգաւորաց՝ կիլի-  
կիոյ փիճակէն ժողովելով յարմար  
տղաքներ յուսումն և ի կրթու-  
թիւն. և որոշեալ ժամանակներ  
համար աալ կեդրոնական վար-  
չութեան, վարուելով ըստ հրա-  
հանդի Ազգային վանօրէից, որ  
վարերացեալ է կեդրոնական վար-  
չութենէն ըստ համար քով ըստ հրա-  
հանդի Առաջնորդի ընտրութեան  
ատեն կեդրոնական վարչութիւ-  
նը Ազգին մէջ գտնուած բոլոր  
անպարտօն և առաջնորդական  
արժանիք ունեցող Եկեղեցակա-  
նաց ընդհանուր ցուցակը կը հա-  
ղորդէ նախ կիլիկիոյ Ս. Կաթօւ-  
ղիկոսին և անոր օրինաւոր դի-  
տողութիւնը լսելէ յետոյ՝ ըստ  
համար քով ըստ հրա-  
հանդի Առաջնորդի ընտրութեան

այնմ նոյն ցուցակը կը հաղորդէ  
ընտրող Գաւառին և  
և կիլիկիոյ 11. Կաթողիկոսը  
կրնայ նոյն ցանկին մէջէն Գաւառին  
համար ամենէն աւելի  
յարմարաւոր երեք անձինք ցուցընել  
Գաւառական կրօնական և  
Քաղաքական ժողովոց. թայց Գաւառական  
Ընդհանուր ժողովը  
ազատ է կեդրոնական Վարչութեան  
ընդհանուր ցուցակին մէջէն  
այլ ընտրելու և

26. Առաջնորդի ընտրութեան  
տեղեկագիրը կուղարկի առ Ս.  
Պատրիարքն Կ. Պօլսոյ և կեդրոնական  
Վարչութեան թառն ժողովը  
սոյն ընտրութեան օրինաւորութիւնը  
քննելէ և ատուգելէ ետեւ  
կը հաստատէ գաղափարը և Բ. Դրան  
խնաց կուտայ

պաշտօնական հրամանագիրն ըս-  
տանալու համար, և Կիլիկիոյ Ս.  
Կաթողիկոսին ալ իմաց կուտայ  
որ իր կոնդակաւք վիճակին ժո-  
ղովրդօց ծանուցանէ : »  
« Կեդրոնական վարչութիւնը  
յստուկ նամակաւ իր վաւերա-  
ցուժը կը ծանուցանէ Գաւառա-  
կան Ընդհանուր Ժողովին : Ա-  
ռաջնորդական Տեղապահի ընտ-  
րութեան մէջ ալ այս կողմնա-  
կաւ պիտի վարուըսի : »

« 7. Երբ Առաջնորդի մը վրայ  
ամբաստանութիւն ծագի, Կեդ-  
րոնական վարչութիւնը պիտի  
հաղորդէ նաեւ Կիլիկիոյ Ս. Կա-  
թողիկոսին, Առաջնորդին և  
ամբաստանօրաց մէջ իրաւախո-  
հութիւն ընելու համար : Երբ ի-  
րաւախոհութիւնն անհնար լինի,

և տեսուչ կամ քննիչ գրկել հարկ  
ըլլայ, կեդրոնական Վարչու-  
թիւնը պիտի յանձնարարէ կիլի-  
կիոյ Ս. Կաթուղիկոսին որ ինք  
արժանաւոր անձինք գրկէ նոյն  
պաշտօնները կատարելու ըստ  
Սահմանադրական հրահանգին,  
և անոնց տեղեկագրին արդիւնքը  
ժանուցանէ կեդրոնական Վար-  
չութեան, հանդերձ իւր գիտու-  
ղութեամբը:»

«Տ. կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսը  
իրրել հոգեւոր գէտ կիլիկիոյ,  
իւր հոգեւոր իշխանութեանը ներ-  
քել գանուած առաջնորդական  
փիճակաց վրայ հսկելու պարտա-  
ւոր է, որ իւրաքանչիւր Գաւա-  
ռական Վարչութիւն և Առաջ-  
նորդ Սահմանադրութեան և կեդ-  
րոնական Վարչութեանն սահման-

եալ օրինաց և հրահանգաց հա-  
մաձայն վարուին, և իրենց պաշ-  
տանն ու պարտաւորութիւնը կա-  
տարեն:»

«Եթէ հակառակ ընթացքի մէջ  
դանտոզ ըլլայ, իրաւունք ունի  
ագդարարութիւն ընել անոր և  
բացատրութիւն պահանջել, երբ  
անուղղայ մնայ, կը ծանուցանէ  
Կեդրոնական Վարչութեան, և  
անոր հրահանգին համեմատ կը  
վարուի:»

«Այն պարագային մէջ եթէ  
Կեդրոնական Վարչութիւնը աւել-  
ածչ զրկելու հարկ աւանդէ, ինք  
Կեդրոնական Վարչութիւնը պիտի  
զրկէ իւր կողմէն: Իսկ երբ ազ-  
գարարութիւնը փոխանակ կիլի-  
կիոյ Ս. Կաթուղիկոսին կողմէն  
ըլլալու, ըստ Սահմանադրական

հրահանգի կեդրոնական վարչու-  
թիւնը հարկ տեսնէ անգլարա-  
բու թիւն ընել կիլիկիոյ առաջ-  
նորդական վիճակի մը վարչու-  
թեան և Առաջնորդին, և անպա  
տեսուչ զրկել հարկ ըլլայ, կիլի-  
կիոյ Ս. Կաթողիկոսին կը յանձն-  
նարարէ տեսուչ մը զրկել հոն,  
և նոյն տեսչին տեղեկագրին հետ  
կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իւր  
կարծիքն ալ կը հաղորդէ կեդրո-  
նական վարչութեան, որ պարա-  
ուպատշաճ անօրինութիւնը կը-  
նէ, և կը ծանուցանէ թէ ա-  
ռաջնորդական վիճակին և թէ  
կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, և թէ  
բնա 24 Ապրիլ 1874 թ. զոյժ ձեռն  
ա ի Պատրիարքարանի Հարկի քաղաքա-  
քա յառտանդ նուպոլիս ք  
5 Ապրային վարչութիւնը 1874 թ.

Մայիս 29 թուական պաշտօնա-  
գրով մը սոյն հրահանգին տպա-  
գրեալ օրինակներէն տասն հաս-  
կը գրկէ առ Տ. Մկրտիչ Սրբա-  
զան, և կազմարարէ նմա որ  
նոյն օրինակները ցրուէ յառաջ-  
նորդական վիճակս կիլիկիոյ, որ-  
պէս զի իրենց սահմանագրական  
յարաքերութիւններն ըստ այնմ  
ճշդեն և գործադրեն :

Տ. Մկրտիչ Սրբազան ոչ իւր  
չորս առաջարկութեանց նկատ-  
մամբ Ազգային Վարչութեան Դ-  
Է-Ը ԿԵԴ-ՆԷ, ոչ ալ սոյն այս  
հրահանգ գործադրութեան կը դը-  
նէ : ոչ այսչափ միայն այլ և կը  
հրաժարի իսկ և իւր պաշտօնի  
չարունակութեան Դ-Ե-Ն ԿԸ ԴՆ  
նոյն շորս առաջարկութեանց Ը-  
Դ-ՆԵ Ը-ԲԷ-ՆՆ ու Դ-Ե-Դ-ԲԷ-ԲԷ-ՆԸ :

Կը յամառի Տ. Մկրտիչ Արքա-  
զան ի սոյն, ոչ կը գործէ և ոչ  
գործել կուտայ. Սուրբ Վանքը  
փակ և Կիլիկիա համօրէն անհո-  
փու և անառաջնորդ վիճակներն  
առաւել քան դառաջինն զաւարի  
և թշուառ կոչուի թեան կենթար-  
կին, այնպէս որ թեմականաց  
կողմէ հետզհետէ կակսին ընդ-  
դէմ Տ. Մկրտիչ Արքազանի գան-  
դատանաց հանրագրեր հասնիլ  
ի Գաարիարքարան, որովք և ի-  
րենց գառնացեալ վիճակին վաղ  
ընդփոյթ դարման կը խնդրեն:

Ազգային կեդրոնական վար-  
չութեան 1875 - 1876 ի շրջանին  
Խառն ժողովը Մասնաժողով մը  
կը կարգէ իրաց այս վիճակը բըն-  
նելու և ակզեկագրելու համար:  
Մասնաժողովը կը ներկայացնէ

իւր տեղեկագիրք թառն ժողովոյն , որ նոյնութեամբ կը մատուցանէ զայն առ Ազգային ժողովն , որ է :

Ազգային Ընդհանուր Ժողով

Բնօրինակ 1875 թ.

Նոյն Ե. 1875 Յունիս 20

« Ամենապատիւ Սրբազան Գառնիբարբ Հայր »

« Նախագահ Ազգային Վարչութեան »

« Թառն ժողովոյ »

« Գատկատեղի վարչութիւնդ իւր 16 Մայիս փէ . նստին մէջ Մասնաժողովոյն պաշտօն տուաւ Սոսյ կաթուղիկասական խնդիրը քննել և մեր կարծիքն յայանել Մկրտիչ Սրբազանին կաթուղիկասութենէ տուած հրատարականին »

ընդունելի կամ չընդունելի ըլլալուն նկատմամբ :

« Մասնատողութեան փութացի նրկատողութիւն առնուլ այս խընդրոյն վրայ եղած գրութիւնքն և պաշտօնական տեղեկագրութիւնքն , և յայանապէս տեսաւ որ

« Ա. Կիլիկիոյ վիճակը՝ այս վերջին տարիներս մասնաւորապէս յետին աստիճան բարոյական և նիւթական թշուառութեանց մէջ ինկած է , երկպառակութեան և կրօնափոխութեան երեսէն :

« Բ. Առաջնորդական օթոռները գրեթէ ամենն ալ անանց հոփուի մեռացած են :

« Գ. Սոյն վանքը թափուր , միաբանութիւնը գրեթէ զրուած և բաշտօնական անտէրունչ մեռացած է :

Ա. Գ. Թեմայնաց կողմէն բաղ-  
մաստորացիք հանրաց բուժիւն-  
ներ հասած են, որ Մկրտիչ Սըր-  
բազանին կաթուղիկոսութիւնը  
չեն ընդունիր, և նորա անար-  
ժանութեան ու անհողութեան  
վրայ ծանրապէս բողոք կը բառ-  
նան, և վարչութեան անմիջա-  
կան խնամքը և անօրէնութիւնը  
կը հայցեն:

Ա. Ե. Նոյն ինքն Մկրտիչ Սըրբա-  
զան կաթուղիկոսութենէ չէ հե-  
տէ կրկին և կրկին պաշտօնա-  
կան հրաժարագրով և ոչ միայն  
չէ՞ որ վարչութեան կողմէ զըր-  
կուած 1874 Ապրիլ 26 թուա-  
կան հրահանգը, այլ և կաթու-  
ղիկոսութիւնը վարելու համար  
չէ՞ որ կը գնէ հետևեալ պահան-  
ջումները

« 1. Կաթուղիկոսարանին Սիսէն  
ուրիշ ակղ փոխադրութիւնը : »

« 2. Տէրութեան կողմէ ամսա-  
կան մը սահմանուիլը : »

« 3. Սոց վիճակաց ընդարձակ-  
ուիլը : »

« 4. Կաթուղիկոսութեան պաշ-  
տօնին Առաջնորդութիւններէ ա-  
ւելի արտօնութիւն մը Տէրու-  
թեան կողմէ արուելու կարեւո-  
րութիւնը : »

« 2. Մկրտիչ Սրբազան այս պա-  
հանջումներով ալ զո՛հ շըլլալով  
իւր համար 295 և 187/ե Յունիս  
12 թուական նամակին մէջ կը  
յաւելցնէ ևս թէ՛ « 2է թէ միայն  
այսպէս լոկ վանահայրութեան  
մը անուամբ , այլ բոլոր ինչ որ  
իւրեքնէրն ունեցնէ արտօնութեան  
մէջ ինչ որ ընդհանրապէս և ընդհանրա-  
պէս ընդհանրապէս և ընդհանրա-  
պէս ընդհանրապէս և ընդհանրա-  
պէս ընդհանրապէս և ընդհանրա-  
պէս ընդհանրապէս : »

« Մանած ազգս զայս ամենայն  
նեբկայացնելով պատկառելի ժո-  
ղովոյդ, կը գիտէ թէ՛

« Նախ՝ Մկրտիչ Սրբազանին վե-  
րայիշեալ պահանջումներու շնոր-  
հումը՝ ոչ միայն իսառն ժողովոյ  
կարողութենէն, այլ և նոյն իսկ  
Ազգային ժողովոյ իրաւասութե-  
նէն բարձր են, ըստ որում թէ՛  
Սահմանադրութեան տրամադր-  
ութեանց հակառակ և թէ՛ մի-  
անգամայն Առաքելական Ս. Եկե-  
ղեցւոյս աւանդութեանցը և օրի-  
նաց ուղղակի հակառակ են : »

« Երկրորդ՝ նկատելով որ Մը-  
կրտիչ Սրբազան արդէն կը խոս-  
տովանի իւր գրութեանց մէջ,  
թէ ինքը կաթուղիկոսական ժանր  
պաշտօնին անբաւական է, ինչ-  
պէս որ զնոյն կը հաստատեն և

Թեմայիոց հանրագրութիւնը , և  
չորս տարուան տխուր փորձը , և  
Կիլիկիոյ վիճակին այսօրուան ա.  
մենագառն վիճակը , և կրօնա-  
փոխութեանց զգալապէս աճումը  
և կրօնից հետզհետէ նուազումը Ե  
Ուստի Մասնաժողովս՝ թէ և  
այս հրատարականք ընդունել ար-  
ժան կը դատէ , սակայն ըստ ո.  
րում Մկրտիչ Սրբազանի պաշ-  
տօնի վաւերացումը Ազգային ժո-  
ղովէն եղած է , կառավարկէ որ  
անմիջապէս պատկառելի Վար-  
չութիւնդ այս ամենածանր խըն-  
դիրը ներկայացնէ յառեան Ազ-  
գային ժողովոյ , և խնդրէ որ  
ժամ յառաջ Ազգային ժողովը իւր  
որոշումն ընէ թէ՛ արդեօք Սոսյ  
Աժոռոյն վրայ ալ շտարածուիր  
այն որոշումը՝ զոր նոյն ինքն Ազ-

դային ժողովը նմանօրինակ դէպ-  
քի մը մէջ այսինքն Աղթամարայ  
Աթոռոյ խնդրոյն նկատմամբ սահ-  
մանեց (1874ի բացման) Ժ դ նըս-  
տին մէջ, որպէս զի Աղգային Վարչ-  
ութիւնը եւս դիտանայ թէ ինչ  
ապագայ տնօրէնութիւնք պար-  
տին որոշուիլ ի բարւոքումն զի-  
հակի Աթոռոյն Սոյ և ի պայ-  
ծառութիւն Ս. Եկեղեցւոյս ընդ  
կրկիկիս համօրէն:

« Զայն զայս մեր զդիտողու-  
թիւն զտութեամբ ներկայացնել  
յատեան պատկանելի Ժողովոյդ: »

« Մնամք խորին յարգանքս  
Ստրբութեամբ »

Անդունջ Մանուկ-Ղազար

« 1875 Յունիս 7 »

« Ղալաթիա »

Ղարչական սոյն տեղեկացի-

բըն , որ Տ : Մկրտիչ Սրբազանի  
պաշտօնավարութեան յօռի եղա-  
նակն ու ընթացքը և համօրէն  
կիլիկիոյ դառն վիճակը կը պատ-  
կերացնէ , Ազգային ժողովն ի  
սոյն նստի կը յղէ Չեռնհասու-  
թեան և Իրաւասութեան միաց-  
եալ Դիւանաց ի նախաքննու-  
թիւն :

Միացեալ Դիւանք Ազգային  
ժողովոյ նոյն տարւոյ բացման Ը.  
նիստին , որ ի Ա Օգոստոսի 1875,  
կը մատուցանեն իրենց տեղեկա-  
գիրք , յորում վարչական տեղե-  
կագրոյն նկատողութիւններն ամ-  
բողջովին ընդունելով կեզրակա-  
ցընեն թէ :

« Ա. Ազգային ժողովն Տ. Մը-  
կրտիչ Սրբազանի նոյն չորս ա-  
ռաջարկութիւններն Ազգին հա-

մար խաղառ անընդունելի և ան-  
տնօրինելի ըլլալն իւր որոշմամբն  
հաստատէ : »

Ե Բ : Աղգային ժողովն , ինչ-  
պէս Աղթամարայ կաթուղիկո-  
սական խնդիրն իրբու գաւառա-  
կան մասնաւոր խնդիր իւր 1874 ի  
բացման ժ. դ նիստին մէջ վարչ-  
ութեան խառն ժողովին տնօրէ-  
նութեանը յանձնեց , նոյնպէս և  
Սոսյ կաթուղիկոսական խնդիրն  
իրբու գաւառական մասնաւոր  
խնդիր իւր ամբողջութեամբը  
պէտք է յանձնէ վարչութեան  
խառն ժողովին տնօրինութեանը  
ի վաղ ընդ փոյթ կարգադրու-  
թիւն Սոսյ կաթուղիկոսական  
խնդրոյն և համայն թեմական  
փեճակաց նօրին : »

Ազգային Ընդհանուր Ժողով  
Բնութ 1875 -ին  
Նոյեմբ. 1875 Օգոստ. 29

Ազգային Ժողովն սոյն նիստին  
մէջ վիճարանութեան կենթարկէ  
միացեալ Դիւանաց տեղեկագիրն :  
Բոլոր ատենարանք մի առ մի  
խառն կը քննադատեն Տ. Մկրտ-  
տիչ Սրբազանի առաջարկներն , և  
զօրաւոր փաստերով անոնց ան-  
ընդունելի ըլլալը կը հաստատեն :

Ազգային Ժողովոյ այս նիստին  
մէջ ուշադրութեան արժանի է  
Տ. Ներսէս Բ. Պատրիարքի այն  
յայտարարութիւնն , զոր Տ. Պօ-  
ղոս Վարդապետ Խօրտամեանի  
ատենարանութեան խնայող բա-  
ցատրելու մտօք ըրած է , որ  
ահա ,

« Պօղոս Վարդապետին բարե .

մըտու թե անք ըրած խօսքերն ո՞ր  
մանք թերեւս գէշ մտօք հասկը  
չան ՝ ու անի կարն բացատրու  
թիւն մը տամ : Պօղոս վարդա  
պետ ըսել կուզէ որ ինչպէս վը  
րաց , Աղուանից ի Գանձանարայ  
կաթուղիկոսու թիւներն ՝ քանի  
նայն Հայաց շէին և ՚ն մանա  
պէս Սոսյ և Աղթամարայ կա  
թուղիկոսու թիւներն ՝ քան ՚ն  
միայն և զմիածինն և ծայրանգոյն  
կաթուղիկոսու թիւն կամ Պատ  
րիարքու թիւն ՝ զի կաթուղիկո  
սուն ին վրայ չէ մեծու թիւնն , այլ  
-Գնոյն Հայոց Զայրոցոյն Պատրիարք  
Ի-գիւղիս Ին Ին Ին Ին Ին Ին Ին Ին  
է : Եւ միածնայ հետ միւս ա  
թուները սիրային և Գն Ին Ին  
ՆԱԶԱՆԴԱԿԱՆ Եւրոպեացի Եւրո  
պայու ևն , ինչպէս որ վեր

ջին օրերս նոր ապուած և Ս. Էջմիածնի ամենէն երևելի և Աստուածասէր ու նախանձախնդիր Սիմէոն Կաթուղիկոսի գրած Չամբռին մէջ կը տեսնենք, ուր գրուած է թէ՛ Աղթամարայ Թումայ Կաթուղիկոսն որ առաջ ապօրինաւոր և Ղաղար Կաթուղիկոսի նշովքին տակն էր, ի խղճէ հարեալ գացեր է Ս. Էջմիածին՝ Յակոբ Կաթուղիկոսին ուսրը ինալով ներսն ու ոչնչորսն ունեւ ետ, պատգաւով և խիղայիւք վերադարձեր է Աղթամար, և նոյն Աթոռոյն օրինաւոր Կաթուղիկոս եղեր է: (Չամբռ երես 97):»

«Այս նկատմամբ մեր Եկեղեցւոյ մէջ ոչ հնչեալ և ոչ նշեալ Կաթուղիկոս չկայ, զի այն է հնչեալ որ Ս. Էջմիածնի ամենայն

Հայոց Կաթուղիկոսութեան Գե՛ղ և  
հօգօնօն ինքզինք ամենայն Հա-  
յոց Կաթուղիկոս և ծայրագոյն  
Պատրիարք հօշոյն կամ ներկայ-  
սէն կը յանդգնի . իսկ ոչ ոք  
կըլլայ և ոչ հակաթու այն Կա-  
թուղիկոսն՝ կամ Եպիսկոպոսն՝ որ  
Ազգային Եկեղեցւոյ Գործն և Ե-  
րկարարութիւն Գե՛ղ և կը գործէ :  
( Ինչպէս է այսօր Տէր Մկրտիչ  
Սրբազան ) : »

« Անկարելի է որ Սոոյ և Ազ-  
թամարայ Կաթուղիկոսներն ոչ ոք  
ըլլան . ոչ որ և մինչեւ իսկ սոյն  
Կաթուղիկոսութեանց թեմականք  
ըն ընդհանրէր զայս ախպէս . զի եթէ  
սորա ոչ ոք Կաթուղիկոսութիւն  
ներ լինէին , սոցա դատերը խըն-  
դիրներն՝ ամենայն Հայոց Կաթու-  
ղիկոսի իրազօր Փօօնուրէր Տաճկաս-

տանի Առաքիւորքն Նոր-Գոթե-Տե-Տե  
կառնա՞ն Ժողովեր-- ԺԸ ԿԻ՞ն Եր-Նու-Եր :  
Եր-Նու-Եր : Ըն-Նու-Եր Լ Կրթ-Գր-Եր :

Հուսկ ապա Ատենապետ Վր-  
սեմ. Ստեփան Փաշա Ասլանեան  
վիճարանութիւններն ամփոփելով  
քուէարկելի սա ձեւը կը ներկա-  
յացնէ ժողովոյն :

« Ազգային ժողովը հարգելի  
որ Սոսյ Կաթուղիկոսական Ա-  
թոռոյ նկատմամբ մեր Եկեղե-  
ցական եւ Ազգային պատմու-  
թեանց ու դարերու մեզ բերած  
աւանդութիւններէ՞, Կր-Եր Նու-Եր  
Կր-Եր Եր-Նու-Եր Լ Կր-Եր Եր-  
Նու-Եր Եր-Նու-Եր, Ազգային Կր-Եր Եր-  
Նու-Եր Եր-Նու-Եր Լ Ազգային Ս-Կր-Եր Եր-  
Նու-Եր Եր-Նու-Եր Եր-Նու-Եր Եր-Նու-Եր

Այս քանակներ նոյնութեամբ

քուէի կենթարկուի և Երեւոփո-  
խանք ամենաստուար մեծամաս-  
նութեամբ կընդունին : Ազգային  
ժողովն այս որոշմամբ, ինչպէս  
յայտնի է, Տ. Մկրտիչ Սրբազանի  
առաջարկութեանց հիշատակը  
և Սոսյ խնդիրն իբրև զա-  
ռուական մասնաւոր խնդիր Ազ-  
գային Վարչութեան հետևեալ տը-  
նօրինել համաձայն այն պայմա-  
նաց, որք քուէարկեալ բանա-  
ձեւին մէջ գծուած են :

Ազգային Վարչութեան Խառն  
ժողովը տեսնելով որ Տ. Մկրտիչ  
Սրբազան իւր առաջարկութեանց  
ընդունելութիւնն իւր հրաժա-  
րականն յետս կոչելու եւ իւր  
պաշտօնը շարունակելու հար-  
գրած է, և տեսնելով որ Ազ-  
գային ժողովն ալ իւր անանօրի-

ների առաջարկութեանց սկըզ-  
բունքը կը մերժէ, ուստի և կո-  
րոշէ ընդունիլ անոր հրատարա-  
կանը : Այլ սակայն Տ. Ներսէս Բ.  
Պատրիարք զսոյն որոշումն գոր-  
ծադրութեան գնելէ առաջ սա-  
հեանելեաց հարցմամբ Ազգային  
ժողովոյ որոշման կը դիմէ ի նիստ  
ժ. գ 1875 ամի բացման, որ ի  
20 Փետրվարի 1876 :

« Վսեմ. Ատենապետ Փաշա

« Ազգային պատկառելի Ընդ-  
հանուր ժողովոյ : »

« Սոսյ Մկրտիչ Կաթուղիկոսին  
չընդունուած ատենն հը-ժ-բեւ-  
-նհը-ժեշտ գոյնն մեզ մատուցած  
և թառն ժողովով Չեր Ատենին  
ներկայացած ---ը-բի-նի-ննեբը  
կարողաբար առանց պայմանի ա-

մենք մէկանց եւ անդսունալի  
կերպիւ մերժած է մի, և  
Խառն Ժողովոյ մեծագոյն մա-  
սամբ Նորին Սրբազնութեան հը-  
րածարականը ընդունած ըլլալու  
մասին Ժողովդ զխտողութիւն  
չը՛նէր :

« Սոյն պատասխանին անհամ-  
բերութեամբ սպասելով »

այսմ ձևով Մեամ աղօթարար

ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՕԼՍՈՅ

ՆԵՐՍԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

1876 Փետրվար 20

Ազգային Ժողովն Պատրիարքի  
սոյն հարցումն երկու երեղեցա-  
կան և երեք Աշխարհական հինգ  
անդամէ բաղկացեալ Խառն Յանձ-  
նախմբի մը կը յանձնէ ի քննու-  
թիւն և ի անդեկազրութիւն :

Ազգային Ընդհանուր Ժողով  
1875 թ. 12

Նոյ ԻԱ. 1876 Մարտ 12

Յանձնախումբն Ազգային Ժողովոյ սոյն նիստին կը մատուցանէ իւր տեղեկագիրն, ոյր վերջին մասն է հետեւեալը :

« Ազգային Ժողովը Մկրտիչ Կաթուղիկոսի առաջարկութեանց սկզբունքը հետեւաբար և նորա առաջարկութիւնքը անընդունելի դատելով մերժած է, և այս առթիւ Սոյ խնդիրն ալ իրրեւ թեմական խնդիր ամբողջապէս վարչութեան յղած է ի տնօրինութիւն :

« Ազգային վարչութիւնը Սոյ Մկրտիչ Կաթուղիկոսի պատճառարանեալ հրաժարականը ընդունել է, առանց ծանուցանե-

լու անոր, թէ իւր առաջադասե-  
րը՝ այսինքն առաջարկութիւնները  
Ազգային ժողովը մերժած է :

«Վարչութեան անցնող քառասուն  
վրայ կառավարիչ Յանձնաժողովս  
որ Վարչութիւնը Սոց Մկրտիչ  
կաթուղիկոսին ծանուցանէ Ազ-  
գային ժողովոյ իւր առաջարկու-  
թեանց նկատմամբ առած որո-  
շումը, յայտնելով որ եթէ իւր  
առաջարկութեանց վրայ շեղե հը-  
ր-տ-ի-ն ընդ-ն-ը ղեկ-ն-ու-  
ն-այն ատեն հարկ եղածը պի-  
տի անօրինակ Վարչութեան կող-  
մանէ անհարկ :»

Ազգային ժողովն իւր անցնող  
նկատողութեան կառնու զայս  
անդեկագիր և յետ վիճարանու-  
թեան այս անգամ Տ. Մկրտիչ  
Սրբազանի անցնող շարս առաջարկ-

ներքը զատ զատ քուէ արկու թեամբ  
կը մերժէ, ինչպէս,

ա. Նախնայեալ Փաշան

քուէի դրա նաև

Մկրտիչ Կաթուղիկոսի շորս ա-

առաջարկութիւնները մի առ մի

հետեւեալ կարգաւ ընկեր տեղաթ-

ուրիչ Կաթուղիկոսարանին Սիսէի

ուրիչ անդ փոխադրութիւնը:

Բ. Ժողովուրդայն Առաջարկու-

թեան ԿեփճճՄարտ-

տաննեցիք

2. Տէրութեան կողմէ ամսա-

կան մը սահմանուիլը:

Գ. Ժողովուրդայն Բ. առաջարկու-

թեան ԿեփճճՄարտա-

տաննեցիք

3. Սոյ վիճակաց ընդարձակ-

ութիլը:

Դ. Ժողովուրդայն Գ. առաջարկու-

Թեան Զոյնդէ՝ ՄԵՐԺՈՒՄ արտաշ-  
տանեց : Եւ Կաթուղիկոսու թեան պաշ-  
տօնին Առաջնորդութիւններէ ա-  
ւելի արտօնութիւն մը Տէրու-  
թեան կողմէ արուիլը : Եւ յայտնուեալ  
Ժողովն այս Դ. առաջարկու-  
թեան Զոյնդէ՝ ՄԵՐԺՈՒՄ արտաշ-  
տանեց : Եւ յայտնուեալ Ժողովն Ս. Մկրտիչ

Ազգային Ժողովը Տ. Մկրտիչ  
Սրբազանի առաջարկութիւններն  
այսպէս Վճռութեան կողմէ կողմ  
մեծամասնութեամբ կորոչէ որ  
ըստ եզրակացութեան Յանձնա-  
խմբի տեղեկագրոյն, « Վարչու-  
թիւնը Սոց. Մկրտիչ կաթուղի-  
կոսին ծանուցանէ՝ Ազգային Ժո-  
ղովոյ իւր առաջարկութեանց նը-  
կատմամբ տուած որոշումը յայտ-  
նելով, որ եթէ իւր առաջարկու-

թեանց վրայ ոչ ոքի և ոչ ոքի և ոչ ոքի և ոչ ոքի  
 ընդ նոցա ոչ ոքի և ոչ ոքի և ոչ ոքի և ոչ ոքի  
 ատեն հարկ եղածը պիտի անօրինակ  
 վարչութեան կողմէն  
 Ազգային վարչութիւնն ըստ  
 այսմ որոշման առաջին անգամ  
 սա պաշտօնագիրը կողմէն առ  
 Տ. Մկրտիչ Սրբազան  
 Ամենապատիւ Սրբազան Եղ  
 րայր Ի Բրիտան  
 Ազգային կեդրոնական վար  
 չութեան խառն ժողովու Չեք Ա  
